891.71
7-27

Պ. ՊԱՎԼԵՆԿՈ

19 NOV 2010
22 JUN 2007

ԲԱՐԻԿԱԴՆԵՐ

100

891.71
Պ-27

ՊԵՏՀՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

JUL 2013

1871

891.71
Պ-27
22 JUN 2007

Պ. ՊԱՎԼԵՆԿՈ

ԲԱՐԻԿԱԴՆԵՐ

Թարգմ. ՀԱՄԲ. ՄԱՋՄԱՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1934

12784

Պատ. խմբգիր՝ Ս. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանքյան
Լեզվա-տեխ. խմբագիր Արշ. Տեր-Մկրտչյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան

Reisst die Kreuze aus der Erden:
Alle sollen Schwerter werden
*(Դուրս քաշեք հողից խաչերը,
նրանք բոլորը պիտ դառնան
սուսեր):*

Մ. Հ ե ր վ ե գ

Հանձնված է արտադրության 5 մարտի 1934 թ.
Ստորագրված է տպագրության համար 6 մայիսի 1934 թ.

Գլավլիտ 8472 (բ)   հրատ. 2903   պատվեր 475   Տիրաժ 3000

Պետհրատի տպարան, Երևան

ՆՎԻՐՈՒՄ

Վեպը գրված է մի զգացմունքով, վորն առաջանում է մեր մանկության ու պատանեկության տարիներն առաջին անգամ պատկերացնելիս: Նա պատմություն չէ և միևնույն ժամանակ մտացածին էլ չէ, նա մեր անցյալի զգացումն է:

Այդպես յերբեմն, վերհիշելով յերիտասարդության տարիների պատահարները, կյանքի առաջին փորձը և աշխարհը յուրովի փոփոխելու առաջին ձգտումները, մենք միավորում ենք և՛ այն, ինչ վոր իսկապես յեղել է, և՛ այն, ինչ վոր պատմել են մեծերը: Մեր հիշողության մեջ կան այնպիսի առօրյա դեպքեր, վորոնց մեջ խմբված է այն ամենը, ինչ վոր յերբևէ պատահել է մեզ հետ կամ մեր շուրջը:

Թերթելով յոթանասուն մեկ թվականի առանձին մարդկանց վերաբերյալ սոսկալի պատմությունները, յես վերհիշում եյի ուրիշ մարդկանց և ուրիշ, պատմության մեջ ամենավերջին տարիները,—և առաջինների ու վերջինների միջև ձգում եմ այս նվիրման պաստառը:

Թող նա հնչե վորպես այսօրվա լոզունգ՝ փողոցի վերևում, տնից-տուն ձգված:

Վեպը նվիրում եմ.

Վեյնե Յոկինենին, *Ֆիննին, բանվորի վորդուն, լրագրողին, ընդհատակյա ՖԿԿ հիմնադիրներից մեկին, վորն սպանվել է Լենինգրադում դավադրության օրերին, 1920 թվականի օգոստոսին,*

և Ժաննա Լաբուրբին, *առաջին ֆրանսուհուն, վորին Օդեսսայում ֆրանսիական ինտերվենտները գնդակահարել են ռուսական Հոկտեմբերի համար,*

և Քարտաշ Ֆրանսուա Բերտո Լեպետին, *վորը Բակունինի անարխո-խենթությունից և Կրապոտկինի անարխո-լիբերա-*

մղմից յեկավ մեր կուսակցությունը: Նա 1920 թվականին մեռավ Օվկիանոսում,

և Ռայմոնդ Լեֆեվրին, գրողին, ԿԻ պատվիրակին, «Հեղափոխություն կամ մահ» գրքի հեղինակին, գրքի, որը հընչել է կորսված կյանքը գտնող մարդու ձայնի պես,— Լեֆեվրին, որը 1920 թվականի սեպտեմբերին, ծովային սարսափելի դեպքի որը Լեպետու նման մեռել է Օվկիանոսում,

և Լեոպոլդ Լանդերին, Նատոնիայի կոմունիստին, որին ժանդարմներն սպանել են առանց դատի,

և Ընկերներ Ռուպպույին ու Մեսկասին, որոնք մեռել են Ռեվելում, ժանդարմների ոտքերի տակ,

և Ջոն Ռիդին, գրողին,

և Մուստաֆա Սուբխիին, Թուրքին, որին սպիտակ-գվարդիականները 1919 թվականին գլխիվայր կախել են Սիմֆերոպոլում,

և Համֆարիր Վիլյամ Ջոն Խիուլետին, որը յեկել էր Վալլսից և չվերադարձած՝ մեռել Ռուսաստանում,

և Այգեպան Թումաս Խյուրսկյումուրտոյին, որին սպանել են սպիտակ բանդիտները Ֆիննական դավադրության օրերին, Լենինգրադում, 1920 թվականի օգոստոսին,

և Կորեացի Հոյին, որին գնդակահարել են ճապոնացիք: Գնդակը, ծակելով նրա կուրծքը, դուրս է յեկել մեջքից և ջարդել ձեռքերի վրայի մետաղաթելի հանգույցը, և ձեռքերը կարողացել են վեր բարձրանալ, ցույց տալով նրա համառությունն ու հաստատելով վերջին ճիչը.— «Ցանր է գիտակցել, որ մեռնում ես ոչինչ չարած, այնուամենայնիվ յես մեռնում եմ հեղափոխության համար»,

և Զարսիկ Հիդայետ Եմինբեկլուն, որը 1919 թվականին, Աստրախանն սպիտակ բանդաներից պաշտպաներու ժամանակ ընկավ զենքը ձեռքին, այն օրը, յերբ լրանում եր նրա 83 տարին:

ԱՐԹՈՒՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Լուսաբացին Փարիզն ապստամբեց:

Դեպքերը,— ինչպես հետաքրքիրների մի ամբոխ,— առաջինններն եյին, որ անհապաղ ողակեցին Մոնմարտրի դրաման:

Ոչ ոք չեր կարողանա բացատրել այն պատճառները, թե ինչո՞ւ քաղաքն այնպես վստահ է, որ վաղուց սպասվող ընդհարումը վերջանում է,— յեթե այդ վստահությունը չզրկեր անհրաժեշտությունից: Խանութները,— որոնք սիրում են փակվել ուրիշ թաղամասում պատահած կռվի կամ հարևան շրջանում տեղի ունեցող խուզարկության պատճառով,— բաց եյին նույնիսկ հրաձգության շրջանում, փողոցներն էլ լիքն եյին ժողովրդով, ինչպես հասարակական մեծ տոների օրերին: Բանկերը չնչեցին արժեթղթերի ամենաչնչին տատանում անգամ, կարծես թե Մոնմարտրի դեպքերը վերաբերում եյին միայն փողոցի շարժումը կարգավորելուն: Վիրավորներին ուղղակի Մոնմարտրից տեղափոխում եյին վարձու կառքերով, ինչպես տոնավաճառի հրմշտկոցի զոհերին: Դատարկ կառքերի շարանները կենտրոնից արագ սլանում եյին դեպի այդ անսպասելի զբաղմունքը և հիշեցնում եյին հարսանեկան մի շքախումբ: Կառքերի ընթացքի ժամանակ նրանց վրա եյին թռչում ցիլինդրավոր և կեպիավոր մարդիկ, կարեւոր չքերթի բնույթ տալով դատարկ այդ կառքերի թեթևսոլիկ շարժմանը:

Ինչպես ամեն մի իսկական ապստամբություն, մարտի 18-ը շատ դեպքերի վաղուց սպասված հետևանքն եր: Փարիզի պաշարումը, սովը, դժգոհությունը պաշտպանության կառավարության դեմ, գործազրկությու-

նը, առևտրական ու արդյունաբերական կյանքի քայքայումը, հանրապետության անկայունությունը, կառչելով կենցաղային թելերից, մանրակրկիտորեն վերաբերում եյին ամեն ինչի,— նույնիսկ մարդու սրտի զգացմունքներին: Յերբեք Փարիզն այնքան տարօրինակ չեր յեղել, ինչպես այդ վաղակի, կարծես ջերմոցներում աճեցրած մարտի առաջին որերին: Այնտեղ ամեն ինչ շարժվում եր առանց առաջ շարժվելու, ինչպես վազքը տեղում: Այդպես յերբեմնակի, գարնանը, ծանր, անձրևով բեռնված ամպը, հանդիպելով քամիներին, դողդողալով ու վեր ու վար անելով, կողքի ընկնելով կամ ծառանալով, չի կարողանում շարժվել տեղից: Նա իր փեշերով հպվում ե զանգատանը, անտառի ծառերի ծայրին, կամ շվարած կռթնում ե տների կտուրներին, ճիգ ե անում շարժվելու, կայծակներն են բոցավառվում ինչպես այրվող մոտորներ,— սակայն յերկար մնալով քամիների միջև, հորդառատ անձրևի փոխարեն բարակ ու թույլ անձրև ե մաղում: Գրեթե հունվարից սկսած՝ այդպես եր Փարիզում,— վտանգների, սոցիալական բաղխումների փոթորիկներ, պատրիոտիզմի ցնցումներ, անիշխանությամբ հրապուրվելու ձգտումներ, ձերբակալություններ, խուզարկություններ, մեղադրանքներ, հոգսեր, հուշագրեր, համաձայնություններ, լրագրական հարա—հրոցներ, խռովություններ սաքսոնյան զորամասերում,— վորոնք շըրջափակել եյին Փարիզը,— փաստի անգործունեյություն, ժամկետանց մուրհակներ, զեկուցումներ գիտությունների ակադեմիայում այն մասին, թե «կարելի՞ յե հավատալ Հերոդոտին, վոր հին Յեգիպտոսում խոզերը յերկրագործի լծկան անասուններ եյին»— և, վերջապես, ցուցահանդեսներ քաղցած նկարիչների, վորոնք առաջարկում եյին զորատեսերի համար ներկել ձիերն ամեն գույնով ու յերանգով:

Հիմնարկները վաղուց չեյին աշխատում:

«Այժմ այնքան փաստեր կան, վոր յես կարող եմ միայն լուրերին հավատալ»,— ասել ե Ռենանն ինչ-վոր մեկին:

Վաղահաս գարնան այն որերում Փարիզի այգիները պճնվեցին վաղաժամ սաղարթով, ձգվեցին դեպի վեր, դեպի աջ ու ձախ, ցանկապատերի վրայով կանաչ-փրփուր թափեցին փողոցները: Այգիների մարգախոտերը, աճելով այստեղ ու այնտեղ, իրենց անխնամությամբ սկսեցին նմանվել անբնակ տափաստանների: Կանաչը դուրս եր գալիս սալահատակների անցքերից ու խորշերից, կարծես վաղուց աճել եր քարերի տակ և միայն հարմար ժամ եր պետք, վորպեսզի վեր բարձրանա: Նույնիսկ բարիկադներում, վորոնք կառուցվել եյին գերմանացիներից պաշտպանվելու որերին,—նույնիսկ նրանց տակ Հուդայի ծառի նոր կտրված բները, փռվելով գետնին, լպրծուն կոկոններ եյին արձակում և ներաճում հողի մեջ: Ծառերն իրենց վոստերով գրկում եյին բարիկադները, կարծես ձգտելով առմիշտ նրանց ամրացնել իրենց արմատներին:

Նույնիսկ բանջարեղենի ամայացած, իր բախտին թողնված շուկայում, նրա փակ կրպակների շուրջը ճոխ ծլում եյին ինքնացան սոխն ու կարոսը: Խոհանոցի կանաչեղենը պատրաստ եր բոլոր միջոցներով յուրացնել շուկայի վաղուց դատարկված դաշտը: Իսկ Բուլոնի անտառում, վորը դեռ մինչև գերմանացիների հետ զինադադար կնքելը կտրատված եր պաշտպանության նպատակով, յերևացին այնպիսի բույսեր, վորոնք յերբեք չեյին յեղել այնտեղ,— շագանակների ու թզկիների արմատներին անսպասելիորեն, վորպես հին ժառանգականության յերևույթներ, վորոնք սոսկ խեղդված են յեղել հետագա կուլտուրայով ու դաստիարակությամբ,—աճեցին թխենու, յեղրևանու և մոշի թփերը:

Քաղաքի վերևում ողն ուներ նուրբ, գրեթե աշնանային պարզություն և այնպիսի հստակություն, վորը վերհիշվում եր մանկության ապրումներից, յերբ բոլոր որերն արևավառ եյին, բոլոր յեղանակները—հաջողակ:

Ողն սկսեց զգալի դառնալ, մի բան, վոր առաջ չկար, և որը չեր կարողանում սկսվել առաջվա կարգով, յերբ փողոցների ամայությունն ու ցուցափեղկերի փակ

աչքերն ընդունում էյին լուսաբացի հին ծեսը,— սալահատակի վրայից լվող ավելների շրշոցը, պահապանների բարձրաձայն հորանջյունը, առաջին սայլի զուսպ դղրդը և լրագրավաճառների ու շրջիկ կանաչավաճառների դանդաղորեն սաստկացող աղմուկը: Հիմա որն սկսվում էր միանգամից, ինչպես ռազմանվագախմբի ակկորդ,— և իր հենց առաջին քայլից ծավալվում էր ամբոխների այն ցայտուն ու բարդ շարժմամբ, յերևույթների այն կազմակերպված շփոթով, վորոնք վաղուց չէ, ինչ հատուկ էյին մի վորևէ հազվադեպ, հաջող և համարձակորեն ծավալված կեսօրվան: Ծնվելու համար հիմա որը նախապատրաստվում էր գիշերը: Սովորական բան դարձավ— մինչև լուսաբաց հերթի կանգնել հացի խանութների մոտ, այնտեղ պատահել նորություններ իմացող մարդկանց, վաղաժամ յեզրակացությունների ավանսներով արագացնել դեպքերը, կամ պատահարներն սպառել ականատեսների հեքիաթներով,— և այդ ամենն այնպես, վոր արևը ծագելիս նոր որն արդեն լինում էր ամբողջովին կազմակերպված և անսխալ ձևավորված:

Գիշերները,— մի բան, վոր առաջ քաղաքը չէր թույլ տալիս իրեն,— քնեած, քաղքենիական հանդարտին հանձնված ժամերին սկսեցին յերգել փողոցների հատման տեղերում: Դեռևս սիրտ էր շարժում պրուսացիների պաշարման ժամանակվա յերգը·

Զրկեցին ինձ ամեն ինչից,
Բայց վրանս Ֆրանսիական յերկրումն է:

Այս յերգը լսելիս սիրտը սկսում էր խփել վիրավորանքով և արիությամբ: Սակայն փողոցի յերաժիշտներն արդեն յերգ դարձրին Բլանկայի «Սոցիալական քննադատությունից» վերցրած ֆռազը·

Այն որը, յերբ
Կհանեն գելարանակը
Աշխատավորների բերանից,
Նա կդրվի
Կապիտալի բերանը:

Դանտոնի «Համարձակություն, համարձակություն և դարձյալ համարձակություն»-ը բազմիցս արտահայտվում էր վոտնավորներով և պրոզայով, դառնում էր ասացվածք և մանուկների չվոցի յեղանակ:

... Մարտի 18-ի լուսաբացին գեներալ Վինուայի զինվորները շրջապատեցին հրետանու պարկը,— վոր գտնվում է Մոնմարտրում,— վորպեսզի տանեն Ազգային գվարդիայի թնդանոթները: Ամպը, վոր յերկու ամիս կանգնած էր Փարիզի վրա, այդ որը չէր կարող ապստամբություն հորդել, յեթե ձիերը ժամանեյին: Սակայն ձիերը չկային: Լուսաբացը բլուրներից յերևաց ավելի շուտ, քան պետք էր: Նրա համատարած ու անսպառելի սպիտակության մեջ գործարանային շչակները թվացին ուշացած, տանտիկինները գլխակորույս վազեցին մթերքի, մանուկները սուր չվոցներ արձակեցին փողոցներում, շտապելով հացի հերթ բռնել: Ինչ-վոր մեկը հարցրեց զինվորներին, թե ինչո՞ւ համար են տանում թնդանոթները: Ցեվ դրանից էլ սկսվեց:

Սրանով վերջանում է փաստերի խրոնիկան, վորովհետև հետագայում որն անցնում է միմիայն մարդկային տրամադրությունների ձեռքը:

Ռավեն, կահ-կարասիների Փաբրիկայի հյուսնը, վերադառնում էր աներոջ մոտից: Հետո նա պնդում էր, թե առավոտյան ժամը յոթին զինվորներն արդեն յեղբայրանում էյին ժողովրդի հետ, և աղջիկները նստել էյին թնդանոթների յերախներին, ինչպես գարեջրատների նկարներում— միայն թե այստեղ տակառների վրա էյին նստած: Մինչդեռ ջրմուղի բանվոր Բիդուն, վորը դուրս էր յեկել Ռավեյի հետ միասին (նրանք յերկուսով հյուր էյին գնացել ու գիշերել միասին), ժամի իննին դեռ կռվում էր առանց բարեհաջող յելք սպասելու և, նրա կարծիքով, միայն ժամը մեկին վերջացավ ամեն ինչ: Սակայն ժամը տասնմեկին Ոլիվյեն, նրանց ընկերը, փոքրիկ յերևակայության տեր մի մարդ, ցուցարարների հետ դեպի քաղաքային խորհրդարանն էր գնում հենց այն փողոցներով, վորտեղից տարան վիրավորներին և վորտեղ գնդակահարեցին գեներալներ Թո-

մին և Լեկոնտին: Նա ասում էր, թե վոչ մի կրակոց չի չսել: Նրա ձայնը ճռճռում էր ու սայթաքում հնչյունների վրա, ինչպես փչացած յերաժշտական տուփի մեխանիզմ, վորովհետև նա յերգել էր՝ վեց կիլոմետր քայլելով: Նա տուն բերեց անպարկեշտ կուպլետների հատվածներ, վորոնցից նրա կինը դեն փախավ, իսկ յերեխաներն ուղղակի հրճվում եյին: Աղջիկների վերաբերյալ յերգերը և զանազան չարաճճիությունները խընդության, հանգստի ու բավականության միակ ձևն եյին: Իսկ անցյալ հեղափոխությունների յերգերն այնքան քիչ են, վոր իսկույն դառնում են հիմներ: Ոլիվյեն մեծ բավականությամբ յերգեց ուրախ ու անհամեստ կուպլետները և ժամը վեցին մեկնվեց քնելու, կարծես վաղը տոն լիներ:

Հետևյալ օրը, յերբ դեպի Վերսալ տանող ճանապարհին ձգվեցին կառավարական հիմնարկների դումակները և ուղեկալների մոտ բացվեցին ռազմապահեստները՝ զենքեր տեղափոխելու համար, քաղաքում և վոչ մի գնով չէր կարելի բեռնակիր սայլեր գտնել: Քաղաքի հեռավոր թաղերում, վորտեղ այնքան եյ հաճախ լրագիր չեյին կարդում, այս իրարանցումը վերագրում եյին գարնան և պատերազմի վախճանին: Սակայն, փչրելով այդ լիրիկական վստահությունը դեպի վերահաս տաք օրերն ու հանգիստը, ամեն ինչի գներն արագությամբ բարձրացան: Սկսեց ավելանալ գործազուրկների թիվը, ինչպես կիրակի օրը զբոսնողների: գործազրկությունը հանկարծ ծավալվեց ինչպես յերկար ժամանակ թաքնված համաճարակ, և ընդգրկեց ամբողջ պրոֆեսիաներ, թաղեր, ընտանիքներ: Հիմնարկները գրեթե չեյին աշխատում: Մարդիկ հեղեղի պես հոսում եյին դեպի զանազան կողմեր,— դեպի Վերսալ, գավառ, Ազգային գվարդիա, վորտեղ մթերաբաժին եյին տալիս,—կամ ցրվում եյին տները, Փարիզի արվարձանները, իրենց բանջարանոցները, վորտեղ ընդակաղամբ կար և վորտեղ նրանք հանգիստ եյին ուզում գտնել:

Ամբոխները գիշեր–ցերեկ կանգնած եյին Լաֆիտի

հանրակառքերի գրասենյակի մոտ: Դրամի չքանալու պատճառով գրասենյակը տոմսերը վաճառում էր կահկարասիքով, մորթիներով, արծաթե ամանեղենով և նույնիսկ լավ տեսակի գինիներով: Սեն–Դենիում մի արկղ գինին փոխանակում եյին սաքսոնյան հրետավորների մի ձիու հետ: Գիշերները քաղցած պերշերոնները (Պերշ շրջանի ծանրաքարշ ձիերը), վորոնք լծված եյին մեծ, փակ կառքերին, շրջում եյին Փարիզից մեկնել ցանկացողների բնակարանները:

Անսպասելիորեն առաջ յեկան աղմկոտ շուկաներ քաղաքի ծայրամասերում, Շարենտոնում, Սեն–Դենիի դռների մոտ, Պալտենի ապրանքային կայարանում (վորտեղ ապաստանել եյին Ելզասի փախստականները), և վոր գլխավորն է, Վիկտոր կոչված բուլվարի ծայրում, վորտեղ զինվորները վաճառում եյին իրենց բանակային խղճուկ ինչքը: Փարիզի փողոցներից արագ չքացավ այն ամենը, ինչ վոր քաղաքացիական էր և քսաներեքին, Կոմունայի հայտարարման օրը, քաղաքը ռազմական ճամբար էր թվում:

Մարտի յերեսունին, Մոլյերի դահլիճում, վորտեղ գերմանացիների պաշարման ժամանակ ժողովրդական հավաքներ եյին լինում, վոմն Պեյզան, վորը նոր մարդ էր Փարիզում, զեկուցում էր Փարիզի Կոմունայի մասին: Ռավեն չտապեց այնտեղ: Դահլիճը լեփ–լեցուն էր: Զեկուցումից ու բանավեճից Ռավեն ընդհանրապես այն տպավորությունն ստացավ, վոր հեղաշրջումը կատարված է ու այլևս խոսելու բան չկա: Յերեք–չորս օրից հետո Վերսալում գտնվող մինիստրները կհասկանան, վոր մնացել են առանց պետության, և դեպքերը կվերջանան այնպես, ինչպես վոր Փարիզը հրամայե: Ռավեն հանգիստ վերադարձավ տուն: Ապրիլի յերկուսին, յերբ նույն Պեյզանը Ազգային ակումբում, Ռավեյի աներոջ տանից ընդամենը յերեք ռոպեյի ճանապարհի վրա, դասախոսում էր «Մագնիտիզմի և յեկեղեցականների սպիրիտիզմի մասին», Ռավեն ծիծաղի համար այնտեղ

տարավ զոքանչին, կնոջն ու յերեխաներին։ Այստեղ նրանք հանդիպեցին տասնյակ ծանոթների, դասախոսն ուշանում եր, խոսակցությունների աղմուկը բռնել եր դահլիճը։ Ամեն րոպե նորություններ եյին ստացվում և նրանց հրեշավոր անհավանականությունը դառնում եր սարսափելի։ Խմբով ժամանեցին 73-րդ մոնմարտրյան գումարտակի ազգային-գվարդիականները, նախկին ատաղձագործներ։ Ռավեն նրանց ճանաչում եր 67 Թվականի Միջազգային ցուցահանդեսից։ Նրանք պատմեցին (նա հառաչեց), թե վերսալցիների յերկու զորասյուն, մեկը շարժվելով Վոկրեսոնի և մյուսը Նանտերի վրայով, միացել են Բերժում և ջարդել Կոմունայի ջոկատը, վորը պաշտպանում եր Կուրբեվուան։ Այս ճակատամարտում Գարիբալդյան գումարտակը գրեթե ամբողջովին վոչնչացել եր։

— Պետք ե պատերազմե՞լ,— հարցրեց Ռավեն և ինքն ել պատասխանեց՝ գլուխը վստահությամբ շարժելով,— դատարկ բան, այդ Թյուրիմացություն ե։ Ուզում են վախեցնել և ուրիշ վոչինչ։ Ճի՞շտ եմ ասում։

Ազգային-գվարդիականներն ուսերը շարժեցին։ Մոտեցավ Լեվչենկոն, վորը կրկեսի դերասան եր և ապրում եր Ռավեյի աներոջ տանը։ Նրա դեմքին կային գրիմի սպիտակ ու կանաչ հետքեր։ Նա չարունակ աշխատում եր ժպտալ, բայց չեր կարողանում։

— Քաղաքապետության մեջ պետք ե ճիշտ տեղեկություններ լինեն,— ասաց նա,— գնա՛նք։

Սակայն ընդհանրապես բոլորի տրամադրությունը շատ լավ եր ու Թեթևամտորեն ուրախ։ Ամենուրեք տիրում եր այն համոզմունքը, թե քանի վոր կառավարությունը փախել ե Վերսալ, ուրեմն նա պետք ե խնդրի խնայել իրեն։

Հինգ հոգով գնացին քաղաքապետություն։ Այնտեղ հանգստությամբ հայտնեցին, վոր դժբախտաբար Կուրբեվուայի դեպքը ճիշտ ե, բայց բանը դրանում չե, այլ նրանում, վոր վաղն արշավելու յեն Ազգային գվարդիայի յերկու ջոկատները, վորոնց պետի գլխավորեն

Ֆլուրանսը, Ռանվյեն, Բերժերեն, Եդը և Դյուվալը,— Կոմունայի առաջին գեներալները։

— Այդ հարձակումը պետք եր ձեռնարկել դեռ մարտի քսանին,— ասաց Լեվչենկոն,— ինչ, վոր հեշտությամբ կարելի յեր ձեռք բերել այն ժամանակ, հիմա Թանդ կնստի։

— Բարեկա՛մս, դուք ի՞նչ եք հասկանում այդ գործերից,—ընդհատեց նրան Ռավեն։ Նա նման եր անձրևի տակ Թրջված շեկ ճնճղուկի, կարճահասակ եր, ճկուն, դզզված մազերով։— Դուք կրկեսի դերասան եք, լա՛վ։ Դուք կրԹված մարդ եք, հրաշալի՛։ Դուք հեղափոխական եք, գեղեցի՛կ։ Բայց դուք Ֆրանսիացի չեք։ Վերսալի հետ ունեցած մեր գործերից յես հասկանում եմ ավելի, քան դուք։ Վոչի՛նչ չենք կորցրել,— պա՞րզ ե ձեզ համար,— և վոչինչ չենք վրիպել։ Մի՞Թե մենք չգիտենք, վոր Տյերը բանակ չունի։ Վաղը մերոնք կվճռեն գործի բախտը։ Հանգստությո՛ւն։

— Իմ հայրենիքում յես ավարտել եմ զինվորական դպրոցը, յեղել եմ կռիվներում, բանտ եմ նստել և շատ բաների նկատմամբ ունեմ իմ հայացքները, Ռավե։ Դուք պարզամիտ եք։

— Դուք չեք ճանաչում Ֆրանսիան և Փարիզը,— ասաց Ռավեն, կարմրելով։ Նա հուզված եր, բայց չեր ուզում վիրավորել ռուսին։— Յես ձեզ խորհուրդ եմ տալիս, վերցրեք հրացանը և արեք այն, ինչ վոր մենք բոլորս ենք անում։— Այնուամենայնիվ նա չկարողացավ զսպել իրեն և առանց նայելու նրա աչքերին, ավելացրեց.— և ավելի շատ լռեցեք։ Այո՛

Ապստամբությունը տոնի բնույթ ուներ։ Արևմտյան յերկաթուղու արհեստանոցներում, ամսի տասնիննի գիշերից սկսած, չեյին կարողանում մեկը մյուսի հետևից գծին շոգեքարշեր տալ։ Պաշարման ու զինադադարի օրերի անգործունեյությունից հետո Թևավորվում եր աշխատելու կամքը։ Վնասված և բոլորովին այլանդակված վագոնների շարքերը, վորոնց համար տեղ չկար դեպոյում, կանգնած եյին յերկաթգծերի վրա կայարան–

ՀԱՅ. ... Гос. Публ. библ. ... ՀՍՍՀ ССРА ... А. Мясникяна ... Մ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ների միջև, բերդի պարսպի յերկարությամբ։ Ելզասի փախստականները նրանց դարձրել եյին իրենց ֆերմաների յերկվորյակներ— անիվների մեջ սարքել եյին հավանոցներ և կողքերից, կցումների մոտ՝ ծածկեր հորթերի համար։ Փարիզի արվարձանների և ռազմաճակատին մոտ գյուղերի փախստականները, վորոնք քաղաք եյին թափվել գերմանացիների պաշարման ժամանակ, փորփրել եյին հողը յերկաթուղու յերկու կողմերից, գազար ու սոխ ցանելու համար։ Յերկաթուղու տնակներում տեղավորել եյին իրենց այծերին, մանուկներին ու շներին։ Լյա Վիլետտում, ապրանքատար վագոնում, վորի անիվները թռցրել եր գերմանական արկը, մի վոմն Սերաս խանութ եր բացել։

Ամսի 19-ից 20-ի գիշերը մեքենավար Լամարկին հանձնարարված եր շոգեքարշով անցնել շրջանցիկ յերկաթուղին և զեկուցել նրա վիճակի մասին։ Ժամի յերկուսի սկզբում նա դուրս յեկավ Կլիշի կայարանից։ Բուլվարը, վորի մոտով անցնում եր յերկաթգիծը, մեռած եր թվում մինչև Նեյի դարպասները, ուր գիշերը կռվում եր փողոցի շարժման հետ և հուզված նահանջեց թեթև կառքերի, սայլակների, ձեռնակառքերի և հետիոտների գրոհից։ Կանոնավոր բանակի զորամասերը թմբուկ զարկելով, ճանապարհ եյին բաց անում ամբոխի մեջ։ Լուսանում եր, բայց դեռ լուսաբացը չեր ծավալվել, յերբ նա հասավ մինչև Պուան-Դյու-Ժուր, մինչև Ոթեյ կոչված վիթխարի ուղանցույց կամուրջը։ Ճանապարհի վարպետը դիտում եր այդ կամուրջը։ Դեպի Վերսալ սայլեր եյին գնում։

— Այս տարի շոգն ուղղակի գարնանից կսկսվի,— ասաց կայարանապետը,— տես, կառավարությունն արդեն ամառանոց ե գնում։

Լամարկը մի կտոր խծուծով սրբեց անքուն աչքերը։ Սայլերը շարունակում եյին գնալ դեպի Վերսալ։ Սենայի հոսանքով գնում եյին լաստանավերը, մակույկներն ու կամրջանավերը։

Կայարանապետը նայում եր ու ծիծաղում, բայց Լամարկը նրան չհասկացավ, վորովհետև նա դեռ չգի-

տեր, թե նախորդ օրն ինչ եր պատահել։ Առավոտը նրան թվաց հաճելի։ Վարպետը ձախ ափից նշան տվեց, և Լամարկը խռպոտ հաչոց բարձրացրեց իր շոգեքարշի շչակից։ Նա մեքենան հեշտությամբ առաջ մղեց կամուրջի վրայով։ Հեռվում գտնվող բոլոր առարկաներն արագ մոտենում, թռչում եյին դեպի կամուրջը։ Յերբ նա դանդաղ անցնում եր գրանիտե կամարները, վորոնք հարյուր յոթանասուն հինգ մետր յերկարություն և հսկայական բարձրություն ունեյին և վորոնց տակ կծկված եր գետը,— աջ կողմում տեսավ Բիյանկուր կղզին իր սպիտակ շենքերով և Սենայի վրա տասնյակ առագաստներ, իսկ ձախից և ապա բոլոր կողմերից— քաղաքը՝ կանաչ ու կարմիր կտուրներով, վորոնք արևի տակ վոսկեփայլում եյին,— բուլվարները, առափնյա փողոցները և բազմաթիվ ճեմելիքները։ Սենայի վրայով դեպի ներքև եր հոսում Փարիզի օդը,—ածուխի ծուխն ու նարինջների բուրմունքը։ Լամարկի աչքերը քոր յեկան և արտասվեցին, յերևի այն պատճառով, վոր նա միանգամից տեսավ այդքան հեռավոր ու տարբեր առարկաներ։ Նա նորից խծուծով սրբեց աչքերն և անցնելով կամուրջը, արագացրեց շոգեքարշի ընթացքը։ Շոգեքարշը սլանում եր հարավային պարսպի մոտով։

Յերբ նա վերադարձավ դեպո, մեքենավար Դորսեյը աչքով անելով կանչեց նրան։ Լամարկը դեռ չեր իջել շոգեքարշից, յերբ նոր կարգադրություն ստացավ— վեց վագոն յերկաթ տանել մինչև Անյեր։ Յեվ նա շարժեց մեքենան, թեպետ հանգստանալու իրավունք ուներ։ Այնքան յերկար չեր աշխատել, վոր հանգստանալու և ուտելու կարիք չեր զգում։

— Ձանձրացել եմ քաղաքում մնալուց,— ասաց իր ոգնականին,— դու ե՞լ։

Ոգնականը ծիծաղեց և չփոթված ասաց.

— Յես ել։ Յեվ գիտե՞ս, կարծես թե առաջին անգամ եմ մեքենայով գնում։ Հետաքրքիր ե ու յերկյուղալի։

Քսանմեկին, կեսօրին, Անյերում, գնացքի սպասարկուների շենքում Լամարկը յերեք օրվա մեջ առա-

ջին անգամ վերցրեց մի լրագիր: Դեռ չէր կարդացել, յերբ հասկացավ, վոր այդ կատարվել է:

— Այսպես ուրեմն, քաղաքացիներ, ընտրում ենք Կոմունան,— ասաց նա, աշխատելով չզարմանալ, և լրագիրն այլևս նրան հարկավոր չէր:

Սենյակում կային հինգ հոգի և բոլորն էլ սկսեցին վիճել մեկ-մեկու ձեռք բռնած: Հիշեցին ամսի տասներեքը, յերբ յերկու հարյուր տասնհինգ գումարտակների պատգամավորների ժողովը զինվորական բարձրագույն պետ ընտրեց ծերունի Գարիբալդիին: «Ահա թե յերբ սկսվեց»: «Գարիբալդին չի բանը, սկսվեց վոչ թե նրանից, այլ Ֆլուրանսի դատավճռից»:

— «Ո՛, վոչ, այդպես չէ, սկսվել է ճիշտ տասնհինգին»:— «Տասնհինգի՞ն, այդ ի՞նչպես է յեղել»:— «Ինտերնացիոնալի Ֆեդերալ Խորհուրդը հայտարարեց իր բացահայտ գոյությունը»:— «Ֆեդերալ Խորհո՞ւրդը. ի՛նչ հիմարություն: Յեթե Մոնմարտրի տղերքը չխլեյին թնդանոթները, չգիտեմ գործն ինչպես առաջ կգնար»:

Լամարկը բաց թողեց ընկերների ձեռներն և ասաց.

— Թքել եմ ձեր բոլոր ասածների վրա: Պետք է ձայն տալ հօգուտ Կոմունայի, ահա թե ինչ: Գուցե և ճիշտ է, վոր մենք պատրաստ չենք և մեզ կխանգարեն պրուսացիք ու չգիտեմ էլ ինչ, բայց յերբ հայտարարված է Կոմունա, թքել եմ մնացած բաների վրա: Յես գիտեմ, թե ինչ է Կոմունան,— յես արդեն մի անգամ կռվել եմ նրա համար: Քառասուն ութ թվականի՛ն:

Ապրիլի տասնմեկին Մարքսն իր աղջկանից նամակ ստացավ, թե Լաֆարգը (նրա ամուսինը) Բորդոյից մեկնել է Փարիզ: Բորդոյում զինված ապստամբության նախապատրաստությունը համարյա վերջացել էր: Մնացել էր լուծել ընդհանուր ղեկավարության մի քանի հարցեր:

Մյուս որը Մարքսն իր մոտ կանչեց անունով իրլանդացի և ծագումով ու դաստիարակությամբ գերմանա-

ցի Ալֆրեդ Ո՛Բրիենին և հայտնեց նրան, վոր անհանգիստ Լաֆարգը Փարիզումն է:

— Արդյոք դուք մոտ ժամանակներս չե՞ք գնալու այնտեղ,— հարցրեց նա առանց յերկարաբանության:

Հյուրը նույնպիսի շիտակությամբ, գիտակցելով զրույցի կարևորությունը, պատասխանեց, վոր հավանորեն կկարողանա գնալ յոթ-ութ որից հետո, վորովհետև Լոնդոնում բազմաթիվ անհետաձգելի գործեր պահանջում են նրա ներկայությունը:

Հյուրը խոսելիս գլուխը դարձնում էր դեպի ձախ և աջ, նայելով Մարքսին, վորն արագ քայլում էր իր առանձնասենյակում: Հատակի ներկը Մարքսի քայլերի ուղղությամբ ջնջվել էր: Ըստ յերևույթին նա իր սենյակում աշխատելիս վաղուց սովորություն ուներ քայլել:

Խոսելիս նա ձեռը դնում էր մի վորևէ առարկայի վրա, կարծես թե խոսքեր արտասանելը նրա համար նյութական պրոցես էր, նույնը, ինչ վոր գործողություն սկսելը:

Առանձնասենյակը գտնվում էր ներքևի հարկում: Դեպի այգին նայող լուսամուտից լույսը հորդում էր սենյակի մեջ, լուսավորելով առարկաներն ու պատի վառարանը, վորն ամբողջովին ընդգրկված էր այդ անդրադարձ լույսով, ինչպես մեռնող բույսի ջղաձգություններով: Վառարանի յերկու կողմերում գտնվում էին գրքերով լի պահարանները: Լույսը լիզում էր նրանց ստորին, կաղնուց շինված մասերը և փայլեցնում ապակիները, վորոնց հետևում պսպղում էին գրքերի վոսկեզօծ կռնակները, կարծես վառվել էին սկսում:

Իսկ սեղանի վրա, լուսամուտի մոտ բոցավառ պատկեր էր: Շարժվելով թեթև քամուց, թղթերը կարծես կծկվում էին շոգից և կարծես հենց այն է, պիտի մոխրանային: Սենյակի մեջտեղում գտնվող յերկրորդ փոքրիկ սեղանը, վորը ծանրաբեռնված էր գրքերով, ձեռագրերով, աղյուսակներով, լուցկու տուփերով և կիսատ ծխված սիգարների պոչերով, իրենից ներ-

կայացնում էր մի այնպիսի աշխույժ անկարգություն, կարծես նրա վրայի առարկաները գտնվում էին իրենց վերջին ձևավորման պրոցեսում, որը սակայն անժամապես կանգ էր առել այդ ձևավորման հենց յեռուն մոմենտին:

Վառարանի, կաշվե դահավորակի և բազկաթոռի վրա ընկած էին բաց գրքեր: Մարքսը պահպանում էր իր հին սովորույթը,—միքանի գրքերի ընթերցումը միանգամից: Մինչև վերջ չընթերցված գրքերի, սկսած ձեռագրերի, գծված աղյուսակների, փոքրիկ թերթերի վրա արված թռուցիկ դիտողությունների այդ ամբողջ հրապուրիչ քաոսով Մարքսն օգտվում էր ինչպես իր մարմնի անդամներով:

— Եթե դուք կարդաք իմ «Բրյումերի տասնութի» վերջին գլուխը,—սկսեց տաք-տաք խոսել Մարքսը,—դուք կտեսնեք, որ, իմ կարծիքով, Ֆրանսիական հեղափոխության առաջիկա վերելքի նպատակը պետք լինի ոչ թե բյուրոկրատիկ-զինվորական մեխանիզմի հանձնումը մեկի ձեռքից մյուսի ձեռքը, ինչպես այդ կատարվում էր առաջ, այլ այդ մեխանիզմի ջախջախումը…

Հասնելով սենյակի հակադիր անկյունը, նա ավելացրեց, ձեռքով թխկթխկացնելով գրակալը.

— Դրանումն է կայանում մայր ցամաքի ամեն մի իսկապես ժողովրդական հեղափոխության նախապայմանը:

Մարքսը գրեթե չէր փոխվել այն ժամանակից սկսած, երբ Օ'Բրիենը առաջին անգամ տեսավ նրան կիրակի օրը, Միդլանդ այգում, մանուկների հետ զբոսնելիս: Այդ չորս տարի առաջ էր:

Առաջվա պես նրա ձայնը կենտրոնացված էր և ուժեղ, ամրակազմ ու լիքը մարմինը—աննախատեսելի կերպով թեթև և շարժումների ժամանակ հաստատուն: Թվում էր, թե հուրը անցել է նրա մեջ և ածխացրել է նրա բեխերը, մորուքն ու գլխի փարթամ մազերը, մոխրացնելով նրանց ծայրերը:

Առաջվա պես նա մնում էր նույն մարդը, որը

հրապուրվում է անչափ, բայց միևնույն ժամանակ խորապես տրամաբանական էր իր դատողություններով ու վարմունքներով կտրուկ և անսահմանորեն ճիշտ:

Մարքսը շարունակում էր խոսել և քայլել հատակի վրա իր թողած արահետով: Նա ոչ մի ուշադրություն չէր դարձնում իր հյուրերի բացահայտ շփոթության վրա, թեպետ, ըստ յերևույթին, նկատեց այն: Նրա խոսքն այնքան պարզ էր, որ Օ'Բրիենը, հակառակ իր ցանկության, զմայլվում էր պարզության այդ ամենաբարդ շարժուձևով, փոխանակ խոսքերի բովանդակության մեջ թափանցելու:

— Փարիզի մեր հերոսական ընկերների փորձը նույնպիսի բնույթ է կրում: Վո՛րպիսի ճկունություն… —և արդեն մյուս անկյունից,—վո՛րպիսի պատմական նախաձեռնություն,—և սենյակի մեջտեղից—ինքնազոհության վո՛րպիսի ընդունակություն ունեն փարիզցիները: Վեց ամսվա սովից և ավերածությունից հետո, որոնք ավելի շուտ ներքին դավաճանության, քան արտաքին թշնամու գործողությունների արդյունք են, նրանք ապստամբում են պրուսական սվինների տակ, կարծես թե Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև բոլորովին պատերազմ չի յեղել և կարծես թե թշնամին դեռ չի կանգնած Փարիզի դռների առաջ: Պատմության մեջ չկա՛ այդպիսի հերոսություն… Մի՞թե դուք նույն կարծիքին չեք… Եթե նրանք պարտվեն, դրա պատճառը կլինի միայն նրանց բարեհոգությունը:

Նա կծու շեշտեց վերջին բառը, տալով նրան միանգամայն բացասական իմաստ, և ստուգելու համար, այդ բառը կրկնեց անգլիերեն ու ֆրանսերեն:

— Այո, յես կգնամ ութն օրից ոչ շուտ,—անպատեհաբար ասաց Օ'Բրիենը:

Մարքսն արագ նայեց նրան:

— Գիտե՞ք, հարկավոր է այժմ ևեթ գնալ դեպի Վերսալ, երբ Վինուան և ապա Փարիզի Ազգային գվարդիայի ռեակցիոն մասը ինքնակամ հեռացել են Փարիզից,—ասաց նա մի այնպիսի տոնով, որով Օ'Բրիենին խորհուրդ էր տալիս մեկնել ոչ թե ութ օր հետո, այլ

ավելի շուտ։— Մոմենտը բաց ե թողնվել կասկածամտության պատճառով։ Չեյին ուզում քաղաքացիական պատերազմ սկսել, կարծես թե Տյերը,— այդ գզվելի ճիվաղը,— այդպիսի պատերազմ չի սկսել Փարիզը զինաթափելու իր փորձով։

«Ճիվաղ» բառը նա արտասանեց ֆրանսերեն, վոր ավելի պատկերավոր եր։

— Յերկրորդ, Կենտրոնական կոմիտեն չափազանց շուտ հրաժարվեց իր լիազորություններից, տեղի տալով Կոմունային,— դարձյալ շնորհիվ ազնվության, վորը մինչև կասկածամտության ե հասնում...

— Այսպես թե այնպես, Օ'Բրիեն, Փարիզի այժմյան ապստամբությունը, յեթե անգամ նա ճզմվի հին հասարակության պահապան շների կողմից, հուլիսյան ապստամբության ժամանակներից սկսած՝ մեր կուսակցության ամենապանծալի քայլն ե հանդիսանում։

Նա կանգ առավ Օ'Բրիենի առաջ, բարեհոգությամբ և մեղավորաբար դիտելով նրան։

— Այդպես ուրեմն... դուք այնտեղ նրանց այս պիտի ասեք ուղղակի յերես առ յերես... Լսո՞ւմ եք։ Յես արդեն շատ խոսեցի, զգում եմ։ Ուրեմն հայտնեցեք նրանց այս մասին, իսկ յես հենց այսոր միևնույն բանը կգրեմ Կուգելմանին, Գերմանիա։

Նա բռնեց Օ'Բրիենի ուսերից և այնպիսի փաղաքշանքով սեղմեց, վոր Օ'Բրիենը շփոթվեց։ Յերկուսն էլ կանգնեցին քարտեզի առաջ։ Օ'Բրիենն ակամա մտածեց, վոր իր մեջ պարփակված այդ գիտնականը յերբեք չի զգացել, թե ինչ ե մենությունը։ Յերբեմն կարող եր ցավալի թվալ, թե ինչու նա չեր կարող լինել մտերմական, պատկանել ինքն իրեն կամ միայն իր խոսակցին։ Օ'Բրիենի հետ ունեցած նրա զրույցը դարձավ Փարիզին ուղղված մի հրահանգ։ Կուգելմանին ուղղվելիք նամակը և ինչվոր դեռևս անպարզ յենթադրություններ անշուշտ այժմ ձևավորվում եյին, յերբ նա կանգնած եր քարտեզի առաջ և մատով ջղայնորեն թխկթխկացնելով քարտեզը, ասում եր, տալով պլանների մի նոր կոմբինացիա.

— Վերսալի լկտիները փարիզցիների առաջ դրին մի յերկընտրանք,— կամ պայքար սկսել, կամ առանց պայքարի անձնատուր լինել։ Վերջին դեպքում բանվորների բարոյալքումն ավելի մեծ դժբախտություն կլիներ, քան մի շարք առաջնորդների կործանումը, վորը հնարավոր ե ներկա պայմաններում։

Հետո նա բաց թողեց Օ'Բրիենին և լուռ ուղեկցեց մինչև դուռը։

— Դուք հույս ունեք շուտով վերադառնա՞լ,— հարցրեց նա վոգեշնչված։

— Այո, մայիսի սկզբին,— ասաց Օ'Բրիենը։

— Այդպե՛ս, այդպե՛ս։ Հրաշալի՛։ Յես մեծ նորություններ կսպասեմ ձեզնից։

Մեկ ամիս հետո, մայիսի տասներեքին, փեսայի դրության հետ մեկտեղ, ստանալով այդ նորությունները, Մարքսը թելադրեց հետևյալ նամակը Ինտերնացիոնալի Փարիզի սեկցիային.

«Թանգագին քաղաքացիներ Ֆրենկել և Վարլեն,

«Յես խոսեցի նամակաբերիս հետ։

«Արդյոք հարկավոր չե՞ ապահով տեղում պահել Վերսալի լկտիներին վարկաբեկող թղթերը։ Նախազգուշության այդ միջոցը համենայն դեպս չեր խանգարի։ Բորդոյից ինձ գրել են, վոր քաղաքային վարչության վերջին ընտրությունների ժամանակ ընտրվել են Ինտերնացիոնալի չորս անդամներ։ Գավառներում սկսվում ե շարժումը։ Ցավոք սրտի այդ շարժումը խիստ տեղական և խաղաղ բնույթ ե կրում։ Յես ձեր մասին մի քանի հարյուր նամակ եմ գրել աշխարհիս բոլոր ծայրերը, վորտեղ գոյություն ունեն մեր կազմակերպությունները։ Կոմունայի ծագման հենց սկզբից բանվոր դասակարգը կողմնակից ե յեղել նրան։ Նույնիսկ անգլիական բուրժուական լրագրերը հրաժարվեցին դեպի Կոմունան ցույց տված իրենց այն կատաղի վերաբերմունքից, վորը գոյություն ուներ սկզբնական ժամանակներում։ Ինձ հաջողվում ե նույնիսկ այդ լրագրերում Կոմունայի վերաբերյալ համակրանքի թղթակցություններ զետեղել։

«Իմ կարծիքով, Կոմունան շատ ժամանակ ե կորցնում

մանր բաների ու անձնական հաշիվների վրա: Ըստ յերևույթին, բանվորների ազդեցության հետ միասին կան նաև ուրիշ ազդեցություններ: Սակայն այդ նշանակություն չեր ունենա, յեթե դուք հաշվի առնեյիք կորցրած ժամանակը: Միանգամայն անհրաժեշտ է, վոր դուք շտապեք անել այն, ինչ վոր հարկավոր եք գտնում անել Փարիզի սահմաններից դուրս, Անգլիայում և այլ յերկրներում: Պրուսացիք ամրությունները չեն հանձնի վերսալցիներին, բայց հաշտություն կնքելուց հետո (մայիսի 26-ին) կոգնեն կառավարությանը՝ Փարիզը շրջապատելու իր ժանդարմներով:

«Վորովհետև Տյերն և յուրայինները, ինչպես գիտեք, Պուե–Կերտեյում կնքված դաշնագրով հսկայական կաշառք շահեցին, ուստի նրանք հրաժարվեցին Բիսմարկի առաջարկած գերմանական բանկիրների ոգնությունից,—այլապես նրանք կզրկվեյին կաշառքից: Քանի վոր նրանց դաշնագրերի իրագործման նախապայմանը Փարիզի նվաճումն եր, նրանք Բիսմարկին խնդրեցին առաջին վճարի մուծումը հետաձգել մինչև Փարիզի գրավումը: Բիսմարկն ընդունեց այդ պայմանը: Յեվ, քանի վոր Պրուսիան ինքն էլ այդ դրամի կարիքն ունի, նա ամեն կերպ կհեշտացնի վերսալցիների գործը, վորպեսզի արագանա Փարիզի գրավումը: Այս պատճառով արթուն յեղեք»:

Քաղաքում ամեն ինչ նոր իմաստ եր ստանում: Ուղեկալների մոտ ծավալվեցին ամրությունների կառուցման աշխատանքները: Ավազով լի պարկերը, քարերով լի տակառները, վորոնք յերևում եյին ամենուրեք, այնպիսի տպավորություն եյին թողնում, վոր կարծես քաղաքում ընդհանուր վերանորոգություն եր կատարվում: Փարիզի ոպերայի կառուցվող շենքի շուրջն յեղած փայտեղենն իսկույն տեղափոխվեց և ոգտագործվեց: Արվարձանների սալահատակները կորցրին իրենց սկիզբը. նրանց գրանիտե սալերն և կոպիճները չքացան պաշտպանության կառուցվածքների մեջ: Կարուսել հրապարակում շարունակվում եր կարկանդակների տոնավաճառը: Թա-

փառաշրջիկ կրկեսների ծաղրածուները վժժում եյին ու գլխկոնծի տալիս, հաճախորդներ հրավիրելով:

— Սալմանդր-ձի, ցատկոտող ձի, պարող և ընտելացրած ձի, համեցե՛ք:

— Վորոտ ու կայծակ, մեծ փոթորիկ և մրրիկ. ամբողջ բեմը կծածկվի ամպերով և գիշերվա պես մութը կլինի: Այդ ժամանակ կենդանի թռչուններ կթռչեն: Համեցե՛ք:

— Հակոտնյաներ, ծիծաղաշարժ նվագ, մարզիկ Գրոյի ատամնային ա՛կտ:

«Լուսավորող պանորամայի» փայտյա տաղավարում Գարիբալդին մտնում եր Դիժոն: Զգարանի քաթանե պատերին խայտաբղետ ներկերով գրված եր՝ «Կորչի բարեհոգությունը», «Փարիզը պահանջում է, վոր հինգ միլիարդը...»:

Կոշտուկի դեմ հեղուկ վաճառող մի մարդ ուսին դրած ձեռնափայտի վրա տանում եր մի պլակատ, հետևյալ մակագրությամբ.—«Յես ծեր եմ: Յես աշխատել եմ»:

Մի ինչ-վոր աֆերիստ հեռադիտակ եր դրել և կես ֆրանկով առաջարկում եր դիտել Մոնմարտրի մարտկոցները: Վերադառնալով գերեզմանոցից, դիակառքերը կանգ եյին առնում կրպակների առաջ, կազմելով բորսայական ճոխ կայաններ: Կարուսելների, կրկեսների, ձգարանների, գուշակների վրանների և առևտրական կրպակների միջև յեղած նեղ անցքերում վշշում եյին մանղալները: Նրանց վրա, ահագին կաթսաներում թռչկոտում եյին կարտոֆիլի կտորները և այրվող ճարպից ծուխ ու գոլորշի յեր բարձրանում:

Խեղկատակի մեկը յերկարաձև տուփից հնչուն շրըխկոցով դուրս հանեց քսան փայտիկ, վորոնցից վայրկենապես շինեց մի բալագան, վրան մի թեթև քող քաշեց, առջևի կողմից կախեց գույնզգույն մի գործվածք և գոռաց.

— Ա՛յ ձեզ փարիզցի, վորը պաշտպանում է իր դրոշը:

Ամբոխը թողնելով կարտոֆիլն ու հեռադիտակը, վազեց դեպի խեղկատակը:

Փարիզցիների բազմության մեջ չերևում էյին գավառներից յեկած մարդիկ: Գյուղացիները, ուսերին պարկեր, հոնքերը կիտած, պտտվում էյին կարուսելների վրա, կամ լուռ կանգնում էյին խեղկատակների մոտ: Նրանք ամաչելուց չէյին ծափահարում մարզված ձիերին, այլ ի նշան հավանության, վոտները խփում էյին կրկեսների փայտյա վրաքաշերին: Մոռացության տալով ժամանակը, կամ վերջինս չփոթելով տարածության հետ, նրանք ժամերով կանգնում էյին միևնույն տեղում, լսելով վորևէ հռետորի և կկոցած աչքերը ձեռքով արևից պաշտպանելով, դիտում էյին լայնորեն ծավալված քաղաքը:

Ռենցի կրկեսի դահլիճի մուտքում Ռավեն նկատեց ռուս դերասանին: Լեվչենկոն հոգնած դիտում էր նստարանները, վորոնց վրա արդեն տեղավորվում էր հասարակությունը: Նա կապույտ տրիկոյի վրայից հագել էր թավշյա բաճկոն: Հուզմունքից նրա վոտները ցնցվում էյին.

— Հը՛, Ռավե, յես իրավացի՞ էյի,—ասաց նա, յերբ հյուսնը ամբոխի միջով հասավ նրան:

— Յես էլ հենց նրա համար յեկա, վոր պարզեմ, արդյոք իրավացի՞ յեք դուք,—պատասխանեց Ռավեն:

— Վաղը Մոն-Վալերյան ամրությունը կսկսի ռմբակոծել Կուրբեվուան: Տյերն ուժ է հավաքել: Ինձ տխուր է թվում ապստամբության բախտը, տխո՛ւր:

— Դատարկ բա՛ն է: Դուք մոռանում եք Ֆրանսիան: Այս իրարանցման մեջ վերջին խոսքը նրան է պատկանում:

— Ռավե, այսօր ընկել է Մարսելի Կոմունան, ապա ուրեմն խելքի յեկեք և արեք բոլոր պատշաճ յեզրակացությունները:

Ռավեն բռնեց բարակ, սև ձողից, վորպեսզի գլխապտույտից վայր չընկնի, սակայն դա ձիավարի ճկուն մտրակն էր և նա քիչ մնաց յերեսն ի վայր ընկներ ավազի ու թեփի մեջ:

Երաժշտության հնչուն և ուժեղ ձայնը կտրեց նրանց

խոսակցությունը: Դահլիճի մուտքը մեծ թափով բացվեց ճարտուկ ձիու առաջ: Լեվչենկոն հանեց բաճկոնն և մեծ ցատկումով հասավ ձիուն, կրկնելով՝ «տխուր է թվում բախտը»: Ռավեն դուրս յեկավ կրկեսից, առանց սպասելու այդ համարի վերջանալուն: Անցնելով հրապարակը, նա հիշեց, վոր նույնիսկ չի հարցրել, թե նրանք վորտեղ կպատահեն և ռուսն ինչ է մտադիր անելու: Սակայն նա հանգստացավ այն համոզմունքից, վոր նրանք վաղն անպայման կպատահեն: Կրկեսում յեղած հանդիպումից հետո որն անցավ սովորական ձևով: Նա վոչնչով չշոշափեց Ռավեյի գոյությունը, կարծես թե նա մնացել էր կրկեսում, չէր վերադարձել փողոցները: Հետո իջավ յերեկոն, ժամանակն անցնում էր ինչպես յեղանակ, և Ռավեն հետո չէր հիշում, թե ինչ նշաններ էր նկատում և ինչ էր նախազգում նրա վերաբերմամբ: Այդ օրը նրա համար վերջացավ կրկեսում և այն բոլորը, ինչ վոր հետո պատահեց, արդեն վաղվա նյութ էր: Նա գնաց և հերթի կանգնեց խանութի առաջ և վերադառնալով, քնեց յերկու տարբեր մտքերով պաշարված: Բայց նա քնեց անհանգիստ, ընդհատումներով, ինչպես ժամացույցի մեխանիզմը ճոճանակի մեկ զարկից մինչև մյուսը: Նույնիսկ քնի մեջ նորություններ էյին հասնում նրան: Նա գիտեր, վոր Կոմունայի ջոկատները նահանջել են դեպի Մայո կոչված դարպասները: Կինը վերադարձավ խանութից, առանց վորևէ բան գնելու: Նա գիտեր, վոր Լեվչենկոյի հետ ունեցած բանավեճը ոպերատիվ գործողության բնույթ էր ստանում: Վաղվան որն ամբողջովին ձևավորվում էր, թեպետ շարունակվում էր սարսափելի, անհատակ խորությամբ գիշերը: Նա դուրս յեկավ տանից, ասելով, թե չգիտե յերբ կվերադառնա:

Ցերեկվա ժամը յերկուսին հատ ու կենտ մարդիկ և ամբոխներն շտապում էյին դեպի Բոժոն հիվանդանոցը: Մայո դարպասների մոտ առավոտյան ճակատամարտում սպանվածների և վերքերից մեռածների դիակներից դեռ կյանքի ու վառոդի հոտ էր զգացվում: Դիակառքերը,

որոնցից ամեն մեկին վեց ձի յեր լծված, արագությամբ հասան հիվանդանոց, ինչպես զինամթերքի սայլեր: Հապաղելու ժամանակ չկար: Բոլորի աչքի առջև դիակները դրվեցին դագաղների մեջ: Մեկ դիակառքի վրա—յերեսունհինգ դագաղ: Փողհարները նվագեցին մարտական մոտիվներ, վորոնց հապճեպ ռիթմն արագացնում եր դագաղների մոտ յեղած առանց այն էլ տարափելի իրարանցումը: Ժամը չորսին յեկավ Դելեկլյուզը Կոմունայի հինգ անդամների հետ և սկսեց ավելի ևս շտապեցնել: Վերջապես, փարիզյան վրիժառուների ջոկատը շարժվեց դեպի մեծ բուլվարների կողմը: Ջոկատին հետևում եյին դիակառքերը: Ձիերը թռչկոտում եյին ինչպես զորատեսի ժամանակ, դագաղները ճռճռում եյին ու յերերվում իրենց յերերուն հենարանի վրա: Տասնյակ ձեռներ պահում եյին այդ խախուտ պիրամիդները: Փողհարները հանդիսավոր ահազանգ եյին հնչում, հավաքելով ամբողջ քաղաքը:

Փողոցների հախուռն հոսանքում սգերթն սկսեց ընթանալ վեհ ու հանդիսավոր դանդաղությամբ: Այժմ նա շարժվում եր անզգա քայլերով, ինչպես խոսակցությամբ տարվածների ամբոխ, վորոնք միայն իներցիայով են գնում: Ամեն կողմերից հավաքված քաղաքը ողողում եր սգերթը և չեր բաց թողնում, կարծես պահանջում եր, վոր նա տա ամեն ինչ, ինչ վոր կարող է և հագեցնե բոլոր զգացումները, վորոնք բացված են վրիժառության, կատաղության և հույսերի համար: Խոսակցությունների ու կանչերի աղմուկը յերբեմն ծածկում եր յերաժշտությունը: Վոչ վոք ճիշտ չգիտեր, թե այդ որն ում են թաղում և վոչ վոք էլ չեր հետաքրքրվում: Դեռևս ամեն ինչին անգիտակ, բոլորն էլ զգում եյին, վոր բանն անունների մեջ չէ: Այդ որն ամեն մեկը կարող եր լալ իր մեռելի վրա,—պարզամիտ իդեալիզմ, անսկզբունքայնություն, թեթևամտություն կամ վախկոտություն: Ռավեն ձեռքն ամուր դրել եր ինչ-վոր մեկի անանուն դագաղին և մերթընդմերթ մատներով թխկթխկացնում եր այդ դագաղի խոնավ, հենց նոր տաշված պատը:

Փողոցները սգերթին դիմավորում եյին վողբով ու կոծով, վորոնցից կանգ եյին առնում ձիերը: Հաճախակի կանգնելը հոգնեցնում եր, ընթացքի դանդաղությունը՝ ջղայնացնում: Դանդաղաշարժությունը, ծանրությունը, հոգնածությունը խիստ զգալի յեր: Փողոցներն ընդհարվում եյին փողոցների հետ և հանդիպակաց հրապարակներում սկսում եյին իրարանցումը, մինչև վոր նրանցից մեկը նահանջում եր, իր բազմությունները ներածելով տների բակերը կամ այդ՝ բազմությունները մղելով դեպի նրբափողոցները: Ծուռով սգերթը բաժանվեց ոլակների և դիակառքերն անջատվեցին մեկը մյուսից: Նրանց միջև գնում եյին դատարկ վարձակառքերը, գարեջրի տակառներով բեռնված սայլակները, ինչ-վոր ճանապարհորդներով կալյասկաներ և վարդապետների կառետներ: Թվում եր, թե յուրաքանչյուր կառք ինչ-վոր բան է տանում գերեզմանոցում թաղելու և ահա, ազատվելով հանդիսավոր թաղման սգերթից, տանում է իր կենդանի կամ մեռած աճյունը: Հրետանու յերեք կապիտան,—Լա-Մարսելեզը, Ռոշն ու Մարտենը, վորոնք իրենց տասներկու թնդանոթներով լուսաբացին կասեցրել եյին վերսալցիների հարձակումը, գնում եյին սայլի վրա կանգնած, ինչպես գիլյոտինի դատապարտվածներ: Նրանք հենց նոր յեկել եյին խրամատներից՝ ընկերներին մինչև գերեզման ուղեկցելու համար: Մոնդերեն, վոր առավոտյան ճակատամարտի ժամանակ նրանց յերեքի հրամանատարն եր, յուրաքանչյուր փողոցահատում ճառ եր արտասանում: Նա փաթաթված եր կարմիր ժապավեններով ու վզնոցներով, ինչպես պրիզի ձող: Կապիտաններն աղաղակում եյին՝ «Ի զեն» և թափահարում եյին թևերը: Նրանց դեմքերից անընդհատ հոսում եր քրտինքը, ինչպես ցուսաբացին, յերբ թնդանոթների տաք խողովակների շոգից նրանք հանում եյին շապիկները և վառում եյին կրակը հնոցապանների պես: Պերլաշեզ գերեզմանոցի մոտ սգերթը կանգ առավ միտինգի: Դիակառքերը մի կողմ անցան, կառապանները պարկերը կախեցին ձիերի մռութից և իրենց կառքերի մոտ պպզելով, սկսեցին ծխել: Քաղաքի վրա յերեկոն եր իջնում:

Ով չի պառկել թաց հողի վրա, մարմինը վոջլոտ, ցրտից մատներին կպած հրացանով, քաղցից փակվող աչքերով և միևնույն ժամանակ չի մտածել, վոր աշխարհը գեղեցիկ ե,—նա յերբեք չի ապրել և վոչինչ չգիտե կյանքի մասին:

Վորքա՜ն առատ լույս ու ծաղիկներ կային այդ մարտ ամսին, վորն ուժգնաթափ համակեց քաղաքը, կարծես թե վաղուց սպասում եր պատերի հետևում, վորպեսզի իրեն ներս թողնեն նիհարած Փարիզը: Վորքա՜ն հրաշագեղ, վորքա՜ն պարզ եյին առավոտները, յերբ դեռ չծագած արևը հորիզոնից ուղղելով մի քանի սուր ճառագայթներ, նրանցով քերում եր յերկինքը և պայծառ առկայծում: Այդ ժամանակ ցնցոտիապատ մեգը ներքև եր իջնում վորպես յերկնքից թափվող փոճոկ, կամ տաշեղ: Հետո փողոցներից ավելներով հավաքում եյին մեգը:

Այդպիսի մի առավոտ եր:

Հսկայական աքաղաղի զի՛լ, հեռու տարածվող կանչը զարթեցրեց Բուխսոնին: Նա բացեց աչքերը: Լուսաբացը դանդաղ վողողում եր սենյակը: Լուսամուտի հետևողը լցված եր վարդագույն-կապույտ մշուշով, նա թավ քուլաներ եր արձակում ու յերերում: Բուխսոնը բացեց լուսամուտը,—արևը վարագուրած խնդառատ փրփուրի մեջ փախչում եյին տների ուրվագծերն և ծառերի չփոթված ուրվանկարները: Ձայներն ու բուրմունքները, առանց ցրիվ գալու, մնում եյին ոդում, ինչպես չոր տերևը հողմի թևերին: Նրանք անցնում եյին կողք-կողքի, իրարից անջատված և առմիշտ կապը կորցրած աշխարհի հետ,—ջութակի մրմունջը, սոխի բարկ բուրմունքը, ոմնիբուսի կրճտոցը սալահատակի հնամյա քարերի վրա: Սենայի վրա, մշուշի մեջ աղմկում եյին բեռնակիր շոգենավերը: Փողոցի անկյունում, յերկու տուն հեռու գտնվող ծխախոտախանութի յերկաթե չերտափեղկերը աղմկեցին այնպես, վոր լսելի յեր ամբողջ թաղում: Բուխսոնը զարմացած լսեց, վոր աքաղաղը դեռ շարունակում ե իր կանչը և վերջինս ուժգին տարածվում ե հեռու: Բուխսոնը դուրս յեկավ լուսամուտից: Նեյի կոչված քարեղեն թաղամասերում առաջին կայսրության ժամանակներից սկսած ընտանի թռչունները տեղափոխվել եյին: Վոչ մի այնպիսի աքաղաղ չեր կարող լինել, վորի ձայնը հիմա լսվում ե քաղաքում, վորևե ուղեկալի մոտ, հենց առաջին թռչնոցից ամբողջ յերեք կիլոմետր հեռավորությամբ:

Ներքևի հարկերում սկսեցին բացվել ու ճռճռալ փեղկերը, սալահատակների վրա զարթնում եյին պահապանները, լսվեց ինչ-վոր կնոջ տանջված ձայն՝ «Դարձի՛ր, դարձի՛ր, այդ կատակ եր», ինչ-վոր անհամբեր մի ձեռք թխկթխկացրեց ծխախոտի խանութի դուռը:

Ծիծաղելով աքլորականչի դատարկ պատմության վրա, Բուխսոնը վազեց ներքև, համարյա վոտ չդնելով սանդուխքի աստիճաններին: Ամբողջ փողոցի բնակիչները վազում եյին պատնեշի կողմը: Ծխախոտավաճառը փակում եր նոր բացած խանութը: Կանայք, զնգացնելով կաթնամանները, կաթ եյին վաճառում: Մարդիկ նրանց առաջ հերթ եյին կանգնել և խմում եյին ընդհանուր բաժակից:

— Աքլորականչը դեպի «Լուիզետտ ե հրավիրում,— գոչեց ծխախոտավաճառը Բուխսոնին,— դրոհ պիտի լինի: Դուք մեզ հե՞տ եք:

Բուխսոնը վազում եր նրա կողքին: Քանի-քանի անգամ նա ցանկացել եր առավոտյան գնալ խանութի մոտ և իր ալբոմում նկարել յերիտասարդ բանվորների ուրախ իրարանցումը՝ կարմրաթուշ, կայտառ ու շաղակրատ կաթնավաճառուհիների շուրջը: Տարորեն բարբարոսական եյին դեմքերն այդ փարիզյան գեղջկուհիների, վորոնցից հացի և ոծանելիքի հոտ եր գալիս: Նրանք առավոտը վաղ խնամքով դանդրացնում եյին իրենց մազերը մի սափրիչի մոտ, վորն իր արհեստանոցը բաց եր անում միայն կաթնաբեր գնացքը ժամանելիս և մեկ լիտր սերով աշխույժ այրում եր նրանց մազերն անիծների հետ միասին, սպունգով տրորում եր թշերը և ածելիով կտրում մատաղ կարտոֆիլի մեծությամբ

կոշտուկները: Նրանք իրենց հետ բերում էին մի այնպիսի ծիծաղ, վորով այստեղ վաղուց վոչ վոք չէր ծիծաղում,—ցափ ու թքոտ, ինչպես խոռուսից առաջացած ծիծաղը,—և անսպառ կոշտություն:

Այն ժամին, յերբ Բուխսոնը դեռ քնած եր, 24-րդ գումարտակի կապիտան Պոլ Ֆրանսուա Լեֆեվրը տասներորդ անգամ վերակազմում եր իր առավոտյան պլանը: Կապիտանը պառկած եր մի լայն պահարանում, վորը վերցված եր կանացի զգեստի արհեստանոցից և բարիկադի հետևում ընկած եր՝ դուռը դեպի վեր: Պահարանից օծանելիքի և զգեստեղենի հոտ եր գալիս: Հոտը խանգարում եր նրա մտքերը: Կապիտանը բարձրացրեց ձեռքերն և բացեց պահարանի դռները: Նրա դեմքն իսկույն կլանեց օդը, վորը գրեթե շոշափելի յեր դառնում: Նրա աչքերը տեսան միայն մի բան,—օդը փախչում եր անհանգիստ, կառչելով ամեն ինչից և քարշ գալով գետնի վրա: Անհայտ զանգի ղողանջը թռչունի պես դանդաղ ճախրում եր շուրջը: Լեֆեվրը դուրս յեկավ պահարանից: «Մ—մ Լուիզետտ» մակագրով սև, վոսկետառ ցուցանակը, վորը առջևից դեմ եր տված բարիկադին, ծածկված եր բշտիկաձև խավով և սեղանների, բազկաթոռների, մահճակալների (վորոնք վոտները դեպի վեր եյին ցցել կամ թեք ընկած եյին ավազով լի պարկերի վրա) վրա յերևում եյին բծեր, հիշեցնելով մարդու մարմնի այն մասերը, վորոնք մնավում են յերկար պառկելուց կամ այլ պատճառներից:

— Չկա վոչինչ այնպես թովիչ, ինչպես թեթև մառախուղը,—ասաց նա, շուրջը նայելով:

Նա կամացուկ մի քանի հրաման տվեց: Բարիկադի հետևում և հարևան տան դարպասների մոտ մարդիկ շարժվեցին:

— Տղերք, յես ասում եմ, ինչ վոր գիտեմ. մառախուղը շատ լավ ե մեզ համար: Պատրա՞ստ եք:—Ձեռները թափահարելով, նա դուրս յեկավ հատուկ անցքով և զինվորներին առաջնորդեց դեպի հրապարակ, վորը հեռու չեր և վորտեղից ձայներ եյին գալիս: Հենց այդ ժամանակ լսվեց այն ճիչը, վորից զարթնեց Բուխսոնի թաղամասը:

— Աղմո՛ւկ, ավելի շա՛տ աղմուկ,—գոռում եր Լեֆեվրը:

— Աղմկե՛լ, մռնչա՛լ, ավելի՛ սաստիկ, նորի՛ց:

Ձախից, Բիզուի գումարտակի տեղից սկսեցին աղմըկել ոմնիբուսների յեղջյուրները:«Լուիզետտի» առաջ, վերին հարկերի լուսամուտներից դուրս նայեցին ապշած ու զարմացած դեմքեր:

— Հե՛յ, գոռացեք, տիկնիկնե՛ր, խփե՛ք թասերը, գոռա՛լ, զի՛լ:

Գիշերային թասակներ ծածկած մարդիկ սկսեցին յերկչոտ գոռալ լուսամուտներից: Ամեն տեղից մանուկները դուրս եյին թափվում փողոց: Նրանք չվացնում եյին, դիվահար լինում, զնգացնում եյին դույլերը:

— Քեռի Լեֆեվրը խելագարվել ե,—կանչում եյին նրանք մեկ-մեկու:

— Սատանանե՛ր. զի՛լ, աղմկե՛ք, ավելի բա՛րձր:

Ձախ կողմում, Բիզուի հարևանի մոտ սկսեցին քնեած ճարճատել հրազենները, բայց աջ կողմում դեռևս խաղաղ ու վտանգավոր լռություն եր,—աջ կողմում Փարիզն եր:

Հրապարակը բոլորովին մոտ եր թվում: Մի ամբողջ փողոցի դղրդյունից խաբված՝ վերսալցիների կրակը խելագար մրրկի պես դեպի վեր եր թռչում: Թնդանոթների ռումբերն ընկնում եյին ծառերի գագաթներին, կտոր-կտոր անելով նրանց և շպրտելով չորս կողմը:

Հրաձգությունը սաստկանում եր, կորցնելով ճիշտ սահմանները:

— Ցիլ՛պա, վազի՛ր հարևանի մոտ, աղմո՛ւկ, աղաղա՛կ, դղի՛րդ,—կարգադրեց Լեֆեվրը:—Ամեն մի քարից վոռը ու կոծ հանել: Ցավ հառա՛չ, գլխավորն ե՝ հառա՛չ: Կես ժամ հետո լինել հրապարակում:

Բիզուն ուներ տարբերկրացի կամավորների մի գումարտակ: Նեգրերը, լեհերը, ռուսները, իտալացիները, շվեդները, բուլղարները, թուրքերը ապստամբության

հենց առաջին օրերից յեկան ցուցակագրվելու և Կոմունան պաշտպանելու համար: Նրանց մեջ կային քաղաքական էմիգրանտներ, բանվորներ, ուսանողներ, դատարկապորտներ, ռոմանտիկներ, հեղափոխականներ: Այն ժամանակ դեռ բոլորի համար պարզ չէր, թե ինչն է մղում այդ մարդկանց՝ Կոմունան պաշտպանելու, առաջին օրերում նրանցից նույնիսկ մի փոքր վախենում էին և, համենայն դեպս, նրանց բավականաչափ չէին հասկանում: Օտարերկրացիների միջամտությունը չափազանց պարտավորեցնում էր Կոմունային, այդ միջամտությունը շատերի համար հաստատում էր ապըստամբության նոր, սակայն միակ ճիշտ բնույթը, երբե վո՛չ միայն Փարիզի և վո՛չ միայն ֆրանսիական գործի:

Կամավորների հրամանատարը Անտուան Բիգուն էր, Մոնմարտրի Ս. Վինցենտի փողոցի ջրմուղային բանվորը:

Նա ծուռ-վոտանի, կորացած մի ծերունի յեր, հաստ ու կենտ խոսքերի մի փոքրիկ պաշարով և ժլատ շարժումներով: Նա իր կյանքում չորրորդ անգամն էր լինում քաղաքի կենտրոնում: Մոնմարտրի ծանոթ խուլ անկյուններից հետո Փարիզը նրան մի տարօրինակ քաղաք էր թվում: Շատ բազմազանություն կար: Նույնիսկ այստեղ, զումարտակում, ել ի՛նչ ասես, նեգրերը խոսում էին իրենց լեզվով, ռուսները—նույնպես: Լեհերն ելի վոչինչ, քիչ-միչ բան հասկանում են, կամ հրեն, իտալացիք,—համարյա մերոնցից են: Իսկ չվեդները, չվեդները, վոնց վոր ձկներ: Թուրքերը հապա՞: Չես ել հասկանա, թե նրանցից ով ով է:

Բիգուն վաղուց ուզում էր ճառ ասել: Չե՞ վոր հարկավոր է մարտիկներին բացատրել, թե ինչումն է բանը: Նա ուզում էր այսպես ասել.—«Մեր այդ սրիկա մինիստրները հաշիվ չտվին ժողովրդին, ահա գլխավոր հարցը: Այդպես թողնել չի կարելի: Հասկանալի յե, չե՞: Այդպես թողնել չի կարելի, այլ պետք է դաս տալ: Հասկանալի՞ յե:

Ու դեռ յերկու որ առաջ, կամ յերեկ նա ուզում էր ասել, բայց այդ Թուրքերը—վոնց վոր ձկներ: Կամ գուցե չվեդներ են դրանք, սատանան ել չի հասկանա: Իտալացիք, մի խոսք ասես նրանց, գոռում են, մարդու ամոթն է գալիս: Եստեղ ի՞նչ կա գոռալու: Իսկ ռուսները լաց են լինում:

— Լեյտենանտ Բիգու, սկսի՛ր,—մոտ վազելով, ասաց Ֆիլիպպը:

— Լսի՛ր, յերևի հարկավոր է ճա՞ռ ասել,—հուզված հարցրեց Բիգուն:

— Անպայմա՛ն: Ցեվ թող քո մարդիկ գոռան, ինչքան վոր ուժերը պատի: Բոլորին ստիպել, վոր գոռան:

Բիգուն կանչեց իր սերժանտներին,—մի լեհացու և յերկու պյեմոնտցիների: Նրանց դեմքերը ցնցվում էին անհամբերությունից: Պյեմոնտցիք ամեն վայրկյան թքում էին:

«Ֆարտաշներ են...փոշին շարունակ մտնում է քթերը...սովորություն է»—մտածեց Բիգուն:

Լեհացին ատամներով բռնել էր ներքին շրթունքը: Բիգուն ուզում էր նրանց մի անգամից քաջալերել՝ ամաչացնելով:

— Տո ձեր տունը չքանդվի,—ասաց նա բավական համարձակ,—արևս վկա, եդ ի՞նչ տեսակ սերժանտներ եք դուք: Դես ու դեն եք ընկնում, հա՞: Բերաններդ ջո՞ւր եք առել, ինչ է:

Նրանք փայտի պես ձգված, լուռ էին, բայց գումարտակի շարքերում ծիծաղ լսվեց:

— Հասկացա՞ք,—հարցրեց նա և ապա ինքն իրեն—«բայց և այնպես դժվար է խոսել, յերբ չգիտես մարդիկ ինչ են ուզում: Ե՛, լավ, լավ: Ցես նրանց կհասկացնեմ: Խոմ մի քանի խոսք պե՞տք է գտնենան: Ասենք ամեն մեկը տարբեր մարդ է, ամեն մեկն իր տեսակ է հասկանում»:

Լեֆեվրի ամբողջ փողոցն աղմկեց:

— Հը՛մ, ահա թե ինչ,—ասաց Բիգուն,—թողնե՛նք քարոզը:—Նա առաջ անցավ: Մարդիկ շունչները պահած, նայում էին նրան:—Ահա թե ինչ,—ասաց Բիգուն:—Այստեղ նա ինքն ել պահեց շունչը: Հետո ի՞նչ: Հա-

պաղեց: Սատանան տանի նրանց, չե՞ որ պիտի լինեն ինչ-վոր կարճ խոսքեր, վորոնք հայտնի յեն բոլորին:

Մարդիկ իրենց շարքերում մի փոքր շարժվեցին, նրանք չեյին կարողանում կանգնած մնալ, անհանգիստ յերերում եյին: Բիգուն նայում եր նրանց և համակվում կատաղությամբ:

— Ո՛ֆ, իժեր...— ուսերը բարձրացրեց, վորպեսզի կշտամբի ազատ և խորը շնչելով, հիշեց ինչ-վոր բան,—այո, կան, սատանան տանի, կան խոսքեր, վորոնք հասկանալի յեն ամեն մարդու,—և գոռաց՝ աշխատե՛լ (անիծվեք դուք, իժեր, միշտ կարելի յե իրար խոսք հասկանալ), աշխատել, ընկերնե՛ր:

Նա գումարտակի մոտ վազեց և բոթեց շարքերի ծայրում կանգնած հենց առաջին մարդուն: Սա նեգր եր:

— Յերգի՛ր, չգիտե՞ս, հապա յերգի՛ր:

Շտապ տալով այդ վերջին հրամանը, նա ծիծաղաշարժ ձայնով գոչեց.

Յե-թե կու-գես լի-նել ինձ հետ,
Հյու-րա-սի-րիր մի բա-ժա-կով,
Քեզ կը-կան-չեմ տունս, ինձ մոտ...

— Հասկացա՞ր: Դու ել մի բան յերգիր ձեր յերգերից: Դու ե՛լ:

— Հասկանալի՛ յե,— գոչեց սերժանտ-պյեմոնտցին,— հասկանալի յե, ելլի, ծերուկ, corp dla madonna senta...

Բիգուն գոչեց՝ հառա՛ջ,—և գումարտակը վազքով տարավ դեպի հրապարակ:

Նրա հետևից թնդացին ձայները:

— Աշխատե՛լ, հառա՛ջ,— գոչում եր նա:

— Աշխատե՛լ ցմահ,— պատասխանում եյին շարքերից:

Մարսելյեզի առաջին փասը լսվեց հինգ լեզվով: Նրա բնական շարունակությունը յեղան սլավոնական մեղմ յերգերը: Իտալական քայլերգերի զորեղ ակկորդները լսվում եյին ընդհանուր յերգեցողության մեջ,

լսվում եյին թուրքերի մխալար վողբերն ու նեգրերի կարճ, հատու յերգախառն արտասանությունները:

Հանկարծ ընդհանուր յերգեցողության մեջ լսվեց պյեմոնտական յերգը, վորն ամեն ինչ յենթարկեց իրեն.

«Այդ ավազակները հարկ դրին նույնիսկ չքավորների հացի վրա և հրացանները ձեռներին՝ հսկում են կալը»:

Այդ յերգը հնչում եր ամենից բարձր, տիրաբար, բայց անսպասելիորեն չքանում եր կողքից հնչող յերգերում— այժմ արդեն բոլորովին ուրիշ լեզվով:

Յեվ այդ բոլորը միախառնվում, միաձուլվում ու ստանում եր բոլորին հասկանալի մի իմաստ,— աշխատե՛լ ցմահ. Հառա՛ջ: Սիրտներդ պի՛նդ: Աշխատե՛լ ցմահ: Haut les coeurs!: Սիրտներդ պի՛նդ:

Հրապարակի վրա յերերում եր մշուշը, քուլա-քուլա լինում, ինչպես բուրդը՝ անեղի լարի տակ,— և սպիտակ ու նուրբ փոստայնի նման կախվում հրացաններից:

Բուխսոնն իր հարևանների հետ սողալով անցնում եր հրապարակից դեպի աջ գտնվող փողոցները: Պասաժի առջև գտնվող թնդանոթը նրանց գլխի վրայով նետեց կրակի, ողի ու յերկաթի մի սոսկալի քաոս:

Ինչ-վոր հարված հասավ Բուխսոնի դեմքին: Նա շնչասպառ յեղավ, կարծես անզգուշաբար ջրի մեջ ընկղմվեց: Նա հանկարծակի հղացավ այն միտքը, վոր իհարկե, հարկավոր եր աշխատել ներկերով և վոչ թե տեմպերայով, ինչպես խորհուրդ եր տալիս Ֆրոմանտենը, և վոր «Լուիզետտ»-ի մոտ այդ առավոտը նրա՝ նկարիչ Բուխսոնի ստեղծագործական ակտն եր: Լապտերապահը նրան բռնեց վայր ընկնելիս և բակի միջով տարավ փոքրիկ փակուղին:

Յերեխաներով և ինչ-վոր կապոցներով կանայք, պատմելով կռվի մասին, սաստիկ շաղակրատում եյին: Նրանք դիմեցին Բուխսոնին, վորպեսզի սա բացատրի այն ամենը, ինչի մասին նրանք վիճում եյին:

Կանանցից մեկը բռնեց Բուխսոնի ձեռքից։

— Կե՛ր այս սուպը,— ասաց նա,— յերեկվանն է, բայց թարմ է։

— Յեթե կարող ես,— ասաց մի ուրիշ կին,— յեկ իմ սենյակը, պառկիր, հանգստացիր։

— Վո՛չ,— ասաց Բուխսոնը,— յես կվերադառնամ։

Նա հենվեց պատին, վորպեսզի սրբի ճակատի քրտինքը և մի փոքր հանգստանա։ Լապտերապահը նոր վիրավոր եր քարշ տալիս։ Այդ առաջին արյունն եր, առաջին զոհը, վորին տեսավ Բուխսոնը։

Վիրավորի բերանից թելի պես կախվել եր արյունախառն թուքը ատամների կտորտանքների հետ միասին։ Աչքերը կիսափակ եյին, շրթունքներն անորոշ բառեր եյին կմկմում։

Բուխսոնը նայեց նրա դեմքին,— ծանոթ չե՞ արդյոք, բայց վիրավորի դեմքն այնքան անորոշ արտահայտություն ուներ, վոր ճանաչել չեր կարելի։ Այդ դեմքը կարծես պատկանում եր միքանի մարդկանց, վորովհետև նրա վրա բացվել եյին շատ նմանությունների գծերն և բոլորովին չքացել եյին տարբերող հետքերը։

— Բարեկամս Բիգուի գումարտակից է,—ասաց լապտերապահը բավականություն արտահայտող ձայնով, վորպես մի մարդ, վորը մեծ ավարի տեր է դարձել։ Նա վիրավորի վոտքից մինչև գլուխը դիտեց այն մաքսանենգի հայացքով, վորը նոր անցնում է սահմանը և վտանգավոր բեռ է տանում։ Նրան խիստ դուր եր գալիս յուրաքանչյուր վիրավոր, վորին քարշ եր տալիս այստեղ։

— Իտալացի յե,— ասաց նա, վորոշելով ազգությունը,— ե՛յ, ախպերացու, ո՞վ ես դու։

Վիրավորը պատասխանեց հառաչանքով, վորին խառնվեցին միքանի բառեր։ Սրանցից մեկն ավելի հասկանալի յե,—«Camapado»։

— Վողջո՛ւյն, յեղբայր իմ,—ինքնաբավականությամբ ասաց լապտերապահը։

— Դիմացկուն մարդ, անվեհե՛ր մարդ:

Վիրավորը ֆրանսերեն մրմնջաց.

— Մեկն ու մեկդ վազեցեք Բիդուի գումարտակը: Ծերուկին չեն հասկանում: Մերոնք քառասուն հոգի յեն: Վոչ մի խոսք: Հասկանո՞ւմ եք: Անհաճելի բան է:

Բուխսոնը հեռացավ պատից, վորի վրա խոնավ բիծ մնաց նրա մեջքից:

— Վորտե՞ղ է Բիդուն,— հարցրեց նա:

— Բիդուն հրաշալի մի ծերուկ է,— պատասխանեց վիրավորը, ժպտալով և կորցնելով իր մտքի թելը:

Փակուղու վրա կրային փոշին բարձրացավ: Պատուհանների ապակիները դողդողում ու զրնգում եյին:

— Հիմա այնտեղ հասնել անկարելի յե,— ասացին կանայք:

— Դուք տեսնո՞ւմ եք, վոր հարկավոր է:

— Հիմա այնտեղ հասնել անկարելի յե: Ճի՞շտ է: Իհարկե, անկարելի յե հասնել:

— Քառասուն ութ թվին մենք, իհարկե, արշավում եյինք յուրահատուկ ձևով,— ասաց լապտերապահը:— Լինում եր, վոր մենք ծակում եյինք ահա այն հրդեհապատնեշները, մտնում եյինք հրեն. ասենք թե՝ այն խանութը, ծակում հետևի պատը և դուրս գալիս դատավոր Ֆայլկի հյուրասենյակը: Հասկացա՞ք: Դատավորի խոհանոցը ծակելով, մտնում եյինք բժիշկ Սոտենի բնակարանը: Հենց այստեղից էլ դուրս եյինք գալիս հրապարակ:

Բուխսոնը շարժեց գլուխը:

— Չափազանց դանդաղ ու անճիշտ ընթացք,— ասաց նա և դուրս գնաց փողոց: Դեռ նա չեր արել տասը քայլ, յերբ բոլոր կողմերից յերեխաները սլացան դեպի փակուղին:

— Բիդուն նահանջում է,— գոչում եյին նրանք,— քաղաքացիներ, Բիդուն նահանջում է:

Այն բնակարանը, վորի հետին պատերը քանդվում եյին յերկաթե ձողերով, շփոթված վայր եր թափում

իր բոլոր ինչքը: Սառցե ծծակների պես զնգալով, ջարդվում եյին ճենապակյա իրերը: Լուսանկարները, վորոնց վրա միջատները յերկարատև հանգրվան եյին գտել, վայր եյին թռչում: Աթոռները թռչկոտում եյին և ընկնում վոտներն ի վեր: Դղրդալով ու փշրվելով, մարդկանց և իրերի վրա եյին թափվում պատերը: Առարկաները վայրկենապես գունատվում եյին: Կրային փոշին հաստ շերտով նստում եր նրանց վրա:

Անցքը տանում եր դեպի սեղանատուն: Տղերքը կաբինետի ու ննջարանի միջով ներխուժեցին մթին մի խուց: Կացինը խրվում եր պատի մեջ, վորի մյուս կողմում ինչ-վոր շրխկոց եր լսվում: Այդ կողմից խուլ կերպով լսվեց ցասկոտ մի ձայն.— «Այստեղ անց ու դարձ չկա, չկա՛, սատանան ձեզ տանի»: Ձայնը չքացավ փոշու մառախուղում, յերբ ընկա՛ն տախտակները, թափվեց ավազը և նեգրերի՝ կրից սպիտակած դեմքերը յերևացին անցքում:

Բիդուն պաշտպանում եր թիկունքը, իսկ Բուխսոնը տներում անցքեր եր բաց անում: Անցքերից մեկը տանում եր բուկինիստ Գիշարի սենյակը: Բուխսոնը բացեց լուսամուտը, դիտեց յերկինքը, հոտոտեց օդը:

— Չլինի՞ թե մշուշը ցրվի,— ասաց նա լապտերապահին,— դանդաղ ենք առաջ գնում:

— Ո՞ւր է թե դանդաղ է: Մի կերպ կհասնենք: Իսկ դու, ընկեր, աղջկա նման թեթև ես,— զարմացած ասաց նա և զարկեց նկարչի ուսին:

Նա այդ ասում եր արդեն տասներորդ անգամ, ինքնաբավականությամբ ու հպարտությամբ, վորոնց չեր բավարարում և վոչ մի ուշադրություն: Բավական եր, վոր Բուխսոնը մի հաջող կարգադրություն աներ, և ծերունին հրհռալով դիմում եր բոլոր շրջապատողներին և աչքերը խաղացնելով ասում եր.— Յես եմ նրան փրկել: Տեսնում եյի, վոր հենց այն է, ընկնում է ու ընկնում, բայց գետնին փռվել չի ուզում: Յես նրան քարշ տվի մեր փակուղին:

Յեթե Բուխսոնը նետվում եր դեպի անցքը, ծերունին գոռում եր նրա հետևից.

— Շտապի՛ր, դես-դեն մի՛ նայիր, յես այստեղ եմ, կոգնեմ:

Վերջապես, յերկաթե ձողն անցավ պատի միջով և դիպավ գրքերով լի պահարանին: Գրքերը դես ու դեն թռան, ինչպես ուղեղը՝ ջարդվող գանգից: Հին գրքերի արմատները պոկվեցին ու թափթփվեցին հատակին: Դուռը բացվում եր դեպի ներքին բակը: Հենց բակի կողքին, չինական լվացքատան արտաքին պատի տակից լսվում եր կռվի աղմուկն ու չրխկոցը:

— Հանգստանալ և հավաքվե՛լ,— հրամայեց Բուխսոնը: Նա նստեց ջրմուղի ծորակի մոտ, նստարանի վրա:

Տունն աշխուժանում եր: Մերթ չրխկում և կտոր-կտոր թափվում եր կտուրի գնդակահար կղմինդրը, մերթ թռչում եր լուսամուտի ապակին: Իտալացիք միորալյեզով սողում եյին դեպի կտուրը, դուրս գալով տանիքի լուսամուտներից: Դատավորի բնակարանում բացված անցքից ներս եյին բերում վիրավորներին:

Բնակարանների լուսամուտներից մարդիկ դիտում եյին այն բոլորը, ինչ-վոր կատարվում եր: Նրանք գրեթե մերկ եյին, հենց նոր արթնացած, և անհեթեթ ընկնում եյին դես ու դեն, մերթ սրտագին ոգնություն հասցնելով, մերթ ջղաձգաբար յելք փնտռելով այդ անսպասելի վիճակից: Խոհանոցներից, ինչպես միշտ, տարածվում եր յեփվող կերակուրի հոտը, մանուկները լալիս եյին, ծծմայրերը գրկի յերեխաներն առած, հեռանում եյին դեպի թիկունք: Գումարտակը վազում եր ամբողջ տանից: Լվացքատան մի սենյակում անհայտ մի պառավ տնքտնքալով վառեց սպիտակեղենի մեծ կաթսայի վառարանը և նստեց նրա մոտ, կարմրած ու կրափոշիով լցված աչքերը դես ու դեն ուղղելով:

— Քառորդ ժամ հետո յեռաջուրը պատրաստ կլինի,— ասում եր նա իր կողքից վազողներին:

Բակի խորքում կիսաձայն հնչեց դաշնամուրը: Բուխսոնը մոտեցավ լուսամուտին: Սենյակում մայրն ասաց՝ «Մարի, սկսիր Բեթհովենի եկոսեզը: Զպետք է դեպի բակը նայել, Մարի»: Կարծես թոթովախոսելով

ու թլվատելով, դաշնամուրը անորոշ ձայներ եր հընչում: Յերրորդ հարկից յերկչոտ մի ձայն յերգեց.— «Իմ վշտի հետ միշտ մենակ, յես միշտ մենակ յերազում եմ... Յես յերազում եմ, յերազում... զում, յես յերազում եմ... ե՛ե՛ե՛... յես միշտ մենակ յերազում եմ... յերազում... ե՛ե՛ե՛...»:

Բակը մռայլ տարակուսանքով նայեց այն կողմը, վորտեղից յերգ եր լսվում: Յերգչուհու չինծու անտարբերությունը նրան անազնիվ թվաց: Գվարդիականը մոտեցավ լուսամուտին և մի քար նետեց նրա գոգը: Կնոջ ձայնը կերկերաց, յերգը դադարեց, բայց իսկույն սկսվեց խելագար տեմպով, վորը հիշեցնում եր տոնավաճառների տրոփապարը: Բակը ծիծաղեց:

Լապտերապահն առանց քաշվելու բացեց լուսամուտի վարագույրը, վորտեղից գալիս եր դաշնամուրի ձայնը:

— Բարի լույս,— ասաց նա:— Հենց վոր մերոնք գործի անցնեն, խնդրում ենք բոլորիդ իսկույն սկսել մարսելյեզը: Վոչ պակաս, քան տասն անգամ իրար հետևից, որիորդ:

— Հայտնեցեք՝ թե յերբ սկսեմ: Մայրիկ, լսո՞ւմ ես: Աստվա՛ծ իմ, մայրիկ: Յես կբանամ բոլոր պատուհանները, լա՞վ:

—Լավ, մադեմուազել, յես նշան կտամ: Խնդրում ենք բոլորիդ, հանեցեք ձեր մեքենայի բոլոր արգելակները: Տասն անգամ, վոչ ավել, վոչ պակաս: Գիտե՛ք, զգացմունքով: Այդ ժամանակվա ընթացքում ամեն ինչ կվերջանա:

Մի կին, հագած չինական խայտաբղետ խալաթ. վորի թափանցիկ հյուսվածքի միջից նշմարվում եյին նրա վտիտ և անհամաչափ վոտները, անցավ, մատուցարանով տանելով աղացած սուրճի մի բլրակ: Լվացքատանը յեռաջուրն արդեն պատրաստ եր:

— Դե՛հ, մոտեցեք, ով վոր կա,— գոչում եր կրից փոշոտված աչքերով պառավը:

Գնդակը թռավ բակում, կորցնելով արագությունը և իր սլոցով ճեղքելով խոսակցությունների ու վազքի

աղմուկը: Մի ուրիշ գնդակ կտուրից ներքև թռավ և վզվզաց, թպրտալով ջրմուղի խեցիի մեջ:

Հրապարակից բարձրացավ ծխի մի ամպ:

— Մարսելյե՛զ:

— Երաժշտությո՛ւն:

— Որի՛րդ, որի՛րդ:

— Հառա՛ջ, սիրտներդ պի՛նդ:

Երբ հրաձգությունը դադարեց, հրապարակում տիրեց այն լանդշաֆտը, վորը արվեստի մեջ ռազմանկարչություն է կոչվում: Առարկաներն ու մարդիկ համակվեցին ռազմականությամբ, վորը քարացավ ջղաձգաբար: Վիրավորները, սրտաճմլիկ կերպով ճչալով, գնում ու սողում եյին այն ուղղությամբ, վորով հարձակվել եյին, և մարտիկները մնում եյին դիրքերում: Թնդանոթի խողովակը գոլորշի յեր հանում: Նեգրերը, խմբվելով և թռչկոտելով միևնույն տեղում, յերգում եյին.—

Ռա՛գլ, դագլ, հոբբլ–դոբբլ,
Մի՛ս, բո՛ւմ, ա՛.
Վիկտորիա, Վիկտորիա՛,
Ռա՛, ռա՛, ռա՛:

Սակայն, ստեղծելով խաղաղ ցինիզմի մթնոլորտ, տեղական քաղաքամասի կոմիսարն արդեն նստած եր թնդանոթի լաֆետին և ցուցակագրում եր գերիներին: Նա այնպիսի տեղեկություններ եր ստանում, վորոնց ոգնությամբ տեղն ու տեղը հայտաբերում եր կռվի սոցիալական փիլիսոփայությունը, վորովհետև փայլուն ճարպկությամբ պատռում եր ռազմական դիմազրկության ու անպատասխանատվության դիմակները յերիտասարդ առևտրականներից և աստիճանավորներից, վորոնք ռազմական զգեստ եյին հագել:

Քաղաքամասի պետի մոտ բարձրահասակ, նիհար, շիկահեր մի մարդ ինչ–վոր բան եր նկարում ալ-

բոմում: Բուխսոնն ուրախացած և առանց քաշվելու ասաց.

— Ավելի լավ է մտեք անցքը, այնտեղ այնպիսի՛ նյութեր կան...

Շիկահեր մարդն առանց դեպի նրան դառնալու և նայելու, հարցրեց.

— Դուք ինքներդ վո՞րտեղացի յեք: Լա՞վ տեսարաններ են:

— Այնտեղացի: Շնորհալի ձեռք ունեք դուք: Ես ինքս ել նկարիչ եմ:

— Ահա՛ թե ինչ: Բայց յես պրոֆեսիոնալ չեմ: Ես սպա յեմ և հյուր եմ ձեզ մոտ:

Նրանք սեղմեցին մեկ–մեկու ձեռք և ասացին անունները:

Շիկահեր, գեղեցիկ մարդը լեհացի Հենրիխ Գրոդզենսկին եր, վորի հետ Բուխսոնը յերկար ժամանակ կապ ունեցավ: Նրանք վերադարձան այն տունը, վորը գրավել եր Բիգուի գումարտակը:

Լվացքատան կաթսայի մոտ, վորտեղ կես ժամ առաջ սուրճ եյին յեփում, այժմ բժիշկը կարգադրություններ եր անում: Տժգույն, կնճռոտ շրթունքներով մի չինացի մատյանում ջնջում եր հանձնվող սպիտակեղենը: Բժիշկը, արյունոտելով գրքի թերթերը, առանց նայելու ստորագրում եր, վոր ստացված է սպիտակեղենը:

Վիրավորներին արդեն շարքով պառկեցրին բակում: Կանանց ամբոխը ցավակցության աղմուկով շրջապատել եր նրանց: Հեռավոր մի բնակարանից լսվում եր մարսելյեզի հոգնատանջ ձայնը: Նա հալվում եր ոդում և չեր զգացվում վորպես յերաժշտություն:

Բուխսոնն անցնելիս գոչեց պատուհանից.

— Ամեն ինչ վերջացած է: Ամեն ինչ լավ է:

Ոդը լռեց: Այն սենյակում, վորտեղ վերջին անցքն եր բացված, մի կին անտարբերությամբ հագնվում եր: Բազմոցի վրա պառկած վիրավոր Ֆեդերատը հիացմունքով ու զուրգուրանքով նայում եր նրան, և նրա աչքերը դեռ ցավում եյին:

Բուխսոնն ու Գրողզենսկին անցան յերկրորդ անցքը և մտան դատավորի սեղանատունը։

— Հանճարեղ բան է,— ասաց նրանց դատավորը,— հանճարեղ բան է այս անցքը։ Գալյարը խիստ գոհ կլինի այս հնճարքից։

— Ո՞վ է այդ Գալյարը,— հարցրեց լեհացին։

— Նա մեր բարիկադային ֆելդմարշալն է,— բացատրեց Բուխսոնը ժպտալով, վորովհետև իսկույն պատկերացրեց Գալյար պապի սևամորուք, կորթուչ դեմքը, նրա կարճլիկ մարմինը, փոքր ձեռները, մատները, վորոնք մինչև այժմ էլ սև էյին նրա նախկին կոշիկների արհեստանոցի վակսից ու ճյութից։

— Նա բարիկադներ է կառուցում վորպես կոշկակար, կասեյի յես, յեթե կարելի լիներ այս խոսքերով բնորոշել նրա բծախնդրության հասնող բարեխղճությունը,— ասաց դատավորը։— Ազնիվ խոսք, նա այդ բարիկադներն այնպես է ամրացնում և կարում, կարծես նրանք պետք է տասնյակ տարիներ գոյություն ունենան։

Հենց այստեղ նա հիշեց խելացնոր Կերկոզիին, բարիկադային պատերազմի հանճարին և վոչ առանց հեգնանքի պատմեց Փարիզը պաշտպանելու նրա յերկու նախագծերը, վորոնք հենց նոր քննվել ու մերժվել եյին ռազմական հանձնաժողովի կողմից։

— Գլխավոր նյութեղենը, վորից կառուցվում են ամրությունները, մարդիկ են,— պնդում է այդ Կերկոզին։ Փարիզը պետք է պաշտպանվի հանուն գաղափարի, և վոչ թե նրա համար, վոր պահպանվի միքանի միլիոն մարդկանց կյանքը։ Հասկանո՞ւմ եք, նա շատ պարզ հաշիվներ է արել...

Այդ ժամանակ հագնվող կինը նայեց անցքից։

— Քաղաքացի պարետ, այստեղ մարդ է մեռնում,— ասաց նա։

— Այդտեղ մա՞րդ է մեռնում,— հարցրեց դատավորը, նայելով պատին։

Բուխսոնը հանկարծ սարսափելի պատասխանատվություն զգաց այդ բացված և այժմ իրար կապված տների մարդկանց առջև, քնքշություն և մոտիկություն

զգաց դեպի նրանց։ Ընդամենը յերկու ժամ առաջ այս տան կյանքը գտնվում էր մեկ-մեկուց բոլորովին բաժանված ծրարներում, իսկ այժմ հրպարակից սուրած միջանցիկ քամին մի անգամից պատռեց ութը այդպիսի ծրարներ և միախառնեց նրանց բույրերը։

Պատասխանելով իր թագուն մտքերին, դատավորը կրկնեց.

— Մեզ համար չափազանց հարմար են այս անցքերը։ Ինչպիսի՛ թիկունք է, հը՞։— Նա արագ վերկացավ և ասաց Բուխսոնին,— յես ինձ վրա կվերցնեմ քաղաքացիական կոմիսարի պարտականությունները։— Ապա հագավ թեթև վերարկուն, ասելով՝ Ժաննա, յես հիմա կվերադառնամ։

Նա անցքից նայեց ներս, անհայտ կնոջ սենյակը։

— Այդ ձեզ մո՞տ է մարդ մեռնում։ Մենք այսքան տարիներ ապրում ենք իրար կողքի և անծանոթ ենք։ Յես դատավոր Ֆայլկն եմ։ Այդ ձեզ մո՞տ է դժբախտություն պատահել։

Յերբ Բուխսոնն ու լեհացին, տանից դուրս գալով փակուղին,— վորտեղ լուսաբացին լապտերապահը հավաքում էր վիրավորներին,— բուլվարով գնալով հասան հրապարակ, նրանց կանգնեցրեց Բիգուն։

Գլուխը շարժելով տարակուսանքից թե ցավակցությունից, նա մռայլ արտասանեց.

— Մենք սկսեցինք կռվել ինչպես բոշոճներ, ի՞նչ կասեք դուք,— տների խորշերում։

Ցեվ ամուր սեղմեց Բուխսոնի արմունկը։

— Իսկ դուք առավոտյան լավ բան արիք։ Լա՛վ։ Բոլորը խոսում են ձեր մասին։

— Յես եմ նրան ազատել,— մոտ գալով ասաց լապտերապահը,— տեսնեմ՝ ընկնում է։ Տասը մարդ ազատեցի...

— Ահա ինչ եմ ասում,— լապտերապահին ընդհատեց Բիգուն և դիմեց Բուխսոնին.— դուք, ինչպես լսել եմ, դեսից-դենից, բոլոր լեզուներից գլուխ եք հանում։

— Երեք լեզվից։

— Հրաշալի։ Ես ու Լեֆևրը վորոշել ենք վաղը չե մյուս որը յերեկոյան հավաքվել, տոնել մեր գործը։ Եկեք։ Կկանչենք քսան հոգի ամեն գույնի գործունյա տղերք։ Քաղաքացին մերոնցի՞ց ե,— նա նայեց Գրոդզենսկուն։— Դուք ել յեկեք, կխոսենք։

Հեռանալիս նա հետ նայեց և ասաց լապտերապահին.

— Իսկ դու ել մեկի փեշից բռնի և արի։

— Լավ,—ասաց լապտերապահը,— յերեխա չեմ, փեշից ինչո՞ւ պիտի բռնեմ, ինքս կգտնեմ տեղը։

Հրապարակը նորից փոխեց իր տեսքը։ Գործերի սովորական ընթացքը վաղուց ջնջել եր ուշացած ռազմականությունը։ Ցերեկը լուսավորեց հրապարակը և խաղում եր նրա տեսքով, ինչպես կատուն նվաղող մկան հետ։ Անցնելով դատարկաշրջիկների ամբոխի միջով, դղրդում եյին ոմնիբուսները։ Վիրավորները սանիտարական կառքեր եյին պահանջում և խոսում մինչև ուշաթափվելը։ Կանաչեղեն վաճառողներին ինչ-վոր տեղեր դեռ չեյին թողնում, և նրանք իրար գլխի եյին հավաքվել իրենց սայլակների բուրավետ գումակով։ Մի մարդու վերարկուն գողացան։ Նա բոլորից հեռու կանգնած լալիս եր։ Նրա դեմքը ծեր եր և խիստ տանջված։

— Ո՞ւր եք գնում,— հարցրեց լեհը Բուխսոնին։

— Չգիտեմ։ Այս առավոտից հետո յես կարծես գնալու տեղ չունեմ։ Այն ամենը, ինչ վոր յես տեսա... չգիտեմ ինչպես ասեմ ձեզ...

Եվ, կարծես հասկանալով, թե Բուխսոնն ինչ նկատի ունի, լեհացին ձեռքով ցույց տվեց հրապարակը, այնտեղ յեղած ամբոխները, տների անցքը, բուլվարի ծառերը, վորոնց գագաթները ջարդոտված եյին.

— Այս պատկերը յերբեք չի կարելի նկարել,— ասաց նա։— Այդ վեր ե գեղարվեստի կարողությունից։

Բուխսոնը ժպտաց։

— Այն յերգչուհու,— ասաց նա,— հա, դուք մեզ հետ չեյիք,— մի խոսքով, մի յերգչուհու յերեկոյան համերգի նոտաներն այսոր գողացան։ Ես նրան հե-

տևյալը գրեցի.— «Վերսալցիների հետ ունեցած կռվում քաղաքացուհի Ռոշի բնակարանը ծառայում եր վորպես ամրությունների ռեզերվ գիծ»։ Այդ բոլորովին անհարգելի պատճառ ե,— ասաց նա ինձ,— ձեր գրությունը և վոչ մի կերպ չի բացատրում նոտաների տերի ավարիան, թանգագի՛ն պարոն։

— Վորտե՞ղ ե նա յերգելու,— հարցրեց լեհացին,— այդ շատ հետաքրքիր ե։ Դերասանուհի՞ յե, թե այնպես։

— Կարծեմ «Ժիմնազում»,— պատասխանեց Բուխսոնը։— Իսկ կենցաղի միջով անցնող խրամատների պատկերը այնուամենայնիվ նկարել կարելի յե,— ավելացրեց նա։

— Վո՛չ կտավի վրա և վո՛չ մրձինով,— պատասխանեց լեհացին։

— Արտահայտել մարմարով, բրոնզով, ցույց տալ յերաժշտությամբ, միևնույն չե՞...

— Այն ճակատամարտը, վորին հետևում ե բողկի առևտուրը, ճակատամարտը, վորտեղ տանտիկինները գնդակների տակ օջախներն են վառում, իսկ պառավները հայհոյում են իրար, թե ով պիտի մաքրի ընդհանուր զուգարանը...ճակատամա՛րտ, վորին մասնակցում են բոլորը... վո՛չ, այդ գեղարվեստից բարձր ե։

Նրանք շարունակեցին խոսել այդ նյութի շուրջը և բաժանվեցին, պայմանավորվելով անպայման հանդիպել Բիզուի մոտ։ Հետո հիշելով այդ առաջին հանդիպումը Գրոդզենսկու հետ, Բուխսոնը հենց այդ հանդիպումին եր վերագրում նկարչության և ընդհանրապես գեղարվեստի վերաբերյալ այն բոլոր խոսակցությունները, վորոնց մասնակցում եր ինքը։ Իրականում այդպես չեր, նա ինքն ել գիտեր այդ բանը, սակայն հիշելով իրենց հետագա հանդիպումների բոլոր մանրամասնությունները,— ապրիլին ու մայիսին,— միայն այդ բնույթն եր տալիս հեղափոխության պայմաններում յեղած գեղարվեստի վերաբերյալ զրույցին։ Բայց այդ խաբեյական համոզմունքին նա հանգեց շատ ավելի ուշ, յերբ Կոմունայի յոթանասուներորդ որը նրան թվաց

մարդկության վերջին օրը և յերբ, հույս չունենալով փրկել իր կյանքը, նա իր լավագույն մտքերը գաղտագողի մտցնում եր իրեն պատահմամբ չրջապատող մարդկանց ուղեղները: Նրան թվում եր, վոր ըմբռնելով մեկական, յերկուական միտք, այդ մարդիկ հետո մի տեղ կմիանան և կվերականգնեն նրա վոգու գույքի ամբողջությունը: Բայց այդ բոլորը հետո կատարվեց:

—

Մարտի 20-ին մենք, լրագրական չորս թղթակիցներ,— մի ամերիկացի, յերկու անգլիացի և մի իտալացի,— թողինք Լոնդոնը, վորպեսզի մեկնենք Ֆրանսիա: Ծիծաղելի յեր, բայց անգլիական մամուլի ներկայացուցիչն եր ֆրանսիացած իտալացի Տերենը, հենց այն մարդը, վորը Դ-ր Մարքսի միջոցով «Pall Mall Gazette-ի զինվորական թղթակից նշանակեց եկոնոմիստ Ֆրիդրիխ Ենգելսին, վորը թղթակցական գործունեյության աննախընթաց նմուշներ եր տվել:

Իմ հայրենակից Լինդը գնում եր շվեդական և ռուսական լրագրերի առաջարկով, յես գնում եյի իմ հաշվին և միայն ամերիկացի միստեր Ռոբերտ Ռեյդը հանդիսանում եր ամերիկական մի ամբողջ տասնյակ լրագրերի ներկայացուցիչ: Մենք մեկնեցինք Տյերի պատգամավորության անդամներ Շառլ Վեզինյեյի և գնդապետ Գուրոյի հետ, վորոնք վերադառնում եյին Տյերի և Անգլիայի անհաջող բանակցություններից հետո, իսկ այդ բանակցությունները տեղի եյին ունեցել Բիսմարկի կողմից Ֆրանսիային առաջարկած զինադադարի պայմանները մեղմացնելու համար: Յերկուսն ել չեյին ծածկում իրենց հիասթափությունը Լոնդոնի կառավարության քաղաքականությունից, յերկուսն ել անհանգիստ եյին Ռուսաստանի դիրքի վերաբերմամբ և միայն այն հանգամանքը, վոր Տերենն ու յես ամբողջ ֆրանս-պրուսական կամպանիան անցկացրինք ֆրանսիական գլխավոր հրամանատարության կից, հավասարակշռություն եր ստեղծում մեր հարաբերություններում: Ռեյդը առանց ճնշվելու հայհոյում եր Լուի Նապոլեոնին և Ֆրանսիայի փրկությունը տեսնում եր միայն հեղափոխության մեջ:

— Հեղափոխություն կամ մահ,— հայտարարում եր նա ֆրանսիացիներին:

— Նա իրագործված ե,— մռայլ պատասխանում եր գնդապետը,— նա իրագործված ե, բարեկամս, բայց նրա հետևանքն ավելի վատ կլինի:

Մեր շոգենավն իր համար դժվարությամբ ճանապարհ բացեց Հավրի նավահանգստում: Տասնյակ նավեր կանգնած էին այստեղ և սպասում էին պատերազմական գործողությունների վախճանին, նրանցից շատերի հնոցներն այլևս չէին վառվում՝ վառելանյութը խնայելու նպատակով, հարյուրավոր առագաստանավեր կանգնած էին յերկար ժամանակ, բոլորովին անտարբեր դեպի յեղանակն ու բեռները: Հազարավոր գործազուրկ բեռնողների պարապ ամբոխը հեղեղում էր նավահանգիստը: Պատերազմի ժամանակ տրանզիտային նավերը գրեթե չէին մտնում Հավր, վորովհետև այնտեղ պարեն չկար և հերթական նավի թեկնածուներն այն միակ մարդիկն էին, վորոնք, բացի սննդից և գիշերելուց, հետաքրքրվում էին նաև այլ բաներով:

Հավրում՝ «Southampton» նավի վրա մենք իմացանք, վոր տասնութին Փարիզում ապստամբություն է յեղել, վորը նույն որը ճնշել է կառավարությունը: Փարիզի դեպքերի մասին տեղական լրագրերում վոչ մի տող չկար: Մենք հարց ու փորձով դիմեցինք նավահանգստի ներկայացուցիչներին, վորոնք սովորաբար ավելի շատ բան գիտեն, քան ինքը, լավատեղյակ մամուլը: Նրանք ուսերը շարժեցին:

— Հավրը կողմնակից է ամեն մի ապստամբության, յեթե վերջինս շուտափույթ խաղաղության համար է,— ասաց նրանցից մեկը,— և կթքե, յեթե այդ ապստամբությունը պատերազմի համար է:

Բեռնակիրները, վորոնք առաջ բրնձի պարկերն էին տեղափոխում, վերցրին մեկական պայուսակ:

— Հը՛, ի՞նչ կա ձեզանում, ի՞նչ են խոսում հաշտության մասին,— հարցրեց նրանցից մեկը:

Մենք այնպես ձևացանք, թե նրան չենք հասկանում:

Փարիզ մեկնող գնացքը նստելու համար մենք պետք է ստանայինք զինվորական իշխանությունների թույլտվությունը: Շնորհիվ գնդապետ Գուրոյի աջակցության, այդ հաջողվեց առանց Ֆրանսիայում սովորական գլխացավանքի: Գիշերը մենք չորս հոգով մի նստարան գրավեցինք ցուրտ, կեղտոտ վագոնում, վորոշելով

չսպասել հարգելի պատգամավորներին, վորոնք մեկնելու էին միայն յերկու որից հետո: Մեր դիմաց տեղ էին բռնել յերկու կանայք, մեկը յերեխայով,—Փարիզի ռուսական դեսպանության պաշտոնյայի կինը, մյուսը— Վալլեսի ազգականուհին: Նրանք խոսում էին իբրև ամենահին բարեկամուհիներ, չգիտենալով, վոր նրանց ամուսինները մահացու քաղաքական թշնամիներ են մեկ-մեկու:

Յերկուշաբթի առավոտյան մենք դանդաղ մոտենում էինք Փարիզին: Ազգային գվարդիայի մի ջոկատ գրավել էր կայարանի շենքը: Կառքեր չկային և մեզ առաջարկեցին յերեք ձեռնասայլակներ, այն էլ առանց ծառայողների: Բուֆետի կեղտոտ դահլիճում չէր կարելի գնել և վոչ մի ուտեստեղեն: Վալլեսի ազգականուհին, վորը պատերազմի սկզբից չէր յեղել Փարիզում, դառը լացեց, տեսնելով սովի և ամայության տխուր պատկերը: Իսկ մեր ավելի յերիտասարդ ուղեկիցները,— ֆրանսիացիք, վորոնք գնացք էին նստել ճանապարհին, տեսնելով այնքա՛ն մռայլ պատկեր ներկայացնող քաղաքը, անասելի հրճվել սկսեցին: Նրանք յերգելով անցան փողոցներով: Յերգում էին վոչ թե հեղափոխական յերգեր,— վորոնք չէին սովորել իրենց խուլ գավառներում,— այլ ինչ-վոր գեղեցիկ մեղեդիներ, վորոնք հիշում էին այդ ժամանակ: Մենք ինքներս մեր իրերը բեռնեցինք ձեռնասայլակներին և գնացինք ապաստան փնտռելու, կայարանում պարտավորագիր թողնելով, վոր նույն որը կվերադարձնենք սայլակները: Սկզբում մենք ուղեկցեցինք կանանց, հետո զբաղվեցինք մեզանով: Հյուրանոցում ազատ սենյակ գտնելու համար կորցրինք կես որ: Վերջապես սենյակ գտանք մի հյուրանոցում, վորը մի ժամանակ «Լուվր» էր կոչվում: Վիճակ գցեցինք, թե ումը լինի սենյակը և նա ինձ ընկավ: Տեղավորելով իրերս և շտապ լվացվելով, յես գնացի քաղաքում թափառելու: Ոմնիբուսները բոլորովին կանոնավոր էին յերթևեկում: Քաղաքը թըվում էր միանգամայն հանգիստ: Սենայի ձախ ափից լսվում էին ռազմանվագախմբի ուրախ յերաժշտու-

թյունն ու մեծաթիվ ամբոխի յերգը: Այն ամենը, ինչ վոր հաճախակի յես տեսնում եյի վերջին տարում, նորից պատկերացավ իմ աչքի առաջ: Տյուլիրին, Լուվրը, քաղաքային խորհրդարանի հրապարակը: Սեպտեմբերյան դեպքերի ժամանակ այստեղ կանգնած եյին զինված ոմնիբուսներն և մսավաճառների թիթեղապատ սայլերը, իսկ կայտառ մանուկները, վորոնք դաստիարակված եյին 48 և 51 թվականների ընտանեկան պատմություններով, պոկում եյին քարի կտորներն ու կուտակում տեղ-տեղ: Յես նորից տեսա հրապարակում հեղափոխականների կրակները, ինչպես այն գիշերը, յերբ բոնապարտիստների վերջին ջոկատները դեռ փորձում եյին փրկել սնանկացած միապետությունը: Սակայն այժմ հրապարակն ուրիշ պատկեր եր ներկայացնում,— գրեթե ամբողջ հրապարակում փռված եյին ներքնակներ ու խոտ, նրանց վրա պառկած եյին Ազգային գվարդիայի զինվորները, վորոնք վոտները տնկած՝ լրագիր եյին կարդում, կամ քաղաքական համառ վիճաբանություններ անում: Սպաները չարունակ դադարեցնում եյին վեճերը: Այս անգամ դիտելու համար, սակայն, յես ժամանակ չունեյի, հարկավոր եր տեղավորվել նոր ստացված սենյակում: Իմ ապրած հյուրանոցն այժմ արտաքուստ խղճուկ պատկեր ե ներկայացնում, բայց ներքուստ նա բավական մաքուր ե: Պատերազմի և հեղափոխության առաջին ամիսներում այնտեղ ապրում եյին գլխավորապես չտաբի սպաներ և ոտարերկրյա զինվորական թղթակիցներ: Այժմ հյուրանոցի բոլոր վնասված տեղերը նորոգված են, չքացել են միայն կարմիր գորգերը,— գուցե նրանցից դրոշակներ են չինել: Այս հյուրանոցում ձմեռն ապրում եր Անդրե Լեոն: Նրա մոտ հաճախ թեյի ժամանակ հանդիպում եյին Վալլեսը, Ռիգոն, Վերմեշը և այլ լրագրող-հեղափոխականներ: Այժմ Լեոն տեղափոխվել ե մասնավոր տուն: Հյուրանոցի ծառայողները նրա անունն արտասանում են անսովոր հարգանքով,— Լեոն այժմ մոդա յե, նա գրում ե Կոմունայի լրագրերում և հանդիսանում ե կանանց,— բանվորուհիների կազմակերպիչ:

Յես ուզում եյի ուտելիք պատվիրել, բայց իմացա, վոր հյուրանոցում, տաք ջրից բացի, վոչինչ չի կարելի գտնել: Յես նորից դուրս յեկա մի փոքրիկ զբոսանք կատարելու: Յես այնպես եյի զգում ինձ, վոր դեռ Փարիզ չեմ հասել: Գուցե այդ նրանից եր, վոր յես չեյի ճանաչում քաղաքը, չեյի ճանաչում նրա մարդկանց:

Յես իմ անգլիական անձնագրով այնքան ել հաճույքով դուրս չեկա փողոց, չունենալով այլ փաստաթղթեր, վորոնք ինձ իրավունք տային ապրել Փարիզում: Յես գնացի «Ոդեոն», վորտեղ մի ժամանակ հանդիպում եյի իմ ծանոթներից շատերին, բայց կաֆեն փակ եր, և յես վորոշեցի վերադառնալ սենյակս: Փողոցների լռությունն ու անդորրությունը մահացության տպավորություն եյին թողնում: Այնուամենայնիվ հազվագյուտ անցորդները, վորոնց յես հանդիպում եյի, աշխույժ խոսում եյին իրար հետ: Յերբեմնակի պատահող կեբիներն ու ոմնիբուսներն ընթանում եյին համեմատաբար լավ սալահատակներով: Փողոցներն ավելի մաքուր եյին, քան վերջին ամառվա ընթացքում, կայսերական ռեժիմի օրոք: Հյուրանոցում յես մի շարք հարցերով դիմեցի ծառայողին: Հարցրի պարոն Կատյուլլ Մենդեսի մասին, վորն աշնանը և ձմռանն այդ հյուրանոցի հաճախակի հյուրն եր,— նա ինձ պատասխանեց տարօրինակ ժպիտով:

— Գուցե պարոն Մենդեսը մեռե՞լ ե,— հարցրի յես:

— Հը՛մ, հազիվ թե,— հեգնորեն պատասխանեց ծառայողը,— նրա նմանները կենդանի յեն:

Յես ելի յերկու-յերեք հոգու անուն տվի և ստացա նույն պատասխանը,— ուսերի շարժում և անորոշ ժպիտ: Վերջապես, յես ուրիշ միտք հղացա:

— Փարիզում հիմա ո՞վ ե ամենալավ գրողը,— հարցրի յես:

— Ո՛, դուք նրան չեք ճանաչում, միստր,— պատասխանեց ծառայողը:

Յես բարձրացա դեպի սենյակս: Ուզում եյի հետ

նայել ու հարցնել այդ նոր քաղաքի նոր անունը: Յես դեռ չեյի հավատում, թե Փարիզումն եմ:

Մյուս առավոտյան յես ստացա թեյ և հացի քարտ: Մի կտրոնին ինձ տվին հացի մի փոքրիկ կտոր: Այնուհետև մտա Տերենի մոտ և մենք գնացինք քաղաքային խորհրդարան: Առաջին հանդամանքը, վոր ուշադրություն ե գրավում, այդ մարդկանց նոր հագուստի կատարյալ բացակայությունն ե: Յես չտեսա մի մարդ, վորը հագած լիներ թեկուզ վերջին յերկու տարում գնված վորևե զգեստ: Մենք բավական ուշ դուրս յեկանք, ուստի նստեցինք ոմնիբուս: Քաղաքային խորհրդարանի դռների մոտ 93 թվականի թնդանոթն առաջվա պես իր տեղումն եր: Յերբ յես մտա ներս, անցաթուղթ ստանալու, հազիվ եյի հավատում, վոր այնքան ժամանակ բացակայել եմ, սակայն այդ րոպեական զգացմունք եր, վորովհետև յես առաջվա նման վոչինչ ընդհանուր չեյի գտնում իմ նախկին դիտածի և այժմ տեսածի միջև:

Բանը միայն նրանում չեր, վոր ամեն ինչ աղքատացել եր,— վո՛չ, այլ նրանում, վոր յերևան եյին յեկել նոր մարդիկ, վորոնց վոչ վոք չեր ճանաչում, վորոնց անունը վոչ վոք չեր լսել: Նրանք նոր վոգի բերին իրենց հետ: Թերևս Փարիզը յերբեք չեր թվացել այնպես, ինչպես այդ որերում, նրա լեզուն, նրա ծիծաղը, նրա ատելությունն այլ եյին դարձել: Այդ մի քաղաք եր, վորը վոչինչ չեր հանձնել իր հին տրադիցիաներից, այլ բոլորովին նոր ձևով եր պատկերացնում նրանց:

Յերբ մեր փաստաթղթերի գրանցումը վերջացավ, Տերենն ու յես, միքանի հին ծանոթների ուղեկցությամբ, գնացինք կողքի ճաշարանում ճաշելու: Ճաշը շատ հասարակ եր,— սուպ, ձիու մի կտոր մսով, վորը համեղ եր, ինչ-վոր սպիտակ բանով շիլա, վորը վոչ մի համ չուներ և մի փոքրիկ կտոր շաքարով սուրճ: Խոսակցությունը պտտվում եր գլխավորապես ապստամբության հնարավոր վախճանի շուրջը: Ելզասցի Շարլ Կելլերը, Տերենի բարեկամը Ստրասբուրգից, հուսահատորեն պատմում եր, վոր նա բոլորովին զուրկ ե դ–ր

Կարլ Մարքսի գրչին պատկանող «Կապիտալի» առաջին հատորի թարգմանությունը շարունակելու հնարավորությունից: Նա գտնում ե, վոր Ֆրանսիայում այդ գրքի յերևալը կլիներ հեղափոխական ստրատեգիայի մի նոր ժամանակաշրջան: «Սատանան տանի, դե՛հ, ուրեմն այդ նշանավոր գրքի գաղափարները բանավոր հաղորդեցեք,— դիտեց Տերենը:— Յեթե բախտը դըժվարացնում ե ձեր թարգմանչական արհեստը, ապա դարձեք պատմող»:— «Այդ արդեն ագիտացիա յե և վոչ թե գիտական աշխատանք»,— ցավելով պատասխանեց Կելլերը:—«Յեթե ձեր տեղ ամերիկացի լիներ,—ասացի յես,— նա, իհարկե, կդառնար նոր գաղափարներ քարոզող, բոլորովին հաշվի չառնելով, թե ով ե նրանց իսկական հեղինակը»: Սակայն Կելլերն այլ հայացքներ եր պաշտպանում: Նա հույս ուներ թարգմանությունն ավարտել մեկ տարվա ընթացքում: Յես ու Տերենն իրար նայեցինք, մտածելով միևնույն բանը,— իսկ ի՞նչ կլինի մի տարի հետո:

Մեր սեղանին մոտեցավ Ռեյդը, վորն, ինչպես մենք, յեկել եր դոկումենտները գրանցելու: Նա մեզ հաղորդեց, վոր առաջիկա շաբաթում Լոնդոնից սպասվում են տասը ամերիկացիներ, վորոնք ցանկություն են հայտնել տեսնել, թե ինչ բան ե հեղափոխությունը: Խմբագրությունը նրան առաջարկում ե զբաղվել հյուրերով:

Յերբ յես ճաշս վերջացրի, յեկավ տիկին Կորվին-Կրուկովսկայան, ռուս գեներալի աղջիկը, ամուսնու ազգանունով՝ Ժակլարը,—և նրա հետ մի փոքրիկ ջղային կին,— Յարոսլավ Դոմբրովսկու,— դարիբալդիականների խմբակից իմ հին բարեկամի կինը: Յես իմացա, վոր Դոմբրովսկին իր ծառայությունն ե առաջարկել զինվորական պատգամավորությանն ու թեպետ դեռ պաշտոն չի ստացել, բայց շատ թունդ զբաղված ե Ազգային գվարդիայի գործադիր Կոմիտեյում: Յես նրան հանդիպել եմ անցյալ աշնանը, յերբ նա իր գոյությունը պահում եր վորպես գծագիր, իսկ յերեկոներն անց եր կացնում մեզ, զինվորական թղթակիցներիս հետ, զար-

մացնելով մեզ իր ռազմական փայլուն մտքերով և դեպքերը նախորոշելու ունակությամբ: Դրանում նա մի փոքր զիջում եր պարոն Էնգելսին, նաև այն տարբերությամբ, վոր գերմանական ժուրնալիստի նման չեր տիրապետում գրչին: Բայց յես ճանաչում եյի մի քանի մարդկանց, վորոնք նրան ռազմական տեսություններ եյին պատվիրում խիստ չափավոր հոնորարով:

Ճաշից հետո յես գնացի Թափառելու: Այս անգամ փողոցներում շատ ժողովուրդ կար: Ինչ-վոր մեկի պուրիտանական ձեռքը պարկեր եր հագցրել արծիվների վրա, վորոնք զարդարում եյին Նոր Օպերայի սյուները: Գրպանումս գտնվում եր Ժյուլ Վալլեսի գրությունը՝ Պասկալ Գրուսեյին,—արտաքին հարաբերությունների պատգամավորին: Ժյուլ Վալլեսն այդ գրությամբ խնդրում եր օգնել ինձ աշխատանքի ընթացքում: Յես յերկար տատանվում եյի մտնել նրա մոտ: Ճնշվածության և իմ կեղծ վիճակի գիտակցության մի տարօրինակ զգացմունք այդ օրերին արդեն մի քանի անգամ ճնշել եր ինձ: Ճիշտ նույնպես յես չկարողացա ինձ հարկադրել վորոնելու Անդրե Լեոյին, Պիին և մյուսներին, վորոնց ճանաչում եյի: Սակայն այստեղ յես վորոշեցի մտնել և համարձակ ծեծեցի պալատի դուռը, վորտեղ մի ժամանակ գտնվում եր արտաքին գործերի մինիստրությունը:

Յես Գրուսեյին տեսա այնպես, ինչպիսին եր նա մի քանի ամիս առաջ, «Մարսելյեզի» խմբագրատանը, շարունակ գլանակը բերնին և դեմքի անորոշ արտահայտությամբ: Գրուսեն գեղեցիկ տղամարդ է, չափից դուրս զգույշ, կիրթ շարժումներով: Նա սրտագին վողջունեց ինձ և ասաց, վոր արտասահմանյան հյուրերը միանգամայն կարող են հույս դնել իր վրա: Նա իսկույն կարգադրեց բնակարան գտնել ինձ համար: Այն ժամանակ նրա մտքովն էլ չեր անցնում, վոր մայիսին այդպիսի մի խնդիր կարող եր վճռել քառորդ ժամում, տեղավորելով ինձ փախած ազնվականության վորևե ապարանքում: Բայց այժմ սենյակի հարցը նրան ջղայնացրեց, նա գանգատվեց ինձ, վոր նրա պատգամավորության բյուջեն չնչին է, հազիվ է բավականանում արտա-

սահմանյան լրագրերին բաժանորդագրվելու համար: Մասնավորապես սկսեցինք խոսել բնակարանային հարցի մասին: Նոր կառավարությունը դեռևս չի լուծել այդ հարցը, սակայն մոտ ժամանակներս բնակարանների բաշխումն ըստ յերևույթին կդառնա քաղաքամասերի վարչությունների մենաշնորհը և քաղաքի բոլոր բնակարանները հաշվի կառնվեն: Մի անգլիացի, վորը գործարան ունի Փարիզում, պատմեց ինձ, վոր քաղաքամասի վարչության կարգադրությամբ նրա տան մի մասը տրամադրվել եր բանվորներին և չնայելով վոր նա բողոք ներկայացրեց Կոմունայի դատախազին, բանվորներին արտաքսել չհաջողվեց: Նրանք նախ և առաջ պահանջում եյին, վոր դատախազը գա իրենց հետ անձամբ զրուցելու, իսկ հետո առհասարակ հրաժարվեցին խոսել այդ թեմայի շուրջը: Լրագրող Վերմեշը, «Պեր-Դյուշեն» կոչված լրագրի պարագլուխներից մեկը, ինձ ասում եր, վոր քաղաքամասերի վարչությունների և բանվորների առանձին խմբերի միջոցառումները հաճախ կանխում են Կոմունայի դեկրետները և վոր անհրաժեշտ է այդ հաշվի առնել, քանի դեռ Կոմունան չունի ուժեղ ապարատ: Շատ դեկրետների յերևան գալը,— ասում եր նա,— նախորոշված է հենց մասսաների նախաձեռնությամբ, վորոնք ստիպում են մտածել Կոմունայի ուշադրությունից վրիպած հարցերի մասին: Գրուսեն վախենալով ասաց ինձ, վոր ժամանակի ընթացքում ավելի ու ավելի դժվար կլինի համաձայնեցնել պրոլետարիատի նախաձեռնությունն և մանր բուրժուազիայի շահերը, վորը այժմ դեռ աջակցում է Կոմունային, բայց հայտնի չե, թե ինչպես կվերաբերվի դեպի իր դեմ ուղղված հետագա ճնշմանը:

Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի պատգամավորի անձնական առանձնասենյակներից մեկում մի փոքրիկ խոսակցություն ունենալուց հետո, Գրուսեն և յես գնացինք պաշտոնական ընդունարանը, վորտեղ հանդիպեցինք... ի՞նչ եք կարծում, ո՞ւմ,—Ջեկկերին, Լուի Նապոլեոնի մեկսիկական եքսպեդիցիայի կազմակերպչին, Յեվրոպայի ամենաքսու բանկիրներից

մեկին: Հանդիպումն ինձ զարմացրեց և, ըստ յերևույթին, յես այդ թաքցնել չկարողացա: Ջեկկերը չափազանց սառը բարևեց ինձ և ուշադրություն չդարձնելով ինձ վրա, սկսեց խոսել Գրուսսենյի հետ: Նրանց հանդիպումն ըստ յերևույթին առաջինը չեր:

Ջեկկերը պնդում եր, վոր ընդունվի իրեն ինչ-վոր առաջարկը և մատները չրխկացնելով, թվում եր այն ոգուտները, վոր պետի ունենա Կոմունայի կառավարությունը: Արտաքին հարաբերությունների պատգամավորն աշխատում եր խույս տալ նրա ասածներից, ինչպես իր խմբագրատանը՝ պնդերես ռեպորտյորներից, և, վերջապես, կարողացավ դուրս գալ և կարգադրել, վոր թեյ կամ սուրճ տան: Նախկին արտաքին գործերի մինիստրության պալատը մեռած եր թվում: Հեռավոր սենյակներից մեկում գտնվող յերկու ծառայողների ցածրաձայն զրույցը լսվում եր ամբողջ տանը: Բաժանմունքների դիրեկտորների կաբինետները դատարկ եյին: Ինձ համար նույնիսկ կասկածելի յեր թվում, վոր արտաքին հարաբերությունների պատգամավորին մատչելի լինեն ծածկագրերն և դիվանագիտական գաղտնի գրագրությունը: Ծառայողների սաբոտաժը դեռ շարունակվում եր: Արտաքին հարաբերությունների պատգամավորն ինքն եր իր վերարկուն կախում կախարանից և անձամբ գրում նամակները: Վերադառնալով սուրճի վերաբերյալ կարգադրությունն անելուց, Գրուսսեն բարձրացավ լուսամուտի վրա, վորպեսզի բաց անի ոդանցքը:

— Յես այդ ավանակներին առաջարկում եմ հրապարակել մեքսիկական եքսպեդիցիայի բոլոր արխիվային փաստաթղթերը,—ասաց ինձ Ջեկկերը, յերբ Գրուսսեն սենյակում չեր,—բայց նրանք վախենում են խայտառակությունից: Իսկ նրանց կառավարությունից ի՞նչը կարող է ավելի խայտառակ լինել:

— Այդ ձեր ինչի՞ն է պետք,—հարցրի յես,—վորքան յես հասկանում եմ, դուք մեկն եք այդ եքսպեդիցիան նախաձեռնողներից, վորը նստեց յերեսուն հազար մարդու կյանք և միլիարդից ավելի դրամ: Յես զարմանում եմ, վոր դուք ազատ եք և կարծում եմ, վոր մեքսիկա-

կան գործերի հրապարակումը չի բարելավի ձեր դրությունը:

— Հազիվ թե...—պատասխանեց ինձ Ջեկկերը: —Յես գտնում եմ, վոր այդ ավանտյուրայում յես խաբվել եմ կայսրուհի Յեվգենիայի կողմից: Բացի դրանից, միքանի նյութերի հրապարակումը ինձ կվերադարձներ իմ միջոցների մի մասը, յերրորդ, Կոմունան չեր համարձակվի ձեռք տալ ինձ, յեթե յես ինքս ինձ մեղադրեյի:

Ինձ մնում եր մի անգամ եւս ժպտալ,—այս անգամ այդ մարդու զարմանալի համարձակության և տոկունության վրա: Ջեկկերը հարցրեց ինձ, թե ինչ է կատարվում Անգլիայում: Ներս մտավ Գրուսսեն, վորը նույնպես հետաքրքրվեց այդ հարցով:

— Ձեզանում ինչպե՞ս են վերաբերվում Կոմունայի կազմակերպմանը,—հարցրեց նա:

Յես նրան պատասխանեցի, վոր հազիվ թե Անգլիան պատրաստ լինի վորևե համաձայնություն կնքելու Կոմունայի հետ: Իսկ յեթե Կոմունայի գոյությունը շարունակվի հետագայում, ապա իմ կարծիքով անհնարին կլինի Փարիզի կառավարության յերկարատև մեկուսացումը միջազգային գործերից:

— Յես էլ ճիշտ այդպես եմ մտածում,—անհոգ ասաց Գրուսսեն,—ուստի և չեմ շտապում հարաբերություններ սկսել տարբերկրյա դեսպանությունների հետ: Իր ժամանակին նրանք իրենք կգան:

Յես չեյի ուզում Ջեկկերի ներկայությամբ դատապարտել արտաքին հարաբերությունների պատգամավորի այդ տեսակետը, բայց բանկիրն ինքը միքանի խոսք ասաց այն մասին, թե սխալ է այսքան անտարբեր հայացք ունենալ դեպի իրերի դրությունը:

— Անգլիային խոստացեք, վոր կվերանայեք մաքսային կոպարները, Իտալիայի հետ համաձայնություն կնքեք Ալժիրի վերաբերմամբ, իսկ Ավստրիայի հետ՝ Իտալիայի վերաբերմամբ, և դուք կապահովեք ձեր կառավարության ռեալ գոյությունը:

Գրուսսեն նորից խուսափեց նրան պատասխանելուց: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր նրա համար անըն-

գտնելի յեր այն բոլորը, ինչ վոր ասում եր բանկիրը, սակայն, ճիշտն ասած, բանկիրն իրավացի յեր:

— Գրուսսե, ընդունեցեք ինձ իբրև ձեր խորհրդականը,—անվստահ ասաց Ջեկկերը:—Կոմունան կճանաչվի մեկ ամսվա ընթացքում: Լսեցե՛ք ինձ, հրպարակեցեք ցուցահանդեսի ժամանակ ցարի դեմ Բերեզովսկու կատարած մահափորձի գործը:

Հետագայում դեպքերը հաստատեցին իմ այն կարծիքը, վոր Գրուսսեն վոչ միայն տաղանդավոր մարդու տպավորություն չեր թողնում, ինչպիսին եր Կոմունայի առաջնորդների մեծ մասը, այլ ուղղակի խելացի մարդել չեր: Բաժանվելիս նա սեղանից հանեց մի սևագիր նամակ, վորը նա մտադիր եր մոտ օրերում ուղարկել դեսպանություններին.

«Պարոն դեսպան,

Ներքո ստորագրյալը, Կոմունայի անդամը, նրա կողմից նշանակված լինելով արտաքին հարաբերությունների համար, պատիվ ունի պաշտոնապես հայտնել Ձեզ Փարիզում կոմունալ կառավարություն կազմվելու մասին: Այդ կառավարությունը խնդրում է Ձեզ այդ մասին հայտնել Ձեր կառավարությանը և օգտվելով ներկա առիթից, արտահայտում է Կոմունայի ցանկությունը՝ յեղբայրական սերտ կապեր ստեղծել Փարիզի և . . . . . ժողովուրդների միջև:

Ընդունեցեք, պարոն դեսպան, իմ խորին հարգանքներիս հավաստիքը»:

— Լորդ Լայոնսը, Անգլիայի դեսպանը, այժմ գտնըվում է Վերսալում, իսկ նրա քարտուղարը նույնիսկ ստորագրել չի ցանկանա այդ, թույլ տվեք ասել, նամակն տանալու մասին,—ծիծաղելով ասաց ինձ Ջեկկերը, յերբ մենք իջնում եյինք սանդուխքներով:—Այդպես հայտարարում են կոմունալ հիվանդանոցի բացումը,—շարունակեց նա չարախնդությամբ,—և վոչ թե նոր ռեժիմի հաստատումը: Դրանումն է նրանց կործանումը: Նրանք համարձակություն չունեն իրենց հայտարարելու Ֆրանսիայի կառավարություն և խոսելու նրա տոնով:

ԴՈՄԲՐՈՎՍԿԻ

«Վա՛յ մայրենին, յեթե ժողովուրդը պարտվի»:

«Այն վայրերի բնակիչները, վորոնք կից են Փարիզի համար պարեն փոխադրելու ճանապարհներին, բարիկադները պետք է կառուցեն այնպես, վոր չխանգարվի ազատ յերթևեկությունը»:

Ի տեղի Կենտր. Կոմ.

Կաստիոնի Առնոլդ, Բուի»

Մոն-Վալերյանի թնդանոթների կրակը քարուքանդ եր անում անդորր Կուրբևուայի տներն ու այգիները: Փախստականները ձգտում եյին դեպի Անյեր: Այնտեղ, կայարանի մոտ Շարասբուրգից, Մեցից և Նանսիից յեկել—հավաքվել եյին աղքատների, կաղերի և մեռնողների վայրի ամբոխները: Պատերազմը նրանց քշեց Փարիզից, իսկ վերջինս, վախենալով մուրացիկությունից, հանցագործություններից, դժգոհություններից և համաճարակներից, նրանց արտաքսեց դեպի Անյեր: Ամբողջ ձմեռը նրանք աշխատում եյին հնավաճառ Մոիզի մոտ: Նա ազնվաբարո Ֆրանսիայի կառավարությունից իր վրա վերցրեց հաշմանդամների հոգատարությունը: Մարդիկ հավաքում եյին վոսկորներ ու լաթեր, յերկաթ ու բրոնզ, արկերի կտորտանքներ, փամփուշտների պարկուճներ, ածուխի, թղթի ու փայտի կտորներ: Արևելյան ամրությունների ամբողջ գծով, Շարանտոնից մինչև Սեն-Դենի, գերմանացիների կրակի տակ մի ձեռանի յենթասպաները պառավների ու յերեխաների ջոկատների հրամանատարներ եյին: Նրանք քանդում եյին տները, պոկում եյին պատուհանների շրջանակները, հանում եյին բանջարանոցների խրտվիլակները (հին

ֆրակի կտորներ և ծակ ցիլինդր), դատարկում եյին յեկեղեցիների խորանները և դիմակահանդեսների հանդերձապահների պահեստները: Անվոտ մարդիկ փորփրում եյին աղբակույտերը:

Կույրերն օգտագործվում եյին որպես լծկան ուժ և բեռնատարներ: Հղի կանայք վխտում եյին այդ դարշահոտ, ճիճվոտ բերքը բաժանելիս, յերեխաները սողում եյին նեխող աղբի տակ կույտերի վրա, մի աղբ, որը չեր քրքրել և ոչ մի թռչուն,—այնքան մահացու յեր նեխվածության գարշահոտությունը:

Ավերածության խանդավառությունը հատուկ եր այդ մարդկանց: Նրանք սիրում եյին պոկել իրերի մաշկը, իսկ նրանց մատները, նույնիսկ անգործության րոպեներին, միշտ շարժվում եյին, պատրաստ եյին ամեն ինչ ավերել, քանդել, պոկել: Նրանց ձեռները սիրում եյին տձևություն տալ իրերին, ազատ թողնել կազմակերպված նյութը: Նրանք հոգով խռովարարներ եյին: Նրանք ցնորողներ եյին: Նրանք յերազում եյին յերբեք չեղած իրեր՝ լաթերի նեխվածքից, յերկաթի ու փայտի կտորներից, թղթե գարշահոտ զանգվածից:

Նրանք հեղեղել եյին Անյերի կայարանի մերձակայքը: Կույրերը կառչում եյին առողջներին: Անվոտ մարդիկ սողում եյին առողջների ոտների տակ, խեղագարները պարզ ու սրտագին ծիծաղում եյին մինչև արտասվելը և դեռ չծնած, հսկայական, ցցուն որովայններով մայրերը փսփսալով սպասում եյին, թե որն ում պետք ե ուղարկի նրանց տանջելու:

Այս հոտի պարագլուխները,—անվոտ Ռոնին և սապատավոր Շարլ Դեգեն, աչքերը փակած, լսում եյին թնդանոթաձգությունը: Նրանք լսում եյին, թե ինչ ե կատարվում այնտեղ և գուցե մտածում եյին, թե այդ որը ո՞ւր պետք ե ուղարկեյ իրեն հավաքողներին: Բարձրահասակ, նիհար Կլարա Ֆյուրնյեն, այդ աշխարհի ճանաչված գեղեցկուհին, գոչեց, խլացուցիչ կերպով շրխփացնելով ձեռները:

— Անողորմ տեր,—ասաց նա,—անողորմ տեր, ել

ի՞նչ բան ես հնարել:—Նա թվում եր սպիտակահեր, բայց իսկապես սևահեր եր: Նրա մազերն այնքան լիքն եյին անիծներով, որ նրանց բնական գույնը բոլորովին ծածկված եր թվում սպիտակ հատիկների մեջ: Անիծները կպել եյին յուրաքանչյուր մազին, ինչպես արմավները ցողունին:

Կոմունարների ջոկատները Կուրբեվուայից գնում եյին դեպի Նեյի կամուրջը: Սենայի վրա ճղփալով վխտում եյին չուգունե գայլաձկները: Շոգեքարշերը գոլորշի եյին բաց թողնում: Կոլոմբոյից դեպի Անյեր եր վազում վերսալցիների մարտկոցը:

— Դեպի Փարի՛զ,—գոռաց ամբոխին մեքենավար Լամարկը,—բոլորդ դեպի Փարիզ, բավական ե:

Յերեխաները վազում եյին մի հարբած մարդու յետևից, որին հետևում եր չարացած կինը, տանելով հրացանը: Փողոցը ծափահարում եր կնոջը: Կինը կատաղում եր, իսկ ամուսինն անհոգ օրորվելով, բավականությամբ գլխով եր անում աջ ու ձախ: «Ժիմնազ» թատրոնի մուտքի մոտ կարմիր թասակներ ծածկած կանայք նվիրատվություններ եյին հավաքում սպանվածների ընտանիքների օգտին: Անապաստաններն ոտարերկրացիներին արկերի կտորտանքներ եյին ծախում:

Հազիվ ճանապարհ բանալով դեպի դերասանների մուտքը, Յելենա Բոշը հոգնածորեն բարձրացավ իր զուգարանը: Ռեժիսորի զանգը դատարկում եր դերասանների սենյակները և բեմի հետևի տարածությունները: Բոլորն շտապ հավաքվում եյին «յելույթի սենյակը»: Դահլիճը լցվում եր աղմուկով ու կարծես մոտենում եր, հենց այն ե, պետք ե դեն շպրտեր վարագույրն և կլաներ բեմը: Յելենան ուզում եր բացատրել իր նոտաների հետ պատահած դժբախտությունը, բայց ռեժիսորը մեղմ քաղաքավարությամբ ձայն տվեց նրան.

— Մադեմուազել, բացատրությունները հետո:

Վարագույրը բացվեց և դեպի բեմ անցավ դահլիճի տաք և աղմկոտ օդի առաջին հոսանքը: Յելենա Բոշը դուրս յեկավ: Նվագակցողը, ականջ դնելով, ձեռները դրեց դաշնամուրի ստեղնաշարին:

—Ցես չեմ յերգելու այն, ինչ վոր պիտի յերգեյի,— բարձրաձայն հայտարարեց Ցելենան,—յես այսոր կռվի չրջանումն եյի: Իմ նոտաների տետրը կորավ (Նա լացեց): Ցես ամբողջ առավոտը կռվի մեջ եյի... այսինքն ուղղակի մեր տանը կռվում եյին:

— Վո՞րտեղ,—հարցրին դահլիճից:

— Նեյիում... ուղղակի մեր տանը կռվում եյին... նոտաներս կորան:

— Ճիշտ ե, ճիշտ ե,—գոչեց մեկը օթյակից,—յես գիտեմ: Ցես ինքս այնտեղ եյի:

— Նեյի՞ում, յես ել:

— Լա՛վ բան ե արված, գիտե՛մ:

Հանկարծ, ճայթելով, դահլիճի ողն սկեց չեչտակի հարձակվել Ցելենայի վրա: Նա ակամա փակեց աչքերը, սպասելով ողին հասնող հարվածներին, և միայն այն ժամանակ բացեց աչքերը, յերբ նվագախմբի առաջին ակկորդները, ճեղքելով ձայներն և ծափերի ճարճատյունը, հասան նրա ականջներին:

Նվագախումբը հանդիսավոր կերպով նվագում եր անհայտ մի բան:

Ցելենան լսում եր այսպիսի ճիչեր.—«Փա՛ռք հերոսներին, կեցցե՛ն կանայք»:

Ռեժիսյորը կուլիսների հետևից չշնջաց.—«Գլուխ տվեք, այդ ձեզ ե վերաբերում»:

— Գլո՛ւխ տվեք, գլո՛ւխ տվեք,—չշնջաց նվագակցողն և սկսեց նվագել:

Ծափահարությունները սաստկացան: Ցելենան վազեց կուլիսների հետև, նկատելով, թե ինչպես պարտերում միքանի մարդ վեր կացան և գլուխ տվին դեպի բոլոր կողմերը: Նվագախմբի ձայնն այլևս չեր լսվում:

— Գնացեք բեմ, հասարակությունը կանչում ե,— դժգոհությամբ ասաց ռեժիսորը:—Դուք գեղեցիկ բան արիք, չեմ վիճում, բայց նկատեցեք,—առանց վորևե հնարավորության: Գուցե իրո՞ք մտածում եք, վոր թատրոնի կեսն այսոր կռվում եր ձեզ մոտ՝ Նեյիում: Ձեզ հետ պատահած դեպքը, իբրև առաջինն ու միակը, ներելի յե:

Նա բռնեց նրա ձեռներից և դուրս բերեց բեմ:

Աղմուկների ամբողջ քաոսը կրկնվեց սկզբից:

— Գլո՛ւխ տվեք,—չշնջաց ռեժիսորը:

Նա գլուխ տվեց: Պարտերում նորից բարձրացան յերկուսը և ձեռները կրծքերին դնելով, նույնպես գլուխ տվին: Ցելենայի համար այդ զվարճալի յեր և նա հրհռաց, ինքն ել վախենալով իր ծիծաղից:

— Կեցցե՛, կեցցե՛ մեր Բոչը,— գոռում եյին դահլիճից:

Թողնելով ռեժիսորին, նա չեչտակի վազեց կուլիսների հետևը: Նրա դեմ գնաց Անատոլ Մորենը, դերասանը:

— Ուղղեցե՛ք մադեմուազելի սխալը— ասաց նրան ռեժիսորը:

Մորենը յելավ բեմ, նշանակալից կերպով թարթելով աչքերը,—իբր հիմա կտեսնեք, հիմա կուղղեմ դրությունը:

— «Մի թողնիր ինձ», Ֆլերիի ռոմանսը...

— Հարկավոր չե:

Նվագակցողը ցնցվեց և մեղմ ձայնը կաթեց լարերին:

— Հարկավոր չե՛:

— Այո՛, այո՛, հարկավոր չե:

— Բավակա՛ն ե:

Հենվելով կուլիսներին, Ցելենան փակեց աչքերը: Այդպես գոռում են կրկեսներում վտանգավոր համարի ժամանակ:

— Հարկավոր չե՛, կորչի՛:

Հազիվ տիրապետելով իր ձայնին, Մորենը ասաց.

— Շա՛տ լավ, հրաշալի: Ցես ձեզ համար ուրիշ բան կյերգեմ... «Ցես առհավետ մերժեցի քեզ»... յերաժըշտություն Դորիվալի...

— Կորչի՛, ե՛:

— Հարկավոր չե՛:

— Բավական ե...Ցելենա Բո՛չ...բի՛ս:

Անտրակտը հայտարարվեց ավելի շուտ, քան պետք

էր։ Դահլիճը, հրճվանքից ու ջղայնությունից հոգնած, աննկարագրելիորեն դժժում էր ու աղմկում։

Յելենան դուրս յեկավ հասարակության մեջ նվիրատվություններ հավաքելու։ Առանց հարցնելու, թե ինչո՛ւ համար է հավաքում, առատաձեռնորեն տալիս էյին նրան արծաթե դրամներ։ Խոսակցություններն ընթանում էյին հազարավոր հոսանքներով։ Նրան կանգնեցնում էյին և հարց ու փորձ անում առավոտյան դեպքի մասին։ Հարցնում էյին ինչ-վոր հարևանների մասին, —վողջ և առո՞ղջ են։ Նա վոչ վոքի մասին վոչինչ չէր կարող ասել։ Տեղյակ մարդիկ պատասխանում էյին նրա փոխարեն,—վողջ և առողջ են, վոչ մի կասկած։ Դուրս էր գալիս, վոր այդ աղքատ թաղամասում այսոր, լուսաբացին կռվել է ամբողջ քաղաքը։ Կռվել են կապիտանները,—նրանք հիմա նկարագրում էյին Բիգուի թիկունքն անցնելը և շրջապատող ամբոխը ծիծաղում էր։ Կռվել էր դպրոցի ուսուցիչը, վորն առավոտյան վերադառնում էր ծանոթների մոտից, ոմնիբուսավարը, կաթնավաճառ կանայք, վառարան մաքրողները, կանաչեղեն վաճառողները, փաստաբանները, հրդեհաշեջները, յերկաթուղայինները,— բոլորը, ովքեր առավոտյան անցել էյին կռվի տեղից, կամ կողմնակի կերպով ներգրավվել դեպքին։

Ներկայացումն ընդհատվեց։ Յելենան ուրախացած տուն էր գնում։

— Յես և դուք մարտակից ընկերներ ենք,—դրսից դռան մոտ ասաց նրան մի յերիտասարդ սպա,—յես գիտեյի, վոր դուք կորցրել եք նոտաները։ Ինձ համար շատ հետաքրքիր էր տեսնել, թե դուք ինչպես դուրս կգաք այդ դրությունից։

— Դուք միայն դրա համա՞ր եք յեկել։

— Այո։

— Դուք ինձ տեսե՛լ եք այնտեղ, տա՞նը,—հարցրեց Յելենան,—գիտե՞ք, յես շատ հիմար եյի ինձ պահում։ Նույնիսկ ամաչում եմ... յես յերգում եյի, իսկ գվարդիականները ծիծաղում եյին։ Յես վախեցա։ Սկսեցի ավելի բարձր յերգել։ Այդ ժամանակ նրանք ասին,—

գնանք տեսնենք այդ հավլին, վորն այդքան կչկչում է։ Յես վերցրի նոտաներն ու նետեցի վառարանը։ Վախենալուց այդպես արի։ Դուք ծիծաղո՞ւմ եք։

— Ծիծաղում եմ, վորովհետև ծիծաղելի յե։ Իսկապես, չարժե հիշել այդ առավոտը, վորը դուք անց եք կացրել։ Ամեն ինչ կարգին է։ Դուք հիմա գեղեցիկ ժեստ արիք։ Ամբողջ կես ժամ մարդիկ ձեզանով էյին ապրում։

— Դուք կարծո՞ւմ եք,—հարցրեց Յելենան, բայց սպայի խոսքերը նրան հանգստացրին,— իսկ յես հոգնել եմ։ Ուզո՞ւմ եք, քայլենք։ Ի՞նչպես է ձեր անունը։

— Հենրիխ Գրոդզենսկի։ Իհարկե, քայլենք։

Գիշերը խոնավ քայլերով անցնում էր բուլվարները։ Տեղ-տեղ դեռ անեղծ էր մնում յերեկոն։ Աստղերը, մայրամուտի վարդե հետքերը և գազային լապտերների լույսը դողդողում էյին ոդում։ Լապտերներն առկայծում էյին և նրանցից լուսեղեն մշուշ էր տարածվում, ինչպես քրտնաթոր ձիերից։ Քաղաքը նման էր մարիոնետների թատրոնի դատարկ դահլիճին, նրանում ամեն ինչ չարժվում էր չափած ու ձևած։

Սլացող ոմնիբուսի կտուրի վրա գլխաբաց մի մարդ յերգեց.

Բագլ, գագլ, հո՛բբլ, դո՛բբլ···

— Յես ինձ լավ եմ զգում,—ասաց Յելենան։—Ճի՞շտ է, վոր յես ուղղեցի առավոտյան սխալս։ Այո՞,—և հանկարծ կարծես ինչ-վոր բան հիշելով,— բայց վերջապես, ասեք ինձ, ի՞նչ է իսկապես կատարվում մեզանում, Փարիզում։

— Առայժմ կասեմ, թե ինչ պատահեց ձեզ հետ։ Դուք ուզեցիք հերոսուհի դառնալ։ Շտապեցեք։ Շուտ արեք։ Ձեզ դուր յեկավ, վոր հանձին ձեր մարդիկ վերապրում են առավոտյան հաղթանակը։ Մի՛ ժխտեք, չե՞վոր այդ ճշմարտություն է։ Գեղարվեստը—դա անկեղծությամբ համոզելն է։ Հիշեցեք։ Արդյոք ձեր յերգերը շա՞տ անգամ են առաջ բերել այդքան հրճվանք և ուրախություն։

— Բայց ի՞նչ է պատահել,—նորից հարցրեց նա

անհամբերությամբ,—բացատրեցեք ինձ,—և ակամա խույս ավեց իր ուղեկցի համառ անկեղծությունից, վորովհետև նա և՛ ուզում էր, և՛ վախենում էր մտածել, վոր ուղեկիցն իրավացի յե:

Պարտադիր զինվորական ծառայության սահմանումն ուղղված էր գլխավորապես բուրժուազիայի դեմ, վորովհետև պրոլետարիատը վաղուց զինվորական շարքերում էր: Սակայն, լինելով ավելի շուտ դիսցիպլինար, քան ռազմա-տակտիկական միջոց, նա ողակվեց այնպիսի դեպքերով, վորոնք նրան տվին չնախատեսված նշանակություն: Այն օրը, յերբ նրա մասին սկսեց խոսել մամուլը, Լիմոժ քաղաքում հայտարարվեց Կոմունա, կառավարական զորքերը յեղբայրանում եյին ազգային գվարդիայի հետ, Վյերզոնն այդ օրը հետևեց Լիմոժին, ապստամբներին հանձնելով յերկաթուղայանգը և փակելով վերսալցիների ճանապարհը դեպի ապստամբած Թուլուզը: Այդ օրը թվում էր, թե Ֆրանսիան վոտի յե յելնում Փարիզը պաշտպանելու, վոր Վյերզոնի յերկաթուղայինները վոտի կհանեն ուրիշ դեպոներ, յերկաթուղայիններին կհետևեն նավահանգստային բանվորները, վերջիններիս—նավաստիները: Զինվորական ծառայության սահմանումը համաֆրանսիական հեղափոխական զորահավաքի նշանակություն էր ստանում:

Նա հենց այդպես էլ մեկնաբանում էր այդ խոստումնալից օրը, ձիուն նստած և կամացուկ շրջելով Բուլոնի անտառի արևելյան սահմաններում, Մայոյի դարպասների մոտ գտնված պահակատեղերը: Սպասվում էր չարաճճի, շեղակի անձրև, վորը սակայն չէր կարողանում անցնել արևի, տոթի և ամպերի խիտ ուղեկալի միջով: Քամին հեռու յեր քշում անձրևը,— դեպի յերկնքի ծայրը, փախցնելով թռչուններին և փոշի բարձրացնելով յերկրից:

Այն մտքերը, վորոնցով նա ապրում էր վերջին տարում և վորոնք նրան ճարտար մարդ եյին դարձրել, այժմ տիրում եյին նրա արյան շրջանառության: Նա

ճզլայնանում էր և այս պատճառով,—հակառակ իր սովորական անհանգստության,—հանգիստ էր:

Այն ժամանակից սկսած, յերբ նա հեռացավ Լեհաստանից, այսինքն արդեն յոթը տարի, ապստամբության միտքը յերբեք չէր հեռանում նրանից: Այդ նույնիսկ միտք չէր, այլ հոգեվիճակ: Նա այժմ ղեկավարում էր նրա ամբողջ կյանքը: Յերկարատև փառասիրության, ֆանատասիկ գաղափարի նմանող այդ միտքն իր դրոշմն էր դնում նրա ամեն մի դիտավորության, ամեն մի ժեստի վրա: Տեսողությունն անգամ նշում էր աշխարհը վորպես ապստամբ.—յերկար, նեղ, ուղիղ և ծնկաձև փողոցները տարբեր կերպով եյին պատկերանում նրա գիտակցության մեջ և ասոցիացիայի կարգով վերածվում խռովությունների պատկերների, վորոնք յերբեմն տեղի եյին ունեցել կամ կարող եյին տեղի ունենալ այդ փողոցներում: Նրա համար միանգամայն պարզ էր փողոցների դեմքը: Կան շատ անհարմար փողոցներ, վորտեղ անկարելի յե ճակատամարտել. կան ակներև յերկիմաստության փողոցներ, վորտեղ պետք է զգույշ լինել. կան այնպիսի փողոցներ, վորոնց սկիզբը հիանալի յե, ինչպես ամրոց, իսկ վերջը լավ քողարկված թակարդ է ներկայացնում: Քաղաքի ամեն մի կամուրջը, վորը գրկել էր գետը և պաշտպանության համար անպետք էր, գրավում էր նրա ուշադրությունը, ինչպես խավար մի հուշ: Դիտելով ու խորհելով, նա ուրախությամբ յեզրակացնում էր, վոր կամուրջին պակասում են պաշտպանության ֆունկցիաները: Հրապարակները, յերբ նույնիսկ դատարկ եյին լինում, խճողում եյին նրա ուղին, ինչպես վոտների տակ անսպասելի զգացվող ճահիճ: Նա չէր ուզում վոչ մի քայլ անել առանց այդ տարածությունը հետազոտելու: Ոմնիբուսները քշողները հաճախակի մտրակել եյին այդ անհանգիստ տղային, վորը փողոցային ամենահախուռն շարժման ժամին աննպատակ պտտվում էր հրապարակի մեջտեղում: Նրա համար Ետուալ հրապարակն, իհարկե, քարե մի կարուսել էր, կառքերը աղեղնաձև գծերով անցնում եյին այնտեղից, ոմնիբուսները կիսաշրջան եյին կատարում, վորպեսզի

մտնեն այնտեղ, կամ անցնեն փողոցները: Բաստիլիայի հրապարակն իր մեջ էր առնում բոլոր փողոցները և խառնում նրանց ամբոխները: Այստեղից սկսվող և վոչ մի ուղի անվտանգ չէր: Նույնիսկ հրապարակի շուրջն յեղած տներն աշխատում եյին սեղմել և բաց չթողնել մարդուն, մինչև վոր նա չճզմվեր հախուռն իրարանցման մեջ: Ցույցերը պետք է խուսափեյին այդ հրապարակից:

Ճեմելիքները ծառայում եյին իբրև վանդակներ, վորտեղ քշվում եյին խռովարար փողոցները: Այնտեղ տանող ճանապարհները հարմար եյին ամբոխների համար: Խիտ սաղարթը իբր թե պաշտպանվելու միջոց էր, բայց ապստամբությունը, կատաղի մոլեգնությամբ ներխուժելով ճեմելիքները, պարփակվում էր այնտեղ: Քաղաքական մարդիկները կարող եյին առանց յերկյուղի ցույց տալ բերանբացներին բազմագլուխ գազանին, վորը ցնցում էր իր վանդակի չուգունե պատերն և արդեն պատրաստ էր ամեն մի անվտանգ վոստյունի համար:

Ցերեկները, թողնելով գծագրական տախտակը, նա յերկար ժամանակով գնում էր քաղաք: Կերկովին, վորը նրանից ավելի ճարտար մարդ էր, շարունակ ուղեկցում էր նրան: Յեվ նրանք քայլում եյին փողոցից փողոց և ցուցակագրում եյին ամեն մի փողոցն առանձին, նայած փունկցիաներին և պաշտպանողական ունակության: Տասնյակ փողոցներից,—վորտեղ պիտի կապակցվեր ամբողջ աշխատանքը,—նրանք նշում եյին մեկը, վորտեղ պիտի լիներ շարժման ղեկավարությունը: Նրանք հաշվի եյին առնում փողոցի տները և սրանց տասնյակների եյին բաժանում, նշանակելով այն տունը, վորտեղ պիտ լիներ այդտեղի ղեկավարությունը: Նա կարող էր հետևել փողոցին, ինչպես ջանասեր պահակն իրեն հսկողության հանձնած մարդուն: Նա ժպտում էր, յերբ նկատում էր լատինական թաղի վորևէ անցքի առանձնահատկությունները, այն թաղի, վոր անոխակալ անցյալի մնացորդ էր ձևանում, բայց իսկապես փրկարար մի լաբիրինթոս էր վոստիկանների և գողերի համար:

Քաղաքի կերպարանքը նրա առջև բացվեց աշխ-

ցուցիչ խորությամբ: Նա շարունակ նրա մեջ գտնում էր արդեն անցած, կամ նոր առաջացած փունկցիաներ: «Այստեղ պետք է վոր հրապարակ լինի»,—մտածում էր նա, շրջելով բուլվարում և նրա վորևէ մասում նկատելով հավաքված կառքեր և ամբոխներ: «Այստեղ անպայման պետք է հրապարակ լինի»,—և քրքրելով հին պլանները, գտնում էր, վոր քսան տարի առաջ այդտեղ իսկապես յեղել է հրապարակ, վորտեղ այժմ տներ են գտնվում, և նրա պարտականությունները կատարում է յեկեղեցու առջև գտնվող համեստ ճեմելիքը:

Կերկովին անսպառ ընդունակություններ ուներ նոր պլաններ հղանալու համար: Մի անգամ մի ամբողջ ամիս չքանալով, նա վերադարձավ և բերեց մանրամասն ցուցակագրությունների մի տետր, վորոնք նա կատարել էր ամբողջ քաղաքում:

Հուզմունքից կակազելով և շնչալով, Կերկովին հաղորդեց մի յեզակի դյուտ, վոր Փարիզի տներն ունեն մեկ միլիոն վեց հարյուր ութսուն հինգ հազար հինգ հարյուր վաթսուն յերկու լուսամուտ, յերեսուն յերկու հազար հիսուն դարպաս, հազար հինգ հարյուր վաթսուն յերեք փողոց: Այդ բոլորը հաշվել է նա ինքը, իր աչքերով: Այդ մասին վոչ վոք և վոչ մի հասկացողություն չի ունեցել:

—Հազար հինգ հարյուր վաթսուն յերեք փողո՞ց,—անհանգստությամբ արտասանեց Դոմբրովսկին:

— Այո, հազար հինգ հարյուր վաթսուն յերե՛ք,—շեշտելով յուրաքանչյուր վանկը, կրկնեց Կերկովին, կնճռոտելով ճակատը:

— Յես բոլորովին չեմ հասկանում, Յարոսլավ, ձեզ համար դա շա՞տ է, թե քիչ,—հեգնորեն ասաց նրա կինը:

— Բանը դրանում չէ՛,—մռայլվելով պատասխանեց Կերկովին: Այստեղ, գիտե՞ք, ուրիշ բան կա:— Նա ձեռքը շարժեց ոդում.

— Պետք է փոխադրել ուրիշ տե՞ղ:

— Ա՛յ, հենց այդպես, դուք հասկանո՞ւմ եք... Դա բարդ գործ է, մադամ: Բայց լսեցեք շարունակությու-

նը— քսաներկու բուլվար, հարյուր հիսուն յոթը պասսաժ...

— Սպասեցե՛ք, յերկու կողմից անցքեր ունեցող բակերո՞վ,—ընդհատեց Դոմբրովսկին:

— Ա՛խ, սատանան տանի, այո, այդ հարց է: Հը՛մ, այստեղ յես վրիպեցի, թերացա: Դուք իրավացի յեք:

— Պասսաժները պատրաստի տեղեր են,—դիտեց Դոմբրովսկին,—այստեղ դուք պետք է ավարտեք ձեր հետազոտությունը: Ճի՞շտ է:

— Յոթանասուն հրապարակ...ինչ վոր ճիշտ է, ճիշտ է, կավարտեմ աշխատանքս: Իսկ այդ յոթանասուն հրապարակը, ի՞նչպես են նրանք դուր գալիս ձեզ:

Նրանք լռեցին, խորը պատկերացնելով հրապարակները, վորոնք ճակատամարտերի քաղաքային թատերաբեմ են դառնալու:

— Յերեսուն հինգ առափնյա փողոց,—հետո ահարկու ձայնով շարունակեց Կերկոզին, յերբ նրա գլխում կարգավորվեց հրապարակների բախտը,—տասնիննը կամուրջ:

— Սա իսկական բերդ է և վոչ թե քաղաք,—վոգևորվեց Դոմբրովսկին,—ինչպե՞ս ասացիք դուք, մեկ միլիոն վեց հարյուր ութսուն հինգ հազար հինգ հարյուր վաթսուն յերեք լուսամո՞ւտ:

— Յես յերբեք չեմ իմացել չորս առափնյա փողոցից ավելի,—զարմանալով ասաց Դոմբրովսկու կինը: Դուք համառ և հետևողական մարդ եք, Կերկոզի:

— Շնորհակալություն, մադամ, ձեր կարծիքի համար: Բայց գիտե՞ք, յես ուղղակի հետաքրքրվող եմ: Ուրիշ վոչինչ: Հետաքրքրությունը յերբեմն մտքի ինչվոր քմահաճույքն է: Լուրջ: Ա՛յ, որինակ,—նա շարունակեց իր պատմությունն առանց շփոթվելու,—տեսեք, վաթսուն հինգ շատրվան: Ջուր: Այդ խիստ կարևոր է: Բայց շատրվաններն ինքնին նաև փոքրիկ առաջկալներ են: Ճշմարիտ է, չե՞: Այստեղ, գիտե՞ք, շատ հաշիվներ կան: Կամ ահա,—նա մատով խփեց Դոմբրովսկու ուսին,—յերեսուն իննը շուկա: Կրկին յերեսուն իննը հրապարակներ՝ պասսաժներով, այսպես ասած՝ բարդ հրա-

պարակներ, մյուս կողմից—վարկերակներ. յերրորդ կողմից—մարդկանց հավաքվելու կետեր, ադիտացիայի ամբիոններ:

— Ահարկու և շատ դեպքերում անխորտակելի բերդ է,—ասաց Դոմբրովսկին, հայացքով զննելով Կերկոզուն:

— Այո՛, այո՛, յես էլ եմ այդպես մտածում:

Սակայն նա վոչ մի րոպե չէր մոռանում իր դիտողությունները.

— Քառասուն յեկեղեցի,—արտասանեց նա մի առանձին նշանակությամբ,—իննը բանտ, քսանչորս զորանոց, հինգ հարյուր հյուրանոց:

Կերկոզին ճակատից սրբեց քրտինքն և խփեց տետրակին:

— Այս բոլորը պետք է սիստեմի յենթարկել,—ասաց նա վճռականությամբ:—Հապա մտածեցեք,—նա կրկին հիշեց,—Պեր-Լաշեզ գերեզմանոցում յերեսուն հազար արձան կա: Յես դրանք մի առ մի դիտել եմ պաշտպանության տեսակետից: Թագստոցներ են, հրաշալի թագստոցներ: Իհարկե, ռազմաճակատը վորոշելիս մի փոքր անկանոնության կհանդիպենք, սակայն այդ հեշտ է նախատեսել և հաշվի առնել: Յերեսուն հազար թագստո՛ց: Յեվ գիտե՞ք, ծիծաղելի յե, ամենապետքական արձանները պատկանում են Նապոլեոնի մարշալներին: Նույնիսկ անհարմար բան է:

Զինադադարից հետո Կերկոզին չքացավ: Ի դեպ, Դոմբրովսկին ավելի շուտ թողեց քաղաքի կազմության ուսումնասիրությունը: Օտարերկրյա թղթակիցների միջոցով դ—ր Ենգելսի ռազմական տեսությունների հետ ծանոթանալն ստիպեց նրան այլ բանով զբաղվել: Նա դարձավ բանվորական ակումբների համար ռազմական տեսություններ կազմող, վորովհետև նրանք վոչ մի տեղ չէյին տպվում: Ռազմական գործողությունների քարտերը պինդ ու բարակ փաթաթելով և ձեռնափայտի պես ձեռքին բռնած, նա թռչում եր ոմնիբուսը և սլանում ամբողջ քաղաքի միջով դեպի մի վորևէ ուղեկալ, դերձակների կամ գիշերապահների ակումբ, վորպեսզի

պատմի, թե ինչպես անշնորհք էր մղվում պատերազմը և ով էր պարտության մեղավորը: Վերադառնալով բաքերից, նրան լսելու էին գնում կարմիր Փրակ հագած գնչուները, գիշերային գողերն ու թեթևաբարո կանայք: Տուն էր վերադառնում կես գիշերին, շրջապատված անսպասելի ընկերներով, լակյաց ու ցասկոտ աղերքով: Նրանք հագում էին ձեռների մեջ և վոստիկաններին պատահելիս արմունկներով բոթում էին նրան,— «վոչինչ, քաղաքացի, դուք հանգիստ յեղեք»:

Կամ հանկարծ հարցնում էին.—«Իսկ դանակների բանը վո՞նց կլինի, դուք կբաժանե՞ք, թե մենք ինքներս գտնենք»: Կամ թե նախազգուշացնում էին.—«Դուք հանգիստ յեղեք, քաղաքացի, մի բոսե»,—և, ինչ-վոր բանի ականջ դնելով, հրաժեշտ էին տալիս և չքանում անբացատրելի ճարպկությամբ: Նա նրանց պատմում էր, թե ինչպես էր նստել ռուսական բանտում, ինչպես փախավ Սիբիրից, ինչպես Ֆրանսիական վոստիկանությունը 67 թվին փորձում էր իրեն էլ խառնել ցարի վրա կրակած՝ Բերեզովսկու գործին, ինչպես հետո նրան մեղադրում էին ռուսական թղթադրամներ կեղծելու մեջ և բանտարկեցին,—իսկ նա միայն ռուսական անձնագրեր էր կեղծում, հեղափոխական էմիգրանտներ ուղարկելու համար,—ինչպես մեղադրեցին պրուսական լրտեսության համար, յերբ նա փորձում էր Փարիզից փախչել Գարիբալդիի Լիոնյան ջոկատը: Ընկերակիցներն անբացակամությամբ և տխրությամբ էին լսում նրան: Նրանք չէյին հավատում նրա վոչ մի խոսքին: Յեվ այդ ժամանակը յերիտասարդության էր նման:

Ահա և նրա առաջ այժմ ծավալվեց աշխույժ, շարժուն, ուղիներ փնտրող ապստամբությունը: Համառորեն վրա հասնող անձրևը, լքած արվարձանը, կենդանաբանական այգու սոված թռչունների ու կենդանիների ճիչերը, գնդակների սահումը ծառերի տերևների վրայով և մարդկանց զգույշ դեմքերը,—այս բոլորը մտնում էր ապստամբության դաժան շրջանը: Կենդանաբանական այգու ցանկապատի մոտ նա կանգնեցրեց ձին:

—Քաղաքացի պետ, մի խոնարհ խնդիր ունեմ ձեզ,—

ասաց նրան մոտենալով մի մարդ, ըստ յերևույթին արհեստավոր,—փղի մասին է,—բացատրեց նա:

— Փղի՞:

— Բոլորովին ճիշտ է, քաղաքացի պետ: Էլ ուժ չկա նրա գլխացավանքը տանելու, հաճեցեք հարցնել: Մենք յերեկ ձեզ մոտ պատգամավորություն ուղարկեցինք, հաճեցեք հարցնել,—ուղղակի տեռոր ու տեռոր: Ման է գալիս թաղում, հասկանո՞ւմ եք, վողորմություն է խնդրում: Ա՛յ, եսպես, մոտենում է լուսամուտին, կնճիթով թխկթխկացնում և սարսափելի ձայն հանում: Կանայք ու յերեխաները վախչում են: Ու նա սովորաբար կնճիթով վերցնում է ծաղկամանը, կամ նույնիսկ քարի կտոր ու շրա՛ախկ լուսամուտին: Յերեկները, քաղաքացի պետ, անկարելի յե տանից դուրս գալ,—տեռոր է: Կանայք վախենում են պահակություն անել:

— Ելի փի՞ղը:

— Հենց նա, Թոմաս է անունը:

— Հը՛մ, նրանից բացի, ի՞նչ կա ձեզանում:

— Նրանից բացի գանգատներ չկան: Կատարյալ հանգստություն է:

— Լա՛վ,— ասաց նա,— փղի գործը կկարգադրենք: Յես խոստանում եմ:

Նա քշեց ձին գեղեցիկ, հանդիսավոր քառատրոփով: Նրա ջղայնությունն անցավ: Այդպե՛ս ուրեմն, ապստամբությո՞ւն: Նա այդպես արշավեց մինչև Հաղթական կամարները և հրամայեց նրա վերևում հեռադիտակ դնել: Հետո յերկաթե կեռերի ոգնությամբ ինքը մի կերպ բարձրացավ այնտեղ: Բուլոնի անտառի մնացորդները ծածկված էին յեղրևանագույն-դեղին մշուշով, վորը խոնավ առավոտյան մնացել էր ծառերի միջև: Ողակելով անտառը, պարուրաձև ձգվում էր Սենան: Հազիվ նըշմարվում էին Բուլոնը, Բելանկուրը, Վորտ Իսսին՝ հարավում, Մոնվալերյանը—արևմուտքում: Շրջակայքում, վորքան վոր կարող էր տեսնել աչքը, մարդ չէր յերևում: Ամենաթեթև շարժումները,—լքված Ֆիրմայից բարձացող ծուխը, ամպի ստվերի սահումը բլուր-

ների կանաչ-չիկագույն վուշորաններով, կամ թռչունների յերամի դժգույն ուրվագիծը դատարկված քաղաքի վրա,— թվում եյին կասկածելի և ինչ-վոր բան թաքցնող: Հնարավոր կռիվների դաշտերը փռված եյին նրա աչքերի առաջ, թշնամու կենտրոնները հեշտությամբ եյին գտնվում: Նա կարող եր նշել իր հարվածների բնույթը, յելակետ ունենալով ամեն մի սիստեմ,—շեղակի, կամ Ֆրիդրիխ թագավորի ռազմակարգի սիստեմը, կամ մեծ հեղափոխության սիստեմը,—ռազմական յերկար ճակատով ողակումը, կամ վերջապես, Բոնապարտի յեղանակը—կենտրոնացված ուժերով գրոհելը: Սակայն նա թողեց այդ մեռած, այժմ վոչինչ չորոշող ձևերը: Այժմ նրան պետք չեր դա և վոչ մի գիտություն, քանի դեռ նա հմտություն չեր դարձել: Յեվ նա, նորից ընկղմվելով տարտամ անդորրության մեջ, վերապրեց անցյալ Լեհաստանի բախտին վերաբերող գործանալի մտքերի շղթան:

1795 թվականին տեղի ունեցավ Լեհաստանի բաժանումը Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միջև: Լեհական ազգայնականները փախան Թյուրքիա, Իտալիա և Ֆրանսիա: Ֆրանսիական հանրապետությունն այդ ժամանակ պատերազմում եր Լեհաստանը բռնագրավող յերկրների հետ և այն գաղափարը, վոր պետք է ստեղծել լեհական լեգեոններ, վորպեսզի Ֆրանսիային ծառայելով, կարելի լինի ոժանդակել հայրենիքի վերականգնման,—արագությամբ ընդունվեց: Գաղափարն ստեղծողը Վիբիցկին եր, իսկ նրա իրագործողները— զինվորականներ—Հենրիկ Դոմբրովսկին և Կարոլ Կնյազեվիչը: 97 թվականին Յան Հենրիկ Դոմբրովսկին ֆրանսիական դիրեկտորիային ներկայացրեց պատրիոտներին կազմակերպելու իր պլանը և ուղարկվեց գեներալ Բոնապարտի մոտ, վորն իտալական բանակի հրամանատարն եր: Բոնապարտը հավանություն տվեց պլանին, սակայն սահմանադրությունն արգելում եր տարբերկրացիներին ընդունել զինվորական ծառայության և այդ ժամանակ լեհերին միացրին Լոմբարդական հանրապետության բանակին: Լեհերը համարվեցին

Լոմբարդական քաղաքացիներ, վարձատրվում եյին Ֆրանսիայի կողմից, իրավունք ունեյին ընտրել իրենց սպաներին և կրում եյին լեհական նշանազգեստ, վորի վրա յերևում եր Ֆրանսիայի յեռագույն նշանը, իսկ թևերի վրա կային իտալերեն հետևյալ մակագրությամբ թևակապներ.—«Ազատ մարդիկ յեղբայրներ են»:

Հենրիկ Դոմբրովսկու պլանն այսպես եր.—լեհական լեգիոնը Կրայնայի և Կրոացիայի վրայով անցնում՝ կրոատներին, սլովեններին, դալմատներին և հունգարներին մղում է դեպի հեղափոխական ապստամբություն, Հունգարիայի միջով անցնում է Լեհաստան և այստեղ ապստամբեցնում գյուղացիությանը: Լեգիոնն սկսեց իր արշավանքը և հասավ մինչև Պալմա-Նուովո, բայց այդ ժամանակ Նապոլեոնը Ավստրիայի հետ հաշտություն կնքեց Կամպո-Ֆորմիոում: Հաշտության դաշնագրում լեհական շահերի մասին վոչ մի խոսք չկար: Լեգեոնը հետ կանչվեց և դրանից հետո շուտով հրաման ստացավ գրավել Պապական մարզն ու մասնակցեց Նեապոլի գրոհին, վորտեղ առանձնապես աչքի ընկավ: 99 թվականին Սուվորովը մտավ Իտալիա: Լեհերը կռվում եյին Լենյագոյի, Մանյանոյի, Մանտուեյի և Տրեբիայի մոտ: Յերբ Նապոլեոնը վերադարձավ Յեգիպտոսից և պետական հեղաշրջում կատարեց, նա, ոգտվելով առաջին հյուպատոսի իրավունքից, վերացրեց սահմանադրության այն կետը, վորով արգելվում եր ծառայության ընդունել տարբերկրյա զորքերին: Լեհական բանակի արշավանքը, վորը պիտի տեղի ունենար Չեխիայի և Գալիցիայի վրայով, արդեն վորոշված խնդիր եր, յերբ Նապոլեոնը 1801 թվականի փետրվարին անսպասելի կերպով հաշտություն կնքեց Լյունեվիլլում: Հաշտության դաշնագրում վոչ միայն խոսք չկար Լեհաստանի շահերի մասին, այլ, ընդհակառակը, Ֆրանսիան պարտավորվում եր ցրել լեգեոնները: Սակայն, չնայելով դաշնագրին, լեհերի մի մասն ընդունվեց ֆրանսիական գնդերում, մյուս մասն, առանց պատճառները բացատրելու, ուղարկվեց Լիվորնո և Ճենովա: Այնտեղ լեգեոներների դեմ թնդանոթներ դրին և սպի-

պեցին նստել նավերը, վորոնք նրանց տարան Սան-Դոմինգո: Այստեղ ազատության մարտիկները պետք է ճնշեյին նեգրերի ապստամբությունը:

1805 թվի դեկտեմբերի 2-ին Նապոլեոնը (արդեն կայսր) Աուստերլիցի մոտ գլխովին ջարդեց ավստրիացիներին ու ռուսներին և 1806 թվականի հոկտեմբերի 14-ին Յենայի մոտ ջարդեց նաև պրուսացիներին: Այդ ժամանակ Նապոլեոնն ուզում եր, վոր Լեհաստանի ազատագրական շարժումը վոչ մի րոպե հանգիստ չթողնի այն պետություններին, վորոնց միջև բաժանված է նա: Թադեուշ Կոստյուշկոն, վորի ձեռքում այն տարիներում գտնվում եյին ազգային ապստամբությունների բոլոր թելերը, կայսրից յերաշխիքներ պահանջեց, վոր հաղթության դեպքում կվերականգնվի լեհական անկախ պետությունը: Նապոլեոնը մերժեց: Հենրիկ Դոմբրովսկին նորից լեգեոններ հավաքեց և ապստամբություն բարձրացրեց Պրուսիայի գրաված լեհական նահանգներում: Պրուսացիք թողին ամբողջ Պոզնանը մինչև Վարշավա և այս հանգամանքը Նապոլեոնին հնարավորություն տվեց ջարդել ռուսներին—փետրվարին Եյլաուի մոտ և հունիսին՝ Ֆրիդլանդի մոտ: Դրանից հետո կայսրը զիջումներ արեց և ստեղծեց Վարշավայի մեծ իշխանությունը: Նրա սահմանները բոլոր կողմերից բաց եյին: Այդ մի ռազմական ճամբար եր, վոր գտնվում եր Պրուսիայի, Ռուսաստանի և Ավստրիայի միջև:

Նապոլեոնը մեկ ժամվա ընթացքում մտածեց ու թելադրեց նոր պետության սահմանադրությունը, վորը թեև վերացնում եր ճորտատիրական իրավունքը, բայց հողը թողնում եր կալվածատերերին: Լեհ գյուղացիներն սկսեցին հեռանալ իրենց յերկրից: Նրանցից ութ հազար մարդ վարձվեցին իսպանացիներին նվաճելու, յերեք ու կես հազար անցան ովկիանոսն ու ծառայության մտան Հյուսիսային նահանգներում: Այս պատերազմ բռնկվեց Ավստրիայի և Ֆրանսիայի միջև: Երցհերցոգ Ֆերդինանդը քառասուն հազարանոց բանակով մտավ Վարշավայի իշխանությունը, լեհերին ջարդեց Ռաշինի մոտ և գրավեց Վարշավան: Լեհական լեգեոններն անցան

ավստրիացիներին պատկանող լեհական շրջաններն և այնտեղ ապստամբություն բարձրացրին:

1809 թվականի հուլիսի 6-ին Վագրամի մոտ Նապոլեոնի տարած հաղթությունը վերջ դրեց պատերազմին: Լեհերը հույս ունեյին, վոր գոնե այդ ժամանակ ապստամբած շրջաններն անկախություն կստանան, բայց նրանք նորից խաբվեցին: Վիեննայի դաշնագրով Գալիցիայի մի մասը միացվեց Վարշավայի իշխանությանը, մյուս մասը մնաց Ավստրիային, յերրորդը— Ռուսաստանին: 1812 թվականին Նապոլեոնը հաստատապես խոստացավ վերականգնել լեհական միասնական պետությունը: Իշխանությունը տրամադրեց ութսուն հազար մարտիկ, վորոնց հրամանատարությունը Նապոլեոնը հանձնեց Պոնյատովսկուն— լեհական վերջին թագավորի քրոջ տղային: Յերբ Ֆրանսիական բանակը փախչում եր Ռուսաստանից, լեհերը վերջիններն եյին փախչում: Լայպցիգի ճակատամարտում նրանք վերջին անգամ խաղացին իրենց հերոսական դերը,— հոկտեմբերի 16-ին թույլ չտվին, վոր դաշնակիցներն անցնեն Պլեսան, իսկ 19-ին ապահովեցին Նապոլեոնի բանակի մնացորդների վերջին նահանջը:

Վիեննայի կոնգրեսում լեհական պետությունը նորից բաժանվեց Պրուսիայի և Ավստրիայի միջև և միայն Վարշավայի իշխանության մի մասը վերականգնվեց ու կոչվեց Լեհական թագավորություն: Լեհական թագավոր դարձավ ռուսական ցարը: Այդ ժամանակվանից պատրիոտների համար մնում եր յերկու ճանապարհ,— կամ հեռանալ ուրիշ յերկրներ, կռվել ուրիշների ազատության համար, կամ թե իրենց յերկրում լեգեոններներից դառնալ քաղաքական ագիտատորներ:

1860 թվականին Յարոսլավ Դոմբրովսկին փախավ ռուսական աքսորից և մասնակցեց Գարիբալդիի արշավանքներին: Նա սկսեց լեհերին հրավիրել Իտալիա: Սակայն յերեք տարի հետո գաղտնի վերադարձավ Լեհաստան՝ պատրաստվող ապստամբությունը ղեկավարելու համար և նույն թվականին նորից փախավ,—այս անգամ Ֆրանսիա:

Շնորհիվ Լեգիայի հին տրադիցիաների, Դոմբրովսկի անունը (Յան Հենրիկից Յարոսլավին անցած) պատասխանատու յեր՝ ինչպես լոզունգ: Լեհերը հավաքվում եյին Փարիզ, նրա մոտ: Նրանք գալիս եյին ամեն կողմերից, նրանք հանդիսանում եյին Թուրքական, ամերիկական քաղաքացիներ, մահմեդականներ, հեթանոսներ, քոչվորներ, Սան-Դոմինգյի գաղութածիններ, Ամերիկայի հովիվներ: Մեկն ուներ մավրական-իսպանական անուն,— Իսանդեր-բեյ-դալա-Վասսեր, մյուսը ներկայանում եր խույրով և Թուրքական խալաթով, անվանելով իրեն նախկին կապիտան Մանիկովսկի, թեպետ այժմ ուրիշ անուն ուներ և Ստամբոլի Շայթանբազարում պղնձագործների ավագ եր: Շվեդական պատրիոտները լքում եյին նավերը, հիշելով, վոր նրանք վրեժխնդիր չեն յեղել իրենց պապերի ժամանակ հասած վիրավորանքների համար: Նրանք ասում եյին, վոր Բեռնադոտի լեհ զինվորների սերունդներն են:

Յեվ ահա Յարոսլավ Դոմբրովսկու ձեռքում գտնվում եր կենդանի, սահման չունեցող, պատմությունը: Նա մտածում եր, վոր լեհերն առաջին անգամ պիտի պայքարեն իրենց իսկական գործի համար:

Յեվ ի՞նչ պիտի աներ: Շեշտակի հարվածով սրբել Վերսալի զորքերը, զինվորների մեջ խռովություն առաջ բերել, պարզել նրանց կոմունայի նպատակները, արևելքում պաշտպանվել գերմանացիների հնարավոր հարվածից և նահանգներում արագորեն ստեղծել հեղափոխական նոր բանակներ: Հանձնարարել Գարիբալդուն, վոր համախմբի հարավային Ֆրանսիան:

Որոշելով իրանը, վորը նպաստում եր մտածելուն, նա միակ մի յելք եր գտնում յեղած դրությունից,— ծայրահեղ վճռականության սիստեմը: Ամեն անգամ, յերբ համարձակությունն ընդհարվում ե յերկչոտության հետ,— մտածում եր նա,— համարձակությունն ունենում ե հաջողության բոլոր տվյալները, քանի վոր յերկչոտությունն ինքնին հավասարակշռության կորուստ ե:

Համհարզն ընդհատեց նրա լռությունը:

— Կոմունայի Խորհրդից լուրեր կան,— ասաց նա,— վաղը պետք ե քննվի ձեզ հրամանատար նշանակելու հարցը:

— Ահա՛ թե ինչ: Հաճելի յե:

— Մի՛ համաձայնվեք: Շատ շատերին գրգռել են ձեր դեմ: Դուք նոր մարդ եք: Մեր Ֆրանսիական գործերում...

— Վաղը պիտի քննվի՞ դեկրետը: Դուք իրավացի յեք, պետք ե ներկայանալ: Լավ չե, յեթե խորհրդում չեն ճանաչում հրամանատարին: Ճի՞շտ ե: Ուրեմն խնդրեմ նախազգուշացնեք Կոմունայի անդամ Վերմորելին, վոր մենք վաղը կարող ենք վորևե բանով պարծենալ:

Դուրս գալով, նա համհարզին հայտնեց իր գիշերային հասցեները— մինչև կես գիշեր— խորհրդակցություն Ֆերդինանդի խցիկում, կեսգիշերից մինչև լուսաբաց— Լեվալլուայի յերկաթուղային դեպոյում: Առավոտյան նա շտաբ ուղարկեց իր ժամանակի նոր դասավորությունը— մինչև կեսօր— շրջագայություն դիրքերում, Սենայի ափերում, կեսօրին— Անյերի կամրջի մոտ, ժամի յերեքին— ռազմական պատգամավորի մոտ, հնգին— գումարտակների ստուգում Ետուալ հրապարակում, յոթին— շտաբում:

Սակայն նա ուշացավ իր դասավորած ժամանակից և շտաբի դռան մոտ յերևաց իննի սկզբին: Նրա յեղբայրը, Թեոֆիլը կանգնած եր գումարտակի հետ, վորը պատրաստվել եր ճանապարհվելու: Վերմորելը զրույց եր անում Լեգեոնների պատգամավորների հետ:

Յերբ Շարլ Ռովեն մտավ դահլիճ, շտաբի դիմաց Բելլան, նրա քրոջ աղջիկը, պատմում եր նկարիչների տրամադրության մասին:

— Հապա մի լսեցեք, թե ինչպիսի զարմանալի խոսքեր ե ասում ծերունի Կուրբեն:

Նա կարդաց հետևյալ գրությունը.

«Մեր նպատակն ե անհատին բարձրացնել մինչև նրա մարդկային արժանիքը... Ամենադաժան պրուսացիներ, չքավորներին շահագործողներ յեղան վերսալ-

ցիք... գնաս բարով, հին աշխարհ, քո դիվանագիտությամբ: Նկարիչները պետք ե գեղարվեստի ճանապարհով աջակցեն բարոյական իրավակարգի վերականգնմանը»:

— Ծերունին ասում ե, թե ամեն ինչ պետք ե շրջել գլխիվայր,— ասաց նա:

— Քանի որ մենք նրան վստահում ենք, թող շրջե,— ասաց անկյունից մի մարդ, որը զինվորական զգեստ եր հագել:

— Դու այստեղ ի՞նչ ես անում,— հարցրեց Ռավեն Բելլային:

— Ինձ այստեղ ուղարկել ե արվեստների սեկցիան: Վաղը մեր նկարիչների միության հիմնադիր ժողովն ե,— ասաց նա,— յես պրոպագանդա անելու համար եմ յեկել: Իսկ դո՞ւ:

— Ծլկի՛ր այստեղից տուն, ահա թե ինչ: Այստեղ ի՞նչ քվեներ պիտի գտնես:

Դանդաղ նայելով իր շուրջը, մտավ Բիգուն:

— Ռավե՛, ի՞նչպես ես ընկել այստեղ:

— Փնտրում եմ Լեվչենկոյին: Նա պետք ե որ այս կողմերում լինի:

— Քիչ հետո մի բան կլինի, կմնա՞ս:

Նրա հետևից ներս մտան մի քանի ոտարերկրացիներ, որոնց հետ՝ և մի ռուս: Ռավեն մոտեցավ նրան:

— Բանից դուրս ե գալիս, որ պետք ե լուրջ կռվել, դու իրավացի յես: Ասա, ի՞նչպես ե դրությունը:

Ոտարերկրացիք ուսերից հանեցին զինվորական պայուսակները, նստոտեցին նրանց վրա և հանեցին յերկար, կեռ ծխամորճերը՝ ճենապակյա ծայրերով:

— Դու բացատրիր, թե ով ենք մենք, որպեսզի անկարգություն չլինի,— ասաց նրանցից մեկը գերմաներեն:

Լեվչենկոն նստեց նրանց կողքին:

— Դրությունը վատ չե, բայց լավ ել համարել չի կարելի: Ձեր սպաները հիմարի գլուխներ են, ահա թե ինչն ե առանձնապես վատ: Նրանցից չկա և ոչ մեկը, որը պարզ պատկերացնի, թե ինչու համար ե կռվում:

— Դրությունը շատ բարդ ե, այնպես չե՞: Սատանան ինձ տանի, յես հավատում եյի, թե մենք չենք կռվելու, հետո յես սկսեցի հավատալ, թե յերկու-յերեք կռիվը կվճռի ամբողջ գործը, բայց սպասի՛ր... ըմբոստ, լավ կազմակերպված մարդկանց մի փոքրիկ խըմբակ կարող ե ոչ միայն գրավել իշխանությունը, այլև վճռական տակտիկայի ոգնությամբ իր ձեռքում պահել այն մինչև այն ժամանակ, յերբ վրա կհասնի ամբողջ ժողովուրդը: Ձեռներեցություն, արիություն և...

— Յեվ ժամանա՛կ,— ասաց Լեվչենկոն.— մենակ գործողների համար ժամանակ ե պետք: Մասսաներին ընտելացնել արագությամբ,— ահա թե որտեղ ե հեղափոխությունների հաղթանակը:

Դուռը բացվեց և ցնցոտիապատ սուրհանդակը կանչեց ընկճված ձայնով.

— Գերմանացիները՝ գեներալի մո՛տ:

Լեվչենկոն արագ վեր կացավ:

— Ռավե, յես ժամանակ չունեմ, գնում եմ նրանց հետ:

— Սպասի՛ր...

Նրանք իջան մութ փողոցները:

— Ինչի՞ն ես հավատում դու ինքդ, դու, ասա ինձ:

— Յե՞ս: Յես հավատում եմ սոցիալիզմին, Ռավե,— ասաց նա հանդիսավոր կերպով:— Ինձ համար, ինչպես և շատ ուրիշների համար, սոցիալիզմի գաղափարը յեղել ե բարձրագույնը, գոյությունների գոյությունը, հարցերի հարցը, հավատի և գիտության սկիզբն ու վերջը: Ամեն ինչ նրանից ե բխում: Ռավե, լինել նրա համար և նրա մեջ: Նա հարց ե և հարցի լուծում: Նրանով եմ յես բացատրում իմ, քո և ամենքի կյանքը:

Դոմբրովսկին կանգնած եր տան մուտքի քարե սանդուղքի վրա: Նա կրունկների վրա դես ու դեն եր դառնում:

— Դուք պատրա՞ստ եք, բարեկամներ,— հարցրեց նա գերմաներեն:

— Գեներալ, կարող եք հանգիստ լինել,— կոշտ փաղաքշանքով պատասխանեց նրան գերմանացիներից մեկը:

— Ե՛հ, ուրեմն, ցանկանում եմ հաջողություն: Հիշեցեք, յես կախումն ունեմ ձեզանից:

Համհարզը գրեց անցաթղթերը, արագությամբ հաշվելով մեկնողներին: Ռավեն սրանց մեջ մտավ:

Նրանք շարժվեցին:

— Նրանո՛վ ես դու բացատրում իմ, քո, բոլորի կյանքը,— ասաց Ռավեն, դերասանի պես տարածելով ձեռները:— Դատարկ դեկլամացիա յե՝ քո կրկեսից: Դու ինձ ասա հասարակ ու լուրջ բաների անունները:

— Խնդրեմ: Յերբ դու խոսում ես Վերսալի հետ կռվելու մասին, մոռացիր, թե նա սկսվել է Մոնմարտրի սիրուց դեպի իր թնդանոթները, վորոնք գնված են նվիրատվություններով: Դա 48 և 53 թվականների մեծ կռիվների արձագանգն է: Տյերը կարող եր չխլել ձեր թնդանոթներին,— և այնուամենայնիվ քաղաքացիական պատերազմը կսկսվեր: Հեղափոխության համար բոլորովին կարևոր չէ, թե ինչ մանր բաներից է ամեն ինչ սկսվել, յեթե ճիշտ է սկսվում: Փարիզը, ինչպես և ամբողջ Ֆրանսիան, տրտնջում է հաշտության պայմանների դեմ, այդ հաշտությունը ծանր է Ֆրանսիայի համար և Փարիզը ցանկացավ վիժեցնել Տյերի ու Բիսմարկի համաձայնությունը, պատռել ֆրանսիական բուրժուաների և պրուսական կալվածատերերի խաբեբայական դաշնագիրը, վորոնք գաղտնի նախապատրաստում են միապետության վերադարձը: Փարիզն ապստամբեց վորպես հանրապետական: Դրանումն է ամբողջ գործը:

Նրանք ութ հոգով գնում եյին լքած յերկաթուղու կողքով, մտնում եյին խուլ նրբափողոցները, անցնում եյին բակերի միջով, մինչև վոր գտան յերկու կառք, ամեն մեկին լծած յերեք ձի:

— Յեթե ուզում ես շարունակել զրույցը, նստիր գնանք մեզ հետ,— ասաց Լեվչենկոն:

Ռավեն լուռ գլխով արավ:

Գումարտակները, վորոնք յերեկ չէ մյուս որը կռվում եյին Կուրբեվուայում, հանգստանում եյին ուղղակի բուլվարում: Մարտկոցը հազիվ եր անցնում ձարմինների, վրանների, գետնին տնկված հրացանների և թմբուկների միջով: Կապիտան Լիսբոնը, շաղակրատ ու քաջ մի մարդ, զորքերի մեջ փնտրում եր իր հին ֆրանկ-տիրերներին:

— Ուրեմն այդպես, Ռավե, սկսվեց քաղաքական ապստամբությունը,— շարունակեց Լեվչենկոն,— դու կարծում ես պայքարը Տյերի դե՞մ է: Տյերը «բիճ» է: Այդ պայքարը մղվում է միապետության դեմ, Ազգային ժողովի կալվածատերերի դեմ և միևնույն ժամանակ պրուսական բանկիրների հաղթանակի դեմ: Ամենից շատ ինչի՞ց է վախենում Վերսալը. նրանից, վոր յեթե Կոմունան Փարիզը ազատ կապ ունենա գավառների հետ, ապա ընդամենը յերեք ամսից հետո գյուղացիական ապստամբություն կբռնկվի: Տյերը չի կարող չգիտակցել, վոր պրուսական բանակի աչքի առջև,— բանակի, վորը Գերմանիային միացրեց ֆրանսիական յերկու նահանգ,— Կոմունան, դոկտոր Մարքսի խոսքերով ասած՝ Ֆրանսիային միացրել է ամբողջ աշխարհի բանվորներին:

— Այդ դեպքում ամեն ինչ կորավ,— ասաց Ռավեն:

— Ինչո՞ւ: Հարկավոր է կռվել: Ինչու ամբողջ յերկրի առջև չեն հրապարակված գերմանացիների հետ Ֆավրի կնքած զինադադարի խայտառակ հանգամանքները: Ինչո՞ւ կոչ չանել աշխարհիս բոլոր հանրապետականներին: Գավառների հարաբերությունները Տյերի հետ խիստ լարված են... Վերսալում չեն ստացել համակրանքի և վոչ մի ուղերձ: Ընդհակառակը, բոլոր կողմերից գալիս են պատվիրակներ, վորոնք պահանջում են հաշտվել Փարիզի հետ, ճանաչել հանրապետությունը, ցրել Ազգային ժողովը, վորի լիազորությունների ժամկետն անցել է: Ռավե՛, Տյերն ապրիլի յերեսունին ամբողջ յերկրում նշանակել է մունիցիպալ ընտրություններ—ահա թե վո՛րն է վճռական ճակատամարտի դաշտը:

— Յեթե ընդունենք, վոր դու իրավացի յես, ապա Վերսալը ջարդելուց հետո մենք դեռ պիտի կռվենք պրուսացիների դեմ: Մի՞թե Բիսմարկը կհաշտվի Կոմունայի հետ: Նա մեզանից լավ շնել–կլոպս կպատրաստի:

— Թույլ տուր, Ռավե, Կոմունայի ու Բիսմարկի միջև չկա՛ պատերազմ: Կոմունան համաձայնել ե հաշտության նախնական պայմաններին, և Պրուսիան չեզոքություն ե հայտարարել: Բացի դրանից, հիշիր, վոր Պրուսիան Ֆրանսիա յեր ուղարկել մեկ ու կես միլիոն զինվոր, իսկ այժմ նրա բանակում յոթը հարյուր հազարից ավելի մարդ չկա, վոր ռայխստագի անդամներ Բեբելն ու Լիբկնեխտը Ելզասի գրավման դեմ բողոքելու համար ձերբակալված են և մեղադրվում են պետական դավաճանության մեջ, վոր վոստիկանությունը գրեթե ամեն որ ցրում ե գերմանական բանվորների ժողովները, վորոնք նվիրված են Ֆրանսիայի հետ պատվավոր հաշտություն կնքելուն: Հիշիր Անգլիան, վորին այնքան ել հաճելի չե տեսնել Գերմանիայի հաղթանակը: Վո՛չ, մեր գործերը դեռ կարող են առաջ գնալ: Այժմ ամենախոհեմ քայլը կլինի դիմել ծայրահեղությունների: Ա՛յ, յեթե հրապարակվեն դիվանագիտական արխիվնե՛րը: Գրավվի Ֆրանսիական բանկն ու այրվի պարտքերի գի՛րքը:

— Այդ գրքի խարույկի մեջ կայրվի ամբողջ հեղափոխությունը,— գոչեց Ռավեն:— Ե՛հ, սատանան ձեզ տանի: Իմ գլուխս ել վրաս չե, իմ պարանոցի վրա գիշերային աման ե, վորի մեջ ամեն մեկը կարող ե արտաթորել անպատիժ կերպով:

Անծանոթ փողոցը, վորը ծնկաձև եր, զիգզագանման, վորպես շարժման համահավասար հոսանքն ընդհատող կակազ, դժվարությամբ տեղ հասցրեց նրանց, մանրանալով, բաժանվելով նրբափողոցների և ամայությունների,—մինչև յերկաթուղային փոքրիկ կիսակայարանը: Թեև նրանք հեռացան ճակատամարտի վայրից, բայց թնդանոթաձգությունն այստեղ ավելի պարզ եր լսվում: Տրմփալով տների պատերին և կայարանի յեր-

կաթե կտուրներին, կրակոցների արձագանքը բարձրագոռ թռչում եր դեպի հետ, վորոտալով յերկաթե թիթեղների ու քարերի վրա: Թվում եր, թե յուրաքանչյուր կրակոց իր հետևից տանում ե պատերի ավազը, կտուրների կղմինդրը և ճեղքվածքներ ե բացում ոդի մեջ: Արագորեն անցնելով կայարանի յերկաթուղացանցը, նրանք մտան դեպոյի շենքը: Հրաձգության արձագանքը, նմանվելով այստեղի առարկաների ու մետաղի ձայներին, խփում եր ապակյա կտուրի անցքերին, կարծես ծեծում եր մուրճով կամ գործում կորիչով:

Անսովոր ձևի մի շոգեկառք, մերթ պահելով շունչը, մերթ աղմկալի հեղեղի պես բաց թողնելով այն, անհանգիստ շչում եր գլխավոր գծի վրա: Նրան կցված եյին յերեք վագոն, վորոնք նման եյին բանտերի մոդելների.—անլուսամուտ, հրակնատների նեղ անցքերով, առանց փոստատեղերի, ռեսսորների վրա ցածր նստած մարմիններով: Շոգեկառքի անիվները հազիվ յերևում եյին անկյունավոր յերկաթե տապճակի տակից, վորը կարծես հապճեպ գցված եր այդ շոգենժույգի մարմնին: Խողովակից ծուխը ցայտում եր կարծես կողքից: Շոգեկառքը նման եր ծխողի, վորը ծխամորճը գրպանում ե պահում:

— Նստե՛նք,—ասաց Լամարկը,—գուցե հարկավոր լինի ելի՛ մի բան մտածել:

Նա յերբեք գոհ չեր յեղել իր կյանքից: Մշտական հոգնեցուցիչ աշխատանքը և ինչ-վոր ժառանգական անփողությունը յերբեք նրան հնարավորություն չեյին տալիս իր մեջ խեղդելու հոգեկան թախիծը, վորը նրա կյանքի միակ շարժիչ ուժն եր: Լամարկի ուշադիր, ցասկոտ, անհանգիստ աչքերը հիշում եյին գոյության յուրաքանչյուր մանրամասնությունը, ձայնի յելևեջը, վարմունքի բնույթը, իր քայլած յերկրի արտաքինի փոփոխականությունը, բայց նրա հայացքի տակ աշխարհն անցնում եր անմեկնելի, անըմբռնելի, հասկացողության համար վերից-վար անմատչելի, ինչպես անտառն անապատի բնակչի հայացքին: Աշխարհը նա կարող եր հասկանալ, յեթե նրան ինքը տնկած լիներ, ինչպես մրգատու այգի: Հիմա, յերբ նա գլորել եր քառա-

տունվեց տարին, մի քիչ ուշ էր հավատալ ցնծագին կատաստրոֆին, գոյության փոփոխությանը, և այնուամենայնիվ այն միտքը, որ այդ կատաստրոֆը հավանորեն կպատահի, այժմ ամենաուժեղն էր բոլոր մյուս մտքերից:

Առանց զարմանալու և տխրելու, անգիտակցական բարյացակամությամբ լի՛ դեպի այն ամենը, ինչ որ տանում էր նրան կենսական նոր ուղիներով, նա խոհեմաբար զվարթություն էր կուտակում իր մեջ: Այդ զվարթությունը նա քաղում էր ամեն ինչից,—իր և ուրիշի քայլերից, պատմածներից, յերազներից, ընթերցածից: Նա հետևում էր իր զվարթությանն, ինչպես մարսողությանը կամ սրտին: Հանկարծ ուրիշ կյանքով ապրե՛լ: Դա այնքան անհավանական էր, որ կարող էր իրագործվել միայն կատաստրոֆի միջոցով,—անսպասելի, վտանգավոր և մինչև վերջ հրճվալից կերպով:

Նա առաջարկեց նստել, որովհետև սկսել էր կորցնել իրեն:

— Յե՞րբ ես սա հնարել,—ցույց տալով շոգեկառքը, հարցրեց Լեվչենկոն:

Լամարկը շփոթված շարժեց ձեռները: Նրա համար ավելի հեշտ էր պատմել գյուղի հետ կապված հանգամանքները, քան բացատրել նրա մեթոդները:

— Անյերում յեղածս ժամանակ,—ասաց նա:—Վերսալցիք ռմբակոծում էյին հրասանդներով: Ժողովուրդը դես ու դեն ընկավ: Թագնվելու տեղ գրեթե չկար: Մանավանդ այդ կաղերը՛: Ով որտեղ կարող էր, թագնվում էր: Մեկ էլ տեսար արկը դրա՛ախք—վաղոնին և շպրտում էր յերկաթի կտորները: Յես յերկաթ էյի տանում,—յերկու գյումանոց սալեր, ինչպես ասել եմ քեզ: Նրանք թռան մեկը մյուսի վրա, ծածկեցին ու վրանի ձև առան: Կաղերը մտան այդ վրանը: Բարձրացավ հրհռոց: Յերկու ժամ այդպես մնացին: Այստեղ յես գլխի ընկա, թե ինչ պետք է անել,—յերկաթե վրանը,—մտածեցի,—պետք է անիվների վրա դնել: Ճիշտ այնպես, ինչպես ահա այժմ: Դրա մասին հարցնում եմ Դոմբրովսկուն: Իսկ նրա մոտ գերմանացիներն էլ իրենց պլանն են կազմել.—մտածել

են յերկաթե բարիկադն անիվների վրա դնել, նրան անկյունից անկյուն տեղափոխելու համար: Գիտե՞ս ինչ սրամիտ բան է: Յեվ մենք միացանք: Ահա թե ինչ հասարակ բան դուրս յեկավ:

— Այդ շատ գործնական է և նորություն է,—ասաց գերմանացիներից մեկը:

— Բայց դեռ չի ուսումնասիրված,—ասաց մյուսը,—չի ուսումնասիրված, ինչպես և միտրալյեզը: Այդ վոչ ավելի, քան որիգինալ մի բան է, այն ժամանակ, յերբ շարժական բարիկադ լիներ... Այնտեղ, պարոնայք, մենք մեր տրամադրության տակ մեծ փորձ կունենայինք:

— Դուք սխալ եք մտածում,—ասաց Լեվչենկոն նույնպես գերմաներեն:—Յերկաթապատ բարիկադն այնքան էլ նոր բան չէ, դուք նրան միայն շարժականություն եք տալիս: Սակայն շարժական բարիկադ են հանդիսանում նաև այն փողոցի տները, որտեղ կատարվում են ռազմական գործողությունները: Վերցնենք, որինակ, իրար դիմաց գտնվող յերկու տուն: Գրավելով այդ տները, մենք լուսամուտից սալահատակ ենք նետում այն բոլորը, ինչ որ ձեռներս է ընկնում,—կահ-կարասի, ներքնակներ: Ահա ձեզ առաջին բարիկադը—անցկալը: Յերբ նա կորցնում է իր նշանակությունը, դուք անցնում եք հետևյալ տունը և լուսամուտներից դուրս եք թափում յերկրորդ, նույնպիսի անցկալը:

Այդ ժամանակ հրաձգությունը թակեց դեպոյի պատերն, ինչպես քամի: Ապակիները դողդողացին ու զրնգացին: Շոգեկառքի շոգու ծիր կաթինը յերերաց և ներքև հոսեց, կարծես նրա վրա բան ընկավ: Լեվչենկոն խուլ ընդհատեց գերմանացիների հետ ունեցած զրույցը:

— Այսոր մենք կանցնենք զենքի նոր տեսակի դարաշրջանին,—ասաց նա,—դեհ, բարեկամներ, գրավեցեք ձեր տեղերը:

— Լսեցեք, ո՞ւմ համար ենք պատրաստել այս բոլորը,—հարցրեց Ռավեն: Նա ձեռքով դեմքը ծածկեց, որպեսզի հանգստանա:

Գնացքը դուրս սողաց դեպոյից։ Գերմանացին հաստ թղթից արագությամբ գլանակ շինեց և առաջարկեց Ռավեյին։

— Ուտել-խմելու փող կա՞,— հարցրեց նա կատակի ձևով։— Ֆնե՛լ,— ասաց նա հետո և, բարձրացնելով հոնքերը, վորից շարժվեց նրա չեկ մորուքը, ասաց շատ պարզ և գրեթե առանց աղճատելու,— դիշեր, յերազ, ամեն ինչ լավ է.— Նա ձեռքով արավ և, առանց շուրջը նայելու, մտավ վագոնը։

Այդ ժամին Դոմբրովսկին, նավակներով անցնելով Սենան, շրջապատեց Բեկոն ամրոցը։ Վերսալցիները փախան Կուրբեվուայի կողմը։ Անյերում շչում եյին շոգեկառքերը։ Վերսալցիների կրակի տակ Անյերի կամուրջի վրայով սլացավ յերկաթապատ մի գնացք։ Գնացքը տանում եր մեքենավար Լամարկը։ Անյերի դեբարկադերի մոտ, գրեթե չավելացնելով արագությունը, նա դուրս նայեց շոգեկառքից։ Նրա աչքերի առջև փռվեց կայարանի շենքը։ Այնտեղ բոցավառվում եր հրդեհը, բռնկվում եյին պայթյունները։

— Դուք արդեն այստե՞ղ եք, գեներալ,— գոչեց նա, տեսնելով Դոմբրովսկուն։

— Ճանապարհն ազատ է մինչև Շարլբուրգ,— ասաց Դոմբրովսկին,— յերկու ժամ հետո կսպասեմ ձեր վերադարձին։

Լամարկն ի պատասխան այդ խոսքերի արագացրեց գնացքը։ Տեղավորելով թնդանոթները, գերմանացիք մուրճերով թխկթխկացնում եյին վագոնի մեջ։ Լեվչենկոն, ածուխի խախուտ կույտերի վրա պահելով իր հավասարակշռությունը, աշխատում եր հեռադիտակի ներքո գայլիկոնով ճեղքել մթությունը։

— Կոլոմբոն ենք անցնում,— հաղորդեց ոգնականը Լամարկին,— Սեմաֆո՛րը... Շարլբո՛ւրգը... Մանուֆակտուրա՛ն...

— Կրա՛կ,— Լեվչենկոն քաշեց ազդանշանի պարանը։

Յերկաթե գնացքը, դղրդալով, ցնցվեց կրակոցից

— Կրա՛կ։

— Յեվ ինչպե՛ս յես գլխի ընկա այն ժամանակ Անյերում չբեռնաթափել յերկաթը,— դղրդումների ընդմիջումների ժամանակ ասաց Լամարկը։— Արագացնե՞լ գնացքը։

— Արագացրո՛ւ։ Կրա՛կ դեպի Մանուֆակտուրան։

Գնացքի կրակոցներին Կուրբեվուան պատասխանում եր դեպի բոլոր կողմերն ուղղված խուճապային հրաձգությամբ։

...Սակայն Ռավեն անկարող եր տիրել իրեն շրջապատող անհայտությանը։ Նա վազեց դեպի Սենան։

ԵԴՎԱՐԴ ԿՈԼԼԻՆՍ

Յեղբորը գրած նամակից

Զնայելով, վոր Փարիզում յես գտնվում եմ ընդամենը վեցերորդ օրը, սննդի պակասությունն արդեն զգալի յե, յես ինձ չափազանց թույլ եմ զգում։ Իմ ճաշը մի ափսե սուպ է և ինչ-վոր մի այլ կերակրի փոքրիկ բաժին։ Քաղցը սաստկանում է կերակրից գրգռվելուց. այս պատճառով յես շատ քիչ եմ քայլում և հին ծանոթներից գրեթե վոչ վոքի չեմ տեսել։ Յերեկ յես մի գրություն ուղարկեցի Անդրե Լեոյին։ Նա պատասխանեց, վոր ինձ կսպասի մի ժամ հետո, ս. Ամվրոսիայի յեկեղեցում, վորտեղ նա պետք է ունենա կանանց աշխատավորական միությունների ներկայացուցիչների մի փոքրիկ նիստ։ Յես շտապեցի Պոպինկուր փողոցը, վորի մասին մինչ այդ վոչինչ չեյի լսել։ Յեկեղեցու շենքը, վոր դարձել եր պրոլետարական ակումբ, ապշեցրեց ինձ իր առորեյականությամբ։ Նա ավելի շուտ հիշեցնում է մի ձիամարզարան, վորը ծածկված է անհեթեթ գմբեթով և այլանդակված է իրեն կից շենքերով։

Նախագահությունը տեղավորվել եր բեմի բարձունքում։ Պատանի Քրիստոսի փայտե արձանին կարմիր շարֆ եր կապված։ Լռություն պահպանելու հա-

մար նախագահուհի Կատերինա Լեֆևրը (կարուհի) տալիս եր այն զանգը, վորը գործ է ածվում առավոտյան ժամերգությանը: Վերջին նստարաններից մեկի վրա յես տեսա ռուս սոցիոլոգ Լավրովի կերպարանքը: Նրա զարմանալի գլուխը խիստ աչքի եր ընկնում կանանց գլուխների մեջ: Անդրե Լեոն ինձ հանդիպեց քարերի միջև յեղած անցքում և տարավ Խորան, վորը զարդարված եր չքեղ գործերով: Այստեղից կարելի եր դիտել, թե ինչ է կատարվում դահլիճում: Նա իսկույն ինձ հայտնեց ամենից աչքի ընկնող հեղափոխական կանանց անունները: Նա ինձ ցույց տվեց Դմիտրիևային՝ ռուս եմիգրանտուհուն (գեղեցիկ, խելացի դեմք, լցված այն ներքին զգայնությամբ, վորը միշտ հատուկ է անսանձ ինտելեկտի տեր մարդկանց), ելի մի ռուսուհու, նրա ազգանունը չեմ հիշում,— և իմ ուշադրությունը հրավիրեց յերկու հերոսուհու վրա,— Գորտենզիա Դավիդ և Կլարա Ֆրունյե,— Սենայի նավատորմի լավագույն թնդանոթաձիգներ: Նրանց պիրկ մարմիններն իրենց մեջ եյին առել զգեստներն այնպես, ինչպես խմորը նեղ կաղապարներին, և կոպիտ կտավը տեղ-տեղ թվում եր վորպես մաշկի գունավոր ծալքեր: Նրանք բարձրաձայն ծիծաղում եյին, ձեռները խփելով ազդրերին: Լեոն շատ հիասթափվեց, վոր յես այնքան քիչ բան գիտեյի Փարիզի կանանց մասին: Իհարկե, նա ինձ հարցրեց, թե յես Անգլիայում ինչ եմ լսել ժուռնալներում նրա ունեցած հաջողությունների մասին և ապա՝ թե յես արդյոք չե՞մ նկատում այն անսովոր նվաճումները, վորոնք արդեն ձեռք է բերել հեղափոխությունը:

Յես ոգտվեցի առիթից, վորպեսզի նրան հարց ու փորձ անեմ հին ծանոթների մասին և իմացա, վոր Վիկտոր Ոժերոն, վորը յերազում է համաշխարհային անարխիստական խռովության մասին, աշխատում է վերսալցիների մոտ: Լանգլուան փախել է հարավ, Լուիզա Բեզանսոնն ամուսնացել է բելգիական մի նկարչի հետ և պատրաստվում է Բրյուսել գնալ: Բուխսոնը ով գիտե ուր է կորել և նրա բախտը Լեոյին անհայտ է յեղել: Յես տվի Դանտեսի, բարոն Հեկկերնի անունները: Լավրովը, վորը վաղուց մոտեցել եր մեզ և հետաքրքրությամբ լսում եր մեր զրույցը, պատասխանեց, վոր Պուշկինին (ռուս մեծագույն բանաստեղծին) սպանողը մարտի 22-ին գլխավորել է կարգապահության կուսակցության ցույցը, վորը ցրվել է Ազգային գվարդիայի կողմից: Յես զարմացա այդ վախկոտի համարձակության վրա:

Անդրե Լեոյի իսկական անունը Լեոդիկ Բերա յե, իսկ առաջին ամուսնու ազգանունով—դե-Շանսե: Նրա ամուսինը մեռել է տասը տարի առաջ, թողնելով նրան յերկու յերեխա,—յերկվորյակներ Անդրեյին ու Լեոյին: Այստեղից ել առաջացել է նրա մականունը: 63 թվականից սկսած՝ նա լույս է ընծայել մի շարք վեպեր, վորոնք ուղղված են բուրժուական նախապաշարումների դեմ: Սրանց մասին, ինչպես նա ինքը բավականությամբ հաղորդեց ինձ, Ռուսաստանում շատ են գրել Պիսարեվն ու Տկաչևը: Լեոն վաղուց սերտ կապ է պահպանում այդ յերկրի կանանց շարժման ղեկավարների հետ: Մեր խոսակցության ժամանակ խորան մտավ հասակավոր մի քահանա, վորը մեզ լուռ բարևեց և նստեց բազկաթոռին, վորպեսզի սպասի մինչև միտինգի վերջն ու սկսի իր արարողությունը: Գլանակի ծուխը շերտ-շերտ կանգնել եր ոդում, կարմրելով ու դեղնելով յեկեղեցու գույնզգույն ապակիներից: Դա նոր պատարագի դառը խնկի ծուխն եր, մի պատարագ, վորը տեղի յեր ունենում մեր աչքերի առջև: Յերգեհոնը մերթ առ մերթ նվագում եր մարսելյեզը և «Յերգ առաքման»-ը,—վերջինս մեծ սխալներով: Յես հարցրի քահանային, թե յեկեղեցական արարողությունն սկսվելիս արդյոք կարմիր շարֆը մնո՞ւմ է պատանի Քրիստոսի վրա:

— Սա (նա նկատի ուներ շարֆը) և սրանք (նա ցույց տվեց պլակատները) գտնվում են պահապանի անորինության տակ: Քաղաքային վարչությունը նրան լրացուցիչ վարձատրություն է տալիս ժողովներին սպասարկելու համար:

— Ինչպես նաև յերգեհոն նվագողի՞ն,—հարցրի յես:

— Ինչպես յերևում է,—պատասխանեց քահանան և

խորացավ ինչ-վոր աստվածային գքրի ընթերցանության մեջ:

Հենց այդ ժամանակ Լեֆեվրը առաջարկեց Կոմունա մտցնել մի նախագիծ՝ ավազ լցնելու համար պակասող պարկերը փոխարինել քառասուն հազար տերտերի մարմիններով: Յեկեղեցին թնդաց ուրախ բացականչություններից: Յերգեհոնը նվագեց «Յերգ առաքման»-ը: Յես չկարողացա ինձ պահել և ծիծաղեցի:

Ամբիոն բարձրացավ Դմիտրիևյան: Նա հագել էր սև շրջազգեստ: Շրջազգեստի տակից յերևում էր կարմիր շարֆը, վորը ծածկում էր նրա կուրծքը: Գոտուց ատրճանակ էր կախված: Սև, խուճուճ մազեր, սև աչքեր, հազիվ նկատելի բեխեր,—նա ապշեցնող և հուզող գեղեցկություն ուներ:

Նա իսկական հերոսուհի յեր, մի պարագա, վորը մի քիչ անհավանական է Փարիզի այսօրվա պայմաններում:

ԵԴՎԱՐԴ ԿՈԼԼԻՆՍ

Բրոկլինում գրված

Հոդվածի համար

Յերեկոյան «Բելգիա» հյուրանոցում յես այցելեցի Ռ-ին: Նա ցածրահասակ, միրուքավոր մի ծերունի յե, բլանկիստական խմբակի անդամ է Ամերիկայում: Հեղափոխության բնագավառում նրա գիտելիքներն անսահման են: Նա մոտ յոթանասուն տարեկան է, բայց չի բացակայում Կոմունայի Խորհրդի կամ Ազգային գվարդիայի և վոչ մի նիստից: Առավոտյան ժամը յոթին նա վեր է կենում և գնում է քաղաքի մի ծայրից մյուսը, վորպեսզի կազմակերպի տարբերկրացիներին, հեղափոխության մասին դասախոսություններ կարդա և նրանց համախմբի Կոմունայի շուրջը: Նա իսկական արտաքին հարաբերությունների պատգամավոր է: Փարիզի տարբերկրացիների շրջաններում նրա կապերը հսկայական են, վորին, ըստ յերևույթին, նպաստում է նրա անձնավորության միջազգայնությունը: Նա ՀԱՄՆ քաղաքացի յե, ծագումով գերմանացի և հայացքներով ու

սովրույթներով փարիզցի: Նա շատ հիասթափվեց, վոր յես վոչ մի անգլիական լրագիր չեմ բերել և խիստ գանգատվեց տրանսպորտի պակասության վրա: Փարիզի դրավաճառները,—ասաց նա,—շնորհիվ դեսպանությունների հետ ունեցած անձնական կապերին, ստանում են արտասահմանյան գավառային լրագրեր և իսկական ընթերցարաններ են կազմակերպել խանութներում: Այնտեղ ինչ-վոր աներևակայելի բան է կատարվում,—բուրժուականներն ու աշխատավորները առավոտից մինչև գիշեր խմբվում են լրագրերի շուրջը: Համենայն դեպս յես գրեցի Տիրոյի գրախանութի,—գրական հասարակության հանդիպման տեղի հասցեն: Ռ-ն ինձ պատմեց միքանի այլանդակ պատմություններ՝ գրողների հետ կապված, վորոնք դեպի Կոմունան իրենց ունեցած բացասական զգացմունքների արտահայտությամբ հասել են վրդովեցուցիչ ստորության: Նրանցից շատերն որն որին տեղեկություններ են տալիս Վերսալին՝ Փարիզի զինվորական նախապատրաստության մասին և միևնույն ժամանակ բարեկամական հարաբերություններ են պահպանում հեղափոխական լրագրերի խմբագիրների հետ: Ռ-ն քաղաքական իրադարձությունը համարում էր հրաշալի, տնտեսականը—խիստ վատ: Յեթե մի վորևէ տեղ էլ հաց կար, դժվար էր այն քաղաք տեղափոխել, վորովհետև հյուսիսում ու արևելքում գերմանացիք հարկ եյին դրել, իսկ հարավում գտնվում եյին Վերսալի շրջիկ պահակները: Այդ տնտեսական դժվարությունները վաղ թե ուշ պիտի անդրադառնային քաղաքական իրադարձության վրա: Նա ինձ պատմեց նաև գերմանացի ռազմագերիների մասին: Զինվորները բերվեցին Փարիզ, վորտեղ նրանց հատուկ թույլտվություն տվին, թե նրանք իրավունք ունեն ապրել բոլորովին ազատ: Նրանցից շատերը զինադադարից հետո չվերադարձան Գերմանիա: Յերբ ստացվեցին առաջին տեղեկությունները այն մասին, թե պրուսական զինվորները փորձել են Սեն-Դենիում յեղբայրանալ Փարիզի ազգային գվարդիականների հետ, նա յերկու նախկին ռազմագերիների և մեկ շվեդական լրագրողի հետ գնաց այնտեղ: Սակայն

չհաջողվեց տեսնվել «Թշնամիների» հետ։ Իմանալով յեղբայրացման լուրը, գեներալ Ֆարրիցխուսը հրամայեց փոխել ամբողջ գունդը և այնտեղ ուղարկեց ամենահավատարիմ սպաներին։ Բայց մյուս կողմից Վեննեննում,— ասաց Ռ–ն,— հաջողվեց կազմակերպել յերեք նախկին ռազմադերիների և հեծելազորի բրիգադի ներկայացուցիչների հանդիպումը։ Խոսակցությունը շոշափում եր գլխավորապես Փարիզի բանվորների կյանքի պայմանները, Կոմունայի միջոցառումները բանվորական հարցերի շուրջը և պրուսական բանակում յեղած տրամադրությունները։ Խոսակցության վերջում բրիգադի ներկայացուցիչներն առաջարկեցին Ռ–ին և նրա մոտ գտնվող ռազմադերիներին՝ գնալ բրիգադի շտաբը և այնտեղ խոսել նաև ընկերների հետ։ Հեծելակներից մեկը, մի սպա, Ռ–ին անցաթուղթ տվեց բրիգադ գնալու համար։ Ռ–ն կասկածեց անցաթղթի իսկականության նկատմամբ և ասաց հեծելակներին, վոր առանց Փարիզից հետագա հրահանգները ստանալու, նա չի կարող անցաթղթերից օգտվել։ Յերբ մթնեց, սկսեցին ցրվել։ Պրուսական սպաները ռազմադերիներին ասացին. «Ինչպե՛ս, մի՞թե դուք մեզ հետ չեք գնա»։ Մյուսները գլուխներով մերժման վճռական շարժումներ արին ու պատասխանեցին.— «Վոչ, շնորհակալ ենք»։

Հանդիպում

Հյուրանոցում յես իմացա, վոր մեկն ուզում ե թողնել Փարիզն ու գնալ Բորդո։ Պարզ ե, վոր յես հիմա կարող եյի յերկրորդ սենյակ ստանալ։ Մեկնողի ազգանունը Լաֆարգ եր, յես նրա մասին լսել եյի։ Ասում եյին, վոր նա Լոնդոնում Բանվորների միջազգային ընկերության գլխավոր խորհրդի ամենախոշոր առաջնորդներից մեկն ե։ Յես նրան ուղարկեցի իմ այցետոմսը և հետո մտա ծանոթանալու։

Նա դեպի դուռը վազեց ինձ վողջունելու և այնպես արագ, վոր կարծես ուզում եր ինձ դուրս շպրտել միջանցքը։ Նրա բոլոր շարժումները կարծես նրա համար

են, վոր դեն շպրտեն շրջապատող առարկաները։ Նրա խոսելու ձևը հիշեցնում ե այն դերասանին, վորն իր դերը կատարում ե տարբեր ձայներով։ Նա կարող ե միաժամանակ ծիծաղել և սպառնալ և զարմանալի կարողությամբ չի պատասխանում իրեն ուղղված և վոչ մի հարցին։

Յես նրա մոտ նստեցի մոտ յերկու ժամ, հազիվ կարողանալով պատասխաններ տալ նրան։ Նա խոսում եր հեղափոխության զարմանալի գիտակությամբ և մեծ կտրականությամբ։ Հետո նա ինձ իսկական հարցաքննության յենթարկեց Անգլիայում և Փարիզի անգլիական շրջաններում յեղած տրամադրությունների մասին և համարյա ստիպեց խոստանալ, վոր կմտնեմ այստեղի անգլիական դեսպանություն և կիմանամ Կոմունայի հանդեպ նրա բռնած դիրքը։ Թեպետ մենք բաժանվեցինք սիրալիր կերպով, այնուամենայնիվ յես ուրախությամբ կվերադառնայի սենյակս։ Ինձ համար բոլորովին հաճելի չեր այդ մոլի Լաֆարգի մոտ ինֆորմացիայի գործակալի դեր կատարել։

Ինձ թվում ե, վոր նրա բնավորության ամենանկատելի գիծը այն ե, վոր նա ամենևին չգիտե վորևե բան զովել։ Նա ամենից շատ աչքի յեր ընկնում հենց այն ժամանակ, յերբ փողոցային հայհոյանքներ եր թափում իր քաղաքական թշնամիների հասցեյին։ Մտքի զարմանալի նրբագեղությամբ նա կարողանում եր դուգակցել ամենածայրահեղ արտահայտությունները, վկայակոչելով իր ուսուցիչ Դ–ր Մարքսին և ապացուցելով, վոր իր կուսակցությունը ներկայումս դեմ եր ապստամբության։ Նա Պրուդոնին անվանում եր ռոմանտիկորեն տրամադրված խոզ և հայհոյում եր Բլանկիին՝ հեղափոխական պայքարի վերաբերյալ նրա թեորիայի համար։

— Հարկավոր ե կոմունիստների կուսակցություն, նա չկա,— մռնչում եր նա մոտենալով ինձ,— կաշխատենք ստեղծել նրան ճակատամարտի ընթացքում։

Չի կարելի ժխտել, վոր Փարիզում քաղցն է թագավորում: Փողոցներում առաջ է յեկել անգղների հսկայական քանակություն: Նրանք գրեթե առանց վախենալու հետևում են պարենի դումակներին: Յերեկ յես տեսա, թե ինչպես ագռավների մի յերամ հարձակվեց ձիու միս տանող սայլի վրա: Սայլապանը ձեռնափայտով կատաղաբար քշում էր նրանց, բայց թռչուններն այնքան քաղցած էյին, վոր նրանից չէյին վախենում: Լինում էյին դեպքեր, յերբ սովատանջ ագռավները հյուրանոցի լուսամուտի անցքից ներս էյին թռչում, վորպեսզի հավաքեն հատակի վրա յեղած փշրանքները:

Ի՞նչ են մտածում Վերսալում

Վերջապես, յես վորոշեցի կատարել վաղուցվա մտադրությունս,— այցելել ռուսական դեսպանատուն, Յոժիկով ամուսիններին: Ինձ դիմավորեցին վորպես հին բարեկամի և նստեցրին սեղանի մոտ, վորպեսզի հյուրասիրեն այն ամենով, ինչ վոր կգտնվեր տանը: Պարոն Պյեր Յոժիկովը,— գուցե յես այնքան էլ ճիշտ չեմ գրում նրա ազգանունը, վորովհետև ինձ համար դժվար է յուրացնել այն,— ռուս դեսպանի մոտ տնտեսական հսկիչի պաշտոն ունի: Պարոն Ֆոն Շտակելբերգը, ցարի դեսպանը, Տյերի կառավարության հետ տեղափոխվել է Վերսալ: Դեսպանության մեջ մնացել են առաջին քարտուղարը, Յոժիկովն ու մի քանի ստորին ծառայողներ: Այն ժամանակ, յերբ դեսպանության բարձր պերսոնալն անգործության է մատնվել Վերսալում, Յոժիկովը հազիվ է կարողանում կատարել աշխատանքները:

Դեսպանի անձնական կարգադրությամբ նա այժմ զբաղված է մայրաքաղաքի տնտեսական դրության և Կոմունայի տնտեսական օրենսդրության բազմակողմանի ուսումնասիրությամբ:

Յոժիկովն ինձ պատմեց, վոր Ազգային ժողովի ձախ պատգամավորները, վորոնցից շատերը Փարիզի քաղաքամասերի պետեր են, պահանջել են, վոր ժողովը Փարիզին տա մունիցիպալ ընտրությունների իրավունք:

Նրանք կարծիք են հայտնել, վոր այդ միջոցը կարգապահության կուսակցությանը կտա բարոյական հենարան, վորով կարելի կլինի ճնշել խռովարարներին: Պալատը, կառավարության հետ համաձայնելով, մտադրվում է մասամբ բավարարել այդ պատգամավորների ցանկությունը, սակայն,— ասաց Յոժիկովը,— չպետք է յերազել, թե այդ միջոցը մեծ արդյունք կտա: Յեթե Կոմունան յելք գտնի տնտեսական վատ դրությունից,— ասաց նա,— ապա պայքարը կձգձգվի և կարող է անսպասելի վախճան ունենալ: Յես հարցրի, թե Կոմունան դրամական ի՞նչ միջոցներ ունի: Դուրս է գալիս, վոր նրա ձեռքում գտնվում են խնայողական դրամարկղների և մասամբ զինվորական վարչության դրամները. ինչ վերաբերում է կառավարական գումարներին, վորոնք պահվում են բանկում,— նրանք առայժմ անձեռնմխելի յեն մնացել: Գիտե՞ք, յեթե յես նրանց տեղը լինեյի,— ասաց Յոժիկովը,— յես կսկսեյի տնտեսական միջոցառումներից: Նրանք (կոմունարները) անպարտելի կլինեն, յեթե ձեռք ձգեն մասնավոր և կառավարական կապիտալները: Սակայն, բարեբախտաբար, նրանց մեջ չկա վոչ մի լավ տնտեսագետ,— ավելացրեց նա: Յես նկատեցի, վոր ապստամբության կողմն է մի այնպիսի աչքի ընկնող սոցիոլոգ և տնտեսագետ, ինչպիսին Մարքսն է, վորը հարկավոր դեպքում չի մերժի իր խորհուրդները Կոմունային: Յոժիկովն ակամա մի շարժում արեց, վորպեսզի այդ անունը գրի տետրակում, բայց չգրեց և ասաց, վոր նա մի քանի անգամ լսել է այդ անունը, բայց վոչինչ չգիտե այդ անունը կրողի մասին:

Հետո մենք սկսեցինք խոսել Վերսալի մասին: Իբրև խորը գաղտնիք, Յոժիկովն ինձ հայտնեց ռուսական դեսպանի վերջին զեկույցն իր կայսրին: Զեկույցն ուղարկված էր անգլիական սուրհանդակի միջոցով: Պ. Ֆոն-Շտակելբերգն այդ զեկույցում հայտարարում էր, վոր Ազգային ժողովը բոլորովին անզոր է համարում խռովությունը ճնշելու համար: Նա միակ հույսը համարում էր կոմս Բիսմարկի օգնությունը: Ֆրանսիայի

միջազգային վարկը վիժել է,— գրում եր նա,— կառավարական ապարատը կազմալուծված է: Պեսսիմիստներն առանց մեծ տհաճության նախատեսում են, վոր ոտարերկրացիք կգրավեն մայրաքաղաքը:— Յոժիկովը նաև հայտնեց ինձ, թե Տյերը բոլոր միջոցները ձեռք է առնում Կոմունայի առաջնորդներին կաշառելու համար: Գործադիր իշխանությունը գլխավորողի քարտուղարը գրեթե ամեն որ լինում է Փարիզում (և այդ— չնայած ռազմական գործողություններին) և կապ ունի մի խումբ զինվորականների և մատակարարման գծով աշխատող պաշտոնյաների հետ: Յես ասացի իմ, կողմնակի դիտողի, այն կարծիքը, թե Կոմունան, իր բոլոր թերություններով հանդերձ, ամենաազնիվ կառավարությունն է վերջին քառորդ դարում: Յես տվի նրա մի քանի առաջնորդների բնութագիրը: Այդ ճիշտ է,— պատասխանեց ինձ Յոժիկովը,— բայց ազնվությունն այնքան մոտ է հիմարության, վոր վերջինից վոչնչով յել չի տարբերվում: Լավ կառավարությանն ուրիշ վորակային չափանիշներ են պետք:

ԿՈԼԼԻՆՍԻ՝ ՈԴԵՈՆ ԿԱՖԵՅՈՒՄ ՊԱՏՄԱԾՆԵՐԻՑ

Փարիզն ազատելու հարյուր հիսուն յեղանակ

Կոմունայի Խորհուրդն իր նիստը պիտի սկսեր առավոտյան ժամը տասին: Յես միամտաբար կարծում եյի, վոր Ֆրանսիացիք ռազմական վտանգի ազդեցության տակ փոխել են իրենց սովորույթները: Գալիս եմ տասին,— դահլիճը դեռ դատարկ է: Մեկ ժամ հետո յեկավ Դելեկլյուզը: Նա թարթում եր աչքերն և քայլում կռացած: Հին, մաշված վերարկու, փոքրիկ, սև Ֆետրի գլխարկ, ձեռները դրել է քամակին, տեսքը շփոթված, այնպես, կարծես վախենում է, վոր նրան կարող են վիրավորել: Ըստ յերևույթին այդ մնացել է տաժանակրությունից: Զե՞ վոր նա հենց նոր է յեկել Կայեննից: Ներս վազեց Վերմեշը, ամենաժողովրդական «Պեր-Դյուշեն»-ի խմբագիրներից մեկը: Նա շատ կայտառ եր յերևում: Դելեկլյուզը կնճռելով շրթունքները,

կարծես վիրավորելով կամ հրամայելով, ասաց նրան, վոր Գերմանիայում ամենաազդեցիկ կարծիքներ են լըսվում Կոմունան ճանաչելու համար, և, չսպասելով պատասխանի, անցավ նիստերի դահլիճը:

Նա տեղ բռնեց նախագահության սեղանի մոտ, ձեռները ծալեց կրծքին և անթարթ հայացքն ուղղեց դատարկ բազկաթոռներին: Յես ուզում եյի հարցնել Ֆրենկելին, թե արդյոք նա խոսելո՞ւ յե, յերբ մոտեցավ Լաֆարգն ու վոգևորված ցույց տվեց հաստ թղթապանակը:— «Ահա Փարիզն ազատելու հարյուր հիսուն նախագիծ,— գոչեց նա:— Նայեցեք սրանք, և ձեզ կհուզե այս պարզամիտ հիմարությունը»: Նա հայտնեց մի քանի առաջարկներ, վորոնք ստացված եյին Գիտական պատգամավորության անունով: Վոմն Ոգյուստ Վենգյուկ, որինակ, հայտնում եր, վոր հնարել է մի ոդապարիկ, վորն իր մեխանիզմի միջոցով կարող է յերկրի վրա թափել ամեն տեսակ պայթուցիկ և այրվող նյութեր, վորով հնարավոր է վոչնչացնել վոչ միայն Վերսալի բանակը, այլև բոլոր պրուսացիներին և անգլիացիներին: Ռենոն առաջարկում եր Նոլյան փոստը, հսկայական ոդային մի բալոն, վորը պետք է շարժման մեջ դնեն հարյուր հիսուն յերկու յեզներ: Հետո Լաֆարգը մի անգամից դադարեցրեց իր ճառն ու բարձրաձայն հարցրեց ինձ, թե արդյոք յես յեղա՞ անգլիական դեսպանատանը և կատարեցի՞ նրա խնդիրը: Յես բարկացա այդպիսի անտեղի սրտաբացության վրա և սառը պատասխանեցի, թե դեսպանատուն կգնամ այն ժամանակ, յերբ այդ անհրաժեշտ լինի անձնապես ինձ համար: Նա զարմացած նայեց ինձ և կարծեմ հասկացավ իմ տոնը: Դռան մոտ անսպասելիորեն յերևաց կաղ Դոմբրովսկու կերպարանքը: Նա խիստ ուրախացած մոտեցավ ինձ և իսկույն հիշեցրեց, թե ինչպես մենք փորձում եյինք սխտորով համեմել իտալական մակարոնը:

Թույլ չտալով, վոր յես զգաստանամ, նա հարցրեց, վորտե՞ղ եմ ապրում, ի՞նչ եմ անում, յե՞րբ եմ լինում տանը և հրավիրեց իր մոտ, գլխավոր հրամանատարության: Կարծեմ վոչինչ չկարողացա պատասխանել:

Այդ ժամանակ նրան մի կողմ կանչեցին, և յես ցավեցի, վոր հանցես չդրի նրա դրպանը: Վերջապես, նախագահության տեղում շարժում սկսվեց: Խոսքը տրվեց Դելեկլյուզին: Նրա ճառը հեղափոխության փիլիսոփայական դրույթների մի ակնարկ եր: Նա խոսում եր մի փոքր ավելի պարզ, քան սովորաբար, այնուամենայնիվ վորովայնախոսի կամ մեռնողի ձայնով: Նա յերբեք չգիտեր սակավ կարևոր հարցերն իր բարեկամներին հանձնարարելու և այդպիսով իր աշխատանքը թեթևացնելու արվեստը: Նա միշտ ծայրահեղորեն հոգնած ե: Յերբ նրան հանդիպում ես, անդթություն ե թվում բարևելը: Իր ամբողջ կերպարանքով նա կարծես պաղատում ե հանգիստ թողնել իրեն:

ԿՈՄՈՒՆԱՅԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Պատուհանները ճաքցին և հատակը թեթև շարժվեց մի ակնթարթ: Թմբուկի զարկը ճեղքեց լռությունը: Սպիտակ բեխերով մի սպայի առաջնորդությամբ անցնում եր կանանց գունդը: Շարլ Ամուրուն, Կոմունայի Խորհրդի քարտուղարը, ծածկեց պատուհանն ու հուզվելով, նայեց հեռագրերը:

Հյուսիս-արևմտյան փրոնտ:

Սեն-Կլուի կողմից խմբվում են վերսալցիների զորասյուները:

Ա.Երյե

Բլանկայի մահիկում ահագին քանակով դիակներ կան: Թակեռները պայթեցված են: Գնդապետ... պատվաստված ե... Զափազանցեցրած ե այն լուրը, թե մեզանից շատ են կոտորվել:

Վերսալցիները գրավել են Ջրմուղի ամրությունը:

Գաղանցի մոտ յեղած ավերվածքներում պարկեր են լցվում: Տրանսպորտն անբավարար ե: Նախազգուշացրեք զինվորական պատգամավորին:

Գլխավոր զաղանցի ձախ ծայրի խցիկի առաջ վերսալցիք շինել են մի անցք, վորի յերկու քառակուսի արշին մեծությամբ բերանին նրանք ռումբեր են նետում: Խցիկն ավերված ե կեսով չափ: Մերոնք ռումբեր են նետում վերին անցքը: Անհրաժեշտ ե ինժեներ:

Մարտական վողջույն ենք ուղարկում կոմունային: Խոստանում ենք մինչև վերջը պատվով կատարել մեր պարտականությունը:

Կենդանաբանական այգու հեծելակների մի խումբ

Դպրոցական խորհուրդների ժողովը, վորը նշանակված եր յերեկոյան հնգին, կլինի ութին: Կորկանապես սպասում ենք խորհրդի ներկայացուցչին:

Ամուրուն մրմռաց.— «Թազզլ, դազզլ, խոբբլ, դոբբլ»— և մի կողմ նետեց թղթապանակը:

— Իսկ հարավային ռազմաճակատում ի՞նչ կա,— հարցրեց նա հերթապահին,— չկա՞ մի վորևե կարևոր բան:

Հերթապահը թղթապանակը տվեց նրան.

Վիլյեժուիֆի մոտ յերևացել են կարմրազգեստ մարդիկ: Ո՞վ կարող ե լինել, հայտնեցեք:

Բաղաճամասի պետի ոգնական

Վերսալցիք խրամատներով շարժվում են առաջ, դեպի Բիլանկուր:

— Իսկ վորևե մի առանձնակի բան չկա՞:

Վիտրիից ցածր Սենայի վրա ծանծաղուտին նստեց հացահատիկով բարձված բեռնանավը: Կազմակերպում ենք նավն ազատող ջոկատ, տասը տոկոս տալու պայմանով:

Թշնամին սաստիկ անհանգիստ ե: Մեդոնի արևմտյան կողմից մեծ շարժում ե նկատվում:

Հայտնում ենք ի գիտություն, Կարմիր Խաչի գծով միջոցներ ձեռք առնելու: Շատիլյոնի բարձունքներից մարտկոցները սաստիկ ռմբակոծում են դեպի Մոնրուժ տանող ճանապարհը: Արդեն տասն որ ե, ինչ կրակում են նույնիսկ մենակ անցնող մարդկանց վրա: Ժողովի հանձնարարությամբ՝

Վերնի

Մոն-Վալերյան տանող ճանապարհով տեղափոխվել են 150 վիրավորներ:

20-րդ քառակուսում կան չորս մեծ վրաններ, ըստ յերևույթին ղեկավարների համար:

Ամուրուն, կկոցելով աչքերը, լուրերի կույտից դժվարությամբ վերցրեց հացի բեռնանավի վերաբերյալ

հեռագիրը: Նա այդ արեց ճաշակով, կարծես գաթա յեր ընտրում:

Յերբ փորձեց բանալ դեպի միջանցք տանող դուռը, վորպեսզի գնա նիստին, դուռը դրսից մեկը պահել եր ձեռքով:

— Հապա մի բան արա,— անորոշ արտասանեց Ամուրոն, ձեռքը պտտելով ոդում:

Հերթապահն ուժգին գնաց-յեկավ և վոտով խփեց դռանը: Դուռը հազիվ եր բացվում: Ներսում,— իհարկե, նրան պահած,— ֆինանսական սեկցիայի պատգամավոր Ժուրդը վիճում եր Վիարի,— պարենի պատգամավորի հետ: Նրանց զրույցը ռիթմիկ պար եր հիշեցնում, վորովհետև նրանք գրկվելով, իրար հետ մղելով, կրծքից հրելով, իրար ուսերի խփելով, ահագին տարածություն եյին բռնում: Բոլորը հեռու-հեռու եյին գնում նրանցից, վորպեսզի նրանք պատահմամբ չբոթեն անցնողների կողը: Պատգամավորները կատաղի մոլեգնությամբ ճմլում եյին մեկ-մեկու: Ամուրոն նրանց հանձնեց բեռնանավի վերաբերյալ հեռագիրը:

Ծխեց տասը: Միջանցքում մեկը գոչեց.— «Խորհրդի անդամներ, նիստն սկսվում ե»: Բուֆետում մնացին միայն միքանիսը,— Կոմունայի դատախազ Ռիգոն, Լուսավորության պատգամավոր Վայանը և անհայտ մի մարդ: Ժուրդը, Վիարը և Ամուրոն մոտեցան նրանց: Վայան սիրաբար և շատ հանդիսավոր կերպով արտասանեց անհայտ մարդու հասցեյին.

— Քաղաքացի Վաշբեռն, Ամերիկայի դեսպան:

Ամերիկացին խիստ թեթևակի և անհարկադրաբար բարևեց և իսկույն շարունակեց իր ընդհատված ճառը:

—... Աշխատանքի հարցն այժմ ամենից շատ ե զբաղեցնում մտքերն, ուստի և ավելի մեծ վտանգ ե ներկայացնում: Այն դժվարությունների միջև, վորոնց հետ կապված ե այդ մեծ, հատուկ խնդրի լուծումը, կա մի դժվարություն, պարոնայք, վորը բղխում ե տարորինակ մոլորությունից...

Ամերիկացին նայեց շրջապատողներին: Նա այդ արեց նույնիսկ վոչ միայն աչքերով, այլև իր ամբողջ մոխ-

րագույն, ցցուն դեմքով, կարծես ուղղակի բոլորին ցույց եր տալիս իր մռութը, վորը բոլորովին մոխրագույն եր և բոլորովին հանդիստ, միայն մեկ աշխույժ ու փայլուն կետով,— վերին վոսկե ատամով, վորն ուներ անհավանական, ուղղակի անբնական մեծություն:

—... Յենթադրում են, վոր հասարակության մեջ գտնվում ե մի առանձին դասակարգ, վորը կոչվում ե բանվորություն կամ աշխատավորություն, և հենց այս կարծիքն ե, վոր առաջ ե բերում տարակուսություն, նախանձ և ցասում: Հարկավոր ե, պարոնայք, ըմբռնել տալ խաղաղասեր մարդկանց (նա արագախոսությամբ ավելացրեց.— իսկ դուք գիտեք իմ վերաբերմունքը դեպի ձեր գործը, պարոնայք, և դեպի ձեզ, բոլորդ, իբրև խաղաղ հավասարության իսկապես ապահովողների), հարկավոր ե ըմբռնել տալ նրանց, վոր մենք բոլորս վոչ այլ ինչ ենք, բայց յեթե զանազան տեսակ աշխատավորներ, և վոր մեզ համար (յես ասում եմ վորպես սոցիալիստ) բոլոր շահերն ընդհանուր են, բոլոր պարտականությունները— միատեսակ:

— Իսկ իրավունքնե՞րը:

Հարց տվողն ըստ յերևույթին Ռիգոն եր: Կարծես չլսելով, ամերիկացին շարունակեց.

— Պարոն Բլանկիին ակներևաբար պետք ե աշխատավոր անվանել: Յեվ ամեն մեկը, ով նրա նման մշակում ե մտքի դաշտը, մի՞թե աշխատավոր չե: Մի՞թե չենք աշխատում մենք բոլորս, քանի գոյություն ունենք:

Նա դարձյալ բոլորին հերթով ցույց տվեց իր դեմքը: Նրա ժպիտում փայլեց վոսկին:

— Մի քանիսներն աշխատանքի կազմակերպումն ինչ-վոր ուտոպիա յեն դարձրել: Այդ ուտոպիան կարող ե ամենամեծ վտանգ դառնալ մեր հասարակության համար: Այո՛, այո՛, պարոնայք: Ավելի լավ ե դիմել գործնական հարցերին (յես ասում եմ իբրև բարեկամ), ուսումնասիրենք իսկական կարիքները, իմանանք աշխատանքի իսկական պայմանները, մարդկանց չբաժանենք ատելի սահմանագծումներով, այլ նրանց միաց-

նենք փոխադարձ պարտականություններով, մերձավորի սիրով...

— Խորհրդի անդամներ, նիստն սկսվե՛լ է:

— Յես վերջացնում եմ, պարոնայք: Ձեզ կանչում են կարևոր գործեր վճռելու: Հուսով եմ, վոր նորից կհանդիպենք:

Կոմունայի անդամները, հրելով իրար, սեղմեցին նրա յերկար, ծանր ձեռքը:

— Իհարկե, յեկեք, իհարկե,— ուրախ և համարյա հյուրընկալաբար, մի քանի անգամ անընդհատ ասաց Ռիգոն,— յեկեք, կվիճենք:

Հետո, յերբ ամերիկացին չքացավ միջանցքի անկյունում, Ռիգոն հանկարծ փռթկաց, ակնոցները թռըչկոտացին քթի վրա և ընկնելով, ճոճացին սև թելից կախված: Նա բարեհոգությամբ հրհռաց և շշնջաց Վայանին.

— Միակ բանը, վոր յես յեզրակացրի նրա մերձավորի սիրուց, այդ այն է, վոր անպայման հարկավոր է ընդհանուր խուզարկություն կատարել քաղաքում: Յես քեզ հասկանում եմ,— վոգևորված ավելացրեց նա, շարժելով նրա բաճկոնի ծայրը:

Ռավեն մեկն եր նրանցից, ովքեր հավատացած եյին, թե նիստն սկսել են առավոտյան ութից: Մարդիկ այստեղ հավաքվել եյին ամեն տեղից: Նրանք իրենց հետ բերել եյին նորություններ, տարակուսանք, սխալներ, հաղթանակներ և այդ բոլորի մասին հենց այստեղ խոսում եյին, կանգնելով միջանցքի անկյուններում, կամ նըստելով լուսամուտներին և զանց առնելով չափած ու ձևած նիստի հին, ակադեմիական կարգը: Աշխատանքային, հաշտարար կամերաների գործիչները փսփսում եյին Ֆրենկելի հետ, հրհռում և վոտներով դոփում եյին կանայք, վորոնք խուռն հավաքվել եյին ընթերցարանում: Հանկարծ դահլիճից դուրս եր յելնում վորևե մեկը և ձայն եր տալիս միջանցքում.— Առաջարկվում է պարտադրաբար դրամ հավաքել հոգուտ վիրավորների, համաձա՞յն եք. ի՞նչ. շատ լավ,— և նորից չքա-

նում եր դահլիճում: Զինվորականները դատափետում եյին ստրատեգիան:

Յերբ Ռավեն դահլիճ մտավ, տասնմեկն անց եր քառորդ: Չնայելով խոսակցությունների սարսափելի աղմուկին, տեղից-տեղ անցնող մարդկանց քայլերին, յերբ դահլիճում կարծեմ տասը մարդ ել չկար, վորոնք զբաղված լինեյին մի գործով,— բոլոր առավել կարևոր բաները լսելի եյին բոլորին: Վոչ վոք չեր հետաքրքրվում հռետորով, վորին կարող եր լսել միայն նախագահությունը, և, այնուամենայնիվ, բոլորն ել գիտեյին, թե ինչ եր կատարվում: Սղագրուհիներն արձանագրում եյին վոչ միայն յուրաքանչյուր բառը, այլև դահլիճում լսվող յուրաքանչյուր հոգոցը:

Հարկավոր եր լսել Փրանսիական ժողովրդին ուղղված՝ Կոմունայի կոչի վերջին նախադիծը: Դեկլարացիայի սկիզբը հանդիսավորապես սուզվեց ձայների աղմուկի ու ծափերի մեջ:

— «Մարտի տասնութը բաց է անում եքսպերիմենտալ, պոզիտիվ, գիտական քաղաքականության մի նոր ժամանակաշրջանը»...

— «Գիտական քաղաքականությա՛ն...», ա՛խ, սատանաներ, սատանաներ,— շշնջում եր Ռավեն, կուլ տալով արցունքները.— ա՛խ, սատանաներ հարազատ:

— «...Այդ հին կառավարական ու կղերական աշխարհի վերջն է, միլիտարիզմի, բյուրոկրատիզմի, շահագործման, բորսախաղի, մենաշնորհի, առանձնաշնորհումների և այն բոլորի վերջը, ինչ վոր պրոլետարիատին հասցրել է ստրկության, իսկ հայրենիքին— աղետների ու տառապանքների... մեր պարտքն է պայքարել և հաղթանակե՛լ»:

Ռավեն թռավ նստարանի վրա.

— Այո՛, այո՛, այո՛, այո՛, այ՛ո,— գոչեց նա մոլեգնաբար:

Նա իրեն զգաց մի մեծ, արի մարդ, վորը քանդում է աշխարհի կապը անցյալի հետ: Այդ զգացմունքը ֆիզիկապես արտահայտվում եր նրանով, վոր նա իրեն ճանաչեց ավելի բարձր, քան սերն և բարեկամությունը

դեպի մերձավորը, ավելի բա՛րձր այն պարտավորություններից, որոնք բխում են մի սովորությունից,— գոյություն ունենալ նրա համար, որպեսզի մեռնել հարկավոր դեպքում: Մեծագույն ինքնության գիտակցությունը թեթև, հաճելի դողով ընդգրկեց նրան: Նա ուզում էր իր ամբողջ էությունը նետել դեպքերի վոլորտը, ապրել այնտեղ, տանջվել, վայելել և կործանվել: Յուրաքանչյուր անհնարին բան նա այժմ կարող էր անել բացառիկ հեշտությամբ: Միայն թե այդ չկոչվեր ոչ զոհողություն և ոչ էլ անձնվիրություն: Ոչ ոք չի նահանջում, որովհետև բոլորը հավատում են: Զոհողություն չկա, այլ կա գործողությունների բնական կերպարանք...

Մոտեցող ծառայողի լռելյայն ժեստը Ռավեյին նետեց կողքի սենյակը: Նա ընկղմեց դահավորակի վրա, զգալով, որ անսահման հոգնել է... Նա յերբեք չէր կարող մտածել, որ այդքան կարող է հոգնել: «Հավանորեն սա գլխապտույտ է»— մտածեց նա հանգստացած և համարձակ դիմեց բարձրահասակ, նիհար մի գիտնականի, որը դժգույն կանգնեց նրա առաջ.

— Յես այնուամենայնիվ ձայն կտամ հոգուտ Անտինոյի կիսանդրու: Նրան հրաշալի կերպով կարելի է դուրս տանել: Հռոմեացի հռետորի արձանը նույնպես: Ազնիվ խոսք, ինչո՞ւ համար են նրանք գտնվում թանգարանում: Ահա սա, Վիրավոր Գա՛լլն է: Նրան նույնպես: Մեր Մոնմարտրում բազմաթիվ հարմար անկյուններ կան նրանց տեղավորելու համար: Բորգեսի առյուծը նույնպես, բարի յեղեք: Ոչ, ոչ, Բորգեսի առյուծը և ոչ թե Հոմերոսը:

Յեվ նա իսկույն մեկնեց գավառ: Սակայն, այն զգացումը, որ նա դեռևս դահավորակի վրա յէ, չէր թողնում նրան: Այդ զգացումը չխանգարեց նաև մեկնելուն: Որլեանը ճիշտ այնպես էր, ինչպես նա գիտեր ութը տարի առաջ: «Ժորժ» կաֆեյի սեղանների վրա խաղում էր արևն, ինչպես այն ժամին, յերբ նա այնտեղ հանգստանում էր սովից, յերիտասարդությունից և կյանքից վիրավորվելուց: Նա չգիտեր ինչ անել էր հետ



(ինչպես և այն ժամանակ)։ Սակայն նրա հոգում յերիտասարդություն եր, միայն ավելի իմաստուն և այդ յերիտասարդության առաջ ամեն ինչ սկսեց անցնել սիրված հուշերի քաոսով,— վիրավորանքներ, հույսեր, անուններ, դեմքեր, զգացումների հիշատակ։ Ցեկան ժամերի ու րոպեների հիշողությունները, նրանք ներկայացան իրենց ամբողջ բովանդակությամբ, չարանչարան, միաձև, հեռանկարազուրկ, տունը լուսանկարի հետ, անունը զրույցի հետ, զրույցն ամբոխի հետ։ Նա ամեն ինչ դիտում եր իր մեջ առանց բառերի աջակցության,— սրանք չեյին ընդգրկի այն, ինչ վոր առկա յեր և իրենց ասացությամբ կվրիպեյին ամեն ինչ, վոր ամենագլխավորն եր։

Ուշ յերեկոյան նա արթնացավ։ Պարետի սենյակում յերկար ժամանակ նրան դուրս չեյին թողնում։ Հարկավոր յեղավ իր խայտառակ վարմունքը հայտնել Խորհրդի նիստում, վորպեսզի դուրս թռչեր փողոց, և նրա հետևից լսվեյին զինվորների մի քանի կծու բարեմաղթությունները։

Գիշեր։ Նրա համար բաց են բոլոր պատուհանները։ Նա քրքրում է իրեն հլու քաղաքը, ինչպես ալիքը— յեզերքի վոլորտներն ու խոռոչները։ Ինչպես ալիքը, վորը տանում է ափի փոշին ու բույսերը, իրար խառնելով, խճճելով, շպրտելով դեպի հարևան ափերը կամ ջրի խորքերը։

Գիշեր։ Նրա համար բաց են բոլոր պատուհանները։ Գիշերը քրքրում է իր համար բոլորովին բացված քաղաքը և իր բոլոր գյուտերն ի մի յե դարձնում։ Նա մթին— հասարակ է, առանց մանրամասնությունների, առանց մասնակիությունների, նա— վորպես մի հսկայական վերջակետ՝ ցերեկվա հոգնեցուցիչ ֆրազի վերջում։

Ահա, մոտենալ լուսամուտին, վորի սպիտակ վարագույրի հետև ձայներ են լսվում, քաշել թեթև շղարշը և մի քանի խոսք ասել, կամ ուղղակի լսել խոսակցությունը, ծիծաղել ուրիշի կատակից, կամ թե աչքերով

հավանություն տալ՝ ի պատասխան տխուր դատողությունների,— և այդ վոչ տարորինակ կլինի, վոչ ել վիրավորական։ Գիշերը մասնավորը նշանակություն չունի։

Սալահատակները դղրդալի յեն։ Նրանք հեռո՛ւ տարածում են հետիոտների քայլերը և ձիու սմբակների դոփյունը։ Նրանք այնպես դղրդալի յեն, վոր նրանց վրայով շարժվում են միայն շարժումների ձայները, իսկ շարժումների կերպարանքներն աննկատելի յեն,—նրանք հեռու յեն։ Գիշերվա ազատ լռությունը չի խախտում անգամ յերկնքովը մեկ դղրդյունը.— այդ թնդանոթաձգության արձագանքն է բա՛րձր, դեպի յերկինք սլանում և խփում նրան։ Թնդանոթաձգությունից դողում են ամպերը։

Բայց ինչո՞ւ հանկարծ յերազում նա տեսավ յերիտասարդությունը։ Ցեթե հավատալ նշաններին, ապա յերիտասարդությունն ուղի յե։ Ցեվ ինչո՞ւ— Որլեանը։

Իրեն համար աննկատելի կերպով նա ընտրում է ամենակարճ ճանապարհը դեպի հրաձգությունը։ Նա գնում է, վոտներով դեն շպրտելով ձայների կաթիլները։ Նա այժմ անխնա յե դեպի գիշերը։ Ցեթե գիշերվան համար բաց են բոլոր պատուհանները, յեթե գիշերը քրքրում է իր համար բոլորովին բաց քաղաքը և բոլոր գյուտերն ի մի յե դարձնում,— ապա թող նա պատուհաններից նետե լռության ընդգծած տրամադրությունների կծիկը, մենակ հետիոտի քայլերը և Փարիզի պատերից դուրս, հեռավոր թնդանոթաձգությունը,— լռությունը, քայլերը, թնդանոթաձգությունը,— և թող դրանից այսոր ծագեն քնածների բոլոր յերազները, արթունների բոլոր հույսերը, փոքրոգիների բոլոր յերկյուղները, մեռնողների բոլոր զառանցանքները։

Ճանապարհը չի հիշում։ Փողոցներն ինքնին բռնում են Ռավեյին և արագ, առանց կասելու, հանձնում են նրբափողոցներին, պասաժներին, հրապարակներին և հետևյալ, կարծես նրան սպասող նոր փողոցներին։ Հազիվ նա նկատում է նրանց դրությունը— մարդկանց բացակայությունը, մթությունը կամ լուսավորու-

թյունը: Կողքից, վորտեղից վորտեղ, թռչում է յերաժշտության թույլ մրմունջը: Յերաժշտությունը թվում է ցերեկվանից պատահմամբ շարունակվող, ինչպես հրապարակում՝ գիշերը չփակված ջրմուղի ծորակի կաթկթոցը: Յերաժշտական մեղեդու ձայներին հետևում են ուրիշ ձայներ: Ձայները ցրվում են գիշերելու, ինչպես քեֆից գնացող խուլիգանները: Վոտների դոփյունը հաստատորեն անցնում է ոդով, փողոցի քամու հետ սահում է զրույցը— այստեղ խոսք, այնտեղ՝ խոսք, իսկ վերջը թռչում է ծառերի մեջ, ավելների սոսափը ծամածռվում է, նմանվելով ովկիանոսի ալիքի վշշոցին, և ապրանքային դեպոյի մոտ, շտապող բեռնակիրների ձեռքերի տակ արկղները հրաձգություն են խաղում: Ջոր, ճքուն դերանի վրա անց ու դարձ է անում կացնի հարվածը, ինչպես փողոցի պահապանը, և իբր թե քաղցած քնի մեջ մրթմրթում են անապատանները,— մրթմրթում են քարերը, վորոնք քլունգով հանվում են սալահատակից և կուտակվում:

Ռավեն կորցրեց ճանապարհը: Նա ամբողջ մարմնով հոգնել եր և ղառանցում եր,— ղառանցում եյին ականջները, աչքերը: Նա յերկար դիտում է շուրջը— հը՛մ, ահա թե ինչ, քաղաքը վաղուց արդեն վերջանում է, նրա վերջին փողոցների ծայրերն անփութորեն ձուլվում են ընդհանուր ամայություններին: Ռավեն կողմնորոշվում է: Ոդը լիքն է հեռավոր կրակոցների հանդարտ ճայթյուններով:

Թո՛ղ սպանեն: Մե՞զ ինչ:

Հազիվ մեռնելով, մենք նորից ծնվում ենք ավելի ահարկու և ուժեղ, քան առաջվա սերունդը (նա ասաց «մենք», իհարկե, վոչ իրեն և վոչ առանձին գոյությունների շարանների մասին, այլ բոլոր ապստամբների մասին, վորոնք հայտնի յեն մարդկային հիշողությանը): Նրա մեջ— այդպես եր նա հիմա զգում— հոսում եր խռովարարների, դրդիչների, հրկիզողների ցեղային արյունը: Պատմության և վոչ մի հեռավորություն չեր բաժանում ցեղայնության այդ զգացումները և նրա

տոհմանիշում կարող եր տեղ գտնել մահակը կամ քարը,— առաջին ապստամբների զենքը: Նա իր մեջ զգում եր արիության, համառության և վոգևորության ժառանգականությունը: Դրանք իր կարողությունն եյին: Հաղթությունը նեղ անձնական հարց եր: Նրա ժամանա՞կ, թե վոչ: Կտեսնե՞մ, թե գուցե չեմ տեսնի: Բայց վոր այդ հաղթությունը կլինի, այդ մասին կասկածներ չեյին առաջանում: Յեվ թո՛ղ սպանեն: Մե՞զ ինչ:

— Մի՛ գցեք պարկերը: Զգուշությամբ իջեցրեք պարանների վրայով:

— Հաշվեցեք սոխը: Մենք ունենք քառասուն պարկ սոխ... Ինչքա՞ն է գազարը, յերեսո՞ւն, տասներե՞ք: Նորից հաշվեցեք:

Մի քանի մարդ, գլուխները բարձր պահած, պարկերը բռնում եյին ձեռնասայլակներին, լծվում եյին նրանց և դանդաղ քաշում դեպի փողոցների խորքերը: Նրանք աշխատում եյին բոլորովին լուռ, միայն յերբեմն շխկացնում եյին մատները, յերբ հարկավոր եր փողոցահատի նեղ տարածության մեջ անցնել իրար կողքից:

Ռավեն կանգ առավ և զարմանքով փորձեց ինքն իրեն բացատրել այդ խորհրդավոր նշանավորությունը: Նա ինքը բարձրաձայն շխկացրեց մատները, յերբ բեռնիչներից մեկը գնաց նրա կողմը: Ռավեն հազիվ զսպեց ծիծաղը, տեսնելով, վոր նա արագ կանգ առավ, նույնիսկ որորվելով իր արագ շարժումից, և, շխկացնելով դեպի առաջ պարզած աջ ձեռքի մատներով, կարծես այդ ձայնով կանչում եր ինչ-վոր տեղ մտած շանը,— գնաց ուրիշ կողմ: Ռավեն նորից շխկացրեց,— և մյուս բեռնիչը անցավ մի կողմ, տարակուսանքով նայելով իր շուրջը: Ծիծաղելով, Ռավեն արագությամբ մոտեցավ աշխատողներին և շխկացրեց յերկու ձեռներով: Նրա առջև ամեն ինչ խառնվեց: Վայր գցելով պարկերը՝ մարդիկ հետ-հետ գնացին, հրելով իրար և ավելի ևս սաստկացնելով այնքան անսպասելիորեն առաջացած քաոսը:

— Այդ ո՞վ է շխկացնում,— ջղայնությամբ գոչեց բեռնիչներից մեկը.— տվե՛ք նրա վզակոթին:

Բոլորն սկսեցին ձայն տալ.

— Ալեքսա՛նդր, Ալեքսա՛նդր, այստեղ մեկը մեր գլխին ոյին է խաղում: Մի տես ինչո՞ւմն է բանը:

Բոլորը կանգնեցին, առանց տեղից շարժվելու և միայն յերբեմնակի մեկ-յերկու շխկոց— նշան տալով:

— Լսե՛ք, ե՛յ, ի՞նչ սատանան է ձեզ բերել:

Ռավեն տեսավ, վոր վիթխարի հասակով մի մարդ դեպի իրեն է շարժվում: Նրա գլուխը դեպի առաջ եր ցցված: Նա գնում եր և հաճախակի շփում ճակատը:

— Ի՞նչ կա վոր,— հարցրեց Ռավեն, արդեն սկսելով շփոթվել, վորովհետև զգաց անհասկանալի մի մեղք այն բոլորի համար, ինչ վոր կատարվեց:

— Ջուր պինդ կա,— սպառնալով պատասխանեց մոտեցողը և գոտու վրայից արձակեց ձեռնափայտը, վորը կապել եր ինչպես սուսեր:

Նա իր շարժումները կատարում եր այնպես, վոր Ռավեյին փակի տան պատի և հարևան ցանկապատի միջև յեղած նեղ անցքում: Ձեռնափայտն արդեն պտույտ եր գալիս նրա վարժ ձեռքում:

— Ջուր պինդ կա,— ասաց նա նորից,— յերբ մենք աշխատում ենք, մեզ վոչ վոք չի խանգարում: Մեզանում այդպես է ընդունված: Տեսուչները պետք է ոգնեն և վոչ թե փչացնեն գործը: Ապո՛ւշ եք դուք:

— Տեսուչնե՞րը,— Ռավեն մի կողմ ցատկեց, վորովհետև ձեռնափայտը համարյա նրա վրա յեր իջնում,— լսե՛ք, դուք ծաղրո՞ւմ եք,— նա յերկու ձեռներով շրմփացրեց իր դեմքին:

Ձեռնափայտով մարդը իսկույն կանգ առավ, հարցնելով.

— Այդ ի՞նչ է: Լսե՛ք, ել ի՞նչ եք անում այստեղ:

Ռավեն արդեն հասկացավ: Նա չորս վոտ յեղավ և գաղտագողի անցավ ձեռնափայտով մարդու կողքից:

— Ի՞նչ պատահեց ձեզ հետ,— նորից հարցրեց ձեռնափայտով մարդը,— հե՛յ, դուք,— նա ջղայնորեն թևերն եր շարժում և գլուխը դես-դեն դարձնում, կնճռոտելով ճակատը:

Ռավեն հեռու յեր:

— Ջքացավ,— ասաց ձեռնափայտով մարդը:— Մի տեսեք ինչքան ցավեցրեց մեր գլուխը:— Նա սկսեց պարզել ձեռները, կարծես ինչ-վոր բան իրենից վանելով:— Վորտե՞ղ եք դուք,— հարցրեց նա յուրայիններին:

Նրանք պատասխանեցին մատների շխկոցի կամացուկ ազդանշանով: Նա ականջ դրեց այդ ազդանշաններին: Նրա ուղեղը նմանվեց ինչ-վոր մի ահագին ականջի:

— Վոչինչ,— ասաց նա,— հիմա ամեն ինչ կարգի կբերենք:

Թաթերի վրա քայլելով, Ռավեն նետվեց ճաշարանի բակը:

Քաղաքի պարսպից անցնել ցանկացողները հերթի եյին կանգնել այդ կիսախավար, մեկ նավթի լամպ ունեցող գինետան սյան մոտ: Անվոտ Ռոնին նստել եր սեղանի անկյան մոտ, ինչպես մի մեծ, մարզված գորտ:

— Սա ի՞նչ բան է,— հարցրեց Ռավեն:

— Սա «Ինքնոգնություն» արտելն է: Ահա Ռոնին, ավագը: Հարցրեք նրան:

— Սրանց Անյերից բերել է մեքենավար Լամարկը, սրանք պատերազմի մուրացիկներն են,— ասաց փոստատարը:— Նրանք, գիտե՞ք, կազմակերպվել են:

Բերդի պարսպից շարունակում եյին իջնել պարկերը պարկերի հետևից:

— Կամաց, հայվաններ, տրորեցիք պաղարը,— հրամայեց Ռոնին: Ո՞վ է քաղաքից դուրս գնալու,— հարցրեց նա,— մարդագլուխ տասը ֆրանկ, խնդրեմ մուծել: Կոմունայի կողմից գործուղվածները ձրի կգնան:

Փոստատարը պահանջեց, վոր բոլորից առաջ դեպի իրեն ուշադրություն ցույց տրվի, և յերբ Ռավեն ոգնեց նրան շալակելու փոստային պայուսակը, նա ասաց.

— Տղերք, մենք այսոր յերկուսով ենք:

Փոստատարն ու Ռավեն նեղ սանդուխքով բարձրացան պատի վրա և պարաններով իջան արտաքին կողմի փոսը:

— Կամա՛ց,— ասաց մեկը, վորը չեր յերևում խավարում,— այստեղ պլաս է բռնած, անցեք այնտեղից:

— Վաղը կանաչի հիանալի առևտուր կունենանք,— ասաց փոստատարը, յերբ նրանք դուրս յեկան դաշտ, և հարցրեց.— Դու ո՞ւր ես գնում:

— Ֆրանսիա,— պատասխանեց Ռավեն,— յես Ֆրանսիա յեմ գնում:

— Հապա ետտեղ Ֆրանսիա չե՞:

Նրանք գնում եյին մթին դաշտով, Իվրի և Բիսետր բլուրների միջով: Հաշմանդամները կանաչով լի պարկեր ու զամբյուղներ եյին տանում դեպի քաղաք: Նրանք վերադառնում եյին Ռոնիի մոտ, լրացուցիչ մարդիկ պահանջնելու, վորովհետև Վիլժուիֆի մոտ գտնվող և տերերի կողմից լքված ջերմոցների գրոհը, վորը ղեկավարում եր Դեզեն, անհաջողության եր հանդիպում:

— Ե՛հ, յերբ յես վերադառնում եմ քաղաք, ինձ համար շատ ծանր է լինում,— ասաց փոստատարը,— յերեսուն կիլոգրամ մի անգամից եմ տանում, հա՛ա: Գրում են ու գրում: Ֆրանսիա՛,— ավելացրեց նա հարգանքով և բավականությամբ:— Մեկ ել, գիտե՞ս, պատահում է, վոր մարդկանց եմ հետս տանում: Գնում են, ի՞նչ անեն: Ենպես բաներ են կատարվում վոր: Ցերեխաների հետ, հասկանո՞ւմ ես: Ոտարերկրացիներ են, կամ մեր գյուղացիները: Այդ ժամանակ սողալով, սողալով ես գնում, ի՛նչ արած, հինգ կիլոմետր փորիդ վրա յես գնում, ծնկներիդ վրա, հետո վազում ես,— ծանր է: Ելի լավ է, վոր ես հայվաններն ոգնում են: Նրանց հետ, բարեկամս, յերբեք չես կորչի, ենքան հանդուգն են: Ինչքա՛ն մարդիկ են տեղ հասցրե՛լ, հաշիվ չկա:

Ռավեն լռում եր: Նա գնում եր, հաճախ նայելով յետ, քաղաքին:

Փոստատարը յուրովի բացատրեց նրա տրամադրությունը և հանգստացնող տոնով ասաց.

— Կհասնենք Տիյե, շուռ կգանք դեպի գերեզմանոցը, այնտեղ կանցնենք Սենան և ամեն ինչ լավ կլինի:

«Բաքոս» սրճարանի մոտ Դեզեյի ուղեկալները կանգնեցրին նրանց:

Սապատավոր մի մարդ կանգնած եր ճանապարհին, ձեռքը դրած վերնազգեստի ծոցը: Նրա գլխին դրված եր 93 թիվը հիշեցնող կարմիր թասակը:

— Ո՞ւր է Ռոնին, այդ վախկոտ ապուշը: Դուք տեսե՞լ եք նրան,— հարցրեց նա:— Այստեղ գործերը վատ են գնում: Գետի աջ ափում մուրացիկները զավթել են ջերմոցներն և այնպիսի աղմուկ բարձրացրել, վոր բոպե առ բոպե պիտի սպասել Վերսալի պարեկներին:— Նա վարից վեր նայեց փոստատարին և ազդու պարզությամբ ասաց.— Անցեք հետախուզելու, ախպերացու: Իսկ դուք,— նա դիմեց Ռավեյին,— ինձ մոտ սպասեցեք ձեր ընկերոջը:

— Տյերն ամսի յերեսունին ամբողջ Ֆրանսիայում նոր ընտրություններ է նշանակել: Հարկավոր է բոլորին ասել, թե ինչ է կատարվում Փարիզում: Յես վորոշեցի անցնել այդ գործին:

Դեզեն գլխով արեց:

— Այդ ճիշտ է,— ասաց նա,— յերբ ուզում ես, վոր շունը յետ դառնա, ավելի լավ է վոտդ դնես պոչին: Մենք կուղեկցենք ձեզ,— ասաց նա և շուռ յեկավ:

Այստեղ վերջանում է հյուսն Շարլ Ռավեյի կյանքի կապակցված պատմությունը: Վեպի վերջում մենք կգտնենք միայն մի քանի տող, վորոնք թույլ կտան յենթադրություններ անել նրա կենսական դեգերումների վախճանի մասին, բայց այդ յենթադրությունները կլինեն վոչ պարզ և վիճելի:

Տյերը, Վերսալի գործադիր իշխանության գլուխը, այնպիսի մարդ չեր, վոր կարողանար ունևոր գյուղացիների և Փարիզի դուքանչիների Ֆրանսիան փրկել Փարիզի սոցիալական հեղափոխությունից: Իր բնությամբ վախկոտ, հետևապես անկայուն կարծիքներով և ծայրահեղորեն անսկզբունք մի մարդ, նա իշխանությունը պահում եր շնորհիվ այն հանգամանքի, վոր նրա համար բոլորովին միևնույն եր, թե ինչը պիտի պաշտպանել:

Նա կատարյալ լրջությամբ կարող եր իր համար ընդունել այն բնութագիծը, վորը Մարքսը տվել ե Նապոլեոն Յերրորդի ժամանակվա ֆրանսիական բուրժուազիային. —«Դեռ միայն գողությունը կարող ե փրկել սեփականությունը, միայն ուխտազանցությունը—կրոնը, միայն անկարգությունը—կարգը»:

Նրա բարեկամներն այս հատկությունն անվանում եյին մտքի ճկունություն և դիվանագիտական բարձր տակտիկա, իսկ թշնամիները—սատանայական խորամանկություն: Բայց իսկապես Տյերը բոլորովին խելացի չեր. այն ամենը, ինչ վոր հանդիսանում եր նրա բնավորության ուժը, կարելի յե վորակել միայն մեկ բառով—ծախվող: Այդ հատկությունը նրա մեջ իսկապես վոր մեծ եր, խորաթափանց ու հանճարեղ: Յեվ, վորովհետև բուրժուական հասարակության բնույթի մեջ ծախվածությունը հիմնական գիծ ե կազմում և հանդիսանում ե այն լարը, վորն ամեն ինչին տոն ե տալիս, ուստի Տյերը անգիտակցորեն կարողանում եր աշխարհի բաները հասկանալ ավելի խոր, ավելի իսկական և ճիշտ իմաստով, քան նրա ժամանակաշրջանի բոլոր մյուս պետական մարդիկ: Վոչինչ չեր կասեցնում նրա հոտառությունը—վոչ հարգանքը դեպի մարդիկ, վոչ ել հարգանքը դեպի սկզբունքները: Նա զերծ եր կենսահասկացողության այդ թերություններից, վորոնք հատուկ եյին նրա միքանի, դեմոկրատիայի առողջ ազդեցություններին չփվող ժամանակակիցներին:

Մարտի 18-ի փարիզյան դեպքերը նրան հանկարծակիի բերին: Նա դեռ նոր եր իրեն ծախել Բորդոյի ազգային ժողովի չափավոր հանրապետականներին, Բիսմարկին և բոնապարտիստներին, խոստանալով պահպանել հանրապետությունը և միևնույն ժամանակ վերականգնել կայսրությունը, գերմանացիներին վճարել կես միլիոն և գերմանացիներին չվճարել և վոչ մի կոպեկ, բարձրացնել անգլիական ապրանքների մաքսադները և, ընդհակառակը, չբարձրացնել: Մարտի 18-ի ապստամբությունը նրան հանկարծակիի բերեց, վորովհետև միանգամից խճճեց նրա բոլոր պլանները:

Առաջին հարցը, վորը նա տվեց վոստիկանության չեֆին, յերբ շնչասպառ ներս վազեց Վերսալի պալատում իրեն հատկացված սենյակները, հետևյալն եր.— ովքե՞ր են նրանք:

— Ցուցա՛կը,—գոռում եր նա,—դուք փալաս եք, հոտած դդում և վոչ թե վոստիկանության չեֆ: Տվե՛ք ինձ պարագլուխների ցուցակը:

Պարագլուխներ չկային: Իսկապես, սկզբնական շրջանում պարագլուխներ չկային: Վոստիկանության չեֆն սկսեց ինչ-վոր անուններ տալ.

— Գուցե Ֆելիկս Պի՞ան, պարոն նախագահ....

— Ա՛խ, այդ քավթառ նապաստակի ք...բայց յես վաղուց գիտեմ, վոչ, նա չե, հետո՞...

— Ֆլուրանս, Թանվյե, Վարլեն: Սատանան տանի, Վերմեշ, իհարկե:

— Յեթե «իհարկե», ապա վո՞րտեղ եյիք դուք: Յեթե «իհարկե», ուրեմն դուք գիտեյի՞ք, կասկածո՞ւմ եյիք, գլխի՞ եյիք ընկնում, յենթադրո՞ւմ եյիք...կորե՛ք: Առավոտյան ինձ հասցրեք դրդիչների ու վրդովողների ճիշտ ցուցակը:

Սակայն հինգ որ հետո ել, յերբ նրան տվին յենթադրական դրդիչների մանրամասն ցուցակը, դրությունն ավելի պարզ չեղավ նրա համար: Իհարկե, մեղավոր եյին թե պրուդոնիստները, թե Բլանկայի կուսակցությունը, թե դեմոկրատական մամուլը, թե Ինտերնացիոնալի Ֆեդերալ խորհուրդը, թե Նապոլեոնյան անշնորհք գեներալները, վորոնք տանուլ տվին պատերազմը և հետո չկարողացան Փարիզը պաշտպանել պաշարման որերում. մեղավոր եր Գարիբալդին, վորը ազգասիրական զգացմունքներ վառեց, մեղավոր եր Ռոշֆորը, վորն անկեղծորեն խճճվեց պաշտպանության գործում, մեղավոր եյին լեհական և իտալական եմիգրանտները, վորոնք ապստամբությունը հռչակեցին իբրև աշխարհիս բոլոր աշխատավորների պատվի և առաքինության գործ: Մյուս կողմից մեղավոր եյին հենց նրա սեփական մինիստրները, վորոնք հայտնի եյին գլխավորապես իրենց պրիմիտիվ խաբեբայությամբ և

անշնորհքությամբ, մեղավոր եյին յեկեղեցին, անգլիական լրտեսներն ու հրեա բանկիրները։

Յերբ մարշալ Մակ-Մահոնը ներկայացավ նրան և առաջարկեց իր ծառայությունը՝ խռովությունը ճնշելու համար, Տյերը նրան ընդունարանում պահեց յերկու ժամ, բայց հետո դուրս թռավ, կատաղությունից չկարողանալով համբերել, և, կանգնելով թաթերի վրա, թույլ, դեղին ձեռը խոթեց մարշալի համազգեստի մեջ։

— Մռո՛ւթ,—գոռաց նա,—դուք, մարշա՛լ, իսկական մռութ եք։ Այդպես սանձարձա՛կ թողնել, հը՞, այդպես կազմալուծե՛լ, հը՞, յես խնչել եմ ձեր առաջարկի վրա, ահա թե ինչ։ Այո՛, այո՛։—Նա հետ ցատկեց մարշալից, ինչպես գնդակը պատից և ձեռքով ցույց տվեց դուռը։—Յես կկանչեմ ձեզ, մարշա՛լ, յերբ այդ պահանջեն հանրապետության գործերը։ Զբարեհաճե՛ք առարկել։

Հետո նա սկսեց կանչել գեներալ գեներալի հետևից, յերկարատև զրույցներ ունենալ նրանց հետ։ Ամեն որ համոզվելով, վոր նրանք ռազմապես բոլորովին տգետ են, նա սկսեց մտածել գերմանացիներից ոգնություն ստանալու մասին։ Նա միայն մի բանից եր վախենում,—վոր այդ միջոցի պատճառով կարող է կորցնել իր ազդեցությունը Ազգային ժողովի քաղքենիական շրջաններում։ Հետո նա վախենում եր նաև անգլիացիներից։ Ռուսներից ել եր վախենում։ Յեվ այդ բոլորը վերջիվերջո նրան այնքան հուզեց, վոր նա վոչ մի կերպ չեր կարողանում հեղափոխությունը ճնշելու միասնական մի սիստեմ նշել։ Սկզբում, Փարիզի քաղաքամասերի պետերի նախաձեռնությամբ, նրան առաջարկեցին զիջողական մի յելք,—միքանի բարենորոգումներ մտցնելու հիմունքով համաձայնության գալ Կոմունայի հետ։ Տյերը մերժեց, վորովհետև ինքն եր ուզում շնորհել այդ բարենորոգումները և վախենում եր ժողովի նոր ընտրություններից, վորոնք պիտի տեղի ունենային համաձայնությունից հետո։ Գեներալներն առաջարկեցին գրոհել քաղաքը,—նա նրանց չհավատաց։ «1809 թվին Ֆրանսիացիք քառասուն և մեկ որվա ընթացքում ռմբակոծեցին Սա-

րագոսսան,—ասաց նա քաջատեղյակ մարդու պես,—և վերջիվերջո, իսպանացիներին դուրս մղելու համար հարկավոր յեղավ ականել յուրաքանչյուր փողոց»։

Մերժելով առաջարկված ձևերը, նա ընտրեց այն միջոցը, վորն ինքն եր մտածել,—կաշառքը։

Նրա գործակալները, հենց իրենց ասածներին նայելով, վճարում եյին ում ասես։ Գործակալները նրան ներկայացնում եյին Կոմունայի գեներալների, խմբագիրների, բանվորների պարագլուխների և հաստատությունների պատասխանավորների ստացականները։ Նրանք պնդում եյին, թե բոլորը կաշառված են և պատրաստ են անձնատուր լինել գործադիր իշխանությունը գլխավորողին։ Սակայն Վերսալի գրոհները նախկին վայրի համառությամբ հետ եյին մղվում, իսկ լրագրերն ամեն որ լույս եյին տեսնում նորանոր անհաշտ լոզունգներով։

— Նրանք տանուլ կտան իրենց ինտերնացիոնալիզմով,—ասաց վերջապես Տյերը։—Փարիզցին չի ուզենա կռվել, յեթե այդ լինի անգլիական կամ ռուսական պրոլետարիատի գործի համար։ Ռուսական պրոբլեմները մեզանից վոչ վոքի չեն հետաքրքրում։

Նա ցուցմունք տվեց՝ պրովակացիայի յենթարկել Կոմունայի ինտերնացիոնալ քաղաքականությունը։ Նրա գործակալներն ամենուրեք գոռում եյին, թե Փարիզի նախաձեռնած գործը վոչ թե Փարիզի, այլ ռուսական, անգլիական ու լեհական գործ է։

Մի անգամ ռուսական կայսերական դեսպանության քարտուղար պարոն Ոբրեզկովը գործադիր իշխանության գլխին ծանոթացրեց նրա ագիտացիայի անսպասելի արդյունքների հետ։

— Գիտե՞ք, պարոն նախագահ,—ասաց նա,—վոր հյուսիսի և Պա-դե-Կալեյի հանքային շրջաններում աշխատում են լեհերը, Նորմանդիայում և Միջերկրական ծովի ափերում՝ չինացիք, Բորդոյի ապակեգործարանում՝ նեգրերը, Բրիեյի յերկաթահանքերում՝ իտալացիք ու գերմանացիք, Լիոնում՝ հույները, Պիրենեյի ջուտի և անտառային արդյունաբերության մեջ՝ իսպանացիք և վոր Ֆրանսիայի հյուսիսային մասի բո-

լոր սեզոնային բանվորները բելգիացիներ են։ Յեվ գիտե՞ք արդյոք, պարոն նախագահ, վոր Փարիզի արվեստանոցների ինտերնացիոնալ քաղաքականությունը խիստ դրականապես են յուրացնում բանվորների բոլոր այդ վոչ ընիկ խմբակները։

Այս խոսակցությունից յերեք որ հետո Տյերը կանչեց Մակ-Մահոնին։

— Գրոհ, կաշառք, տնտեսական պաշարում։ Այսպիսով մենք նրանց արագությամբ կճզմենք,— ասաց նա արիությամբ։

Զվստահելով մարշալների ընդունակություններին, նա ինքն ամեն որ այցելում եր հրացանաձգության վարժությունները, վերստուգում եր բանակի մատակարարումը և ներկա յեր լինում սպաների քաղաքական պարապմունքներին։ Յեթե նա իր տրամադրության տակ ժամանակ ունենար, կընտրեր վոչ թե ուղղակի ու բացահայտ պատերազմ, այլ, ընդհակառակը, անուղղակի հարվածների յեղանակը, կօգտագործեր Կոմունայում հնարավոր սովը, կուսակցական-խմբակային տարաձայնությունները, նրա առաջնորդների անփորձառությունը և շատ ռազմական մասնագետների անհավատարմությունը։ Նա կգերադասեր ճակատ առ ճակատ կովեցնել յակոբինյաններին ու բլանկիստներին, պրուդոնիստներին և Ինտերնացիոնալի կողմնակիցներին, վորպեսզի Փարիզի բանվորները քսան տարի կանխարար ուխտեյին՝ չհավատալ կոպեկանոց թերթուկների այդ բոլոր պարոններին։ Նա սկզբում չեր ծրագրում ֆիզիկապես վոչնչացնել Փարիզի բանվորներին, վո՛չ, նա հույս ուներ ապստամբներին ավելի «խաղաղ» ճանապարհով յենթարկել իրեն, նրանց մեջ սերմանելով այն հավատը, թե իրենց առաջնորդները ծախվող են, թե բուրժուազիան ամենակարող է և թե իրենք պետք է գիտակցեն իրենց հասարակական անկարողությունը։ Սակայն դրությունն արագ վճիռներ եր պահանջում։ Ապրիլի յերեսունի ընտրություններից նա չշահեց։ Բիսմարկն որը որին ավելի պահանջկոտ եր դառնում, Փարիզը հետզհետե կազմակերպվում եր, Բորդոյի Ազգային

ժողովն որը որին ավելի անհնազանդ եր դառնում։ Մայիսի սկզբին նա հաստատապես վորոշեց Բիլանկուրի կողմից գրոհել քաղաքը։ Սեն-Կլու և Պուան-դյու-Ժուր դարպասները նշվեցին իբրև գլխավոր հարվածի կետեր։ Պրուսական շտաբի պետ գեներալ Ֆաբրիցիուսի հետ նա համաձայնության յեկավ, վոր գերմանացիք ոգնեն Վերսալին քաղաքը պաշարելու համար, և Սենայի վրա, Շարանտոնի մոտ յերևան յեկան արգելիչ ուղեկալներ։ Քաղաքի բարձրագույն ինտելիգենցիան նախազգուշացվեց, թե գործադիր իշխանության գլուխը ուշադիր հետևում է դեպի հեղափոխությունը ցույց տված նրա վերաբերմունքին և նորմալ չի համարի Կոմունայի նախաձեռնություններին ցույց տրվող մասնակցությունը։ Միակ մարդիկ, վորոնց նա խրախուսում եր, վոր մնան իրենց տեղում և աշխատեն առանց ձեռները ծալելու, դրանք արտաքին գործերի մինիստրության և Ֆրանսիական բանկի աշխատակիցներն եյին։ Քանի դեռ Կոմունան չեր համարձակվում հրապարակել դիվանագիտական արխիվները և չեր գրավել բանկի մառանները, Տյերը կարող եր հանգիստ լինել պատերազմի վախճանի նկատմամբ։

Հյուսիսային Ամերիկայի դեսպան Վաշբերնը, Վերսալում տեսնվելով Տյերի հետ, հավանություն տվեց նրա բոլոր նախաձեռնություններին։ Վաշբերնը մնում եր Փարիզում և գիտեր այն ամենը, ինչ-վոր այնտեղ կատարվում եր, նույնիսկ այն, ինչ-վոր պիտի կատարվեր։

— Մի՛ խղճացեք նրանց, Թանգագին նախագահ,— ասում եր նա,— մի՛ խնայեք նրանց։ Վճարեցեք մահվան չեկերով։ Այդ վալյուտան միշտ լավ է գնում։

Յեվ Տյերը մի անգամ ևս հաստատեց իր պլանը,— Փարիզ մտնել Պուան-դյու-Ժուրի դարպասով։ Մակ-Մահոնին նա կարգադրեց գտնվել ռազմաճակատի մոտ, Սեն-Կլույում, իսկ ինքն այնտեղ սկսեց գտնվել շաբաթական չորս որ և մի անգամ համարձակվեց նույնիսկ դիտել Բիլանկուրի դետանցը, հայտարարելով,— ինչպես հետո գրեցին լրագրերը,— համառ արիություն։ Այդ որը, սակայն, ռազմաճակատում հանգիստ եր։

Ապրիլի վերջին յերևան յեկավ Լե-Մեր-դե-Բոֆոն անունով մեկը,—նավատորմիղի պաշտոնաթող սպա, Կայեննայի նախկին նահանգապետ: Նա վճռեց ճարպիկ մանևրների միջոցով քայքայել կոմունան, սխալներ առաջացնելով վարչության մեջ, կազմալուծելով հասարակական հիմնարկությունների աշխատանքը: Նրա օգնականներն եյին՝ բանկի ծառայող Լարոկը և պաշտոնաթող սպա Լանյեն:

Ապրիլի քսանութին կոմունարները թողին Իսսի ամրությունը:

Գարունը նոր եր սկսում գետը շարժել: Ջուրը դանդաղ տաքանում եր: Քամին, սողոսկելով կամուրջների տակ, ամբողջ գիշերները փոսեր եր փորում ջրի մեջ և պոկում եր ափերին կապված մակույկները: Կուպրի հոտը, վորը միշտ լինում ե զվարթ, հոսանուտ գետի վրա, յերկար ժամանակ չեր զգացվում Սենայի վրա: Գետն իրեն պահում եր այնպես, վոր կարծես առհավետ կորցրել եր իր շարժունությունը, և, այժմ չցանկանալով հոսել, աննպատակ դեգերում եր նավակայանների մոտ, խաղում եր շոգենավերի հետ և ձմեռային նավամատույցներում, իր ալիքներով մտազբաղ պլպլում եր այն իրերը, վոր քաղաքը գցում եր նրան: Մայրամուտից հետո նա խաղաղվում եր, ինչպես ձմեռը: Առավոտը նրա վրա դժվարությամբ եր բացվում:

Քաղցած վիճակում խմելով մի բաժակ տաք սուրճ, իբրև միջոց առավոտյան մեգերի ազդեցության դեմ, ինչպես խորհուրդ եր տալիս սանիտարական կոմիտեն: Կլարա Ֆրունյեն դուրս յեկավ հրետանավակի տախտակամածը:

— Ի՛նչ անողորմ ե աստված,—ասաց նա,—արևն ել չի բաց անի վրադ:—Կլարան պատրաստվում եր ափ իջնել, գնալ ճաշարան և մի զույգ արլեկին*) պատվիրել:

— Անցե՛ք ձեր հրասանդի մոտ, Կլարա Ֆրունյե,—ասաց հրամանատարը:— Մենք մեկնում ենք:

Ոթեյի ուղանցույց կամուրջի մյուս կողմում աջ ու ձախ ափերի բերդապատերը կիսով չափ իջել եյին ջրի մեջ, կարծես ուզում եյին այդպես անցնել գետը և փակել նրա ճանապարհը: Բիլանկուր կղզու մոտ «Եստոկ» հրետանավակին հասավ լողացող մի մարտկոց: Աջ կողմից անցնելով կղզին, նավերը բաժանվեցին: Մարտկոցըն, իբր նշավակ, ընտրեց Մեդոնը: «Եստոկն» սկսեց կրակել դեպի Բիլանկուրի ծայրամասերը: Այս վայրերում Սենայի գավառային տեսքը ծիծաղեցնում եր զորախմբերին:

Ափերի ցածրությունը, թաց ու կեղտոտ տղմուտներում յեղած խարխուլ մակույկները, վտիտ ուռիների թփերը, մինչև վորովայնը ջրի մեջ կանգնած կովերը,—խորը զարմանք եյին առաջացնում: Փարիզի սահմաններում գտնվող Սենայի վեհաշուք անդորրությունից հետո այդ Սենան թվում եր՝ դիտավորաբար գզգզված, խլշկոտած, վո՛չ լուրջ: «Եստոկի» վրա խփեց ավագի ժամացույցը, կարծես արտասովոր վոչինչ չեր կատարվում: Նրա խուլ զնգոցը հիշեցնում եր գյուղի յեկեղեցու զանգակը: Բիլանկուրի առափնյա փողոցի վրա, մի մեծ տան կտուրին շարժվեցին Վերսալի նշանարարի կարմիր դրոշակները: «Եստոկ»-ում հրամայվեց կրակ բանալ:

Մեդոնն ուղղակի չտապում եր ծայրեծայր բոցավառվել: Մեկ արկից, վորտեղ ել նա ընկներ, բռնկվում եյին շենքերը. տարբեր տեղերում կորցնելով վագոնները, շոգեկառքերը սկսեցին փախչել Վերսալի կողմը:

Բիլանկուրն ավելի կայուն եր թվում: Արկերի պայթյունները կորչում եյին նրա խիտ շենքերում, գրեթե

*) Արլեկինները տապակածի մնացորդներ եյին, վորոնցից ճաշարաններում եժան բուլյոններ եյին պատրաստվում:

առանց վնաս հասցնելու: Միայն Բիլանկուրի առջևի գետանցում սկսվեց աշխույժ իրարանցում: Այստեղ արկերը չարաճճի կերպով ցրում էին ալյուրի պարկերն ու աղած մսի տակառները: Զինվորները վազվզում էին ափում, ձիերը կտրում էին լծափոկերն և ջարդ ու փշուր անում սայլերը: Ափը ծառս էր լինում ավազի չատրվաններով և հող էր ցանում գետի վրա:

Կլարան զբաղված էր իր հրասանդով, ինչպես տնային վառարանով: Շրջազգեստը վոտների մեջ առած և ծնկներով պահած, վորպեսզի կարողանա ազատ շարժվել, Կլարան նույնիսկ ժամանակ չէր ունենում գլուխը քորելու: Ավերման վոգին համակել էր նրան խիստ հոգացողությամբ: Նա բնազդով ըմբռնում էր, թե ուր պիտի ուղղել իր չարաճճի յերկաթի բաժինը և ջղայնանում էր, յերբ չէր խփում ուզած կետին: Գետափին արդեն մարդիկ չէին յերևում: Նա արկն ուղղեց դեպի ինչ-վոր վրաններ և նրանց ուղիղ քառանկյունին դարձրեց կեղտոտ, ծխացող մի կույտ: Նա խփում էր ալյուրին: Ծիծաղը խեղդում էր նրան: Նորից— ալյուրին: Արկն ընկնում էր ալյուրի սպիտակ ամպի մեջ և կենդանի արարածի պես թպրտում էր այնտեղ: Ալյուրը գնում էր գետի վրայով, սպիտակացնելով մարտկոցի տախտակամածը:

Այդ ժամանակ լաստանավի վրա աշխատողը, խուճապային հերոսությամբ համակված, կացնով խփեց իր տապանի հատակին և կտրեց պարանը: Կլարան հետևյալ արկով գետն ազատեց այդ փտած նավակի ջղաձգություններից: Նա ուզում էր խփել նաև գետանցի մյուս կողմում գտնվող ձորակին, սակայն «Եստոկը» հետ դարձավ, իր հետևից կանչելով մարտկոցը: Մեդոնի անտառից արագ սլանում էր մի թնդանոթ: Կլարան հեռացավ հրասանդից և ուղղեց շրջազգեստը:

— Թխեցի ինչքան կարող էյի,— ասաց նա, խորը հոգոց հանելով:

Արագությամբ անցան կղզին և ահա ուղանցույց կամուրջը ծածկեց նրանց ցանցավոր ստվերով: Նավա-

կայանում սպասում էին մանուկները, պատրաստվելով ընդունել պարանը:

Մի ժամ հետո Կլարան պարում էր ճաշարանում: Նա ճարպկորեն շարժում էր վոտներն և պտտում շրջազգեստը, թափելով իրենից լվերը: Այստեղ պատմեցին, վոր վերսալցիների արկից սպանված մի աղջկա գրպանում գտնվել են ականոցներ և թուղթ, վորտեղ գրված է յեղել, թե նա հիվանդապահ է և քառասուն տարեկան:

Կլարան քիչ մնաց թուլանար ծիծաղից:

— Անողորմ տե՛ր,— ասաց նա ծիծաղելով,— ինչե՛ր են կատարվում որը ցերեկով:

Հետո մեքենավար Արիստիդը նրա համար գնեց վեց արլեկին՝ Թուչունի մոից, և նրանք յերկուսով վերադարձան մարտկոց: Արիստիդը յերգում էր մողայական մի ռոմանս,— «Յեթե սիրտդ թևավոր է, թռչնի անուն տուր նրան»:

Կլարան այդ նուրբ կոմպլիմենտին լրջորեն պատասխանեց.

— Ցեթե ուզում ես ինձ հետ մտերիմ լինել և այլն, յես ուղղակի կասեմ,— իմ սիրտը՝ ինչպես ջրասույզ բադ: Մերթ նա կա, մերթ չկա: Նկատի ունեցիր, Արիստիդ, յես սիրում եմ ամենալավ վարմունքը:

ՄԱՅԻՍԻ ՅԵՐԵԿԸ

Բուիսսոն

Այն նկարը, վոր Բուիսսոնը մտադրվել էր նկարել, չէր ամփոփվում կտավի վրա: Նա փորձեց հազար կոմբինացիաներ: Մերթ ուզում էր ամեն ինչ նկարել այնպես, ինչպես յեղել էր,— այն տունը, վորի մեջ անցք բացին, լապտերապահը, հրամանատար Բիգուն, ճյուղակոտոր բուլվարը և լեյտենենանտի պահարանը «Լուիզետա»-ում: Մերթ մտածում էր պատկերել մի ինչ-վոր վերացական, սիմվոլիկ բան, վորպեսզի հենց գույներում, շարժումների և լույսի վերարտադրման ձևերում լինի նորություն և խիկական հեղափոխականություն: Վաղուց նրան մեղադրում էին հոգեբանականության պակասության համար և այժմ այդ նրան անհանգստացրեց, թեպետ նա միշտ պահպանում էր Կուրբեյի այն վոսկե կանոնը, թե «արվեստի մեջ յերևակայությունը կայանում է նրանում, վոր գոյություն ունեցող իրը արտահայտվի միանգամայն լրիվ, և վոչ թե նրանում, վոր այդ իրը յենթադրվի կամ հնարվի»:

Առավել ևս նա յերբեք չէր փորձում յենթադրել իր նկարների այդքան պարտադիր հոգեբանականություն, կարծելով, վոր արվեստի, վորպես մաթեմատիկական դիսցիպլինայի մեջ, հոգեբանականությունը վոչ թե ձևե, այլ բոլոր ձևերի կոեֆիցիենտը, և հարկավոր է միայն ճշմարտություն, սոսկ ճշմարտություն և նրանից բացի ուրիշ վոչինչ:

Աշխատելով մի նկարի վրա, նա մոտ տասը ուրվագիծ պատրաստեց: Հիմա նա միտք հղացավ ցուցադրել այդ ուրվանկարները:

Նա ընտրեց «Դատարկ բնակարանների ռեկվիզի-

ցիան», վորը նկարված եր վրձինով, առանց ներկատախտակի գործադրության: Վրձնահարվածներն ակոսիկներով այստեղ աչքի եյին ընկնում դեմքերի կենդանագրության մեջ, սենյակի կահավորանքը պատկերացված եր առանց մանրամասնությունների ավելորդ նյութականության, իսկ նյութականությունն արտահայտվում եր հենց մարմինների կշռով, շարժումների կարողությամբ և սև ումբրահողի տոնով, վորի վրա հակամետող դեղին ու կապույտ գույները բռնկվում եյին միայն փոքրիկ կետերով, վորպես տարածվող լուսեղեն մի բիծ: Այդ նկարը նա արտադրեց յերեք թե չորս որում, քաղաքամասի վարչության կողմից մոբիլիզացիայի յենթարկվելուց և մի խումբ լիազորների հետ (վորոնք բնակարաններ եյին տրամադրում ազգային-գվարդիականների ընտանիքներին) իր թաղամասում շրջելուց հետո:— Մի կին յերկչոտությամբ ու զգուշությամբ մտնում եր հսկայական սենյակը, վորը պատած եր կաղնու մթագույն տախտակներով: Նա դիտում եր իր շուրջը, սպասելով դարանակալների: Տաճկական բազկաթոռին մեկնված ֆեդերատը ծիծաղելով դիտում եր նրա անվճռականությունը: Նա զմայլվում եր իր գերազանցությամբ: Մոր շրջազգեստից բռնել եյին յերկու յերեխաներ, վորոնք սպառազինված եյին փայտյա հրացաններով, կարմիր չթի կտորներով և «փամփուշտի պարկերով»— գլանակի դատարկ տուփերով: Մանուկների աչքերում անսահման հրճվանք եր յերևում սենյակի բազմաթիվ նոր իրերի հանդեպ, վորոնք շուտով պիտի կտրատեյին նրանք:

Բուխսոնը մի քիչ մտածելուց հետո ցուցահանդեսի համար ընտրեց նաև «Նեյլի բնակիչների եվակուացիան»: Այս նկարի ընդհանուր ձևավորման վրա անկասկած, ուստի և նրա համար առանձնապես անհաճելի ակներևությամբ նկատվում եր Կուրբեյի «Որնանի թաղումը»-ի ազդեցությունը: «Եվակուացիան» նմանվում եր վորմանկարի: Իբր ֆոն՝ ծառայում եր կանաչ յերկինքը, առջևում զետեղված եյին դիմանկարները.— Կոմունայի հինգ անդամներ— Բերժերեն, Ժոաննարը,

Ուդեն, Ֆորտյունեն և Եդը վողջունում եյին փախստականների խմբի ներկայացուցիչներին: Կանայք գրկել եյին կապտագույն յերեխաներին, պառավներն ունեյին մուգ-կապույտ լնդերք, բաց-կապույտ թշեր, տղամարդիկ յեղների պես թափված եյին աղբի վրա:

Նա այս բոլորը նկարեց բնականից, ապրիլի 25-ին, զինադադարի որը:

Այս նկարներին նա ավելացրեց տասնյակ ուրվանկարներ— մատիտով ու ջրաներկով նկարված,— «Լուիզետ»-ի բարիկադը, կապիտան Լեֆեվրի նկարը, տոնավաճառի առևտրական կրպակը, վորտեղ կուտակված եյին սապատավոր Տյերին նմանվող կարկանդակները,— «Խուզարկությունների» սերիան և 185-րդ գումարտակի մի ֆեդերատի գնդակահարումը վերսալցիների ձեռքով, Բել-Եպինի մոտ:

Հանձնարարելով վորդուն նկարները տանել Տիրոյի վաճառատունը, Տուրնոն փողոց, 15, նա դուրս յեկավ թեթև, վորպեսզի ճանապարհին կարողանա մտնել նաև Կուրբեյի մոտ: Ծերունին չկար վոչ Քաղաքային խորհրդարանում, վոչ Նկարիչների խորհրդում և վոչ ել նույնիսկ շվեյցարական գարեջրատանը:

«Սեվաստոպոլ» բուլվար

Լուսաբացին ծաղիկներով բարձված սայլերը ձգվեցին դեպի կենտրոնական շուկա: Սոված ճնճղուկները քրքրում եյին սայլերից ընկած վարդի կոկոնները: Խոլորձները բացվում եյին փողոցահատերում, վարդերը փթթում եյին բոլոր կիոսկերում, իսկ հափրուկներն ու մեխակները— յուրաքանչյուր կոճկառում: Դեղատների ցուցափեղկերի բազմագույն սրվակների միջև ժպտում եյին մանուշակները և կանաչեղենի կրպակի բանջարեղենների միջև՝ անթառամները: Բուրժուազիայի հեռանալուց հետո չքացավ ծաղիկների խոշոր գնորդը, նրանց սկսեց խլխլել փողոցը, նրանք հանկարծ անբնականորեն շատացան, քաղաքը պճնվեց ծաղիկներով, ինչպես Նիցեցյալ:

Պուասոնյեր բուլվարի յեվ Ֆոբուրգ Մոնմարտրի փողոցի անկյունում, գարեջրատան մոտ փակցված աֆիշան

Այն քաղաքացիները, վորոնք ցանկանում են բանջարանոցներ մշակել քաղաքային ամայի հողերում և անտեր տների բակերում, այսօր, յերեկոյան ժամը 8-ին հրավիրվում են քաղաքային վարչություն, 94-րդ սենյակը, ագրարային հանձնաժողովի նիստին:

Պառավ կանանց խոսակցությունը Նյույնի ճեմելիքում

— Մեզանում, Փարիզում, վորի մոդաներին հիմա վոչ մի յերկիր չի յենթարկվում, վորն իր խելառությունների պատճառով կորցրեց ճաշակի ու չքեղության ամբողջ իշխանությունը Յեվրոպայի վրա,— մեզանում այժմ կա մի գլխավոր, մեծ, ընդհանուր մոդա,— աղքատությո՛ւն: Իսկական, նուրբ հասարակության մեջ Փարիզի բոլոր նոր հնարքներն անվստահություն և նույնիսկ բացարձակ դիմադրություն են առաջ բերում: Որինակի համար, վերցրեք կանանց գլխարկների նոր ձևը, վորոնք շատ փոքրիկ են, շատ կորոված և ճակատի վրա թեքված: Եդ ձևը, ասում եմ ձեզ, ամենաուժեղ ոպոզիցիայի յե հանդիպում: Յեվ ճիշտ վոր, այլանդակ ձև է: Գլխարկն ուղղակի մազակալի յե նման:

— Դեմոկրատիզացիա՞: Գո՛ւցե: Բայց դրա մեջ շատ քիչ գեղեցկություն կա: Կամ թե այս ի՞նչ բան է: Արյունահեղ կռիվների պատճառով և, հավանորեն, խոլերայի նկատառումով մոդելագործները ցուցադրել են խիստ գեղեցիկ սգահագուստների մոդելներ: Անկարելի յե, ասում եմ ձեզ, պատկերացնել դրանից ավելի տխուր— կոկետ մի բան:

Եղանակը

Նա չեր կարողանում կանգ առնել մի վորոշ բանի վրա: Արեգակը յեռանդով դեպի ծայրամասերն եր նետում փոթորկաբեր ամպերը և Պեր-Լաշեզ գերեզմանոցի վրա անձրև եր գալիս: Սենայի ափերում անձրևը վազում-անցնում եր մեկ-յերկու փողոցներով,

և շատ հրապարակներ, նույնիսկ գտնվելով նրա վազքի ճանապարհին, չոր եյին և առատ փոշի եյին բարձրացնում, վորովհետև անձրևի վրա հույս դնելով, նրանց, առավոտից սկսած, չեյին ջրում:

Բուխսոնն ոմնիբուս է նստում

Պարզվեց, վոր Կուրբեն Հոֆմանի գարեջրատանն է: Բուխսոնը սլացավ այնտեղ: Փառք աստծո, վերսալցիներից յետ գրավեցին Իսսի ամրությունը: 3-րդ գումարտակի հրամանատարը հաղորդեց, վոր մանկատան սաները, վորոնք սպասարկում եյին 4-րդ ամրության թնդանոթներին, մեծ քանակով կոտորվում եյին, բայց ամուր մնում եյին իրենց տեղում: Սատանան նրանց տանի, այդ բոլորին հետևելու հնար չկա, բոլորը նկարել անկարելի յե:

Կուրբեն Կամելլինայի հետ զուսպ ու յերերուն քայլվածքով դուրս յեկավ Հոֆմանի գարեջրատանից: Նա հագել եր յերկար, կապույտ բաճկոն, վորը ներկոտված եր,— և կիսաբաց պատռվածքով խայտաբղետ անդրավարտիկ:

— Հենց սա յես անվանում եմ գեղարվեստ,— ասաց նա, հիշելով ճաշից առաջ յեղած խոսակցությունը:— Ճի՞շտ է, Կամելլինա:

Նա խորը մի ցանկություն զգաց կանգ առնել և ավելի պարզել իր միտքը: Բանը նրանում չեր, վոր նա խմած եր. գարեջուրն առաջվանից վատ եր:

— Նկարիչը պետք է ընդունակ լինի տասն անգամ ջնջել և վերափոխել իր նկարը: Վորպեսզի կարողանա ապացուցել,—հասկացա՞ր,—վոր ինքը դիպվածի կամ ջղերի ստրուկ չէ:

— Այդ ճիշտ է,—ասաց Կամելլինան: Նա բռնեց Կուրբեյի արմունկն և առաջարկեց.— գնանք ինձ մոտ՝ դրամահատարան: Դու դեռ չես յեղել:

— Ճիշտ վոր, գնանք,— ուրախությամբ համաձայնվեց Կուրբեն:— Յես այնտեղ անպայման մի վորևէ խորհուրդ կտամ քեզ:

Նա այժմ վոչ մի կերպ չէր ուզում մենակ մնալ:

— Դու վերին աստիճանի լուրջ մարդ ես, Կամելլինա,— ասաց նա հուզված:

Նրանք երկար ժամանակ անցնում էին սայլերի, յերկանիվ սայլակների, ձեռնասայլակների, ռեկվիզիցիայի յենթարկված թանգարժեք իրերով բեռնված ձիերի բազմության միջով, վորոնք բռնել էին դրամահատարանի ներքին հրապարակը: Այստեղ նրանց հասավ Բուխսոնը:

— Ա՛յ, սատանան տանի, ա՛յ քեզ հեղափոխություն,— գոչում էր Կուրբեն:

Նա սայլերից վերցնում էր մոմակալները, ջահերը, շուռ ու մուռ տալիս նրանց:

— Ո՞ւր է ձեր նկարատախտակը, Բուխսոն: Ա՛խ, դուք, ջահել սատանա: Ինչո՞ւ չեք նկարում մի այսպիսի նատյուր-մորտ, տեսե՛ք: Ի՛նչ հետաքրքիր է այս տեսարանը: Հապա մի նայեցե՛ք, այնտեղ ծերուկն արծաթե դույլով ջրում է իր յաբուին: Տեսնո՞ւմ եք: Ինչպե՛ս փայլում են յեկեղեցու ջահե՛րը: Հապա սա: Ահա թե վո՛րտեղ է նա, հեղափոխությունը:

Նա մոռացավ, վոր քիչ առաջ խորհուրդ էր տալիս նրան ցուցադրել իր նկարները, և ձեռքը խփելով Բուխսոնի ուսին, շարունակեց.—

— Ա՛յ, ասում եմ ձեզ, նստեցեք հենց այստեղ ու նկարեցեք: Վորոնելու ի՞նչ ունեք: Թողե՛ք այն ամենն, ինչ վոր արել եք և սկսեք նորից, սրանից:

Ծերունին նման էր այն հավին, վորին խանգարում են ձու ածել: Նրա մասին այնքան անեկդոտներ էին շարադրված, վոր յերբեք չէր կարողանում դուրս գալ այդ անեկդոտների արատավոր շրջանից: Նա ապրում էր, անցնելով մեկ անեկդոտից մյուսին, նույնիսկ ձևափոխելով նրանց:

Այժմ, մռայլ հայացքով չափչփելով բակը և հուզված քրթմնջալով՝ «հը՛մ, ա՛յ թե ինչպիսի բաներ... այո՛: Ահա հենց այստեղից էլ պիտի սկսել... այստեղից էլ պիտի սկսել, ասում եմ ձեզ... Հեղափոխությունն ամբողջովին այստեղ է, վերցրեք...»—նա հիշեցնում էր

49 թվականի իր վերաբերյալ անեկդոտը, յերբ Վեյլ հետ միասին նկարում էր Մորեյ գյուղակը: Նրա վրձինը դեռ նոր էր կտավի վրա դրել ինչ-վոր մի գորշավուն տոն: «Մի անցեք, տեսեք, խնդրեմ, ինչ է ընկել վրձինիս տակ»,— ասում է նա Վեյլին: Առարկան հեռու յեր և Վեյլը չկարողացավ տեսնել: Նա նայեց պատկերին և տեսավ ցախի մի կապոց: Ա՛յ, քեզ բան,— նա մոտեցավ առարկային— և իսկապես— ցախի կապոց էր: «Ինձ հարկավոր չէր այդ գիտենալ,— ասաց Կուրբեն,— այո, յես արի այն, ինչ վոր տեսա»:— Նա վեր կացավ, հեռացավ կտավից և զարմանալով ասաց.— «ա՛յ քեզ բան, իսկապես վոր ցախ էր»:

Բուխսոնն զմայլանքով նայում էր նրան: Կուրբեն ծանր շնչում էր: Նրա լիքը կզակը հաճախակի դես ու դեն էր դառնում:

— Արծաթը սայլերի վրա,— պատասխանեց նա,— յես յերբեք նման բան չեմ տեսել:— Նա բարձրաձայն ու գռեհկաբար ճպճպացրեց շրթունքները, ինչպես այն դերասանը, վորը տուփոտ ծերունու դեր է խաղում:

Բուխսոնը գլուխը նրա ուսին թեքած՝ ասում էր.

— Յես գիտեմ, հեղափոխությունը կառավարում է իմ ձեռքը: Յես գիտեմ: Բայց արդյոք յես ոգնո՞ւմ եմ հեղափոխությանը: Արդյոք յես հարկավո՞ր եմ նրան իբրև արվեստագետ: Ինչո՞վ, ասացեք, ինչո՞վ եմ հարկավոր նրան: Այդ ինձ տանջում է: Յես ինքս ինձ չեմ տեսնում:

Կուրբեն շրթունքները ճպճպացնելով ասում էր.

— Ա՛յ, նստեք այստեղ ու նկարեցեք: Յերբեք չպիտի ընտրություն անել, վոր իբր թե այստեղից սկսվում է հեղափոխությունը, իսկ այնտեղից վոչ հեղափոխությունը, կամ այստեղ նա կա, իսկ այնտեղ չկա: Այդ բոլորովին դատարկ բան է: Նկարեցեք, բարեկամս, այս նշանավոր պատմությունը:

Բուսախոնը նրան ասում էր.

— Յես չգիտեմ ինչ անեմ ձեռներս ու վոտներս: Բացի սրտիցս, ամբողջ մարմինս ինձ մի անտանելի բեռ է թվում: Յես ամբողջ էությամբս յերջանիկ եմ այս

սքանչելի անհանգստությամբ: Ի՞նչ անել: Ցես յերբեմն մտածում եմ—նկարե՞լ արդյոք: Գուցե ուղղակի վերցնել հրացանը և գնալ գումարտա՞կ:

Կուրբեն հետ նայեց և կրկին կկոցելով աչքերը, ինչպես անում եր միշտ, դիտեց նկարի համար հետաքրքիր կյանքի մի անկյուն ու ասաց անհոգաբար և խիստ համոզված, մի անգամից պատասխանելով Բուխսոնի միքանի կասկածներին.

— Ինչով ուզում եք, նկարեցեք թեկուզ նույն հրացանով:

Նա արագ գնաց Կամելինայի հետևից, իր հետ քարշ տալով Բուխսոնին:

— Վախենո՞ւմ եք: Ինչի՞ց եք վախենում; Բոլորովին դատարկ բան է: Իմ կարծիքն այս է.—մարդու սիրտը միատեսակ է: Յեթե նա չկա աշխատանքի մեջ, չկա վոչ մի տեղ: Արդյոք դուք չե՞ք չափազանցեցնում ձեր սրտի վերաբերմամբ,—խստորեն հարցրեց նա:—Թե՞ գուցե և վոչ մի բանի չեք հավատում,—ավելացրեց նա վոչ հարգանքի տոնով, և, դադարեցնելով խոսելը, առանց քաշվելու հենվեց Բուխսոնի ուսին, վորովհետև շնչահեղձությունը նրան խանգարում եր քայլել:

Կուրբեն, Բուխսոնը, Կամելինան յեվ Ֆայգուլյա Ֆրանսուա

Նրանց մոտ վազեց ակնագործ Ֆայգուլյա Ֆրանսուան, վորը միաժամանակ հրեա յեր, ֆելլահ և թուրք: Նրա դեմքից դանդաղ, վոչ առատորեն հոսում եր քրտինքը, դեմքը նմանեցնելով մի կտոր թարմ պանրի:

— Պարոննե՛ր, կորչո՛ւմ են անկրկնելի տարիները,—ասաց նա շնչելով:—Լսեցե՛ք, յերեկ... Մոի՛զ:

Անչուք հագնված մի հնավաճառ մոտեցավ նրան:

— Մոիզ, պարոն արտիստներին պատմիր քեզ հետ յերեկ պատահած դեպքը:

Կամելինայի ձայնը ընդհատեց նրան.

— Բավական է գոռալ,—ասաց նա քաղաքամասի գործակալներին, վորոնք պահանջում եյին շտապ ընդունել իրենց բերած ինչքը:—Այստեղ կուտակարան չե,

տղերք: Ինձ վոսկի և արծաթ ե պետք: Ինչ վոր չվերցնեմ, յետ տարեք: Պա՞րզ ե:

— Քաղաքացի դիրեկտոր Կամելինա, յես պետք ե ձեզ մի քիչ վոսկեդրամ առաջարկեմ,—ասաց Ֆրանսուա Ֆայգուլյան:—Յես ձեզ լավ վոսկեդրամ կվճարեմ այնպիսի իրերի համար, վորոնք ձեզ համար նշանակություն չունեն:

— Մենք վոչ մի առևտուր չենք անում:

— Ձեզ հարկավոր ե վոսկի,—ընդհատեց նրան ակնագործը,—յես ձեզ վոսկի կտամ: Ինչո՞ւ վոչնչացնել սքանչելի տարիները: Քաղաքամասի գործակալներն աստված գիտե ինչեր են հավաքել: Կարծում եք խուզարկությունն եքսպերտիզա՞ յե:

— Այն ամենը, ինչ վոր թանգարժեք ե, քաղաքացի գնահատողները կվերցնեն թանգարաններին հանձնելու համար,—ասաց Կամելինան:

— Յես արդեն գիտեմ, վոր նրանք կվերցնեն,—նորից սկսեց խոսել ակնագործը:—Վերջին քսան տարում բոլոր լավ իրերը չեն պրծել իմ այս ձեռներից: Բայց յե՛ս, յես գիտեմ, թե ինչ բան ե հեղափոխությունը, քաղաքացի՛ դիրեկտոր: Փառք իմ ծերացյալ աստծուն, կյանքումս յերեք հեղափոխություն եմ տեսել:

Նա բռնեց Կուրբեյի բաճկոնից:

— Հեղափոխությունը չի պահպանում իրերը, վորոնք թանգ են ինչպես հուշ: Իսկ ի՞նչ բան ե իրը, Կամելինա: Ձե՞ վոր դուք հին բրոնզագործ եք, ինչո՞ւ յեք ծաղրում նվաստիս: Կան իրեր, վորոնք գին ունեն, կան նաև իրեր, վորոնք արժանի յեն գնի: Հը՛մ, լավ, Պեգիի պատրաստած բաժակները դուք կտաք թանգարաններին, մոմակալները կնետեք հալոցները, իսկ ի՞նչ կանեք, որինակի համար, 50 գրամ ծանրությամբ արծաթե խաչը: Իսկ այդպիսի խաչի համար, յեթե նա ինձ պետք լինի, յես ձեզ տալիս եմ վոսկով հարյուր ֆրանկ, նույնիսկ յերկու հարյուր, վորպեսզի դուք նորից չչռեք ձեր աչքերը:

— Իսկ վորա՞կը, վորա՞կը,—հարցրեց վրդովված Կուրբեն,—վորակը ձեզ չի՞ հետաքրքրում:

— Մոսյո արտիստ, ինձ հետաքրքրում է վաստակելը: Դուք խոսում եք վորպես ամենափոքրիկ յերեխա: Վերցնենք մի սովորական աղաման, հարյուր գրամ ծանրությամբ, իմ վարպետի նկարով. նա իրե՛ն գինը կունենա, իսկ Վայլդեկ Պեդլի աղամանն ուրիշ գին կունենա, նախկին կայսեր անվանատառով աղամանը—հինգ անգամ ավելի, իսկ յեթե իրն ունենա լավ ժառանգ, վերջինս նրա համար տասն անգամ ավելի գին կտա:

— Թողեք մեզ, Ֆրանսուա,—ասաց Կամելինան և նկարիչներին կանչեց ներսի սենյակները:

Ակնագործը, բաց չթողնելով Կուրբեյին, անցավ դռնից, վորի մոտ պահակ եր կանգնած:

— Ամեն րոպե պատրիոտները գալիս են ինձ մոտ և հայտնում են, թե աներևակայելի հարստություններ են գտել: Յերբեմն յես նրանց հետ ծառայող եմ ուղարկում: Հաճախ լինում են ջահեր՝ վոսկեպատ բրոնզից: Տյուլերին դրամահատարանին տվել է մի ամբողջ շարք սրբազան իրեր: Հիմա յես ձեզ ցույց կտամ:

Նրանք իջան ձուլարան:

Վառարանի առաջ, սեղանների վրա կուտակված եյին բազմաթիվ իրեր՝ հալելու համար:

Ֆայգուլյան բռնեց Բուխտոնի թևից:

— Ա՛յ, որինակ, այս եժան, հասարակ բանի համար յես կվճարեմ վոսկով հազար ֆրանկ:

Նա վերցրեց մերկ կնոջ մի անդրի, վորը յերբեմն կնիքի կոթ եր յեղել:

— Գիտե՞ք ինչ է այս: Քսան տարի առաջ յես կարգի եյի բերում մարկիզուհի դե—Վերնիի կնիքը...

Կամելինան նրա ձեռքից խլեց անդրին և նետեց վարպետին: Վերջինս բռնեց ու դցեց կաթսան:

Ֆայգուլյան յերկու ձեռների ափերով սրբեց դեմքի քրտինքը:

— Այդ նշանակում է եժան վերաբերմունք դեպի գործը,—ասաց նա,—դուք կարող եյիք հինգ անգամ ավելի վոսկի ունենալ:

Կամելինան նրան կանչեց հետևյալ սեղանի մոտ:

— Ավելի լավ է յեկեք այստեղ, տեսեք այս իրերը:

— Դու յերբևէ տեսե՞լ ես մասունք, Ֆրանսուա,—հարցրեց վարպետը ակնագործին,—ահա, որինակ, սուրբ բրիգիտտան:—Վարպետը վերցրեց մի փոքրիկ տուփ և քչփորեց մախաթով, կարծես ուստրե յեր բաց անում: Տուփից դուրս ընկավ մի սև մատ: Հետո նա ձեռներով յերկու, իրար ձուլված, շարժում արեց, և տուփը թռավ հալոցը, իսկ մատն ընկավ ներքև, վոտքերի մոտ դրված արկղի մեջ:—Հիմա տեսնենք սուրբ Դենիսին:

Ակնագործը հետ տարավ նրա ձեռքը:

— Կամելի՛նա,—ասաց նա և հետ նայեց, իր վրդովմունքին կողմնակից փնտրելով,—դուք, Կամելինա, նույն անասունն եք, ինչ վոր առաջ եյիք, յերբ աշխատում եյիք ինձ մոտ: Յես ձեզ խելական դրամ եմ առաջարկում: Յես քսան հազար ֆրանկ եմ տալիս յուրաքանչյուր արկղիկի համար, յեթե բացված չե: Դուք խլացե՞լ եք:Պարոն Կուրբե,դուք մեծ վարպետ եք,ասացե՛ք նրան: Դա ագիտություն է, սատանան գիտե, թե ինչեր եք անում: Յես ձեզ տալիս եմ— խո՛ւլ մարդիկ,— քսան հազար ամեն մի կտոր այսպիսի կղկղանքի համար, վորը դրված է հիսուն ֆրանկ արժեցող վոսկե տուփի մեջ:

— Ի՞նչ պետք է անեք դրանք, կուզեյի իմանալ:

— Ա՛խ, մոսյո, դրա մասին ե՞լ մտածենք: Կվերցնեմ ու կարտահանեմ Անգլիա: Ձեզ վնա՞ս կլինի: Կամ Իտալիա:

Կամելինան դիմեց վերակացուին.

— Տար սրան Ֆերրայի մոտ: Միլիոնների վերաբերմամբ առանձնապես կչեչտես: Իմ կարծիքով, հարկավոր կլիներ փնտրել:

— Կամելինա, չե՞ վոր սա մասնավոր խոսակցություն եր,—ասաց ակնագործը,—սրանք միմիայն իդեաներ եյին:

Այստեղ վարպետը չվացրեց և աչքով արեց Կամելինային:

— Հապա տես, դիրեկտո՛ր:

— Հա...Լսիր, Կուրբե, յեկ այստեղ: Տեսե՞լ ես մի այսպիսի բան: Կարդա՛ բարձր:

— Ա՛խ, սատանան սրանց տանի: Քրիստոսի Թլպա—

տի մի կտորն է—հրճվանքով կարդաց Կուրբեն: Ա՛յ թե ինչ, Կամելինա, յեկ անպայման յես ու դու սա պահենք: Գիտե՞ս ինչ, տուր ինձ, իբրև ժամացույցի շղթա: Գալի՞ս է:

— Ուրեմն ի՞նչպես եք կարծում, ցուցադրե՞մ նկարներս,—նորից հարցրեց Բուխսոնը:

— Իսկ ի՞նչ եք նկարում,—հանկարծ խստորեն ու չգիտությամբ հարցրեց Կուրբեն:

— Յես նկարել եմ պայքարի մի քանի տեսարաններ:

— Իհարկե, վոգևորությո՞ւն, հերոսությո՞ւն:

— Այո՛, մոտավորապես:

— Ինչպե՞ս է դուրս յեկել վոգևորությունը:

— Այսի՞նքն:

— Շատ պարզ—պետք է գիտենալ, ինչից ինչ դուրս բերել:

Բուխսոնը ջղայնորեն նայեց նկարչին: «Խելացի, տաղանդավոր մարդ է,—մտածեց նա, բայց իր առորյա քայլերում անկասկած հիմարության նշաններ կան»:

Խփեց ժամի չորսը:

Յեկեղեցու նվագող ժամացույցն արձագանքեց փողհարներին

Բաժանվելով Կուրբեյից,— վորն շտապում էր ժողով,—Բուխսոնը մնաց մենակ: Նրա մտքերն անպարզ եյին, հնարավոր չէ շարադրել այդ մտքերը: Նա հիշեց—յերբ կատուն կշտանում է, իսկ ուտելիքը դեռ մնում է, նա ճանկերով քերում է հատակը, կարծես ուզում է պահել մնացորդը: Այդպես եյին անում նրա նախնիները, այդպես է անում և նա, վորպեսզի բավարարի կշտանալուց առժամ կանգ առած իր ագահությունը և յուրահատուկ արգելք դնի մնացած կերակրի վրա: Բայց կերակուրն, իհարկե, բաց է, կատուն գիտե այդ մասին և հսկում է այն, չնայելով իր կատարած ծեսին: Յեթե մի անգամ նա մինչև վերջ հետևեր իրեն, ապա կտեսներ, վոր իր և կատվի մեջ տարբերությունն այնքան չնչին է, վոր նմանություն է դառնում, և այդ դեպքում նա կուզենար շոշափել իր մեջ մարդը, սրտից մինչև գարշապարը: Սակայն գաղափարները մարդու մոտ են

գալիս ճիշտ նույնպես, ինչպես տեղեկատու բյուրոներին, կամ հասցեների սեղանների ցրիչները: Պետք է յենթադրել, վոր այդ բանը լավ էր հասկանում վոմն հին պարսիկ իմաստուն, յերբ աստծուն աղոթելու համար գյուղից դուրս էր գալիս: «Յեթե յես ամենավողորմածին սպասեմ իմ տանը,—ասում էր նա,—ապա նա մինչև ինձ հասնելը կանցնի հարևաններիս կողքից և հիմար բամբասանքներ կհավաքի իմ մասին»: Գաղափարները յերկնքից չեն ընկնում տուն, նրանք գնում են նույն ճանապարհով, ինչ վոր վորևէ մարդ, ծառայության տեղից տուն վերադառնալիս,—և Բուխսոնն իր առորյայի մասին մտածում էր այնպես, վոր իբր թե այդ որը հենց այնպիսին էր, վորի համար նա ուզում էր ապրել:

Այո, Կուրբեն իրավացի յե,—մտածեց նա սրտնեղած,—պետք է լավ գիտենալ, թե ինչից ինչ ես արտադրում, վորովհետև արվեստն էլ անցնում է նույն փողոցներով, վորտեղ քայլում ես դու: Նրան ծիծաղելի չեր թվում, վոր մարդը, սկսելով նոր ձևով մտածել, կարող է փոխել բարեկամներին, կամ գնալ ուրիշ յերկիր:

Կամ վրձնահարվածի պրոբլեմը: 1793 թվականին հեղափոխական Գասսենֆրանցն ասաց.—«Յես պետք է անկեղծ խոսեմ—իմ կարծիքով, նկարչի տաղանդը նրա սրտումն է և վոչ թե ձեռքում: Այն, ինչ վոր ձեռքը կարող է յուրացնել, համեմատաբար կարևոր չէ»: Նեվեն նրան պատասխանեց.—«Չե՞ վոր հարկավոր է ուշադրություն դարձնել ձեռքի արվեստի վրա»:—«Քաղաքացի,—ասաց նրան Գասսենֆրանցը,— ձեռքի արվեստը վոչինչ է. ձեր դատողությունները մի՛ հիմնեք ձեռների ճարպկության վրա»:

Կամ վարպետության հարցը: Նա իր փորձից գիտեր, թե ինչպես նկարիչն անկարող է կամայականորեն նորել իր վարպետությունը, ինչպես ապարդյուն են առարկայի վերաբերյալ սովորական պատկերացումները մեքենայաբար փոփոխելու միջոցով նորը գտնելու փորձերը, նա գիտեր, վոր արվեստի մեջ նորը յուրաքանչյուր անգամ նոր վորակ է և վոչ թե հերթական մի ավե-

լորդ առարկա: Յեվ ահա, սխալ և ճիշտ յեզրակացությունների խառնիճաղանճության մեջ, ինքնավոչնչացման անալիզի չափազանց փոքր մեծությունների մեջ սկսեցին յերևալ մինչև վերջ ճանաչված իրականության առաջին ուրվագծերը:

Կամ վրձնահարվածի պրոբլեմը: Նույնիսկ իր բնական կարիքի համար մարդը գնում է վոչ միայն ստամոքսի պահանջով, այլև իր որվա հանդիպումների, խոսակցությունների, ուրախությունների և անհաջողությունների ազդեցության տակ: Այստեղ ականջները և աչքերը վոչ պակաս դեր են խաղում, քան աղիքների վիճակը, և յերբեք անգամ յերգվող կարմանյոլան կարող է ցավեր առաջ բերել փայծաղում, կամ, ընդհակառակը, բարելավել արյան շրջանառությունը:

Այդպես ուրեմն, վրձնահարվածի պրոբլեմը: Նա հիշողության մեջ ասոցիացիայի կարգով վերականգնեց «Ռեկվիզիցիան» նկարելու տեխնիկան: Առավոտ եր: Արևը, ճեղքելով մառախուղը, զրնգալով խփեց նրա արհեստանոցի ապակյա կտուրին: Փողոցում հանդարտ եր: Կողքի սենյակում քրթմնջում եր շուկայից վերադարձած տանտիրուհին: Ներքև, լուսամուտի տակ, ծխախոտավաճառը քա՛հ քա՛հ ծիծաղում եր իր խանութում: Այսպես եր տպավորությունների առաջին շարքը, վորոնք անմիջականորեն շրջապատել եյին աշխատանքը: Առաջին շարքին հետևում եր յերկրորդը: Ապակիների զրնգոցը պատկերացնել եր տալիս հեռավոր կռվի արձագանքները, կռիվը թվում եր հաստարակ ու հաջող, և թաղերում չկար անհանգստություն, վոչ վոքի չեյին շտապեցնում դեպի խրամատները: Տանտիրուհին, վորը ձիու միս եր ճարել, ինքնաբավականությամբ յերգում եր կադրիլի վեցերորդ հատվածը, վորը կոչվում եր Կարմանյոլա: Յերևույթների յերրորդ շրջանը,—յեթե նա պրպտեց նրանց,—հետևյալն եր.—

Գիշերը Դոմբրովսկին խիզախ հարձակմամբ հետ մղեց թշնամու առաջապահ զորամասերին: Ֆեդերատների թնդանոթներն առավոտյան ապահովեցին գիշերային հարձակման հաջողությունը և այս պատճառով ռազ-

մաճակատում հանդիստ եր: Ծխախոտավաճառի խանութում պատմում եյին այդ խենթ, սկյութական անվան տեր լեհացու մասին.—«Գեներա՛լ,—յերեկ գիշեր դիմեց նրան բրիգադի հրամանատարը,— դուք ձեր քաջությամբ խանգարում եք մեզ»:—«Թիկունքում ավելի սարսափելի յե, ընկե՛ր»,— պատասխանեց Դոմբրովսկին: Նույն յերեկ յերեկոյան բանվորական ակումբները հետ վերցրին քաջարի և Կոմունային հավատարիմ մարդկանց և ուղարկեցին խանութների առջև կազմված հերթերը—աշխատավորներին քաջալերելու և սարսափահար չարախոսների վնասաբեր բամբասանքները ջրելու: Միևնույն գիշերը ակումբների լիազորները յեկան անվոտ Ռոնիի մոտ, վորը ջղայնությամբ սողալով հատակի վրա, սպասում եր սպատավորի վերադարձին: Նրանք յերեք որ բանակցում եյին Կլամարի մուրացիկների ու կաղերի հետ, միասնական դաշտային գործողություններ սկսելու համար: Յերեկ, վերջապես, սպատավորը համոզեց նրանց: Նա իր պերճախոսությունից քրտնած, աճապարեց Ռոնիի մոտ և քաղաքից անհապաղ դուրս բերեց յերեք հազար մարդ, ներառյալ կանանց ու յերեխաներին:

Քաղաքի շուրջը գտնված բանջարանոցներն ու ջերմոցները լցվեցին աղմուկով: Ամբողջ տասը կիլոմետրի վրա բանջարեղենի համար կռիվ եր տեղի ունենում: Ֆոնտնե—օ—Ռոզի մոտ, հենց Շատիլյոնի ամրության տակ, մուրացիկներն սկսեցին կռվել շուկայի սպեկուլյանտների գործակալների հետ: Կռիվը մահացու յեր: Վերսալցիների հեծելազորային ջոկատն իզուր փորձում եր դաշտը մաքրել քաղցած մարդկանց այդ սոսկալի կռվից: Յերբ կապիտանը հրամայեց զենքի դիմել, կռվող կողմերը միացան և հարձակվեցին հեծելակների վրա: Անվոտ մարդիկ վոստոստում եյին թևերի վրա, կամ, թփերի հետև դարան մտնելով, կարծես մինչև գոտկատեղը հողի մեջ թաղված, քարեր եյին նետում, և նրանց ձեռներում կուտակված եր նաև վոտների ուժը: Միաթև մարդիկ փորձում եյին կռվել, հարձակվում եյին գլուխներով, կաղերը խփում եյին հենակներով և

ջարդոտելով հենակները, վոստոստում եյին մեկ ոտքի վրա, ինչպես յերեխաները խաղի ժամանակ։ Կռվում եյին յերեխաներն ու կանայք, մեկ-մեկու նետելով ձիերի սմբակների տակ։

Արշալույսին գրաված ձիերը մսի խանութներում եյին,— յերկու յերրորդը՝ մունիցիպալ, մեկ յերրորդը՝ մասնավոր խանութներում։ Այս մասին նույնպես խոսակցություններ եյին տեղի ունենում հերթերում ու փողոցներում։

Չորրորդ շաբաթը, վորը նկարչի աշխատանքը շրջապատող բոլոր տպավորությունների յելակետն եր, խիստ պարզ եր,—հեղափոխությունն անձնատուր չեր լինում։ Այդ որը Բուխսոնը շատ մտածեց վարպետության մասին, բայց վոչ նախապես դիտավորված և վոչ հատկապես, այլ ինքնաբերաբար, ցերեկվա բոլոր մյուս տպավորությունների ներքո։

Ռեյդն ու Կոլլինսը հանդիպում են Պալե-Ռոյալում

— Իմ տպավորություններն այն են, վոր Կոմունայի կառավարությունն արդեն անցել է ներքին պայքարի շրջանը՝ և այժմ իր ուժերը կնվիրի ստեղծագործական աշխատանքին, վորքան այդ հնարավոր է բոլոր կողմերից մղվող պատերազմի պայմաններում։

— Յերկու որ առաջ յես խոսեցի Վերլենի հետ։ Դուք նրան ճանաչո՞ւմ եք, Կոլլինս։ Նա ամենահեռատես քաղաքագետներից մեկն է։ Յեվ ահա նա կարծում է, թե մենք թևակոխել ենք այն հեղափոխության շրջանը, վորը կարող է շարունակվել հիսուն տարի, մինչև այն ժամանակ, յերբ կհաղթանակի ամբողջ Յեվրոպայում և ընդհանրապես աշխարհում։

— Այո՛, հնարավոր է։ Նույն կերպ է կարծում նաև իմ հին ծանոթ Ռ—ը։ Այդ ծերունի ենտուզիաստն այժմ տարված է միջազգային կապի գաղափարներով։ Մեզանից ծագում է վարակը,—գոչում է նա,—սերմանեցե՛ք այն, սերմանեցե՛ք ամբողջ աշխարհում։ Յեվ, քանի վոր Փարիզի կեսը ծանոթ է նրան, ուստի նրա համար չափազանց հեշտ եր իր շուրջը խմբել տասնյակ նույնպի-

սի վոգևորված մարդկանց, ինչպես ինքն է։ Հասկանո՞ւմ եք, Ռեյդ, նա գալիս է դիցուք ձեր տուն և խնդրում է Կոմունայի մասին նամակ գրել ձեր բարեկամներին, ձեր հայրենիքը։ Լավ, արխաշունչ նամակ։ Դուք խոմ չեյի՞ք կարող նրան մերժել, Ռե՛յդ։ Յեվ նա այդ յեղանակով գրեթե ամբողջ ռուսական գաղութին նամակներ է գրել տվել։ Մի կրկեսի դերասան, ռուս եմիգրանտ, նույնիսկ Փարիզ է հրավիրել իր հայրենիքում հայտնի հրապարակախոս Գլեբ Ուսպենսկուն։

— Յես ինչ-վոր բան եմ լսել դրա մասին։ Այդ ինձ դուր է գալիս։

— Այսոր յես տեսա Թիֆլիսի գիմնազիստի մի նամակ, գիտե՛ք, Կովկասից։ Նա պարտավորվում է Կոմունայի գործի հետ ծանոթացնել քաղաքի բոլոր դըպրոցները։ Բայց ամենից հետաքրքրականն այն է, Ռեյդ, վոր գիմնազիստի նամակը բարեբախտաբար զերծ է մնացել ցարական գրաքննությունից և հասել է Փարիզ։ Հիմա այդ փոքրիկ Զաքաղարին որվա հերոս է ռուս կանանց շրջանում։

Պասսի—Բուլոն

Ֆեդերատների մի գումարտակ նահանջում եր բերդապատի հետև գտնվող խրամատները։ Դոմբրովսկին հասավ գումարտակին և կանգնեցրեց փողոցի մեջտեղում։

— Յերբ կռվում ես, հարկավոր է հաղթանակել, գիտե՞ք,—կշտամբանքով ասաց նա գումարտակի հրամանատարին և դիմեց մարտիկներին։—Մի անգամ ե՛լ գնանք, ընկերնե՛ր։

Մի դեպք Տրոկադերոյում

Մեծ, կապույտ ակնոցներով մի մարդ սրբեց ճակատի քրտինքը, շփոթվելով հոգոց հանեց և հարցրեց, թե ինքը վորտե՞ղ է գտնվում։ Նրան ասացին, վոր այդ Գոշ փողոցն է։ Նա իջավ դեպի ռուսական յեկեղեցու մոտ գտնվող ճեմելիքը, անցավ Ետուալ հրապարակն ու իր համար անսպասելի կերպով նստեց Վիկտոր Հյուգոյի փողոցի վրա գտնվող կաֆեյի սեղանի մոտ։ Յերևում

եր, վոր նա չգիտեր ուր գնալ: Նստելով սեղանի մոտ, նա դեմքը դարձրեց դեպի Բուլոնի անտառը, վորտեղից գալիս եր թնդանոթի զարկերի փոթորիկը: Կեսօրվա շոգը, քաղաքի փոշեխառն քամին և օդի ցնցումները խփում եյին նրա դեմքին: Կողքից անցնող մարդիկ ստվեր եյին գցում նրա ճակատին: Յուրաքանչյուր անգամ նա մի կողմ եր շարժվում: Բավական յերկար նստելով և չկարողանալով հանգստացնել սիրտը, նա վճարեց ու գնաց փողոցի ձախ պատերի յերկարությամբ: Որն այնքան գրնգուն եր ու աշխույժ, վոր վոչինչ չեր յուրացվում՝ ինչպես պետք եր: Այդ առաջին օրն եր, վոր կապույտ ակնոցներով մարդը մենակ դուրս յեկավ քաղաք: Նա ուզում եր ստուգել ինքն իրեն: Սակայն միալար ու մշտական աղմուկը, վորը նրան հարկավոր եր խոչընդոտներն ըմբռնելու համար, բոլորովին բացակայում եր: Բազմաթիվ ձայներ եյին լսվում նրա շուրջը, չունենալով իրենց առաջացման մշտական անշարժ կետը, վորով նա կկարողանար կողմնորոշվել տարածության մեջ: Սարսափելի գրնգոցի, միջանցիկ քամիների և բույրերի կուտակման քաոսում ընկղմում ու կորչում եյին նույնիսկ այն ձայներն ու բույրերը, վորոնք ծագում եյին անշարժ տեղերից:

Նա հուզված և դժգոհ եր իր մենակության անորոշությամբ:

— «Սա կանցնի, ուղղակի յես վաղուց չեմ յեղել մենակ»,—մտածում եր նա:

Ձեռնափայտը նրան ցույց եր տալիս ճանապարհի անհարթությունը, դեպի առաջ ընկած դեմքը գտնում եր օդի անհարթությունները, ականջները շարժվում եյին, ինչպես և ձեռների մկանները շոշափելով տարածությունը: Նա շնչում եր հավասարաչափ և ուշադիր, յերբեմն քթածակերը լայն բանալով, վորպեսզի փորձեր օդի համը:

Նա քառասուն և չորս տարեկան եր և արդեն ուշ եր մտածել, վոր մի վորևե անսպասելի, հրաշքի նման ոպերացիա կվերադարձնի նրա տեսողությունը, վորը նա կորցրել եր հինգ տարի առաջ: Սակայն յերբեմն, գիշեր-

ներին, գալիս եյին յերազներն և հուշերը: Այնքա՛ն նրանք զարմանալի եյին, վոր նա հրաժարվում եր նրանց հավատալ, թեպետ գիտակցությունը պնդում եր, վոր այդ բոլորը ճշմարտություն ե և այդպես ե լինում տեսողների հետ, այդպես յերբեմն յեղել ե նաև իր հետ: Նա չեր սիրում լույսի վերադարձի մասին յերազները և վախենում եր նրանցից, համարելով նրանց ջղերի հիվանդ մի ֆանտազիա:

Նա չեր հիշում իր կուրության սկիզբը: Հետագայում նա յերբեք չեր կարողանում վերականգնել նոր ինքնազգացման այն չափազանց դանդաղ մարմնացման պրոցեսը, վորի մեջ հետզհետե չքանում եյին տեսողական զգացումները և աճում եյին լսողական, շոշափողական և մկանային ունակությունները: Դառնալով հասակավոր՝ նա գտավ, վոր շոշափումը հիմնական զգայարանն ե, վորից ծագել են բոլոր մյուսները, և վոր նա ունի տարածականության հատկություն և ավելի մեծ, քան տեսողությունը, վորովհետև վերջինս, հանդիսանալով հեռվից տեսնելու զգայարան, սոսկ մակերեսային առնչություններ ե ստեղծում շրջապատի հետ:

Յեթե կարելի յե խոսել կույրի հպարտության մասին, ապա այդպիսին նա ուներ: Նա զգում եր, վոր աշխարհը ճանաչում ե ավելի նրբորեն և ավելի խորը, քան տեսունակը: Իր ուժի և լիակատար արժանիքի գիտակցությունը նրա մեջ հաստատվեց մանավանդ Բրայլեմի, կույր գիտնականի հետ ծանոթանալուց և լեյտենանտ Ջեմս Խոլմանի կենսագրությունը կարդալուց հետո, վորը կույր լինելով հանդերձ, ճանապարհորդել եր Լոնդոնից մինչև Իրկուտսկ: Ու թվում եր, թե անկարելի վոչինչ չկա ուժեղ և առողջ ուղեղ ունեցող մարդու համար: Ու նա սկսեց մարզվել:

Բայց այստեղ շոգ և խոնավ աղմուկը դիպավ նրա ականջներին: Ճակատը կարծես վայրկենապես ուռեց առջևում մի հսկայական խոչընդոտ նախազգալուց, և ուսին հասած շեշտակի, ուժեղ հարվածը նրան շպրտեց մի կողմ: Միայն ընկնելու ժամանակ նա ըմբռնեց, վոր կառքը խփել եր իրեն:

Ցածրահասակ ու հաստամարմին մի մարդ բռնեց նրա թևից և ազատեց վտանգից:

— Ե՛հ, հենց այս խառնաշփոթ տեղը՞ պիտի ընկնեյիք, ինչ է: Դուք կորցրե՞լ եք ձեր ուղեկցին: Վո՞րտեղացի յեք:

— Շնորհակալ եմ,—ասաց կույրը,—վոչինչ, վոչինչ: Յես կորցրի ճանապարհս: Տրոկադերոյի կողմը պիտի գնամ:

— Գնա՛նք:

Հաստափորը բռնեց կույրի արմունկից և խնամքով տարավ փողոցի իրարանցման միջով:

— Վո՞րտեղացի յեք դուք,—նորից հարցրեց նա:—Դուք այս գործն այսպես մի՛ թողնեք, անպայման բողոքեցեք: Հիմա ստորին պերսոնալն ամենուրեք այնքան սանձարձակ է դառել, վոր դրանից հեռու գնալ անկարելի յե:

— Ո՞ւմ դեմ գանգատվեմ: Յես մենակ եմ դուրս յեկել,—պատասխանեց կույրը:—Յես ուզում եյի փորձել ինքս ինձ:

— Եվ ի՞նչ կարիք կա ինքն իրեն փորձել այդպիսի վիճակում,—ցավակցական կշտամբանքով պատասխանեց հաստափորը,—ավելի լավ չե՞ր տանը նստեյիք: Դուք ապաստարանի՞ց եք:

— Վոչ, յես կույրերի շտրասբուրգյան արտելի անդամ եմ: Անունս Ալեքսանդր է:

— Հը՛մ, լսել եմ, լսե յեմ,—մեղմ և ուշադիր պատասխանեց հաստափորը:—Դուք վերջերս աչքի յեք ընկել ինչ-վոր մի տեղ, ճի՞շտ է: Գիտե՞ք, յես սկզբում չհավատացի, կույր մարդիկ և հանկարծ տեսունակներից ավելի լավ են աշխատում, ասում են, քիչ է մնում պատերազմեն:

— Իմ արտելը քսան տարվա գոյություն ունի,—ասաց Ալեքսանդրը:— Յես ունեմ մեխանիկներ, մաթեմատիկոսներ, յերաժշտագետներ: Ճիշտ է, նրանք այժմ հացի փռերում խմոր են հունցում և սայլակներ են տանում, բայց...որինակ, դուք յերբե՞ք սայլակ չեք տարել:

— Յերբեք: Դուք կարծում եք պիտի ցավե՞մ: Յես գծագրող եմ և վո՛չ վատ գծագրող: Ձա՛խ, մի քիչ դեպի ձա՛խ: Այ, այդպես: Ով ինչ կուզե անի, իսկ ես իմ գիծն եմ տանում,—ասաց նա, ակնարկելով իր պրոֆեսիան և վարքագիծը:

— Գիծը,—այդ շատ լավ է,—ասաց Ալեքսանդրը:—Վոչ մի տեսունակ չգիտե, թե վորքան լավ է գիծը, ուրվագիծը, ձևը:

— Սակայն դուք ևս, ներեցեք, չեք կարող գիտենալ:

— Յե՞ս: Ո՛, հենց յե՛ս է, վոր գիտեմ, թե ի՛նչ է նշանակում ձևը:

Ալեքսանդրը, իր ազատարարի արմունկից բռնած, յեռանդով պատմեց Սամվել Սմայլսի անտիկվարային վաճառատանն իր ծառայելու պատմությունը: Շնորհիվ իր վարժված ձեռների, նա յոթն ամսվա ընթացքում խիստ կարգին եր պահում անտիկվարի ցուցափեղկերն ու պահարանները: Գիշերները, մենակ մնալով վաճառատան հետևի խցիկում, նա մեկնվում եր բազկաթոռի վրա և, գլուխը վեր ցցած, յերկար տնտղում եր մատները, վորոնց մեջ մնացել եյին հիշողություններ առավոտյան դարսած իրերից: Այդ զբաղմունքը նրա համար գծերի յերաժշտություն եր, յերբ առարկայի յուրաքանչյուր կետը գրգռում եր զգացմունքների ինչ-վոր համապատասխան մի կետ: Նա հրաշալի հիշում եր առարկայի գծային պատկերը և սիրում եր այն կրկնել մենակության մեջ: Սակայն շատ հաճախ, որվա ծանր հոգնածությունից նա շոշափողական հիշողությունից կորցնում եր իրեն դուր յեկած առարկայի տարածականությունը և հավանորեն նա յերբեք չեր ջղայնանում այնպես, ինչպես այդ րոպեներին: Այդ ժամանակ նա սկսում եր ցուցամատով ոդում գծել կիսամոռացված ուրվագիծը, գծում եր, թողնում, նորից սկսում: Կարծես ցուցամատի ծայրը յերկարում եր մինչև հիշած առարկայի չափը:

— Վոչ, վոչ, դուք, տեսունակներդ, չգիտեք ինչ է ձևը: Դուք այն ճանաչում եք տեսողությամբ, այսինքն հեռվից, հապճեպ, և, ըստ յերևույթին, ամենից առաջ

ձեր աչքին է ընկնում նրա գույնը, ապա՝ ծավալի մոտավոր չափը, Փունկցիան և զուտ ձևը ճանաչելու համար դուք ժամանակ չեք ունենում: Դուք նայում եք և իբր թե շոշափում: Սակայն այդ յերկուսը միևնույն բանը չե:

Հաստափորը, առանց պատասխանելու, գնում եր նրա կողքից: Նա չեր ուզում վիճել այն թեմայի շուրջը, վորը միայն նա կարող եր պարզել: Այս պատճառով, յերբ Ալեքսանդրը լռեց, նա յերազկոտ ասաց.

— Մեր արհավրալի օրերում ձեր կուրությունն ուղղակի յերջանկություն է: Այնպիսի հաշմանդամներին, ինչպիսին դուք եք, վոչ մի սատանա չի ձեռք տա: Կարող եք հանգիստ լինել:

— Դուք կարծո՞ւմ եք: Ասենք, դա ճիշտ է: Յեվ հենց վորոշ ապահովության զգացումը թույլ կտա ինձ անել մի այնպիսի բան, վորի համար տեսունակն անպետք է: Գիտեք, ասենք, այսպես, յերբեմն յես ցանկանում եմ սպանել Տյերին:

— Դե՛հ, դե՛հ, մի գոռաք այդպես:

Նրանք մտան Տրոկադերո ճեմելիքն ու նստեցին հենց առաջին նստարանի վրա: Ալեքսանդրը սրբեց ճակատի քրտինքն ու մի քանի անգամ անհանգիստ ու խոր հոգոց հանեց:

— Դուք կոմունա՞ր եք,—հարցրեց Հաստափորը և, աչքերով չափելով Ալեքսանդրին, հանեց սանրը և սանրեց բեխերն ու մորուքը:—Հը՛մ, իսկ յես վոչ: Յես, սոսկ մարդ եմ: Միակ կուսակցությունը, վորին յես պատկանում եմ, այդ իմ յեսն է:

— Ուրեմն դուք Վերսալի կողմնակի՞ց եք:

— Ինչու «ուրեմն»: Յես իմ կողմնակիցն եմ: Յես կարող եմ հաշտվել ամեն մի ռեժիմի հետ, առանց նրան վնասելու և նույնիսկ օգտակար լինելով նրան: Դուք ծխո՞ւմ եք, համեցեք: Նույնիսկ օգտակար լինելով, բարեկամս,—կրկնեց նա զգացված:

Նրան հաճելի յեր անկեղծ խոսել այն մարդու հետ, վորը չեր կարող նրան տեսնել:

— Միակ բանը, վորից յես վախենում եմ, այդ հեղաշրջումն է, ասում եմ ձեզ անկեղծ: Իսկ յերբ հեղա-

շրջումը կատարվում է, յես հանգիստ եմ: Յես չեմ զողանում, մեծ-մեծ վնասներ չեմ հասցնում, ինչպես, օրինակի համար, այն վարչության մեջ, վորը կոչվում է...

— Վո՞ր վարչության,—անհանգիստ հարցրեց Ալեքսանդրը:

— Միևնույն է, այդ կարևոր չե: Բոլոր ծառայողների կեսին Տյերն է պահում, այդ ձեզ համար գաղտնիք չե:

— Վո՞ր վարչության, վո՞ր,—համառորեն հարց եր տալիս Ալեքսանդրը:—Յես ձեզ կխեղդեմ, լսե՛ք,—ասաց նա:

Հաստափորն արագ հետ-հետ քաշվեց ու լռեց:

— Ներեցե՛ք ինձ, յես կատակ արեցի,—ասաց Ալեքսանդրը:—Յես միշտ մոռանում եմ, վոր կույր և անօգ մարդ եմ,—ասաց նա կեղծ ժպիտով:—Բայց ինձ համար տարօրինակ է, վոր դուք այդպես անտարբեր եք դեպի հեղափոխությունը, դուք, համեստ ծառայող, աշխատավոր, չունևոր:

Հաստափորն անվստահությամբ և ջղայնացած նայեց Ալեքսանդրին: Հաճելի անպատասխանատվության զգացմունքը, վորը նա ուներ զրույցի սկզբում, այժմ ուժեղացավ, վերածվելով իր հոգեկան ու սոցիալական առավելության գիտակցության: Նա հաճույքով զգում եր, վոր այժմ անկեղծությունը հեշտությամբ կարող է անպատիժ մնալ:

— Գիտե՞ք ինչ, բարեկամ,—ասաց նա՝, յես գուցե և կողմնակից լինեյի Կոմունային, յեթե տեսնեյի, վոր նրանից կստանամ այն, ինչ վոր յերբեք չեմ ստանա ուրիշներից: Սակայն նրա ռեֆորմները և նույնիսկ այդ առօրյա միջոցառումներն ինձ չեն վերաբերում:

— Իսկ բնակարանային պարտքի և մուրհակների վճարման տարկետո՛ւմը...

— Այո՛, յեթե յես վորևէ մեկին պարտ լինեյի: Բայց յես վոչ վոքի պարտ չեմ...

— Հը՛մ, այդպե՛ս:

— Սպանվածների այրիներին տրվող կենսաթոշակ-

ներն ինձ չեն հետաքրքրում, դպրոցների նախաճաշերը նույնպես։ Իսկ այն, ինչ որ յես ստանում եմ իմ աշխատանքի համար,—յես շատ լավ գծագրող եմ,—ինձ կտան միշտ և ամեն տեղ։ Գծագրել խոմ պետք է, չէ՞։ Յես էլ գծագրում եմ։ Կոմունա՞։ Գծագրում եմ։ Վերսալցինե՞րը։ Գծագրում եմ։ Յեթե գան անգլիացիները, յես դարձյալ կգծագրեմ։

— Ի՛նչ ճիվաղն եք դուք։

— Հը՛մ, այդպե՞ս։ Նախանձո՞ւմ եք, կույր բարեկամ։ Յես ձեզ հետ անզգուշության չափ անկեղծ եմ, բարեկամ, բայց դուք ինձ համար իսկի գոյություն էլ չունեք, դուք խոսակցի ուրվական եք, խոսակից՝ առանց արարմունքների։ Յեվ մի՛ կեղծեք, լսե՛ք գաղափարական մարդկանց։ Խղճուկ, հիվանդ մարդ եք դուք։ Մի՛ դողդողաք։ Յես ձեզ կասեմ,—միայն թե ուշադրությամբ լսեք ինձ,—ձեր պարագլուխների մեջ այնպիսի գործամոլներ կան, վոր...վոչ, յես հաստատ գիտեմ, մի՛ ժպտեք։ Ուզո՞ւմ եք իմանալ։ Ահա, Թեկուզ Կամիլլը... Դուք կասեք, վոր նա կաշառք չի՞ վերցնում։ Իսկ այն, ո՛ֆ, սատանան, մոռացա նրա անունը, նա Վերսալի հետ նամակագրություն չունի՞։ Գիտե՞ք, թե ինչ է պատրաստվում։

Վայրի ծաղրանքի տենդով բռնված, նա խիզախորեն մոտեցավ Ալեքսանդրին։

— Կոմունան մի ամիս էլ կդիմանա։ Այդպես է հարկավոր։ Այդ ժամանակվա ընթացքում ձեր առաջնորդներից մեկը կկարողանա նամակներ ուղարկել դավաճանները՝ իր բոլոր գործակիցներին։ Միթամ յեկեք մեզ մոտ, շուտ, օգնեցեք, միասին պաշտպանենք հեղափոխության նվաճումները։ Ու մեկ էլ, ըհը՛, բռնեցին նրանց։ Մի հարվածով բոլորին փրթեցին։ Հասկացա՞ք։

— Անո՛ւնդ, անո՛ւնդ,—գոռաց Ալեքսանդրը և իր ամբողջ մարմինը նետեց դեպի դիմացի շնչառությունը, հուզմունքն ու անորոշ շշուկը։—Անո՛ւնդ,—նա այնպիսի ուժով սեղմեց նրա կոկորդը, վոր էլ չկարողացավ բաժանել մատները։

... Հավաքված բազմության մեջ պատահարն իս-

կույն բաժանվեց առանձին, մասնակի պատմությունների։ Գտնվեցին Հյուգոյի հրապարակում կույրի հետ պատահած դժբախտության ականատեսներ, և սենսացիան տարածվեց Տրոկադերո ճեմելիքը,—փրկված կույրը խեղդել է իր փրկարարին։ Յեվ, չնայելով, վոր վոստիկանությունն արդեն ժամանել էր և դիակը դրվել կառքին, կույրին անկարելի յեր դուրս բերել կանանց, յերեխաների ու բերանբացների հետաքրքրվող բազմությունից։ Վոստիկանությունն ստիպված յեղավ հանգամանորեն պատմել մարդասպանի վոչ-բարդ ցուցումները։ Հետո թափվեցին հարցերը։ Դրանք այնքան շատ եյին, վոր արձագանգելով մեկ-մեկու, դառնում եյին սպառնալից։ Վոստիկանն աննկատելիորեն իր և կույրի շուրջը հավաքեց կողմնակիցների մի շղթա։ Յերբ Ալեքսանդրն սկսում եր խոսել, ամբոխը լռում եր։

— Ո՞վ է ինձ վրա գոռում։ Զնչի՛ն, վախկոտ իժեր եք դուք։ Յես վոջիլ եմ սպանել, ի՞նչ եք ուզում։ Հապա մի նայեցեք մեկ-մեկու, ձեզանից վոմանք ազնիվ աշխատավորներ են, վոմանք—անպետքներ։ Խեղդե՛լ։ Ուղղակի փողոցներո՛ւմ։ Կոկորդներից բռնել ու գետնե՛լ։

Այդ ժամանակ Կոմունայի սպայի հագուստով մի մարդ, արմունկներով ճեղքելով ամբոխը, այս ու այն կողմից հրոցի դեմ լսվող կշտամբանքներին պատասխանելով՝ «ներեցեք, յես ի պաշտոնե պարտավոր եմ»—մոտեցավ Ալեքսանդրին։ Նա մատով բաղխեց կույրի ճակատը.

— Մի քիչ շտապել եք, քաղաքացի։ Յեթե դու տեսունակ լինեյիր, յես դրա համար մի լավ կտաքցնեյի վզակոթդ։ Յերևում է, վոր խելքդ այնտեղ չես պահում, վորտեղ պետք է։

Յեվ հետաքրքիրների առաջին շարքերի ծիծաղի ներքո Ալեքսանդրին արագորեն նստեցրեց կառք, կառապանին հայտնելով հասարակական ապահովության հանձնաժողովի հասցեն։

Ցերեկը

Վերջին ճրագները փողոցում

Այն ամպերը, որ կեսօրին հավաքվեցին Մոնմարտրի վերևում և հետո սողացին ամբողջ քաղաքի վրա, յերեկոյան նոսրացան, ցամաքեցին: Նրանք կարծես ջրից կիսով չափ հանված ուռկաններ լինեյին, որոնց մեջ թպրտում էյին աստղ-ձկնիկները: Պարտեզներում անքնությունը հաղթահարել էր թռչուններին: Նրանք յերամներով վխտում էյին ծառերի մեջ և ճռվողում էյին ժխորալից:

— Լսե՞լ եք նորություն: Մի մարդ կույրին հանել է կառքի տակից, իսկ կույրը, իբրև շնորհակալություն իր փրկարարին, կես ժամ հետո խեղդել է նրան:

— Հը՛մ, յեթե կույրերն էլ են սկսել...

— Այո, իսկ դուք գիտե՞ք պատճառը: Խեղդվածը Վերսալի գործակալ էր:

— Պետք է ավելի շատ գնդակահարել: Բոլորովին մաքրել այդ սրիկաներին: Կարիճ կույր է, չէ՞:

— Կարի՛ճ:

— Լսե՞լ եք: Ինչ-որ կարմիր տենդ է:

— Գնդակահարությունների մասին ե՞լ:

— Գնդակահարությունների մասին էլ:

— Ե՛հ, գիտե՞ք, միշտ նա չի խփում, ով շատ է սպանում:

— Սո՛ւս:

— Ի՞նչ:

— Չպետք է սրանց չարացնել այդպիսի աֆորիզմներով: Յեթե նրանք վերսալցիների պես սկսեն չրխկոցը, յես ու դու էլ սատանայի բաժին կդառնանք: Գիտե՞ք, թե նրանք բանը որտեղ են հասցրել:

— Գնանք, գնա՛նք, մեզ հետևում են:

Կոլլինսի՝ նույն օրվա օրագիրը

Համարյա ամբողջ օրը յես անցկացրի դրսում, շրջեցի քաղաքի կեսը և վերադարձա բոլորովին հոգնած: Յես համարյա պատրաստ էյի անկողին մտնելու, յերբ

սենյակիս դուռը ծեծեցին և ապա ներս մտավ միստեր Ո, իմ հայրենակիցը: Մենք իրար ճանաչում էյինք Լոնդոնի «Աթենեյ» ակումբից, բայց ծանոթ չէյինք: Միստեր Ո-ն մեծ, կուլտուրական փաստաբան էր, նա Անգլիայում մեկն էր 67 թվի Փարիզի միջազգային ցուցահանդեսի սակավաթիվ ենտուզիաստներից: Առանց յերկար նախաբանի նա հայտնեց, որ գնացքից ուղղակի ինձ մոտ է յեկել:

— Ինձ անհրաժեշտ է ձեր աջակցությունը,—ասաց նա.—բանը նրանումն է, որ յես միայն առևտրական գործերով չեմ յեկել Փարիզ: Յես դոկտոր Մարքսից բանավոր հանձնարարություն եմ հաղորդելու միքանի ֆրանսիական հեղափոխականների: Պատասխան ստանալով, յերեք կամ չորս օրից հետո կվերադառնամ Լոնդոն:

Ինձ շատ զարմացրեց միստեր Ո-ի այցը, այնուամենայնիվ յես պատրաստակամություն հայտնեցի ամեն կերպ օգտակար լինել նրան:

— Կոմունայի դրությունն օրեցօր անհուսալի յէ դառնում,—ասաց նա,—կատաստրոֆը գրեթե անխուսափելի յէ: Մենք պետք է պատրաստ լինենք ազատելու մեր բարեկամներից գեթ միքանիսին:

Յես այդպիսի հարցադրում բոլորովին չէյի սպասում: Ընդհանրապես մեր խոսակցությունը շատ տարօրինակ էր, և յեթե յես լավ չճանաչեյի միստեր Ո.-ին, կդերադասեյի չշարունակել զրույցը:

— Արդյոք դուք չե՞ք չափազանցնում վտանգը,—հարցրի յես:

— Բոլորովին,—ասաց նա,—կարող է խոսք լինել միայն ժամկետի մասին:

Հետագա խոսակցությունից պարզվեց, որ միստեր Ո.-ն ուզում էր իմանալ, արդյոք յես չե՞մ համաձայնվի, նախ՝ ձեռք բերել միքանի անգլիական անցագրեր, յերկրորդ, ապաստարան տրամադրել Կոմունայի այն անդամներին, որոնք ի վիճակի չեն լինի Փարիզից մեկնել: Յերկու կետերի վերաբերմամբ էլ յես լիակատար համաձայնություն տվի նրան: Մենք շատ կարճ

խոսեցինք: Նա ինձ մոտ նստեց քսան րոպեից վոչ ավելի: Ամեն ինչ հասկանալի յեր:

Նրա գնալուց հետո, խորհելով միստեր Ռ.-ի ասածների շուրջը, յես, անբացատրելի ասոցիացիայի կարգով, հիշեցի վերջերս կայացած մի այլ հանդիպում իմ մի այլ-հայրենակցի՝ կաշվե գործվածքների ֆաբրիկայի տիրոջ հետ: Ֆրանս-պրուսական պատերազմի սկզբից նա գրեթե անընդհատ Ֆրանսիայում է յեղել և կաշվի հումք ձեռք բերելու համար շրջել է այդ ամբողջ յերկիրը: Շուտով նա միտք է հղացել ձեռք բերել մարտերում սպանված ձիերի կաշիները, ինչպես նաև փչացած և գործածությունից հանված ձիասարքերը: Նա դարձավ հեծելազորային ճակատամարտերի յերկրպագու և լայն ծանոթություններ ստեղծեց: Յուրաքանչյուր հեծելային զորամասում նա ուներ իր գաղտնի գործակալները, վորոնց պարտականությունն եր քերթել սատկած ձիերն և հավաքել ծամված թամքերն ու կտրտված ձիասարքը: Նա հեծելազորի գրոհների մասին բանաստեղծի պես եր խոսում և անսովոր իրազեկություն եր ցուցահանում զուտ ռազմական հարցերի շուրջը: Գալլիֆեյի գրոհների մասին հուզմունքով եր խոսում նա: Յերկու և կես ժամում հինգ հարյուր ձի՛: Իհարկե, կաշիներն առաջին տեսակի չեյին, բայց նրանց ինքնարժեքն ուղղակի հրաշք եր: Բայց և այնպես,—ասում եր նա,—Գալլիֆեն դեռ շատ հեռու յե Ստյուարտից, վորը 1862–64 թվականի ամերիկական պատերազմում կոնֆեդերատների հեծելազորային պետ եր: Նա սպանված անասունների մսի հանճարեղ մթերող եր:

Կաշվե գործվածքների ֆաբրիկայի տերը փորձում եր իմ առաջ պարզել պատերազմի հումքի ոգտագործման գաղափարը և յերևակայությամբ տարվելով, նկարագրում եր գալիք ճակատամարտերի պատկերը, յերբ հենց խրամատների մոտ պիտի գործեն սապոնի ու վոսկրային ալյուրի շրջիկ գործարանները, իսկ չաթերի, կաշվի ու մետաղյա ջարդվածքների վիթխարի դեպոները կգտնվեն հենց դաշտային ռազմապահեստների մոտ: Այսպիսի պայմաններում պատերազմի վերադիր

ծախքերը կարող եյին իջեցվել մինչև մինիմում, քանի վոր շատ դեպքերում կարելի կլիներ մթերել վոչ միայն իր սեփական, այլև թշնամու իրերը, վորոնք անպետք կլինեյին ռազմական գործածության համար: «Վոչ մի սրբապղծություն չի լինի,—ասաց նա ինձ,—յեթե պատերազմն ոգտագործվի գիտական-մանկավարժական ձեռնարկներ պատրաստելու համար: Այսպես, որինակ, թշնամու զինվորների գլխակները կարելի յե ոգտագործել իբրև կմախքներ: Համալսարաններն ու թանգարանները մեծ պահանջ ունեն կմախքների և սրանց գները հրաշալի յեն, բարձրանալու տենդենցներ են ցույց տալիս»:

Այժմ նա զբաղվում եր շան մորթիներ և կաշվե պայուսակներ գնելով: Նա ինձ պատմեց, թե պատերազմի ժամանակ վաստակել է այնքան, վորքան չեր կարողանա տասը տարվա ընթացքում, բայց,— հպարտությամբ շեշտեց նա,— զենքի առևտուր չի արել և զինվորական մատակարարման մարմիններին ապրանք չի հայթայթել: Այժմ նա միայն յերազում է գալիք պատերազմների մասին: «Այս Կոմունան ինքնին ինձ համար հետաքրքիր չէ,—ասաց նա,—բայց զգում եմ, վոր նա ինչ-ինչ դեպքեր կառաջացնի Իսպանիայում և Ռուսաստանում: Այսպես են ասում մեզանում, բորսայում»:

Յես նրան խնդրեցի պատմել, թե ինչպես է ապրում Փարիզի անգլիական գաղութը: Նրանք գնումներ են կատարում—պատասխանեց նա ինձ: Յեվ, վորովհետև յես իսկույն չհասկացա, թե ինչումն է բանը, նա ինձ բացատրեց, թե քաղաքի պաշարման ժամանակից սկսած, յերբ ֆրանկի գինը խիստ ընկավ, չկա մի ավելի շահավետ բան, քան իրեր գնելը: «Յեթե դուք ուզում եք, վոր ձեր յուրաքանչյուր ֆրանկը մինչև վաղն իր գնի միայն քառորդը կորցնի, այսոր վորևե բան գնեցեք: Այն ֆրանկը, վորը գիշերում է ձեր գրպանում, առավոտյան դառնում է քսան սանտիմ»: Յես ուշադրություն դարձրի այն հանգամանքի վրա, վոր նա ինձ մոտ յեկավ մի մեծ ծրարով: «Դրանք գնումներ չե՞ն»,—հարցրի յես. Նա պատասխանեց, թե իր գրպանում մի քիչ փող եր

մնացել և վորպեսզի այդ փողը մինչև վաղը չմնա, նա գնեց մի քանի գործվածքային տիկնիկներ՝ գեղարվեստորեն պատրաստված, Լուի Նապոլեոնի անվանատառերով մի ախոռ և բաղկաթոռի համար. կիսամաշ մի թավշյա բարձ: «Առավոտը յես այս բոլորը կուղարկեմ հնավաճառին և հավանորեն կստանամ յերկու անգամ ավելի»:

Յես նրան խնդրեցի ասել, թե չգիտե՞ արդյոք նախկին կայսերական բանակի մի քանի ականավոր զորապետերի հասցեները, վորովհետև նրանք կարող եյին ինձ տեղեկություններ տալ այն ճակատամարտերի մասին, վորոնց յես անցյալ անգամ մասնակցել եյի վորպես ռազմական թղթակից: Նա պատասխանեց, վոր շատերը մնացել են Փարիզում, ինչպես, որինակ՝ Մակ-Մահոնի բանակի գլխավոր համբարակը և ելի մի քանիսը, և նրանք պարենով վարձատրություն ստանալու դեպքում ամեն տեսակ տեղեկանքներ կտան ինձ: Հետո նա ձեռքը խփեց ծնկիս և ինձ առաջարկեց պատերազմի ժամանակ կայսերական գլխավոր հրամանատարության տված բոլոր հրամանների պատճենները, յեթե յես նրա համար մի փոքրիկ պայմանագիր հաջողեցնեմ Բարեչինության հանձնաժողովի հետ: Յես նրան խնդրեցի առայժմ հետաձգել այդ խոսակցությունը: Հեռանալիս նա հայտնեց ինձ, թե պատրաստվում է գրել մի գիրք,—«Պատերազմը առևտրականի տպավորություններով»: Ինձ համար հիմա սարսափելի յեր մտածել, վոր հասարակական մեկ խավի շարքերում կարող են լինել այնպիսի տարբեր մարդիկ, ինչպիսին են այս հեծելազորային վաճառականն և միստեր Ո–ն,— Մարքսի պատվիրակը:

ՏՈՒՐՆՈՆ ՓՈՂՈՑ, 15

Տիրոյի գրախանութն իսկապես վոր ազնվական յեր: Նա նման եր բորսայական տենդոտ որերում գործող աշխույժ մի բորսայական կաֆեյի: Լրագրերի ընթերցանության համար (Տիրոն, ինչպես մենք իմացանք Ռ—ից, շնորհիվ դեսպանություններում իր ունեցած կապի, ստանում եր արտասահմանյան և գավառային լրագրեր) նախորոք պատրաստած սանտիմները բարձրասեղանի վրա նետելով, անընդհատ ներս եյին մտնում նորանոր հաճախորդներ, չնայելով, վոր ընթերցանության սեղանի շուրջը վաղուց տեղ չեր լինում:

— Բա՛րձր կարդացեք,— գոռում եյին մի մարդու վրա, վորը տիրացել եր «Թայմս»—ին:

— Իսկի միտք ել չունիմ: Ինչո՞ւ համար:

— Ի՞նչ գներ են «Կոնգո» ընկերությունում:

— Յես խնդրում եմ ինձ համար կազմել փոխադրավարձերի ցուցակը,— ասում եր դարչնագույն ցիլինդրով մի մարդ խանութի ավագին,— Հավրի, Լիոնի, Մարսելի համար: Յես Կինդն եմ: Ի՞նչ: Հայտնեցեք ձեր տիրոջը, վոր Կինդն ուզում ե խոսել նրա հետ:

Բարակ միջապատից,— վորի հետևում գտնվում եր մի փոքրիկ սենյակ առանձնապես կարևոր զրույցների ու ընդունելությունների համար, ծերունի Տիրոն կարող եր հեշտությամբ լսել ամեն ինչ:

Նա տարակուսանքով շշնջաց.

— Կի՞նդը:

Նրա կողքին նստած քննադատն ասաց.

— Տիրո՛, ձեր տո՛ւնը չքանդվի: Կինդն ամենախոշոր նավային ընկերության տերն ե... Դուրս յեկեք նրա մոտ:

Ծերունի Տիրոն ջղայնությամբ շարժեց յերկու ձեռները:

— Նա յերբեք չի յեղել իմ հաճախորդը: Յեվ գիտե՞ք ինչ, բարեկամս, այդ բանն սկսում ե ինձ ձանձրացնել:

Տիրոյի գրախանութը պատկանում եր ամենահարգված և լավ սկսված ձեռնարկությունների թվին: Նրա հաճախորդների թվում եյին Ֆրանսիայի լավագույն անունները: Նա հպարտանում եր նրանցով, ինչպես քոլեջը լաուրեատներով, և ծերունի Տիրոն իր ծոցատետրում վո՛չ առանց ներքին հպարտության գրանցում եր այն իմաստալից գրքերի ցանկը, վորով սնում եր Փարիզի տաղանդներին: Նա կարող եր հաշվել, թե վոր չափ գիտելիք, ինքնուրույնություն, իրազեկություն կամ հոգեկան բովանդակություն ե մտցրել իր հռչակավոր հաճախորդի այս կամ այն յերկի մեջ, նա կարող եր իր ժամանակակիցներից ամեն մեկին բաժանել հին գրքերի ու հին անունների առանձին բաղկացուցիչ ելեմենտների, գրքեր և անուններ, վորոնց միմիայն թվարկումը հեղաշրջում կառաջացներ ստեղծագործության վերաբերյալ գիտության մեջ:

Մեծ գրողների պատկերները զարդարում եյին խանութի պատերը: Պատկերներն ունեյին մակագրություններ: Նրանք նման եյին այն գործարանային մոդելներին, վորոնք պարգևներ են ստանում ցուցահանդեսներում: Առանձնասենյակի դարակներում գտնվում եյին տիրոջ գործարարական մատյանները, վորոնցից մի քանիսը նվիրված եյին հաշվապահական գրանցումներին, միքանիսն ել պարունակում եյին ամենահազվադյուտ գրքերի վերաբերյալ տեղեկություններ, մի քանիսներն ել պարունակում եյին աչքի ընկնող հաճախորդների շահերի հաշվառքը: Այնտեղ կային Զոլայի, Ֆլոբերի, Գոնկուրովի եջերը: «Ռուգոն Մակկարով»—ի հեղինակին հատկացված թերթի վերջին տողը, վոր գրված եր ապրիլի 10—ին, ասում եր.— «Նա դժգոհությամբ հավանություն ե տալիս ամեն ինչի: Ընտրում ե

այժմյան ուղղության բրոշյուրներ: Աֆիշաներ չի հավաքում»:

Տիրոյի գրախանութում հարգի էին հին ծառայողները: Գործակատարներն աշխատում էին սերնդից սերունդ, հայրը խանութ էր բերում իր անչափահաս վորդուն և տաս–տասներկու տարուց հետո նրան էր հանձնում իր բաժինը: Ակադեմիկոսները սիրով զրուցում էին այնպիսի մարդկանց հետ, ինչպիսին էր Գաբրիել Բոննեն, «Վերածնունդ» բաժնի վարիչը: Խանութում աշխատող պատանիները տասնհինգ տարեկան հասակում ավելի շատ բան գիտեյին, քան ամենաջանասեր, գիտական ստորին աստիճան ունեցող մարդիկ, տասնինը տարեկան հասակում նրանք արդեն հանդես էին գալիս (ճիշտ է, Տիրոյից ծածուկ) վորպես գրախոսներ, իսկ զինվորական ծառայությունն անցնելուց հետո դառնում էին պրոֆեսիոնալ քննադատներ: Հենց վոր խանութում մի նոր մանուկ էր յերևում, պատվավոր, մշտական հաճախորդներից մեկը,— ամենից առաջ Զոլան,— ասում էր խանութի տիրոջը:

— Ծերուկ, այս ի՞նչ բան է, վոր էլի բերում ես մեր գլխին: Ի՞նչ կլինի, վոր բանաստեղծներ պատրաստես, հը՞: Նրանք գոնե վոչ վոքի վնաս չեն հասցնում:

— Այս հրաշալի մանչուկն արդեն ինձ է կպչում,— խլթխլթում էր Ֆլոբերը:—Ազնիվ խոսք, նա գրում է «Նշանավոր հանդիպումներ» անունով մի գիրք և նրանում պատմում է, թե ինչ հիմարներ ենք մենք, յերբ նստում ենք Տիրոյի մոտ և գրենադին ենք խմում: Հետո նա պետք է ասի, թե յես իրեն հետ վիճել եմ և, իհա՛րկե, պարտվել:

Ակադեմիկոսները գնում էին Գաբրիել Բոննեյի մոտ, Ժան Պոլ Մարատը (մեծ մարդու անվանակիցը) տարեցտարի ծանոթություններ էր ներկայացնում Ակադեմիայի բառարանի համար, իսկ աբբա հայրերը սիրով լսում էին Տիրոյի դիտողությունները յեբրայիզմի գրականության մասին: Ծերունին անուս էր, բայց գիտեր ամեն ինչ: Վոչ մի գիտնական չէր կարող ունենալ նրա էրուդիցիան, վորովհետև վերջինս դուրս էր գալիս

գիտության սահմաններից, և նա թեթևակի հեգնանքով իր մասին ասում էր.—«Գիտնականը նա չէ, ով ամեն ինչ գիտե,—այդպիսին չկա,—նա էլ չէ, ով շատ բան գիտե,— այստեղ սահմաններ չկան,— գիտնականը իմանում է, թե ինչ պիտի գիտենալ և ինչ կարելի յե չգիտենալ տվյալ մոմենտում, ուրիշ խոսքով, նա գիտե, թե մինչև վոր աստիճան գիտելիքներ ունի, վորովհետև քչերն են, վորոնք ճանաչում են իրենց չգիտության տարածությունը» Ծերունի Միշյուն վարում էր հունական ու հռոմեյական բանաստեղծների բաժինը, նրանց բոլորին անգիր գիտեր, հիշում էր, յերբ, վորտեղ և ինչպես են հրատարակված նրանք, ով է նրանց հավաքում, ով է ուսումնասիրում: Ամեն անգամ, յերբ մամուլում նոր հոդված էր յերևում Հորացիուսի, Եսքիլոսի կամ Սաֆոյի մասին, նա գնում էր հեղինակի մոտ, տուն, կասկածելիորեն ծանոթանում էր նրա հետ և բարձրաձայն նախատում էր տգիտության, գռեհկության կամ հայացքների չարաշահության համար:

Տիրոն ուներ մի վորդի: Խանութը նրա համար սկզբում մանկանոց էր, հետո դասարան, հետո դիսկուսիոն ակումբի և քոլեջի դասախոսությունների դահլիճի պես մի բան: Յերիտասարդ Տիրոն գրքեր չէր հավաքում, չէր յերազում դառնալ գիտնական, չէր մտածում քննադատի դափնիների մասին, և վորովհետև նա խանութի տիրոջ տղան էր, ուստի յուրաքանչյուր բաժնի շեֆ նրան իրազեկ էր դարձնում իր զբաղմունքի ամենախորը գաղտնիքներին: Հռոմեյական և հունական կլասիկներին նա գիտեր մանկությունից, լսելով: Դրանք նրա առաջին հեքիաթներն էին, վորոնց մասին դժվար էր հետո պատմել, արդյոք կարդացե՞լ էր նրանց, լսե՞լ, թե՞ ինքը հնարել: Կլասիկներից և յեբրայիզմի հերետիկոսներից հայրն ուղղակի մեջբերումներ էր անում տանը, ինչպես որացուցային գուշակություններ՝ յեղանակի մասին, իսկ Բոննեն, պատմելով շուկայի վորևէ պատահարի կամ կաֆեյում յեղած խայտառակության մասին, իր պատմությունը համեմում էր վերածննդի ժամանակաշրջանի մարդկանց վերաբերյալ

անեկդոտներով: Ֆրանսիական էնցիկլոպեդիստները միակ մարդիկն եյին, որոնցից նա կարծիքներ էր ընդունում առանց յերկար մտածելու: Մարատը սիրում էր խոսել միայն տեղեկանքներով, ծանոթություններով: Այն ամենը, ինչ որ կատարվում էր աշխարհում, յեթե իր սկզբունքային նշանակությամբ չէր արժանանում ակադեմիայի բառարանի մեջ մտնելուն, նրան չէր զբաղեցնում:

Յերիտասարդ Տիբոն քսան տարեկան հասակում գիտեր այն բոլորը, ինչ որ կար մարդկային քաղաքակրթության գրքերում: Հասկանալի չէր, թե նա ինչով է զբաղվելու: Այս պատճառով տանը միանգամայն բնական համարեցին այն, որ նա համեստորեն հետաքրքրվել է գեղարվեստով: Նա իրեն համար ընտրեց մականուն—Անատոլ Ֆրանս, սակայն խանութում բոլորը համոզված եյին, որ այդ մականունը յերբեք հարկավոր չի լինի յերիտասարդ տիրոջը: Յեթե այն ժամանակ ծերունի Տիբոյին ասեյին, թե նրա որդին հռչակավոր գրող կդառնա,— նա միայն անվստահությամբ կշարժեր ուսերը: Նրան ծանոթացրին տասնյակ յերիտասարդ նկարիչների հետ, որոնք դեռ անուն չունեյին, որպեսզի նա փորձեր վարժվել այդ արվեստում: Նա պետք է ստեղծեր ինչ-որ բան կամ խորտակեր միքանի հեղինակություններ, բայց թե ինչպես կաներ այդ, ոչ ոքի չէր հետաքրքրում: Հնարավոր է, որ յերիտասարդ Տիբոն ուզենար նաև պատմությամբ զբաղվել: Պատահում էր, որ գնալով պետրոլի համար հերթ կանգնելու կամ նստելով ոմնիբուս, նա իր հետ վերցնում էր Պլուտարքոսի հատորը: Յերբեմն նա թերթում էր Կեսարի հիշողությունները կամ քնում էր՝ Տիտոս Լիվիուսի գրքով դեմքը ծածկելով ճանճերից:

Հետո խանութում բոլորն սկսեցին դիմել նրան, որպես ամեն ինչ լավ հիշողի: Նա յերիտասարդ էր, ազատ և գլուխը լիքն էր: Վերջիվերջո նրան հանձնարարեցին միջնապատի հետևում ընդունել հյուրերին: Այստեղ պատմվում եյին դեպքեր, որոնք չեյին մտել և ոչ մի մակաբերության մեջ, հիշվում եյին մարդիկ,

որոնք չկային և ոչ մի բառարանում, բարձրաձայն արտահայտվում եյին այնպիսի մտքեր, որոնք դեռ չեյին մտել և ոչ մի գրքի մեջ: Միջնապատի հետևում տեղի ունեցածն օտար էր խանութին, որովհետև դեռ չէր հրատարակված:

Թափահարելով ճմլված լրագիրը, որը նմանում էր մեծ թաշկինակի, աշխույժ ներս էր մտնում Երնեստ Դոդեն:

— Ո՜ֆ, ծարավի՛ յեն աստվածները,— գոչում էր նա, խրխռալով շնչահեղձությունից,— ծարավի՛ յեն մեր բոլոր աստվածները,— և կարդում էր ռազմաճակատի տեղեկությունները, ձերբակալությունների վերաբերյալ լուրերը և սպառնալիքները՝ թաքնված թշնամիների հասցեյին:

Ի պատասխան նրա բացականչությունների, վաճառասեղանի հետևում շեֆերը կամացուկ ընդդիմախոսություններ եյին փոխանակում:

— Այդ ֆրազը Կարլեյլից է,— աշխույժ արտասանում էր Մարատը:

— Ներողություն եմ խնդրում, պատերազմի հայտարարման այդ ֆորմուլան աֆրիկական ցեղերի մեջ...

— Ոչ Կարլեյլից է, բարեկամներս, ոչ էլ ֆորմուլա յե,— ընդհատում էր ավագ Միշյուն,— այդ ասված է մեր գաղութային քաղաքականության մասին: Արտաքին գործերի մինիստրության տարեգրքի տասնվեցերորդ հատորը:

Ֆլոբերը ներս էր վազում, ինչպես թատերական կոստյում հագած վհուկ: Նրա թավշյա զգեստը կավճոտ էր, մայրամուտի գույնի անսովոր բաճկոնը ցոլքեր էր տարածում, սպիտակ գլխարկը թույլ չէր տալիս նայել նրա դեմքին, այնքան հաստ յեր նրա լույսը, այնքա՛ն արևավառ էր նա:

Ինձ կարելի յե հեշտությամբ սպանել,— ասում էր նա,— թող միայն փակեն «Օդեոնը» և յես մեռած եմ: Այսօր արդեն սուրճը գազարից էր, հասկանո՞ւմ եք: Թխվածքները չքացել են: Շո-կո՛լադ չի լինելու: Յես այդպես ամբողջ կյանքո՛ւմ: Ընդմի՛շտ:

Ներս էր մտնում անորոշ հասակի մի մարդ, քաղաքավարությամբ անցնելով յուրաքանչյուր հանդիպողի կողքից: Նրա բեխերի և միրուքի ծայրերը, վորոնք սրված էին կոսմետիկայի միջոցով, նմանվում էին յերեք ժանիքների, վորոնք շրթունքները պաշտպանում էին հարձակումներից: Հայտնի յեր, վոր նա նամակագրություն ունի Հյուգոյի հետ և շատ բան կարող է անել: Նրան ատում էին, արհամարհում, վախենում նրանից, բայց, իհարկե, ավելի շատ նախանձում էին նրան:

— Ձեր հարգելի բարեկամն ի վիճակի յե շատ բան անել,— շշնջալով ասում էր նրան վորևե մեկը:— Յեկեք միասին գրենք նրան:

Կամ, գրկելով ու համբուրելով բեխերի ժանիքների միջով, ասում էին արտասված.

— Գրեցեք ուսուցչին,— գերմանական ժողովրդին ուղղված նրա նամակը լավագույնն է այն ամենից, ինչ վոր ունի մեր գրականությունը: Դրանից բարձր վոչինչ չկա:

Իսկ յերբ այդ մարդը գնում էր, նրանք անբռնազբոս ասում էին.

— Յեթե ծերունին համարձակություն ունեցավ այստեղից փախչել, ապա ազնվությանը տուրք տալու համար այլևս չպիտի խառնվի Փարիզի գործերին:

— Դուք այնքան էլ իրավացի չեք: Նա մեկնեց, վորպեսզի կարողանա ազատ արտահայտվել: Նա բազմաթիվ միջոցներ է ձեռք առել Փարիզի դեպքերը ճշմարտապես լուսաբանելու համար:

Հյուգոյի անունը ջղայնացնում էր խանութի բոլոր մշտական հաճախորդներին: Նրանք մոռանում էին, վոր միշտ խոնարհվել են նրա առաջ, նմանվում էին նրան, սովորում էին նրանից: Այժմ նրանք միմիայն նախանձում էին, վոր Հյուգոն Փարիզում չէ:

— Ի՞նչ է շինում նա այնտեղ, Բրյուսելում: Ա՛խ, հա՛: Նա այնտեղ վերահրատարակվում է, իհարկե՛:

— Նա վեպ է գրում: Այդ սուր բեխերով մարդն ամեն օր նրան ուղարկում է ահագին կապոցներով

այստեղի լրագրեր և քսան էջանոց նամակներ, վորտեղ տրվում են մեր բոլորի բնութագծերը: Հասկանո՞ւմ եք, նրան հարկավոր են անեկդոտներ ու բնութագծեր:

— Վերջիվերջո նա իրավացի յե,— ասում էր Դյումա—վորդին:— Անեկդոտներից ծնվում է նյութը, արտաքին ճիշտ բնութագծերն ավելի խորն են պատկերացնում վեպի հերոսներին:

Դյուման խոսում էր հազիվ նկատելի հեգնանքով, ինչպես մեծը— փոքրի մասին, թեպետ իր գրական ամբողջ կարյերայով պարտական էր Հյուգոյին:

— Ի՞նչ է գրում նա,— անփույթ և իբր թե չշահագրգռված հարցրեց Դյուման:

— Նայած մի քանի լուրերի, ինչ-վոր բան է գրում իննսուն յերեք թվականի Վանդեայի մասին:

— Վանդե՛ա— Դյուման արտասանեց այս բառն ինչպես Կոլումբոսը ցամաքը տեսնելիս,— սատանան տանի, իհարկե, Վանդեան: Մեր Կոմունայի փորձով կարելի յե գրել ամեն ինչ,— և՛ Հռոմի հրդեհը, և՛ քրիստոնյաների խաչելությունը, և՛ կաթոլիկների պայքարը հուգենոտների դեմ:— Հանգստանալով, նա խրատական տոնով ավելացրեց.— Բայց գլխավորը, պարոններ, պեյզաժն է:

Նա գրական այնպիսի բարձր անուն ուներ, վոր կարծես իր մեջ միավորում էր գրողների մի քանի սերունդների փորձը, և փորձառության այդ տպավորությունը խաբում էր շատերին: Նրա հայրը, հետո ինքն, այնքան շատ էին գրել, վոր հեշտությամբ կարելի յեր շփոթել, թե վո՛ր գրվածքն ում է պատկանում: Վորևե մեկի այն յերկչոտ հարցին, թե ո՞վ է «Քրիստինայի» հեղինակը, Ալեքսանդր Դյումա— հա՞յրը, թե՞, նրա վորդին,— նա անփույթ, տիրական փաղաքշությամբ պատասխանում էր.

— Այո, այդ մերն է: Այդ բոլորը մենք ենք: Դյուման, այդ արդեն ուղղություն է, պարոններ:

Յեվ ճիշտ է, նա, ինչպես և հայրը, գրում էր սուր սյուժեյով յերկեր, ամբողջովին շարժումներից, փողոցի քրոնիկայի նյութերից, բայց հին պատմողի պաֆո-

տով: Ամեն մի սպասուհու յերեկոյան արկածը նրա գրչի տակ դառնում եր հատված «Ծեխերազադեյից», նա նրան տալիս եր ճարպիկ հնարամտության իմաստ, պատմության հյուսվածքը վերցնելով կենսական իրադրությունից և բոլոր զգացումները դարձնելով հնարավոր, բոլոր արարմունքները հեշտ ու մատչելի: Վոչինչ գոյություն չուներ բնության մեջ— վոչ շահագործման յերկաթե որենքները, վոչ աղքատություն, վոչ արատ, վոչ տխրություն,— այլ կար միայն ցանկությունների կորով: Նրա հերոսների զգացումների մեջ չկային հակասություններ: Ներքին պայքարը անհայտ եր նրանց և միակ բանը, վորը տապալում եր նրանց, այդ արիության կամ լկտիության պակասությունն եր:

Սակայն տոհմական գրողի այդպիսի անուն ունեցող մարդը, ինչպիսին Դյուման եր, զուրկ չեր վոչ խելքից, վոչ տաղանդից, թեպետ յերկու Դյումաների գրվածքներից շատ բան ցածր խալտուրա յեր: Նա ինքը գիտեր այդ բանը և նույնիսկ յերբեմն բարձրաձայն խոսում եր խալտուրայի մասին, բայց սեփական արժանիքի այնպիսի զգացումով և այնպիսի հեգնանքով, վոր վոչ վոք հարց չեր տա, թե ինչու յե նա այդ անում: Այնպիսի մի մարդ, ինչպիսին Դյուման եր, իրավունք ուներ ամեն բան անել: Նա նույնիսկ ուխտ արեց ամուսնանալ Մոսկվայի մի պառավ «առյուծուհու» հետ, վորն այնպիսի վարք ու բարք ուներ, վոր վոչ վոք չեր կարողանում դրա արժանի անունը տալ: Նա ամեն ինչ կարող եր անել:

Սակայն Տիրոյի խանութում նրան չեյին սիրում իր հիմարության համար, մեկ ել նրա համար, վոր նա անվերջ գնում եր հազվագյուտ գրքեր, առանց նրանցից վորևե բան հասկանալու: Նա այդ գրքերը գնում եր հարուրներով, լուսանցքները խծբծում եր մատիտով, կտրում եր թերթերը և կպցնում իր ձեռագրերին, գրեթե առանց ուղղելու, և նրա արարմունքների ու դատական պրոցեսների լուրերը յերբեք չեյին տարածվում բուկինիստների մեջ:

Բայց ահա խանութ եր մտնում Երկման–Ծատրիանի մի վորևե կեսը: Նույնիսկ Փարիզում շատերն Երկման–

Ծատրիանին համարում եյին մի անձնավորություն և չեյին յենթադրում, վոր «Մի գյուղացու պատմության» հեղինակը— այդ յերկու համեստ ու աշխատող ելզասցիներ են, կիսաֆրանսիացիներ և կիսագերմանացիներ, վորոնցից Երկմանը մինչև այժմ հայտնի յեր իբրև հրապարակախոս, իսկ Ծատրիանը նույնիսկ ցուցակագրված եր իբրև գյուղական ուսուցիչ:

Նրանք հազվագյուտ դեպքերում եյին միասին լինում: Ավելի հաճախակի լույս աշխարհ եր յելնում Ծատրիանը: Դյուման նրան և Երկմանին վաղուց համարում եր իր ամենավտանգավոր մրցակիցները: Հիրավի, ելզասցիները վեպը վեպի հետևից լույս եյին ընծայում այնպիսի տեմպերով, վորոնք հատուկ եյին միայն հանգուցյալ Դյումա—հորը: Նրանք գրում եյին ամեն ինչ.— վոտանավորներ ու պատմվածքներ, վիպակներ ու պիեսներ, բայց այնպիսի բնույթ վորակով, վորը չեր կարելի այլ կերպ անվանել, քան գաղափարականություն: Մշտապես ժպտող Զոլյան կասկածամտորեն վերընթերցում եր «Մի գյուղացու պատմությունը», վորի մեջ կար հենց այն, ինչ վոր նա պատրաստվում եր անել քաղաքի կյանքի վերաբերյալ,— դեղջկական ճյուղավորված տոհմի քրոնիկոնը, այն տոհմի, վորը մեծ հեղափոխության տարիներում իր շոշափուկներով թափանցել եր բանակը, մանր արդյունաբերությունն ու յեկեղեցական աշխարհը: «Մարսելի գաղտնիքներից»,— Դյումայի ազդեցությամբ գրված վեպից հետո, Զոլյան փնտրում եր մարդկային նյութի վերամշակման նոր մեթոդներ: Նորության նշանները նա ջղայնությամբ գտնում եր «Մի գյուղացու պատմության» մեջ:

Յեվ ահա հենց վոր «Մի գյուղացու պատմության» հեղինակի կեսը մտնում եր խանութի դռնից, Դյուման հոխորտում եր իր աղմկալից թատերական ֆրազով.

— Հը՛, Ծատրիան, դուք լավ ժամանակին յեկաք: Այո, հենց դուք, բարեկամս: Ասացե՛ք խնդրեմ (չե՞ վոր դուք պետք ե գիտենաք, դուք, այսպես ասած՝ մոտիկ եք այժմյան շրջաններին),— սիրամարգի և բադի ի՞նչ հեքիաթային մերձեցմամբ, սեռական ի՞նչ հակա–

ություններից, ի՞նչ արյան խառնուրդից կարող էր առաջանալ այն արարածը...

Նրա ֆրազը խանութի աղմուկից ավելի բարձր էր լսվում և հնչում էր այնտեղ՝ ինչպես նվագախմբի նվագակցություն:

—... վորին անվանում են պարոն Գուստավ Կուրբե: Ի՞նչ զանգի տակ, ի՞նչ աղբի միջոցով, գինու, գարեջրի, կծու խնքի և ուռած բշտիկների ի՞նչ խառնուրդից կարող էր աճել այդ գնդուն ու բրդոտ դդումը, այդ եստետիկական փորովայնը, անիմաստության ու անուժության այդ մարմնացումը: Հայա՛, ասացե՛ք ինձ:

— Ազնիվ խոսք, Մոսյո Դյումա... մենք լավ պատրիոտներ ենք և այդ Կուրբեյի հետ... մ—մ—մ—մ... ինչպես ասեմ ձեզ... մենք ուղղակի ծանոթ չենք, մոսյո Դյումա: Մենք բոլորովին հեռու ենք նրանից, ինչ վոր կատարվում է...

— Ինձ միշտ ընդհակառակն է թվացել: Ուրեմն դուք վոչինչ չգիտե՞ք:

Դյումայի լայն, տիրական կուրծքը, վորի վրա փափլիկ իջել էր սպիտակ պարանոցն ուռուցիկ ու գեր գլխի հետ, փուքսի պես խռխռում էր:

Յեվ նա, շարունակելով դերասանի պես թալթալ և թափահարել ձեռները, տաք-տաք պատմեց այդ Կուրբեյի զազրելի, մղձավանջային, վայրենի արարքը, վորի մասին ամոթի ու կատաղության զգացմունքով է խոսում ամբողջ Փարիզը (թեպետ ինքն էլ այդ արարքի մասին հենց նոր էր լսել):

— Բարեկամս, նրանք վորոշել են քաղաքի ակումբներն ու հրապարակները հանել Լուվրի լավագույն անդրիագործական իրերը: Ինչ-վոր կոշկակարների կամ արտաքնոց մաքրողների գարշահոտ ակումբներում ցուցադրել Բորգեսի առյուծը, լվացարարուհիների մոտ— պպզած Վեներան, միդինետուհիների մոտ— Հռոմի ճարտարախոսին: Փողոցներում, հրապարակներում, միջանցքների մո՛տ: Ակումբներում, վորպեսզի Վեներայի վրա հանգցնեն ծխած գլանակները: Ճեմելիքներո՛ւմ, վորպեսզի Վիրավոր գալլը մեջքը

ծածկվի սիրահարված... Բուխսոնը բացեց դուռը և կտրեց ֆրազը.—... հրդեհաշեջների կեղտոտ մակագրություններո՛վ:

—Այդ միայն յենթադրություն է յեղել,— ասաց Բուխսոնը, դեռ վոչ վոքի լավ չգիտած:

Յերիտասարդ Տիրոն, վորը նստել էր շարժական սանդուխքին, գրքով նշան արեց նրա կողմը:

— Ա՛յդ էր պակաս, վոր կատարվեր,— խստորեն գոչեց Դյուման,— ա՛յդ էր պակաս, յերիտասա՛րդ:

Դեպի Համաձայնության հրապարակն էյին սլանում հրդեհաշեջ խմբերը և վազելով, այնտեղ էյին հավաքվում սապյորական վաշտերը: Հողն այնքան փորփրված էր բարիկադների համար, վոր թշնամու արկերը քարուքանդ էյին անում կոյուղու խողովակները: Տեղ-տեղ պղտոր լճակներ կային: Գարշահոտություն էր տարածվում:

Դյուման, քաշելով Մարատի զգեստի փեշից, հարցրեց նրան.—

— Սա, վոր նոր յեկավ, լրտե՞ս է:

— Մեր յերիտասարդի ընկերն է: Նկարիչ է: Շուտով պետք է ցուցադրենք նրա աշխատությունները:

— Հը՛մ, ահա թե ինչ,—հանդստացած և խնամակալական տոնով պատասխանեց Դյուման,— ջահելություն— խակություն: Այնպես չէ՞:

Դրսում, փողոցում—

G'est la canaille.
Et bien! J'en suis!

— Յերգեցին աշակերտները:

Մի քանի ժիր գլուխներ հպվեցին դրսի դռան ապակուն: Նրանցից մեկը, վորը բոլորովին չիկահեր էր, լեզուն հանեց ու ցույց տվեց խանութում նստածներին: Մյուսը ծվծվաց.

— Նրանք ակվարիումի ձկների յեն նման: Տե՛ս, հրեն, նա ուղղակի լոքո յե:

Մանուկները հրհռացին, առանց քաշվելու շարունակելով իրենց ծաղրական դիտողությունները.

— Հե՛յ, լանգուստներ, ատակոսներ, թարմ եսկարգոններ,— ճչաց չիկահերը, ձայնը նմանեցնելով ծանոթ ձկնավաճառի ձայնին:

— Յեվ սրանք յերեխաներ են,— տխուր կատակությամբ ասաց Դյուման,—լսեցի՞ք, ինչ են ասում:

— Դու ի՞նչպես ես յեկել այստեղ: Յես քեզ չեյի սպասում,— հարցրեց Բուխսոնը յերիտասարդ Տիրոյին:

— Պատահմամբ և կարճ ժամանակով: Մեկ-յերկու օրով: Լսիր, Բուխսոն, գնա՞նք տեսնելու մի հինալի գրադարան,—հարցրեց յերիտասարդ Տիրոն:— Այնտեղ, ի միջի այլոց, տասնյակ նկարներ կան:

— Միևնույն ե,— ասաց Բուխսոնը և անցավ բարևելու ծերուկին և իմանալու իր նկարների մասին, վորոնք մի քանի օր եր արդեն, վոր խանութում եյին:

— Գիտե՞ս, յես հարցը լուծել եմ,— ասաց նրան ծերունին,— կիրակի օրվանից վերջ եմ տալիս լրագրերի այս հիմար ընթերցանության: Այստեղ կարծես ինչ-վոր բորսա լինի: Այո, և, իհարկե, դա իմ գործը չե:

Ներս մտավ Միշյուն, վորպեսզի զեկուցի, թե խանութում առավոտյան ինչ առաջարկներ են ստացված:

— Բերին Լամբերի թղթերը,— ասաց նա,— այն մարդու, վորն սպանված ե Բյուզենվալի մոտ: Դեպի Հյուսիսային Բևեռ ճանապարհորդելու նախագիծ ե:

— Ա՛յ, դա մեր գործն ե: Գնե՛լ,— կարգադրեց Տիրոն:

— Առաջարկում են Ռենյոյի,— վորը նույնպես սպանված ե,—«Սոլոմեայի» ետյուդները:

— Գնե՛լ, գնե՛լ,— ասաց Տիրոն:

Յերիտասարդ Տիրոն և նկարիչը դուրս գնացին փողոց:

— Խորհուրդ տուր հորդ գնել գեղարվեստական այն բոլոր նյութերն ու իրերը, վորոնք մնացել են Բյուզենվալից հետո,— ասաց Բուխսոնը ծանր և կծու տոնով,— այդ մի զմայլելի կոլեկցիա կլինի: Ռենյոյի

ալբոմները նոր նկարների ուրվագծերով, Լամբերի չավարտված հետազոտությունները, Բիլյարետի բանաստեղծությունները, ռումբից հոշոտված մի վորևե գիտնականի ֆիզիկային վերաբերող հայտնագործությունների տետրը, նոր Վագների սիմֆոնիան, վորի աղիքները դուրս են թափվել ավինով:

— Այդ կոլեկցիան վոչ մի սու ոգուտ չի բերի.

— Բայց նա ցույց կտա, թե ինչ բան ե մեր քաղաքակրթությունը:

— Հը՛մ, այո, դուցե: Բայց չե՞ վոր դու գիտես, յես ու հայրս եյապես չենք առարկում վոչ պատերազմի և վոչ ել գիլյոտինի դեմ: Սպանությունը բնական իրավունք ե և մահվան պատիժը միանգամայն օրինական ե: Պատերազմն— առավել ևս: Սակայն,— յերիտասարդ Տիրոն ուսը թափահարելով, թիկնոցը գցեց թևին,— դուցե իմ բնազդներն այլասերված են, վորովհետև ինձ համար այնուամենայնիվ զզվելի յե արյունահեղություն տեսնել:

Աշակերտների բազմությունն անցնում եր թանգարանը դիտելու:

Ռա՛ղղլ, դա՛ղղլ, հո՛բբլ-դոբբլ,
Սի՛ս, բո՛մ, ա՛,
Վիկտո՛րիա, Վիկտո՛րիա,
Ռա՛, ռա՛, ռա՛:

— Այդ անհասկանալի բառերումն ե հեղափոխության ամբողջ հերոսությունը,— ասաց յերիտասարդ Տիրոն,— ռա՛, ռա՛, ռա՛,: Դու վորևե բան հասկանո՞ւմ ես:

Բուխսոնն առանց պատասխանելու հարցրեց.

— Այդ ի՞նչ ե,— իմ մասին քո հոդվածը «ազատ դատողություններում»: Նա ստորագրված ե ինչ-վոր խորհրդավոր անունով,— «Ա. Ֆրանս», բայց յես իսկույն ականջներիցդ ճանաչեցի քեզ:

Տիրոն ժպտաց, սակայն առանց վորևե շփոթության:

— Ա՛յ թե ինչ։ Հոդվածն, իհարկե, հիմար բան է, սակայն դու կարող ես քեզ վերագրել ինձ հետ կատարվող փոփոխության պատիվը։ Ես այսօր մտնում եմ Ազգային գվարդիա,— ավելացրեց Բուխսոնը։

Նա չռեց։

— Իմ բոլոր նկարները, որոնք ցուցադրված են ձեր խանութում,— խնդրում եմ խոնարհաբար, շատ, սրտանց խնդրում եմ,— ընդունիր այն կոլեկցիայի համար։ Այո՛։ Եվ կարող ես այս մոմենտից սկսած՝ այլևս չբարևել ինձ։ Հասկացա՞ր։

— Հազիվ թե մենք պատահենք,— ասաց Տիրոն,— ես մեկնում եմ։ Եվ դու բոլորովին իզուր ես բարկանում, Բուխսոն։

Բուխսոնը հեռացավ, թողնելով նրան մենակ։

Մոիզը, չնայելով ուշ ժամին, սպասեց մինչև Ֆրանսուա Ֆայզուլլայի ազատվելը։ Գրավականն ընդունելու վերաբերյալ՝ ֆինանսական հանձնաժողովի անդորրագիրն ընկավ ակնագործի կրծքին, ինչպես յերկրպագուի նետած ծաղկեփունջ։

— Ինչքա՞ն արժեմ ես,— առանց թղթին նայելու, հարցրեց Ֆայզուլլան։

— Ա՛խ, չէ՞ որ սա պատահականությո՛ւն է,— Մոյիզը չփոթված խուսափեց պատասխանից։— Սա նույնպիսի պատահականություն է, ինչպիսին լինում է կոմիսիոն դեպոյում։ Չպետք է հուզվել։

— Բայց դու, Մոիզ, ինչպես տեսնում եմ, գնել ես ինձ,— զգացված և նույնիսկ վիրավորված ասաց ակնագործը— կյանքումդ այսպիսի գնում չես կատարել, Մոիզ, չկասկածենք այդ մասին։

Հարկավոր էր պահականոցում ստորագրել յերեք, թե չորս տեղ։ Փողոցում, դռան մոտ կանգնած էր մի կառք, որի վրա կային բազմաթիվ զարդարանքներ։ Պառավ ձիերը, հազիվ բարձրացնելով ոտները, սմբակներով կոփում էին սալահատակը, կրկնելով մաշված տարիների խրոխտության ու պճնասիրության շարժումները։ Բայց նրանք պառավ էին և այժմ միայն կարող էին փքվել կանգնած և ուրիշ ոչինչ։

Ներս էին բերում նոր ձերբակալվածներին։ Ազատվածները դուրս էին գալիս ոչնչով չզարմացած մարդկանց ձանձրալի քայլվածքով, սիրալիրությամբ, բայց իրենց արժանիքի գիտակցությամբ բարևելով պահականոցի պերսոնալին։

Կիսազինվորական կոստյումով մի ծերունի կանգնեցրեց ակնագործին.

— Ֆրանսուա Ֆայզուլլա, դուք է՞լ եք այստեղ,— հարցրեց նա։

— Ես էլ։ Մի՞թե տարօրինակ է։

— Ինչպե՛ս չէ։ Բոլոր նրանք, ովքեր ճնշված էին հին կարգերում, այժմ դարձել են հասարակության սերուցքը։ Հակաքրիստոնյաներն ու անբարոյականներն են գլխավորում։ Գուցե դուք այստեղ տե՞ր եք, Ֆրանսուա։

— Ե՛հ, թողեք այդ, գեներալ։ Այդ բոլոր գործերը (մեր մեջ ասած, թող տերն ասված էլ չլսի) ոնց որ սառույց լինեն մաշկիս վրա։

Նա բռնեց գեներալի թևից։

— Թանգագի՛ն պարետ, ինչ էլ լինի, ես միշտ քրիստոնեյության բարեկամն եմ յեղել, ճշմարտի չէ՞։

— Սպասեցեք, սիրելիս, ես կարծեք այնքան էլ լավ չեմ հասկանում ձեզ...

— Ա՛խ, թանգագին պարետ, ես կատակ եմ անում, ես, իհարկե, կատակ եմ անում։ Եվ ի՞նչ է մնում անել հիմար ծերուկիս։ Ա՛յ, Մոիզ, դու հիշո՞ւմ ես ինչպիսի մի բաժակ նվիրեցի ես «Քրիստոսի հարության»,— այդ խղճուկ յեկեղեցուն, հը՞։ Լսի՛ր, իսկ մասնատո՞ւփը։ Ես այն պատվիրեցի հենց իրեն, Մերխելին։ Ոչ, ինչ էլ որ դուք ասեք, ես միշտ լավ կահավորանք եմ տվել ձեր աստծու համար։ Հայա՛,— նա թևով հրաժեշտի նշան արեց՝ գեներալին և դուրս յեկավ, յերեք անգամ կամացուկ թքելով։

— Չլինի թե մենք ընկնենք այս տունը, Մոիզ,— ասաց նա զգացված։

Կառքը մաս-մաս շարժվեց տեղից։ Սկզբում — անիվները, մի քանի վայրկյան հետո շարժմանը միացավ առջևի մասը՝ կառապանի հետ միասին և վերջապես

ճռճռալով իր զարդարանքներով, շարժվեց կենտրոնական մասը։

— Մոիզ, ծիծաղելու համար է այս կառքը։ Պիտի մտածեն, թե հանդուցյալ թագավորը վերադառնում է հանդերձյալ աշխարհից։ Սակայն հանգիստ թողնենք ջղերս։ Մտածենք, Մոիզ։ Ես առաջինը կմտածեմ։ Հիմա քեզ հարց եմ տալիս, ի՞նչ ես մտածում Փարիզից մեկնելու մասին։ Ինչպես ասում են, պահպանի տերը ձեզ, մնացածներիդ։

ԳՆԴԱԿՆԵՐԻՆ ՆԱՅԵԼՈՎ

«Մենք կտեսնենք,—դա պետք կգա մեր հայրենիքին»։

Չերնիշևսկի

Նեյի պարկում սլանում էին գնդակները, հրշալով ծանոթ ձայնով, ինչպես ծառերն ամառային ուժեղ փոթորկի ժամանակ։ Ոդում զգացվում էր խոնավություն, թեպետ բոլորը շատ լավ գիտեյին, վոր այդ կարտեչ է։ Մարդու ձեռքն ինքնաբերաբար բարձրացնում էր վերարկուի օձիքն ու կեպին քաշում հենց աչքերի վրա։ Դանդաղ, ցածր փոշի յեր յելնում։ Վահանակուռ չոգեկառքի կրճատող սուլոցը մենակ ու չփոթված թափառում էր պարկի հետևում։ Լամարկը, մի փոքր կաղալով, դժվարությամբ հասավ Առաջին բանակի շտաբի շենքը։ Հարկավոր էր անցնել առանց կտուրի, ջարդված լուսամուտներով և ծակ պատերով մի ինչ-վոր տան խուլ բակով, մտնել աղյուսե մի մարագ և պտուտակաձև սանդուխքով իջնել նկուղը։ Զգացվում էր յոդոֆորմի, գինու և խոնավ, լքված գետնահարկի հեղձուցիչ հոտը։ Նավթի լամպի յերերուն լույսը վերևից ու ներքից, ընկնում էր նկուղային ցածլիկ շենքի պատերին։ Գինու զամբյուղների, անտեսական իրերով լի արկղների և աղած բանջարեղնի տակառների մոտ, հենվելով պատին, վոտի վրա կանգնած, քնել էր Ֆավին՝ շտաբի պետը։ Նա բարձրացրեց համազգեստի օձիքը և ձեռները կոխեց գրպանները, նմանվելով քաղաքի կամուրջի տակ ծպտված հրջմոլիկի, վոր սպասում է գիշերվա դեպքերին։ Համհարգները նստոտել էին արկղների վրա, հոգնածությունից վախենալով շարժվել։ Նրանցից մեկը Լամարկին աչքերով ցույց տվեց գլխիվայր շուռ

տված մի զամբյուղ: Լամարկը հաճույքով մտածեց, որ
քառորդ ժամ պետք է բոլորովին հանգիստ լինի: Վոտը-
նեղում, տանջում էր նրան: Ցավը, որը հազիվ կարե-
լի յեր տանել, արտահայտվում էր ցասման միջոցով
և որքան շատ էր հայհոյում ու կատաղում Լամարկը,
այնքան թեթևանում էր նրա ցավը: Իհարկե, նա պետք
է խելոք պառկեր ու չշարժվեր, սակայն ջղերն այնքան
լարված էյին, որ ոչ մի կերպ չէյին հանգստանում:
Այդ պատահեց յերկու օր առաջ, նրա հուշակավոր
վահանակուռ շոգեկառքի վրա, Սենայի աջ ափին, Ան-
յերի կամուրջի մերձակայքում: Շոգեկառքը յերկու
յերկաթապատ վագոններով, կամուրջի հետև թաղնված,
ռմբակոծեց Անյերի ծայրամասերը: Վերսալցիների
մարտկոցները լռում էյին: Կամուրջը նրանց հարկավոր
էր գետի ձախ ափն անցնելու համար, և նրանք չէյին
պատասխանում զրահապատ գնացքի կրակին: Անյերի
ծայրամասում հրդեհներն արձակում էյին կարճ ծուխ ու
բոց, որը չքանում էր յերեկոյան խայտաբղետ լույս-
թյունը: Հարկավոր էր սպասել գիշերվան: Լամարկը
բում: Գնացքի ռմբարկուները կորցնում էյին նշանառու
հիմա բոլորովին չէր կարող հաղորդել, թե այդ բոլորն
ինչպես պատահեց: Նա հրաման տվեց միաժամանակ
դադարեցնել հրաձգությունը, և Ռոտո Շումախերը
դուրս յեկավ իր յերկաթե վանդակից: Նրանք լցրին
ծխամորճերն և սկսեցին ծխել: Մթնող յերկնքում յե-
րևացին առաջին աստղերը: Մարդկային մեծ յերկիրը
կծկվում էր աշխարհի կեսն ընդգրկած ուրախ գիշերվա
համատարած խավար հատակում:
— Սինգապո՛ւր,— ասաց Ռոտոն, ծխամորճով
ցույց տալով շարժուն աստղերը:
Լամարկը գլխով արեց, իբր համաձայնության
նշան: Մի ժամանակ նրանք յերկուսն էլ ծովագնացներ
էյին և շատ բան էյին տեսել: Նրանք քիչ չէյին ճանա-
պարհորդել աշխարհի շուրջը:
—Հոնկո՞նգ:
Լամարկը քմահաճանքով սեղմեց շրթունքները:
— Ստամբո՛ւլ,— ասաց նա պղտոր յեղանակով.

Ղալաթա, մաստիկա, յերկարաձև նավակները, մայրի-
կը:
— O, das ist colossal!, Ղալաթա, մաստիկա, յեր-
կարաձև նավակները, մայրիկը,— նա կատարյալ հրճ-
վանքով կրկնեց այդ բառերը և հավանություն տվեց
Լամարկի ատամներին:— Ստամբո՛ւլ: Ո՛հ,— և նա վեր
ցցեց մեծ մատը:
Այսպես նրանք զրուցում էյին յերկար, առանց
հոգնելու: Հրացանաձգությունը դրեթե դադարեց: Առ-
ջևում թռչունների պես սուլում էյին հետախույզնե-
րը:
Լամարկը հարցրեց, թեյ պատրաստե՞լ են:
— Այս րոպեյիս,— նրա քամակից հյուրասիրաբար
պատասխանեց ինչ-որ ձայն:— Այս րոպեյիս ամեն ինչ
պատրաստ կլինի:
Մեկը կամացուկ և չփոթված արտասանեց.
— Ա՛խ, ի՛նչ լավ կլիներ հիմա ձուկ որսալ:
— Ի՞նչ կա որ: Այ, գիշերը կամրջի մյուս կող-
մը կանցնենք, պարեկներ կուղարկենք և այն ժամանակ
կարելի կլինի նաև ձուկ որսալ: Ուզո՞ւմ ես ձուկ որ-
սալ,— հարցրեց Լամարկը գերմանացուն:
Վերջինս չհասկացավ և սրտանց ծիծաղեց, կարծես
փաղաքուշ կատակ էր լսել:
Հենց այդ ժամանակ ինչ-որ բան կատարվեց: Մե-
կը դոռաց, կամ դուցե ցատկեց: Հետո ռակայծեց տաք
մի լույս, լսվեց թեթև մի որոտ և նրանք զգացին կրա-
կի այրող շունչը: Մի անգամից ամեն ինչ բռնկվեց: Ա-
մեն ինչ բոցավառվեց: Տարածվելով ու վառելով իրե-
րը, կրակը հանկարծ ոռոռվեց և վազեց ուղիղ դեպի կա-
մուրջը: Լամարկը պատրաստ է յերդվել, որ նա տե-
սավ, թե ինչպես կայծակի նման վառվող գնացքը սլա-
ցավ կամուրջի վրայով և ոգնություն աղաղակեց, իսկ
ինքը, հողաթմբի վրա կանգնած, նայում էր գնացքին:
Նրա կողքին ճարճատելով այրվում էր գերմանացին:
Բայց բանից դուրս է գալիս, որ միևնույն ժամանակ
նա ինքը շոգեկառքը հասցրեց մինչև կայարան և ընկավ,

յերբ ջուրը չցվեց նրա վոտի վրա, կարծես կտրեց այն։

Գիշերը հետախույզները գտան գերմանացուն։ Նա նստած եր ու փոքրիկ եր, ինչպես նորածին նեգր մանուկ։ Ուրեմն նա այրվել եր նստած։

Հետաքրքիր ե իմանալ՝ իր ժամանակին ո՛ւմ գլխին ե կոտրվելու այս բոլոր կուժն ու կուլան,— ասաց Լեվչենկոն,— թե՛ այդ վահանապատ գնացքը, թե՛ այս նավթային ռումբերը։

— Ուրեմն այդպես, այո՛,— կիսաբացելով մեկ աչքը, ասաց Ֆավրին։— Ուրեմն մենք համաձայնեցինք։— Նա գոհունակությամբ գլխով արեց, կարծես վաղուց բովանդակալից խոսակցությամբ եր զբաղված և Լամարկի համար ամեն ինչ հասկանալի չե, ինչ վոր պահանջում են նրանից։— Քեզ արդեն սպասում են Պուան–դյու–Ժուրայի մոտ։ Վերցրու պահեստի գնացքը։ Ուղղակի Յերկրորդ բանակի հրամանատարի—Լյա–Սեսիլիայի մոտ։ Դեհ, աճապարիր։

Նա վեր քաշեց ուսերն և փակեց աչքերը։

— Յեթե չլիներ այս ծերությունը,— ասաց Լամարկը,— ծերությունը խեղճացրել ե, ահա թե ինչն ե սարսափելի։

... Յերկու որ հետո նրան մեծարանքով բերին տուն, ինչպես ննջեցյալի։ Առավոտյան, հազիվ արթնացած, նա զգաց սենյակի նեխած օդը։ Յերկյուղով բացեց աչքերը։ Կինը նստած եր հատակին և փոքրիկ յերեխան խաղում եր նրա գզգզված մազերի հետ։ Առավոտ եր և անխնամ թողնված յերեխաների հոտ եր գալիս։ Փայտոջիլները մտածկոտ թափառում եյին վերմակի վրա։ Մեծ յերեխան, ցնցվելով այդ տանջող լռությունից, նայում եր լուսամուտին։ Նրա վտիտ մարմինը հազիվ եր նշմարվում անփույթ հագցրած շորերի մեջ։ Դեմքը կարծես ներս եր ընկել և կպել վոսկորներին։ Նա քաշում եր իր թուշը, կարծես պոկելով վոսկորներից։

Մարիա՛,— կանչեց Լամարկը,— յեթե յես այստեղ

մեռնեմ, Մարիա՛, ուրեմն հեղափոխություն չի յեղել։ Հիշեցե՛ք այս։

— Մայրիկը չի պատասխանում։ Մայրիկը խելագարվել ե,— կամացուկ ասաց տղան։

Այն ժամանակ Լամարկն ասաց․

— Ահա թե ինչ, տղաս, մեզ նմանները պետք ե մեռնեն կամ այնտեղ, կամ տերերի պալատներում։ Գնա ասա, վոր ինձ տանեն։

Յեվ յերբ վորդին գնաց, նա պառկած եր, դառնալով դեպի պատը։ Աչքերը պինդ փակեց, յերբ իրեն տանում եյին։

— Կնոջս ու փոքրիկին տարեք վորևե տեղ,— ասաց նա կիսախուփ բերանով։— Իսկ տղան թող գա ինձ հետ...

Այդ պատահեց չորս որ առաջ, բայց թվում եր վաղուց անցած, գուցե և բոլորովին չպատահած մի դեպք։

Նա զամբյուղի վրայից վեր կացավ, վորպեսզի մեկնի Լյա–Սեսելիայի մոտ։

Կան որենքներ, վորոնց ամբողջ զորությունն այն ե, վոր նրանք չեն կարող կատարվել։ Նրանց ուժն այն ե, վոր նրանք հայտարարված են։ Նրանց գործողությունն անսահման ե, վորովհետև վերաբերում ե վոչ թե մարդկային արարքներին, այլ մարդկային յերևակայությանը։ Որենքներ, վորոնք զգացմունքներին ստիպում են աշխատել։ Հենց այդպես եր գեներալ Բրեայի սպանության տեղում գտնվող մատուռի ավերման դեկրետը։ Կոմունան հայտարարեց, վոր ավերելով մատուռը, նա ներումն ե շնորհում քաղաքացի Նուրրիին, վորը քսաներկու տարի պահվում եր Կայեննում, դավաճան Բրեային*) սպանելու համար։ Կոմունան կազատի նրան, հենց վոր հնարավոր լինի։

Լամարկն իր մոտ պահում եր այդ դեկրետն ու կրկնում եր աղոթքի պես։ Յերբեմն նա յերազում տես—

*) Գեներալ Բրեյան սպանվեց 1848 թվականի հունիսի 25-ին՝ ապստամբներին դաժանորեն կոտորելու համար, վորոնց նա գերի յեր վերցրել Պանթեոնի մոտ։

նում էր տաժանակիր Նուրրին, որը քսաներկու տարի նստել էր բանտում։ Լամարկը,— եթե այդ նրան վերաբերեր,— չէր ապրի մինչև ազատվելը։ Ա՛յ թե հանկարծ Հնդկաստանից գա այսպիսի մի տեղեկություն,—«Լամարկ, Հնդկաստանը ձեր ծերության օրերում հանգիստ է տրամադրում ձեզ, հենց որ այդ հնարավոր լինի», կամ «Լամարկ, Իսպանիայում սպասում են քեզ, որովհետև դու աղքատ և ազնիվ ես»։ Այդպիսի երազներն ապշեցնում էին իրենց անհավանականությամբ, սակայն անհավանականությունը ռեալ էր։

Այդ, իհարկե, մեկն էր ամենառոմանտիկ օրենքներից, որ հրատարակել էր Կոմունան։ Նուրրին մարդուց դառնում էր սիմվոլ և ուղղակի դժվար էր հավատալ, որ նա կա, որ նա բանտարկված է Կայեննում և կգա մի մոմենտ, երբ նա կվերադառնա, համեստորեն վկայակոչելով դեկրետի կիսամոռացված համարը։

Կոմունան ինձ կազատի, հենց որ դա հնարավոր լինի»,— հաճախ ինքն իրեն կրկնում էր Լամարկը։ Եվ Նուրրին մեկ մարդուց դառնում էր բազմաթիվ մարդիկ, Նուրրիների մի ամբողջ բանակ, ծեր և ջահել Նուրրիներ, որոնք նստած են իրենց Կայեննաներում։ Նուրրին կարծես արտահայտում էր իր ամբողջ դասակարգի բախտը, նա սիմվոլն էր ամբողջ աշխարհի աշխատավորների, որոնց Կոմունան կազատի, հենց որ հնարավոր լինի։ Նա նախանձում էր Նուրրիին։ Նրա պես նստել քսաներկու տարի, և հանկարծ իմանալ, թե հայրենիքում կազմվել է մի իշխանություն, որն ասել է, թե նա ազատ է, որը հիշել է նրան։

«Կոմունան կազատի նաև ինձ, հենց որ հնարավոր լինի»—հաճախ մտածում էր նա։ Այդ ազատության մերձավորությունը նա ավելի ռեալ կերպով էր զգում իր հին, ձանձրացուցիչ խցիկից դուրս, նույնիսկ ընտանիքից դուրս։ Բարիկադներում, փողոցում, իր շոգեկառքի վրա նա իրեն այլ կերպ էր զգում, քան տանը։ Եթե այժմ նա առաջվա պես գնացքները տանելու լիներ քաղաքից-քաղաք, նա կհամաձայներ փոխել իր պրոֆեսիան։ Նա պահանջում էր, որ հեղափոխությունն

անպայման մի որևէ փոփոխություն մտցնի իր աշխատանքի մեջ, նոր ֆունկցիաներ ավելացնի, նոր հորիզոններ ցույց տա։

Լյա-Սեսիլյան, չհաշվելով Դոմբրովսկուն, Կոմունայի ամենագործունյա հրամանատարներից մեկն էր։ Իր դեմքով ու կերպարանքով նա շատ էր նմանում վրացու (շատերը լրջությամբ ասում էին, որ նրա նախնիների ազգանունը եղել է Սոսելիա, և վերջիններն ապրել են Գուրիայում)։ Երկար, սապատավոր քիթ, կոշտ, սև բեխեր, որոնք կախված էին ներքև, հոգնատանջ, քողարկված աչքեր, ականջին դրած կեպի, սահուն, երերուն քայլվածք։ Նա համակված էր խորամանկ, զգույշ անդորրությամբ։ Բոլորին հայտնի նրա քաջությունն անգամ այնքան թաքնված էր, որ ոչ ոք չէր հիշում այն։ Նա աննկատելի քաջ էր, ինչպես ինքնասպան։

Իսսիի գրոհի ժամանակ, երբ ֆրանկ-տիրերների ջոկատները նրա աչքի առաջ նետվեցին ձեռնամարտի, Լյա-Սեսիլյան միայն կկոցեց աչքերը և սկսեց ծամել չոր ու երկար բեխի ծայրը։

— Ասա՛ որևէ բան, Լյա՛-Սեսիլյա,—գոչեցին ջոկատների հրամանատարներն ու Կոմունայի անդամները։

Եվ մաթեմատիկայի այդ նախկին ուսուցիչը խնդագին անհոգությամբ գոռաց.

— Կեցցե՛ մահը։

Նա այդ արտասանեց այնպիսի պարզությամբ, որ բոլորը հրճվեցին, որովհետև ոչ ոք չհավատաց մահու խնդությանը, ավելի շուտ նրա խոսքերում զգացվեց անհավատություն դեպի մահը, կասկած, որ մահը հեշտությամբ կարող է ձեռք բերվել։

Այդ գիշեր Երկրորդ բանակի հրամանատարը ռազմաճակատում չէր և Լամարկը վերադարձավ իր շոգեկառքի մոտ, երբ ուշ գիշերվա գունատ օդը ծածկվեց կապույտ, կարմիր, սպիտակ ու կանաչ բծերով,—այդ քաղաքի առաջին ցոլքերն էին, որոնք տարածվում էին նրա մեջ։ Տղան քնած էր կաթսայի մոտ։

Լամարկը կողմնակի, հոգնած հայացքով նայեց

նրան։ «Սերունդ»,—կարևոր մի միտք անցավ նրա ուղեղով։ Նա տղային նայեց այնպես, որ կարծես յեկել եր վարձվելու, իսկ տերը հենց այդ վոխտ տղան եր, վորը քացի յեր տալիս քնած տեղում, և հիմա ամեն ինչ նրանից կախված կլինի, նրա տնորինությունից։ Լամարկը առաջ վորդուն յերբեք չեր բաժանում իր բախտից ու կյանքից, և այժմ այդ սարսափելի թվաց նրան։

— Ո՛ֆ, չուտ ե, չուտ ե,-ասաց նա և ինքն էլ չհասկացավ, թե ինչու համար ասաց։ Ծո՞ւտ ենք մեռնում։ Թե՞ չուտ ենք սկսել։ Թե՞ յերեխաների համար դեռ չուտ ե պայքարել սովորելը։ Ծո՛ւտ կմեռնենք,—վորոչեց նա։—Տերեր չեն դառնա։ Խելքները չի հասնի։ Վո՞րտեղից հասնի։

— Կոմունան ինձ կպահի, հենց վոր հնարավոր լինի,—ասաց Լամարկը շշնջալով և իր հանդեպ ցավակցության, սիրո և հարգանքի արցունքները հոսեցին թշերի վրա։

Նա արմունկով հենվեց շոդեկառքին և սկսեց չափ յերկար, անգուսպ, և վորքան շատ եր լալիս, այնքան դառնում եր ուրախ ու զգաստ։ Ուզում եր ինչ-վոր բան հիշել, բայց վոչ մի կերպ չեր կարողանում։ Հիմա նա լալիս եր, վորպեսզի ամբողջովին յերևան բերեր անհետացած հուշը։ Ցեվ նա չկարողացավ մի անգամից ըմբռնել այն, վոր ինքն իրեն տեսավ փոքրիկ մի տղա 35 թվի գործադուլի օրերին։ Բոլոր տղամարդկանց ամբոխը շարժվեց դեպի քաղաքային խորհրդարան։ Կանայք ազմկելով վազում եյին նրանց յետևից։ Նրանք աղաղակում և գոռում եյին յերեխաների վրա.—«Տղերք, սիրելիք, քարեր հավաքեցեք, պոկեցեք քարերը, ա՛յ, այդպես, այդպե՛ս»։ Նրա մայրը կռացավ և յերկաթե ձողով սալահատակից հանեց միքանի կոպիճ։ Նա այդ կոպիճները դրեց գոգնոցի մեջ և առաջ շարժվեց կռացած, կարծես բանջարանոցում լիներ։ Լամարկը բռնել եր նրա շրջազգեստից։ Հանկարծ գոգնոցը պատռվեց, քարերը թափվեցին և ընկան նրա վոտին։ Նա ճչաց։ Ա՛խ, վորքա՛ն անհաճելի յեր։ Այնքան քարեր հավաքեցին և նրանք բոլորը թափվեցին, և դեռ իր վոտին ընկան։

Բայց այստեղ մայրը բռնեց նրան և նրանք առաջ վազեցին, վորովհետև տղամարդկանց հետ ինչ-վոր բան պատահեց։ «Լուի՛, ջանիկս, ձայնդ կտրի՛ր»,—շշնջաց նա և նրա ձեռքը տվեց մի բավական մեծ կոպիճ։ Հայրը նրանց տեսավ հեռվից և աղաղակեց.—«Մտի՛կ արեք, ա՛յ թե ինչպիսի տղա յեմ մեծացրել, մտի՛կ արեք, մոր խնամքի տակ ե, բայց արդեն ձեռքում քար ե բռնել։ Ամո՛ւր բռնիր, խլնքոտս, ամուր, մինչև ժամանակը գա»։ Բոլորը նայում եյին իրեն, աչքով եյին անում, ինչպես մեծի, և ծիծաղում եյին։ «Տե՛ղ տվեք յերեխային, թող սովորի։ Մայր, առաջ տար դրան, տո՛ւր չալակս, նստեցրու չալակիս»։

Ցեվ այժմ նա լալիս եր ինչպես այն ժամանակ,—և արցունքները ջնջում եյին հասակի տարբերությունը։ Ապրելու իմաստը դառնում եր պարզ և հասկանալի։

«Այդպես ե յեղել միշտ,—մտածում եր նա։—Քարը առաջին խաղալիքն ե յեղել նաև հոր համար, պապի համար, հետո նաև իրեն համար»։

Նա խորամանկությամբ ասաց.— «Սովորություն ե»։ Ասաց և դիտեց դարչնագույն, խոշոր ու ջլուտ ձեռքը։ Իհարկե, պայքարելու սովորությունը չահերի ժառանգականություն եր։ Ցեվ մանկության հիշողությունները հերքեցին անվստահությունը դեպի վորդին։ Նա սկսեց արթնացնել վորդուն։

— Վե՛ր կաց,—ասաց նա,—քո՞ւն ե, թե՞ տարի, ա՛յ սատանի ճուտ։

ԵԴՎԱՐԴ ԿՈԼԼԻՆՍ

Լրագրերում յես կարդացի, թե Փարիզում ամերիկական հանձնաժողովի ինչ-վոր մի անդամ թատրոնների և զվարճատեղերի լիքը չլինելու հիման վրա յեզրակացրել ե, թե ֆրանսիացիք քաղցած չեն։

Անկասկած, Փարիզում սովն ե թագավորում, բայց թատրոններն այնպես լիքն են և թատերատոմսերի պահանջն այնքան մեծ ե, վոր թատրոնների մուտքի առաջ փերեզակներն այդ տոմսերը ծախում են կրկնակի, յեռակի գնով։

Փարիզում թատրոնը միշտ յեղել է մեծ հետաքըրքըրության առարկա, բայց այս ժամանակվա ընթացքում թվում է, վոր այդ հետաքրքրությունն ավելի յե ուժեղացել: Այստեղ բացված են թատերական ստուդիաներ, վորտեղ անցնում են այն ամենը, ինչ վոր վերաբերում է թատրոնին, ատաղձագործական ամենահասարակ աշխատանքից սկսած մինչև թատերական ամենաբարդ թեորիաները:

Յես գնացի Լիրիկական թատրոնը՝ Մեյերբերի «Հուգենոտները» լսելու համար: Ոթյակից, վորը գտնվում եր համարյա նվագախմբի կողքին, յես շատ լավ տեսնում եյի բեմն ու դահլիճը: Իհարկե, հեղափոխության ժամանակ սաստիկ փոխվել է ամեն ինչ: Փարիզի կապիտալիստական հասարակությունը չքացել է: Նրա հետ գրեթե չքացել են փայլուն զգեստներն ու ֆրակները: Բոլորը հագել եյին հասարակ, բանվորական կոստյումներ: Թատրոնում շատ զինվորներ կային: Յերևում եր, վոր միքանի տղամարդիկ աշխատանքից ուղղակի թատրոն եյին յեկել: Նվագախմբի յերաժիշտները հագել եյին ամենաբազմազան կոստյումներ, ֆրակ հագած դիրիժորն ուրիշ ժամանակաշրջանի մարդու տպավորություն եր թողնում: Յես ուշադրությամբ դիտեցի հասարակության այն մասը, վորը նոր կարգերում բռնել եր պարտերի առաջին շարքերը, և հասկացա, վոր ինտելիգենցիան պատշգամբից տեղափոխվել է պարտեր: Նրանք, վորոնք առաջ կոպեկներ եյին հավաքում և յերկար սպասում հերթերում, վորպեսզի պատշգամբում տեղ ճարեն, այժմ նստած եյին այն մարդկանց տեղերում, վորոնք առաջ թատրոն եյին գալիս միմիայն նրա համար, վորպեսզի այնտեղ մարսեյին իրենց ճաշը: Ինչ վերաբերում է դիտողների ուշադրությանը, դժվար է պատկերացնել մի այլ հասարակություն, վորի առաջ այդպես հաճելի լիներ թատերախաղը: Ներկայացման մասին յես շատ քիչ բան կարող եմ ասել, բացի նրանից, վոր աղքատ հագուստն ու դատարկ ստամոքսները չեյին ազդել վոչ նվագախմբի և վոչ դերասանների վրա:

Ուշ գիշերով վերադառնալով տուն, յես չհանդիպե-

ցի վոչ մի զինված մարդու: Փողոցները լիքն եյին դատարկաշրջիկներով: Մեկն ինձ պատմեց, թե պճնազարդ կանայք կառքերով գնում են դիտելու Նեյլի դարպասների մոտ գտնվող ավերածություններն ու կատաղի ճակատամարտերի հետքերը: Վորքա՜ն քաղաքն ընտելացել է ռազմական տագնապներին, յեթե նույնիսկ աղքատները կանգնած են փողոցի անկյուններում, հրետանու կրակի տակ, և գրոհի գնացող ֆեդերատները հապճեպ վողորմություն են տալիս նրանց:

Ժողովրդական լուսավորություն

Վալյանը, լուսավորության պատգամավորը, միայն վերջերս, գերմանացիների հետ զինադադար կնքելու որերին, վերադարձավ Տյուբինգենից: Կեղծ պատրիոտիզմը չի փակել նրա աչքերը, նա հիացմունքով պատմում է Գերմանիայի ժողովրդական դաստիարակության մասին և յրազում է Ֆրանսիայում ավելի հսկայական նման մի գործ սկսել: Յես գնացի նրա մոտ, վորպեսզի մի քանի ժամ անցկացնեմ նրա հետ, բայց մենք նոր եյինք սկսել խոսակցությունը, յերբ Ասսին սուրհանդակ-տղայի հետ ուղարկեց մի գրություն, վոր ներքևում Վալյանին սպասում է կառքը և վոր նա պետք է գնա Նիկոլա-դաշտերում ակումբը և խոսի բանվորների միջազգային համերաշխության մասին: Վալյանն ինձ առաջարկեց գնալ իր հետ, յեթե յես ուզում եմ շարունակել խոսակցությունը: Միքանի րոպեյից հետո մենք փոքրիկ կառքով սլացանք յեկեղեցի, վորը վերջերս ակումբ եր դարձել:

Յերբ մենք տեղ հասանք, ժողովն արդեն սկսված եր: Վալյանը պետք է խոսեր յերկու թե յերեք հոգուց հետո: Մենք մոտ կես ժամ ունեյինք մեր տրամադրության տակ:

— Լուսավորության հանձնաժողովի գլխավոր նպատակը,—ասաց Վալյանը,—միայն նոր դպրոց ստեղծելը չէ: Մենք պետք է ընդլայնենք դպրոցի պատերը, վորպեսզի կարողանանք ընդգրկել բանվորների միքանի սերունդներ: Մանկավարժների պակասության հետևան-

քով ամենից լավ կլինի մասսայական արտադպրոցական լուսավորությունը—ակումբներում, թատրոններում ու ձեռնարկություններում։— Նա ավելացրեց, որ տվյալ մոմենտի խոշորագույն խնդիրն է բանվորական մասսաներին ներգրավել իշխանության օրգանների ղեկավարման գործին։—Սա լուսավորության շատ լավ միջոց է,—ասաց նա ծիծաղելով։

Մոտեցավ Ֆրենկելը, Աշխատանքի և փոխանակության հանձնաժողովի պատգամավորը, Կոմունայի ամենահետաքրքիր մարդկանցից մեկը, և իսկույն խառնվեց մեր խոսակցությանը։ Այդ մարդու հետ բոլոր գործերին իրազեկ ես զգում քեզ։ Նա զբաղված է աշխատանքային օրենքների մշակմամբ, բայց գիտե նաև Լուսավորության, Պարենային և Ռազմական հանձնաժողովների աշխատանքների ամենաչնչին մանրամասնությունները։ Նա խոսում է թվերով, գործածելով նրանց իբրև փոխաբերություն։

Ֆրենկելն անհանգստությամբ ասաց ինձ, որ ինտելիգենցիան մինչև հիմա շարունակում է բոյկոտի յենթարկել Կոմունան։

— Սակայն միշտ չի հարվածում նա, ով շատ է սպառնում,—արտասանեց նա մռայլ տոնով,—մենք ռեակցիայի վրա կհարձակվենք վոչ միայն զենքով, այլև նոր դասագրքերի տարածմամբ, վորոնք կկազմվեն հեղափոխական վերջին տեսության համաձայն, մենք մեր պետական ծրագրով, սոցիալիզմի ծրագրով մեր շուրջը կհամախմբենք մասսաներին։ Սեփականությունը գողություն չէ,—ինչպես ասել է Պրուդոնը,—այդ արդեն խիստ քրեական-մանր վորակում է, սեփականությունը հակահեղափոխություն է։

— Մեր հաղթանակը կվճռեն մանուկները,—ասաց Վալյանը։— Ես ամբողջ քաղաքին կստիպեմ սոված մնալ, բայց իմ որոք յերեխաները կուշտ կլինեն։ Ես կկազմակերպեմ աշակերտների պետական սնունդ, նրանց ուղեղները կշրջեմ ինչպես պետք է, և նրանց վոչ վոք չի խլի նոր ռեժիմի ձեռներից։

Ֆրենկելն այստեղ թվերով հաստատեց, որ դպրոցների թիվը առաջվա համեմատությամբ կրկնապատկվել է։ Յերեխաներն ունեն դպրոցական ընտրովի կոմիտեներ։ Կրթությունը կկառուցվի պրոֆեսիոնալ ունիվերսալիզմի սկզբունքներով։ Աշխատանքը դպրոցում պիտի լինի գլխավոր դիսցիպլինան։

Տեռոր

Մադամ Վալլեսի միջոցով յես ծանոթացա Ֆերրեյի հետ։ Նա և Ռաուլ Ռիգոն վարում են Հասարակական ապահովության հանձնաժողովը, դատախազությունն ու վոստիկանությունը։ Յես նրա հետ նշանավոր խոսակցություն ունեցա Տոլենի, Ինտերնացիոնալի անդամի տանը։ Տոլենն ինչ-վոր խորհրդավոր տոնախմբություն ուներ։ Տոլենը հասակավոր եր, բայց ամուրի, իսկ տան տիրուհու դերն այստեղ կատարում եր իմ հին ծանոթուհի Անդրե Լեոն։ Յես չհամբերեցի և հարցրի նրան, արդյոք նա անմիջական առնչություն չունի՞ տոնախմբությանը։ Նա շատ ճարպիկ կերպով խուսափեց ուղղակի պատասխանից, ասելով, թե հեղափոխությունը կարող է տոների վերածել ամենատխուր դեպքերը, և միքանի օրինակներ բերեց 93 թվի մեծ հեղափոխությունից։ Յես հեռացա և սկսեցի խոսել Ֆերրեյի հետ։ Նա շատ ուրախացավ, վոր յես բուրժուական գրականագետ եմ։

— Ինձ համար ուղղակի չկա մեկը, վորի ներկայությամբ հանդիստ շունչ առնեմ, իսկ դուք հավանորեն ինչ-վոր հնարավոր է կանեք, վորպեսզի քամեք ինձ։

Յեվ նա իսկույն հարցրեց ինձ, արդյոք յես ուզո՞ւմ եմ իմանալ նրա հանձնաժողովի առաջիկա ծրագիրը։

— Տեռո՛ր, միա՛յն տեռոր, ուրիշ վոչինչ։ Մենք չենք կոչված հեղափոխության պտուղները հավաքելու, մենք կոչված ենք լինել անցյալի դահիճներ, գլխատել, հալածե՛լ նրան, ճանաչել նրան իր բոլոր տարազներով և զոհաբերել գալիքին,—ասաց նա։—Մենք պետք է գաղափարի, համոզմունքների մեջ մեռցնենք նրան։ Վո՛չ մի գիջում անցյալին։

— Ինկվիզիցիա՞,—հարցրի յես։

— Վո՛չ մի ընդհանուր բան,—պատասխանեց նա։—

ֆինչպե՞ս դուք կարող եք համեմատել: Այնտեղ մետա-
ֆիզիկայի պայքարն եր հենց նույն մետաֆիզիկայի դեմ,
այնտեղ վոտնատակ եր արվում գիտության հիմքը,
սխոլաստիկայի մեթոդներով սխոլաստիկ սկզբունքներ
եյին սահմանվում, իսկ յես խոսում եմ մարդու վերա-
փոխման մասին, վոր պետք ե կատարվի հանուն հիա-
քանչ գալիքի: Դժվա՞ր ե միթե զոհաբերել առելինե-
րին: Բայց բանն էլ հենց նրանումն ե, վոր զիջես այն,
ինչ-վոր թանգ ե, յեթե համոզվում ես, վոր նա ճշմարիտ
չե, հետևապես հարկավոր չե, հետևապես վնասակար ե:
Դրանումն ե մեր իսկական գործը:

— Տեռորը Կոմունայից կվտնի նրա շատ բարեկամ-
ներին,—դիտեցի յես:

— Այդ սարսափելի չե,—պատասխանեց նա:—Հե-
ղափոխությունը կատարում են վոչ թե հնազանդները,
վոչ թե բարեկամները, այլ հետևորդները:

«Կոզակ Ժանը» վիրավորվե՛լ ե բարիկադներում:

Կրկեսի առաջ կանգնել եր հիասթափված ամբոխը:
Խանութպանը ցածրաձայն կանչում եր.

— Գնեցեք կոզակական թխվածքներ, ա՛յ, տեսեք:
Ամենասիրված կոզակական թխվածքներ:

Ցերբեք չի ապրել և կյանքի մասին վոչինչ չգիտե
նա, ով չի պառկել թաց հողի վրա, պատառոտված հա-
գուստով, սառնամանիքից մատներին կպչող հրացանով,
քաղցից չրացվող աչքերով, և միաժամանակ չի մտա-
ծել, վոր աշխարհը գեղեցիկ ե:

Նա միշտ յերազում եր անծանոթ մարդիկ, չայցե-
լած վայրեր: Ինչ-վոր աշխարհագրական բան: Ցեվ այդ
առողջություն եր: Զգաստություն: Իսկ հիմա յերկրորդ
որն եր, ինչ նրա աչքերի առաջ եր Ռուսաստանը: Այդ
անհանգստություն եր, տանջանք, ցասում: Ռուսաս-
տանը հրապուրում եր զանազան տարբացուցիչ—հյու-
փայփայանքներով, ինչպես հասակավոր կին, վոտքի
յեր հանում յերիտասարդությանը, որը-որին աչքերի
առջև մղում եր նրանց, վորոնք հիշվում եյին մի ժամա-
նակ, մղում եր դեպքը դեպքի հետևից: Տե՛ս, տես, մի՞-

թե այդ բոլորն այդքան վատ եր: Միթե՞ դու չեյիր սի-
րում այդ բոլորը: Չեյի՞ր ապրում դրանով: Տե՛ս, տե՛ս,
չե՞ վոր այդ քո յերիտասարդությունն ե, քո առաջին
հույսերը, քո առաջին յերջանկությունը: Մի՛ փակիր
աչքերդ: Տե՛ս: Այդ բոլորը յե՛ս եմ քեզ տվել: Հայրե-
նի՛քդ: Մի՛ ծածկիր դեմքդ ձեռներով: Հե՛ռ տար ձեռ-
ներդ: Տե՛ս: Ցես կթափանցեմ քո մեջ, յեթե դու սկսես
դիմադրել, և ամեն ինչ ցույց կտամ ներքուստ, սրտի՛-
ցըդ:

— Ծածկե՛ք պատուհանի վարագույրը,—մրմռաց
նա,—մի՛ թողնեք ինձ մենակ:

Սակայն կրկեսի այն անկյունում, ձիերից այն կողմ,
վորտեղ պառկած եր նա, առանց այն էլ վաղուց դա-
տարկություն ու խավար եր: Նեգր ձիապանները լռին
ծծում եյին ծխամորճերը: Ռաու Շնեյդերը,— «Ուժը,
գեղեցկությունը, վայելչությունը և առողջությունը»
—ատամներով տանում եր աթոռի վրա նստած գանձա-
պահուհուն:

— Դեհ, թող կորչի,— գոչում եր կինը:— Նա ինձ
վայր կգցի, տղերք:

Նեգր Գու-Ռուն կենդանիների կլիմայավարժման
պարկից յեկավ նորություններ հաղորդելու:

— Առյուծը սատկեց,—ասաց նա:—Ամեն ինչ սատ-
կեց, թե առյուծը, թե նրա եգը և թե ձագը, իսկ արջը
յերեկ մենք կերանք: Հիմա մեզ համար վատ կլինի:

— Կա՞ մի վորևե ուրիշ արջ,—հարցրեց ավագ ձիա-
պանը, նախկին զուավը:

— Ցեթե մորթելու յես, կա: Միայն թե գայլ ե:

— Գնա՛նք:

Նրան թվաց, թե այդ յերազ ե, լավ, այսպես ասած
աշխարհագրական, և նա ավելի հանգիստ հոգոց հանեց:
Ցեվ հենց վոր բացեց խոնավ, հրավառ աչքերը, ամբող-
ջովին պատկերացավ Ռուսաստանը:

— Սառը ջուր ածեք ինձ վրա,—գոռաց նա:

Ամբողջովին պատկերացավ Ռուսաստանը:—Ձմեռը
դեռ ամուր նստել եր, բայց նա ընթանում եր մի տեսակ

անհաստատ, առանց որևէ հսկողության։ Կիրակի օրը գարնան պես զվարթ էր, գարնան պես անփույթ։

Ամբողջ գյուղը հավաքվել էր յեկեղեցու շուրջը։ Աղջկերքը ծիծաղում եյին խլացուցիչ և ձմեռվան համար այնքան անսովոր, վոր բոլորը շփոթվելով նայում եյին նրանց։ Տղերքը բարձրաձայն խոսում եյին վարի, ձիերի, արորների մասին։ Նրանց խոսակցություններում զգացվում էր վոչ այնքան յերիտասարդ տնտեսատերերի յեռանդը, վորքան անսպառելի ուժն ու կորովը, վորն իր համար ապացույցներ էր փնտռում աղջիկների, ջահել կանանց այդ խորամանկ ու խուզարկու բազմության առաջ։ Նա (Վլադիմիրը) համակված էր այն խնդագին անդորրով և ինքնավստահությամբ, վորն ակամա տիրանում է ջահելությանը՝ գարնան սկզբին։ Նա կանգնած էր հենց բեմի առաջ։ Սպասում եյին Սիբիրյակովներին։ Բուրվառի ծուխը կապույտ-վարդագույն, թեթև քուլաներով գալարվում էր մարդկանց վրա, արևի ցոլքերը դեղին վոստայնի պես պատում եյին դեմքերը և նրանց ձեռքով մի կողմ տանելու ցանկություն էր առաջ գալիս։ Ցերեկը նայում էր պատուհաններից և հնչում էր դռան հետև, բոթբոթում էր, հեծեծում, ճռճռում էր սահնակներով և դրսում կապված, կռվող ձիերի սմբակներով թակում էր յեկեղեցու պատերը, կարծես այնտեղ, յեկեղեցու ներսում վճռվում էր նրա բախտը և նա ուզում էր անհապաղ ներս մտնել, վորպեսզի միջամտի դատողություններին։ «Թյո՛ւ, սատանան տանի, շունչըս կտրվում է։ Ինչպիսի՛ նողկանք»։ Հետո նրան քարշ տվին ճերմակ ձյան վրայով, ջարդատելով թևերը, և ուրյադնիկը վոստոստալով նրա կողքին, աղերսագին գոչում էր.—«Խայտառակ մի՛ լինեք, պարոն պրապորշչիկ։ Համաձայնվեք իրերի դրության հետ»։ Յեվ ձայների վայրի աղմուկի մեջ նա լսեց,—նա հասկացավ— թե ինչպես Սիբիրյակովը, թեքվելով դեպի դուստրը, անփույթ արտասանեց.—«Յեթե չեմ սխալվում, հենց այս է քո պրապորշչիկը, Նադյուշկա։ Մի լավ կքաշքշեն նրան»,—և իսկույն ավելացրեց վախեցած ու ավելի բարի.—«Ե՛հ, ի՞նչ արած, ագիտատորը տեղ չունի

սպայության շարքերում։ Լավ, Նադեժդա, թող նրան մեր կառքով տանեն։ Ուրյա՛դնիկ...»։—Նողկա՛նք, նողկա՛նք։ Այո, այդ ճիշտ է, այդ խորը, սեփական վրշտով ըմբռնված ճշմարտություն է, վոր մարդու մեջ կա դաժան մի Ֆուկյե—Տենվիլ և, վոր գլխավորն է, կա գիլյոտին։ Յերբեմն դատավորը ննջում է, գիլյոտինը ժանգոտում, կեղծիքը, անցյալը, ռոմանտիկականը, թույլը բարձրացնում է գլուխը, բնակավորվում, և հանկարծ վորևէ վայրի հարված արթնացնում է անփույթ դատարանը, քնեած դահճին, և այդ ժամանակ սկսվում է կատաղի հալածանքը,—փոքրիկ մի զիջումը, խնայումը, ցավակցությունը տանում են դեպի անցյալը, թողնում են շղթաները։ Ուրիշ յելք չկա.—կամ գըլխատել և առաջ գնալ, կամ ներել ու կանգ առնել կես ճանապարհին։

Հնչում էր մեծ-հերցոգյան մաշված քայլերգը։ Լևչենկոյի վրա յերաժշտությունը միշտ ազդում էր վորպես յեղանակը և քայլերգը ջերմացնում էր նրան։ Գիշերը յեկավ Բարտենևան, անհանգիստ, ախ ու վախով, ինչպես միշտ, իսկույն հայհոյեց նեգրերին, դուրս թռավ կառք կանչելու և արագ վերադարձավ, սկսեց անուժ լալ ու ջղայնանալ։

— Վլադիմի՛ր, սիրելիս, մենք այնքան քիչ ենք, իսկ դուք այդպես եք վարվում։ Այս ի՞նչ է։ Ախո՛ռ։

— Ել վոչինչ չեմ ուզում,—ասաց նա,—ել վոչինչ չեմ կարող անել, չդիպչեք ինձ։

Բարտենևան ինչ-վոր կնկավարի թափահարեց ձեռները։

— Այդպես են բոլորն էլ։ Տաքարյուն են բոլորը։ Կենդանի՛ լինենք, սիրելիս, մի անգամ էլ պետք կգանք։ Այստեղ մի անգամ մի բասկ մեռնելիս ինձ լավ ասաց.— «Մադամ, ցավալի յե մեռնել առաջին գնդակից»։

— Դատարկ բան եք ասում, Բարտենևա։ Ասենք թե մի շաբաթ, յերկու շաբաթ,—միևնույն չէ՞, վերջը յեկել է, բոլորի վերջը։

— Ե՛հ, ի՛նչ արած, ի՛նչ արած,—լացակումած ասում էր Բարտենևան, իբր թե չհամաձայնելով,—

չե՞ որ այդպես էլ հարկավոր է: Լիզոչկան (նա նկատի ուներ Դիմիտրեյևային) նամակ է ստացել Մարքսից,— ասաց նա խնչելով,—Մարքսը դժգոհ է մեզնից, դժգոհ է: Հայհոյում է մեզ:

— Այո՛, ապստամբությունը տանուլ տվինք,— ասաց նա դժկամորեն:—48 թվականի տրադիցիաները խորտակված են: Չե՞ որ հենց այդ էլ պետք էր սպասել, Բարտենևա: Դուք դեմոկրատուհի չե՞ք արդյոք: Հը՛մ: Մեր պարտությունը տալիս է պատմական արդյունքներ,—դեմոկրատիան ջարդված է ընդմիշտ: Նրա դերը վերջացավ: Այժմյանից պրոլետարիատն ինքը կանցնի հեղափոխության գլուխը: Այս դեմոկրատիայի հերոսական վարկաբեկումն էր, այդ դուք ինքներդ տեսաք, Բարտենևա: Նրանք ուզում էին և չէին կարող: Փորձեցին և նահանջեցին անհուսորեն: Իսկ բանվորնե՞րը: Սատանա՛ն տանի, այդ մեր մեղքն է, որ նրանք դեռ պատրաստ չեն: Բայց դուք զգո՞ւմ եք, հա՞, դուք զգո՞ւմ եք, թե նրանք ինչպես են դեռ չպրտում շաղակրատներին ու դեմոգոգներին:

Նա տաքանում էր և դրանից ավելի կայտառ էր պահում իրեն.

— Պրոլետարիատը իսկի էլ հաղթված չէ,— շարունակեց նա,—նրանից, իհարկե, «արյուն կառնեն», բայց դերքը նրա ձեռքումն է: Իսկ դեմոկրատիայի մռութը ջարդել են, նա ցիրուցան կլինի: Լավագույնները կմեռնեն մեզ հետ, վատագույնները կդավաճանեն: Հասկացա՞ք: Երբ պրոլետարիատը կստեղծի իր կուսակցությունը, այդ դեմոկրատական շներին հեռու կքշի իրենից:

Բարտենևան լսում էր նրան, ձեռները շարժելով և անբարբառ բացելով շրթունքները:

Նա ջղայնացնում էր Լևչենկոյին, որովհետև նրա «ախ»-երն ու արցունքները կատաղություն էին առաջ բերում: «Ինչո՞ւ չի լալիս նա,—մտածում էր Լևչենկոն,—երևի վախենում է»:

— Ձեզ համար ի՛նչ, ձեզ չեն սպանի,—ասաց նա:

—Ե՛հ, մի քիչ կրոնաբարեն և ուրիշ ոչինչ: Թողե՛ք չացը, ինձ համար ծանր է այդ:

— Վլադիմի՛ր, սիրելիս, յեթե մենք կենդանի մնանք, սարսափելի՛ կլինի մեր կյանքը,—ասաց նա շնչակտուր:—Մի՞թե դուք այսօրվա համար վրեժ առնելուց բացի, կարող եք որևէ այլ բան անել:

Լևչենկոն կոպիտ արհամարհանքով ընդհատեց նրան:

— Ինձ վտանգից դուրս բերեց մի ինչ-որ նկարիչ, սատանան տանի, մոռացա անունը: Ես նրան տվի ձեր հասցեն: Նա ձեզ կպատմի, թե ես ինչ եմ խնդրում: Արեք, խնդրում եմ ձեզ:

— Ա՛խ, Վլադիմիր, սիրելիս,—նա ձեռներով ծածկեց դեմքը,—ի՛նչպես մենք բոլորս մենակ ենք, անտուն: Իսկ այնտե՞ղ ինչպես է,—հարցրեց նա,—դուք երբեմն հիշո՞ւմ եք Ռուսաստանը:

Դարձյալ նա պատկերացավ,—Ռուսաստանը: Լևչենկոն հոգոց հանեց:

— Չերնիշևսկին բանտարկված է, Գլեբ Իվանիչ Ուսպենսկին խենթանալու վրա յե, Սալտիկով-Շչեդրինը հսկողության տակ է: Ավելի լավ է այստեղ մեռնել, քան այնտեղ թաղվել ամեն մի դռնապանից: Ա՛խ, տանջվա՛ծ եմ ես, քայքայված:—Նա վեր կացավ:—Ես սարսափելի ցավում եմ մերոնցից նրանց, որոնք տանն են մնացել:

— Ձեր ասելուց դուրս է գալիս, թե որևէ մեկին ցավակցել նշանակում է վախենալ իր բախտից,—ասաց Լևչենկոն, առանց նրան նայելու:—Նշանակում է այդ վորևէ մեկի մեջ իրեն իրեն տեսնել: Շատ հետաքրքիր է:

— Ո՛չ, այդպես չէ: Դու ինձ չհասկացար, Վլադիմի՛ր:—Նա նորից նստեց և փորձեց ճիշտ բացատրել, թե ինչ էր ուզում ասել, բայց Լևչենկոն ընդհատեց նրան.

— Ահա թե ինչու ազնիվ մարդիկ հաճախ լինում են դաժան: Նրանք գիտեն, թե ինչ կարող են անել և ինչ չեն կարող, նրանք կարիք չունեն իրենց ուրիշի դրության մեջ դնել:

Լեվչենկոն խոսում էր բարձրաձայն, վախենալով, վոր Բարտենևյան այժմ կարող է վոչինչ չլսել, կամ լսածը մոռանալ:

— Գլխավորն այն է, վոր դուք կենդանի մնաք: Ձեզ հազիվ թե գնդակահարեն: Հասկացա՞ք: Թող բռնանան, ասում են դա մոռացվում է: Դարձե՛ք մի վորևէ ծեր բուրժուայի սիրուհին: Հա՛, գուցե ձեզ միասին աքսորեն, հասկացա՞ք: Հինգ, տասը տարի—դատարկ բան է: Հետո բոլորը նկարագրեցե՛ք: Այդպիսի րոպեների համար տասնյակ տարիներով են ապրում, վրեժխնդիր են լինում ամբողջ կյանքում: Վա՛յ նրանց, ովքեր ներում են այդպիսի րոպեների համար: Հիշեցե՛ք, ինչպես է Հերցենը հրաշալի կերպով ասել: Դեպի Ժընև՛,— գոչեց նա,—Ժընև նամակ գրեցեք Բակունինին, Ուտինին, Բեկկերին: Ռուսաստան գրեցեք, հասկացա՞ք, բոլորին, ում էլ լինի: Իսկ յեթե վոչ, ուրեմն մեզ հետ կգնդակահարվեք, հասկացա՞ք: Կգնդակահարվե՛ք: Սարսափելի՞ յե: Հը՛մ, հենց այդ է բանը: Կգնդակահարվե՛ք, ձեզ եմ ասում:

Միջապատի յետև ձիերն անհանգիստ փնչացին: Ձիապան Ջուավը, յերազի մեջ ցատկելով, չտապեց արթնանալ: Լսվեց ինչ-վոր յերկչոտ գազանների կաղկանձ:

Բարտենևյան չփոթվեց, ինչպես հանցանքի տեղում բռնված սիրուհի:

— Վլադիմիր, սիրելիս, հանգստացե՛ք: Յես հիմա կվերադառնամ, ձեզ կտանեմ Լիզայի մոտ: Դե՛հ, կամա՛ց, դե՛հ, յերեխա՛ս: Յես միշտ ձեզ հետ եմ: Ե՛հ, կգնդակահարեն, իհարկե: Ա՛խ, աստված իմ, իհա՛րկե:

Նա վեր կացավ և իր հետևից քարշ տալով թիկնոցակը, դիմեց դեպի դուռը: Մթությունը նրան յերկար պահեց կրկեսի փակուղիներում: Լսվում էր, թե ինչպես նա դիպչում է կրկեսի կտավե պատերին, դույլերին, ընկնում: Նա աննկատելի չքացավ:

Մայիսի քսանվեցին ամեն ինչ վերջացած էր թվում: Լուսաբացին սկսվեց հորդ, մրրկոտ անձրև, վորը քամու

պես կարծես մինչև վոսկորներն էր թափանցում: Նրա աղմկալից հեծեծանքը կլանել էր քաղաքի ձայները: Ամեն ինչ սուզվել էր կաթիլների թեթև թխկթխկոցում և, տուրներից ու ապակիներից առաջացող՝ նրանց արձագանքում: Վորպես ուշագնացություն, անձրևը խլացրեց ծայրամասերի փոխադարձ լսողության կապը, թողնելով, վոր ամեն մեկը մեռնի կամ ազատվի ինչպես կարող է:

Բոլոր նրանք, ովքեր կռվում էյին, ըստ յերևույթին արդեն ընկան: Կոմունարների վերջին մնացորդները հավաքվում էյին կանգուն մնացած բարիկադների վրա, դիմելով դեպի հասարակ անշաղակրատ մահը:

Չտեսնված էներգիան մոլեգնորեն համակեց Բուխսոնին: Այդ էներգիան բղխում էր մահից առաջ հոգնելու, ուժասպառվելու ցանկությունից, վորովհետև թույլը, հոգնածը դրեթե աննկատելի յե մեռնում: Բուխսոնը հաշվեց վառոդով լցված տակառները,—քսան հատ եյին: Վոչ մի թնդանոթ չկար:

— Ափսոս վոր չկան,— ասաց Ժերարդը, վորը XII քաղաքամասից էր: Յեթե լինեյին, մենք...

— Բավական է միայն հասնել XI շրջանը, պարկը, և մեզ այնտեղ կտան ինչքան հարկավոր է,—պատասխանեց Կլավյեն:

Բուխսոնը պատկերացրեց, թե վորքան հեշտ ու ահավոր կլինի այժմ վազել Ամադյե փողոցից մինչև Մենիլմոնտանի բարձունքները, դեպի պարկ՝ թնդանոթներ ստանալու համար: Նա ուներ դրանից յերեք-չորս անգամ ավելի տարածություն վազելու էներգիա, մի ամբողջ ճակատամարտի մասնակցելու կամք և անսպառ կորով:

Նա գնաց վեց հոգու հետ, վորոնց մեջ էր իր հրամանատար Լիբերտոնը: Վոլտերի հրապարակում նրանք մտան քաղաքապետություն, թնդանոթների տեղափոխման թույլտվություն ստանալու համար:

— Գիտե՞ք, հիմա մենք ինչ կանենք: Ջեկկերի մոտ հյուր կգնանք,—աչքով անելով՝ ասաց Կլավյեն:

Լյա-Ռոկկետտ բանտն իսկապես բոլորովին մոտիկ

եր։ Ցերկրորդ շաբաթն եր, ինչ Ջեկկերը նստած եր այնտեղ։

— Ճիշտ է։ Նրան էլ տանենք մեզ հետ։ Մինչև պարկը։

Վեց հոգով մտան բանտի գրասենյակը։

Ֆրանսուան, բանտապետը, սկսեց հարցեր թափել։ Վերսալցիները յե՞րբ են մտել քաղաք։ Հինգ օր առա՞ջ։ Ա՛յ քեզ բա՛ն։ Հինգ օ՛ր։ Հապա ո՞ւր են նրանք։

— Ջեկկերին տուր մեզ, Ֆրանսուա,—ասաց Լիբերտոնը։

— Դուք նրան եք ուզում...—Ֆրանսուան մատը չխկացրեց քներակին,—իսկ որդե՞րը։

Լիբերտոնը հանեց պիստոլետն ու ցույց տվեց։ Վերակացուն, չսպասելով Ֆրանսուայի կարգադրության, դուրս յեկավ ներքին միջանցքը։

Բուխսոնը մերթ մեկ վոտի վրա յեր կանգնում, մերթ մյուսի, կարծես չափից դուրս ուզում եր միզել։ Լնդերքը խտուտ եյին գալիս։

Ջեկկերը դուրս յեկավ բոլորովին կոճկած բաճկոնով, պինդ կապած գոտիով։ Նրա գլխի մազերը մաքուր խուզած եյին և խնամքով ուղղված եր ճերմակող, պղնձի յերանգով մորուքը։

— Ո՞ւր են ձեր դրամները, Ջեկկեր,—հարցրեց Կլավյեն։

— Վոչինչ չունիմ,—ուսերը բարձրացնելով պատասխանեց Ջեակկերը,—վոչ մի սանտիմ։ Ցես բոլորից էլ աղքատ եմ։

— Այդ դեպքում գնանք,—ասաց Կլավյեն, կարծես հենց այդ պատասխանից եր կախված մնացած ամբողջ գործը։

— Գնանք, ասաց Ջեկկերը։ Նա մի բոպե վերադարձավ կամերա, վերարկուն վերցնելու համար։

— Ո՞ւր եք գնում, հեռո՞ւ,—հարցրեց բանտապետը, Ֆրանսուան, յերբ բոլորն իջնում եյին արտաքին սանդուխքից։

Ջեկկերը տարակուսած բարձրացրեց ուսերը։

— Des Partaus պարկը,—ասաց Լիբերտոնն ան–

տարբերությամբ,—այնտեղից թնդանոթներ ենք վերցնում։

Նրանք Լյա–Ռոկետ փողոցով գնացին մինչև գերեզմանոց, հետո բուլվարով հասան Ամադյե փողոցը, վորը նման եր ծերունու նոսր և փտած ատամներ ունեցող ծնոտի,—նրա վրա կային ցանկապատած ամայի տեղեր և սրանց մեջ—տներ, կեղտոտ պատեր, քանդված այգիներ, միքանի ցցուն գործարանային ծխաններ և ոդէ յան տարածություններ, վորը տատանում եր արվարձանների հեռավոր ուրվագծերը։

Նրանք գնում եյին խոսելով, կարծես չտապելու կարիք չունեյին։ Անդորրության հաճելի խաբեյություն եր թագնված այն քայլերում, վոր նրանք պատրաստվում եյին անել։ Նրանք խոսում եյին թնդանոթների, Տրոպ հրապարակի բարիկադների, այն ականների մասին, վորոնց Գալյարը պետք է դներ քաղաքի ստորերկրյա անցքերում։

Ապստամբությունը ջախջախված եր, նրանք այդ հասկանում եյին։ Վերսալի հաղթանակի քաոսային վիճակը դեռ անհատ կոմունարներին թույլ եր տալիս դառանցել արիությամբ և անդորրությամբ։ Դելեկլյուզը, Միլյերը, Դոմբրովսկին այլևս գոյություն չունեյին։ Ով հնարավորություն ուներ ազատվելու—փախչում եր։

Բուխսոնը հիշեց Դոմբրովսկու թաղման գիշերը։ Ազգային գվարդիայի զինվորները գնում եյին կապույտ պարուսինե անդրավարտիկներով, դարչնագույն չապիկներով, կամավորները—գործած բաճկոններով, վորոնց թևերը կյուստրինից եյին, գարիբալդիական հրաձիգները—վոտից գլուխ կարմիր, գլխարկների վրա—աքլորի փետուրներ, լեհական լեգեոներները—ծոպավոր կեպիներով, յեռանկյունաձև կարված կուրտկաներով և թավշյա կիսաանդրավարտիկներով, կանայք ու յերեխաները գնում եյին սարսափելի բազմությամբ, բարձրաձայն յերգելով և մռայլ խոստումներ աղաղակելով։ Դագաղի առջևից տանում եյին միտրալեզները, և պահակախումբը գնում եր ուսերից կախված հրացաններով, վորովհետև գերեզմանատան ճանապարհը վտան–

գավոր էր: Վերսալցիք վխտում էին քաղաքում: Բազմությունն ընթանում էր վիթխարահսկա հեղեղի նման, կանգնեցնելով ամբողջ հանրդպակաց շարժումը, զորամասերը միանում էին յերթին, ինչպես դրոհող զորասյուներին: Յուրաքանչյուր նվագախումբ իր մոտիվն էր նվագում:

Բազմությունն աղմկում էր, ինչպես գործադուլի ժամանակ: Դոմբրովսկու մարմինը փաթաթված էր կարմիր դրոշակով: Դագաղը տանում էին բարձր բըռնած, վերև պարզած ձեռների վրա:

«Հեղափոխության բոլոր հասարակական հանդեսների թաղումը միշտ մի առանձին տպավորություն է թողնում»,—մտածեց Բուխասոնը:—Միրաբոյի աճյունը (այն, մեծ հեղափոխության ժամանակ) Պանթեոն տարավ ամբողջ ժողովուրդը, յերեկոյան, լապտերների լույսով, Հոսսեկի հնարած անծանոթ գործիքների ահեղ հնչյուններով: Լեպելետյե դ'Սեն-Ֆարժոյի մարմինը ցուցադրեցին մերկությամբ, վորպեսզի բոլորը տեսնեն վերքը: Մարատի թաղումը մի ահեղ բարեկենդանային յերթ էր հիշեցնում: Իսկ Դոմբրովսկու թաղումը սարսափելի չէր: Դեռ այն ժամանակ, յերբ նրա դիակը գտնվում էր քաղաքային խորհրդարանում, յերաժիշտների ասոցիացիան ուղարկեց լարային նվագախումբ, վորը նվագեց Բերլիոզի «Թաղման ու հաղթանակի սիմֆոնիան»: Զինվորական քայլով դագաղը դուրս բերին հրապարակ, և ջութակահարներն ու վիոլենչելիստները սկսեցին Սեն-Սանսի հերոսական քայլերգը:

Նրանք հազիվ էին հասնում դագաղի հետևից:

Վոչ վոք և յերբեք չէր տեսել, վոր քայլելիս նվագեն ջութակների վրա: Շուտով յերաժիշտները կանգ առան և նվագում էին կանգնած: Նվագների ընդմիջումների ժամանակ նրանք վազելով հասնում էին դագաղին:

Բոլոր լեգեոնների լեհերը միացան ու կազմեցին մի յերգեցիկ խումբ: Գարիբալդիականները, վորոնց մոտ իր ժամանակին Դոմբրովսկին գնդապետ էր, յերգում էին առանձին: Հռետորները, միքանի խոսք ասելու

համար, բարձրանում էին տների պատշգամբները, վորովհետև սալահատակի վրա կանգ առնելը վտանգավոր էր—ամբոխը կճզմեր ամեն մի կանգ առնողի, նույնիսկ անուշադիր թողնելով այդպիսի դժբախտությունը:

Այդ Կոմունայի վերջին մասսայական տոնն էր:

Բուխասոնն առաջին անգամ մտածեց Ջեկկերի մասին: Դեռ այսօր առավոտյան նա կարող էր իրեն ազատված համարել—հենց որ առաջ վերսալցիները մտան քաղաք, վառվում էր Լուվրը, վառվում էր Տյուիլյերին, վառվում էր գետափը: Ամեն մի անկյունում գնդակահարում էին ֆեդերատներին: Յեվ ահա յեթե չլիներ կլավյեն...

— Այսօր ի՞նչ որ է,—հարցրեց Ջեկկերը:

Նրան ասացին:

— Ի՛նչ ուշացած գարուն է,—արտասանեց նա տխրությամբ:

— Ընդհակառակը, որերը չոր էին ինչքան ուզես:

— Յեվ խոնավ,—ասաց նա, չլսելով ընդդիմախոսությունը, և արագ, առանց հուզվելու հարցրեց.— Իսկ քաղաքը վառվում է, հը՞,—նա միքանի անգամ նայեց քաղաքի կողմը:

Ծխի կամ սոսկալի փոթորկի կապտավուն-սև ամպերը հոքեցին կտուրների վրա:

— Թե Պանթեո՞նը, թե Արդարադատության պալա՞տը, ամեն ի՞նչ,—շահագրգռվածի պես հարցրեց Ջեկկերը:

Լիբերտոնը լուռ գլխով արեց:

Des Partaus փողոցն սկսվում էր նեղ, սեպ արահետով, դաշտի հեղեղատների ու բլրակների միջև:

— Բայց և այնպես, այդ շատ հեռու չէ,—ասաց Բուխասոնը:—Իսկ ի՞նչ կլինի, յեթե հենց այստեղ...հը՞:

Բոլորը կանգ առան ու դիտեցին տեղը:

— Հասնենք մինչև վերջը,—փաղաքուշ ասաց Ջեկկերը,—միևնույն է դուք պիտի գնաք մինչև պարկ:

Նա շտապ առաջ շարժվեց:

Լուռ անցան Ջինական փողոցը: Փողոցի ծայրին

յերևում եյին պարկի փոխտ բարդիների գագաթները: Սկսեցին յերևալ մարդիկ:

Բլրակից ներքև, դեպի քաղաք եր մտնում առավոտը: Անձրևն իր մեջ եր առել արևգակն, ինչպես ներկ, և տեղում եր գույնզգույն զանգվածով,— մերթ դեղին, մերթ գորշ, մերթ շողշողուն, ինչպես պղնձի թարմ թեփ:

— Հենց այստե՛ղ,— ասաց Լիբերտոնն ու ցույց տվեց խանդակը, վորը գտնվում եր փողոցի և պատի միջև:

— Իջե՛ք,— կարգադրեց Կլավյեն:

Ջեկկերը հանեց վերարկուն և անվարժ, վոտները մի փոքր զատելով, նետվեց խանդակի թաց հատակը:

Պարկի կողմից դեպի նրանց եր վազում ինչ-վոր մի յերիտասարդ:

— Սպասեցե՛ք, սպասեցե՛ք,— գոռում եր նա,— յես ես: Սպասեցե՛ք:

Արագ լցրին հրացանները:

— Ե՛հ, ցանկանում եմ ձեզ յերբեք չհիշել այս մասին,— հատվածորեն ասաց Ջեկկերը:— Նա աչքերը բարձրացրեց դեպի յերկինք, բայց արագ ներքև դարձրեց և սկսեց հուզմունքով դիտել հրացանների խողովակները: Նա կնճռոտեց դեմքը:

— Զհիշե՞լ: Ընդհակառակը, ընդհակառակը...— ասաց մեկը:

Բոլորը նայեցին Բուխսոնին: Սակայն նա չեր հիշում, վորևե բան ասա՞ց, թե վոչ: Նրան թվում եր, թե բերանն ել չի բացել, թեպետ իսկապես լռելն սարսափելի յեր: Հարկավոր եր խոսել շատ, լավ, համոզված: Պատմել իր ամբողջ կյանքը, բացել իր չփոթված հոգին, նայել նրա խորքը և հասկանալ, թե ինչպես և ինչու այդ բոլորը պատահեց:

Ջեկկերը սրտնեղած շարժեց շրթունքները: Նա ուզում եր ձեռները գրպանը դնել: Այդպես ել արեց, ապա հանեց ու դրեց մեջքին: Ձեռների մատները ջղաձգաբար շարժվում եյին, նա չեր կարողանում բռունցքը սեղմել:

Այստեղ բոլոր վեց հոգին ել կրակեցին: Համազարկն արձագանքեց ուղղակի աղիքներում:

— Դեհ գնանք, գնանք,— շտապեցրեց Կլավյեն:

— Մենք դեռ հազար գործ ունենք:

ԵԴՎԱՐԴ ԿՈԼԼԻՆՍԻ ՈՐԱԳՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՋԸ

Չնայելով միստեր Ռ.-ի նախազգուշացման, յես յերբեք չեյի կարծում, վոր վերջն այսպես մոտիկ ե: Ամենանշանավոր դեպքերը տեղի ունեցան ուղղակի անբացատրելի արագությամբ: Ասում են, վոր այն որը, յերբ վերսալցիները Սեն-Կլու դարպասի միջով ներխուժեցին քաղաք, Դոմբրովսկին իր տանն եր, Babsu փողոց, 52: Իրարանցման ժամանակ նույնիսկ մոռացան նրան նախազգուշացնել վտանգի մասին: Ցերեկվա ժամը չորսին, յերբ նա յերևաց Լյա-Մուետտի շտաբում և զեկուցում լսեց այն անխռով հանդստությամբ, վորը նա ցույց եր տալիս ամենակրիտիկական րոպեներին, նա իսկույն կարգադրեց մարդիկ ուղարկել ծովային մինիստրություն, յոթերորդ տրամագծի մարտկոցներ բերելու և կանչել 19-րդ ու 69-րդ գումարտակները:

— Ցես ինքս կլինեմ հրամանատարը,— հուսադրելով ասաց նա:

Ասում են, վոր նա իսկույն հեռագիր ե ուղարկում Հասարակական փրկության կոմիտեն, այն մասին, վոր անհրաժեշտ ե զորամասեր ուղարկել Ոթեյ դարպասները գրավելու համար: Հեռագիրը գնում ե յերեք ժամվա ընթացքում: Ֆեդերատները խրամատներ են փորում կամուրջի և Մարատի բուլվարի ծայրին: Իենի կամրջի բարձրության վրա բարիկադներ են շինում առափնյա փողոցում: Ցերկուշաբթի, 22-ին, Դոմբրովսկին գիշերվա ժամը մոտ յերկուսին, գունատ, այլայլված, կրծքից քարի բեկորով վիրավորված, գալիս ե Քաղաքային խորհրդարան: Նա պատմում ե փախչողներին կանգնեցնելու ունայն փորձերի մասին:

Նախորդ որը, կիրակի, Կոմունան ունեցավ իր վերջին նիստը: Այդ որը նա հավաքվեց, վորպեսզի դատի

վաղուց ձերբակալված գեներալ Կլյուզերեյին: Բանավեճի ժամանակ Բիլյորեն, Հասարակական Փրկության Կոմիտեյի անդամը, ներս վազեց դահլիճ և խոսք խնդրեց՝ կարևոր լուր հաղորդելու համար: Նա կարդաց Դոմբրովսկու զեկույցը, թե վերսալցիները մտել են Փարիզ և նա անցնում է պաշտպանության յերկրորդ գիծը:

Վալլեսը, վորը ժողովի նախագահն եր, կամացուկ հարցրեց.

— Հասարակական Փրկության Կոմիտեն այլևս վոչինչ չունի՞ մեզ ասելու: Այդ դեպքում խոսքը պատկանում է այն քաղաքացուն, վորը խոսք է խնդրել:

Կոմունայի անդամներից մեկը, վորը քնել եր նիստի ժամանակ, վերսալցիների քաղաք մտնելու մասին իմացավ միայն ժողովից հեռանալիս:

Տների պատերի վրա յերևացին կավիճով ու ածուխով արված մակագրություններ.— «Կորչի ներողամտությունը», և Դելեկլյուզի աֆիշան՝ ուղղված ազգային գվարդիականներին: Գումարտակները ցրվեցին իրենց թաղամասերը: Դոմբրովսկու բանակը քայքայվեց, բայց Լյա—Սեսիլիան և Վրուբլևսկին դեռ կռվում եյին: Այդ մոմենտին, յերբ ղեկավարության մեծագույն կենտրոնացում եր պահանջվում, Կոմունան վորոշում է, վոր իր անդամները մեկնեն՝ շրջանները պաշտպանելու համար: Կենտրոնի գոյությունը դադարեց: Յուրաքանչյուր փողոց կռվում եր իր համար, առանց հույս դնելու հարևանների ոգնության վրա: 22—ի յերեկոյան ՀՓԿ.—ի քարտուղար Հանրի Բրիսակը կարգադրեց շրջանների քաղաքային վարչություններին՝ անընդհատ խփել բոլոր յեկեղեցիների զանգերը:

Յես հիշեցի, վոր շնորհիվ իմ անփութության, պաշտպանողական վկայական չեմ վերցրել անգլիական դեսպանությունից և վոչ միայն չեմ կարող թագցնել կոմունարներից վորևէ մեկին, այլև ինքս ել յենթարկվում եմ մեծ վտանգի: Յես դուրս յեկա ծանոթներիցս մեկն ու մեկին փնտռելու, բայց վոչվոքի չգտա ու վերադարձա: Ամենուրեք բարիկադներ եյին կառուցվում:

Միայն այս մեկ գիշերվա ընթացքում կառուցված եր մոտ վեց հարյուր բարիկադ: Հետիոտներից բացի, դադարել եր ամեն մի շարժում:

Քսաներեքի առավոտյան յես դուրս վազեցի, նույնիսկ առանց նախաճաշելու, վորովհետև ծանր եր նըստել տանը: Ճիշտն ասած՝ վոչ մի կերպ չեյի կարողանում վորոշել, թե ինչ պիտի անեմ: Իմ քաղաքական համոզմունքներով յես Կոմունայի կտրական պաշտպան չեյի, բայց մյուս կողմից շատ բան, վորին յես ականատես յեղա վերջին ժամանակներս, ինձ մոտեցնում եր կոմունարներին: Յես ուզում եյի թե՛ դուրս գնալ քաղաքից, անցնելով գերմանական դիրքերով, թե՛ մնալ Փարիզի պաշտպանների շարքերը: Բայց ինձ, ժուռնալիստի համար պաշտպանել նշանակում եր նկարագրել: Ճշտությամբ նկարագրել այն բոլորը, ինչ վոր տեղի յեր ունեցել: Այնուամենայնիվ յես տատանվում եյի: Յես դուրս վազեցի տնից և, վոչինչ չհասկանալով, մտքերիս մեջ խորասուզված, անցա մի քանի թաղամաս: Իմ գիտակցությունը մասամբ արթնացավ և յես կարողացա կողմնորոշվել, յերբ գտնվում եյի կենտրոնում: Այն, ինչ վոր յես տեսա, ինձ ավելի շատ ցնցեց, քան իմ սեփական դրությունը:

Յես տեսա դպրոցականների սրտաշարժ, խաղաղ ցույցը: Նրանք մարսելյեզ յերգելով գնում եյին ինչ—վոր մի նոր դպրոցի բացման հանդեսին: Այստեղից մեկ ու կես կիլոմետրի վրա վերսալցիք գնդակահարում եյին դերիներին: Հնչում եր տագնապի զողանջը: Քաղաքի կենտրոնում շատ տներ զարդարվեցին արտասահմանյան դրոշակներով: Միամի՛տ նախազգուշություն: Յես մինչև գիշեր քայլում եյի գրեթե առանց նստելու:

Քաղաքի ամբողջ հարավ—արևմտյան մասում կռիվներ եյին տեղի ունենում: Որնանո Բուլվարում ֆեդերատները կռվով եյին տալիս յուրաքանչյուր մետրը: Դոմբրովսկին մահացու վիրավորվել է Հաշտության փողոցում: Բլանշ հրապարակում Լուիզա Միշելի և Դմիտրյեվայի հրամանատարությամբ կռվում են կանայք: Վերսալցիք խուժում են Մոնմարտր, վորը դավաճանո—

րեն չի պաշտպանված, և այնտեղից ռմբակոծում են Շոմոնն ու Պեր-Լաշեզ գերեզմանոցը: Ցերեկոյան սկսվեցին հրդեհները: Վառվում է Սենայի ամբողջ ձախ ափը: Ցես յերեք անգամ մտա Ռ-ի մոտ: Նա տանը չէ: Ռուսական դեսպանությունը պինդ գոցված է: Վոչ վոք չպատասխանեց իմ հուսահատ թխկթխկոցին: Ցես չգիտեմ, թե ինձ հետ ինչ կպատահի վաղը և շտապում եմ գրանցել տեսածս:

Գիշերը հրդեհները սաստկացան: Ֆեդերատները նահանջելով վառում եյին շենքերը: Թվում եր, թե Փարիզը գալարվում, դառնում է բոցի ու ծխի մի հսկայական պարույր: Քսանչորսին ֆեդերատներն իրենք թողին X շրջանը: Դելեկլյուզը XI քաղաքապետության շենքում եր, և յես շտապեցի այնտեղ:

Հանդիստ, ինչպես ֆինանսների մինիստրության մեջ, ժուրդը նստած եր դրամի արկղի կողքին և ռոճիկ եր բաժանում գումարտակներին: Նրա մոտ Ֆերրեն հանդարտ հարցաքննում եր լրտեսներին: Նա ասում է.— «Պետք է յերկու սրիկաների ուղարկել Ռիգոյի մոտ»— և իսկույն մեղավորաբար հնչում է.— «ա՛խ, հա՛...» Ռաուլ Ռիգոն գնդակահարված է: Ժաննա Դ'Արկ հրապարակի վրա Վրուբլեվսկին հետ է մղում մի ամբողջ զորամարմնի գրոհները: Ղողանջում են զանգերը:

Գիշերը յես անցկացրի փողոցներում, խարույկների մոտ ննջելով: Առավոտը հենց վոր զարթնեցի, իմացա, վոր Միլյերը գնդակահարված է, և ֆեդերատները, իբրև վրիժառություն, կոտորել են հիսուն պատանդների: Ինչ-վոր տեղերում ինչ-վոր մարդիկ դեռ կռվում եյին, բայց վոչինչ չի հաջողվում պարզել...

Ցես մտածում եյի, վոր քաղաքում իմ գտնվելու միակ նպատակն է ազատել Կոմունայի կենդանի մնացած անդամներից վորևէ մեկին: Նրա փորձը պետք է անմիջապես լուսաբանվեր, վորպեսզի չկրկնվեր 48 և 51 թվականների ապստամբությունների բախտը, վորոնց նյութերը մինչև այժմ պահվում են քաղաքային խորհրդի արխիվներում: Ինձ անկարելի յե թվում գրանցումներս շարունակել: Ձեռս չի յենթարկվում ինձ:

Դեպքերն այնքան շատ են, վոր այլևս չեն ազդում գիտակցությանս վրա:

Թվում է, թե բացի գնդակահարություններից, ուրիշ վոչինչ տեղի չի ունենում: Գնդակահարում են յուրաքանչյուր անկյունում: Այսօր արդեն յերկու անգամ ինձ կանգնեցրել են Վերսալյան շրջիկ պահակները, սակայն անգլիական անձնագիրն առանց դժվարության ինձ փրկում է: Բայց յես ուժ չունեմ վոչ վերադառնալ սենյակս, վոչ էլ հանձնվել «կարգապահության» սպայի հովանավորությանը: Իհարկե, այստեղ, սրանց մեջ նույնպես շատ հետաքրքիր բաներ կան: Եյապես յես գուցե ժուռնալիստներից միակն եմ, վոր այժմ թափառում եմ կռվի դիրքերում: Ցես հաստատապես վճռում եմ գնալ Պեր-Լաշեզ: Այնտեղ, գերեզմանոցի բարձունքներում, արձանների միջև կռվում են վերջին ֆեդերատները:

Ցես դեռ ուզում եմ նաև գրանցել միայն մի միտք: Ցես ֆեդերատ չեմ: Բայց այժմ զգում եմ, վոր պատմական դեպքերի ուժն ավելի բարձր է իմ անձնական հայացքներից ու շահերից: Ինձ համար չկա մի այլ յելք, քան կանգնել վերջին կոմունարների շարքերում: Ուրիշ վոչ մի յելք չկա: Գուցե դրանում իմ դժբախտությունն է:

Գրեթե չտեսնելով այն, ինչ վոր կատարվում եր շուրջը, Կոլլինսը հասավ առափինյա փողոցը, Փոխանակման կամուրջը: Գետը տանում եր խուլ, քրթմնջալից դղրդյունն ու հեռավոր ճիչերը:

Այնպիսի մի սարսուռ, վորը լինում է մարմնամարզական վարժություններից հետո, անցավ նրա մարմնով, խուտ տալով և քրտնեցնելով այն:

Կոմունիզմի ուրվականը յոթանասուն յերկու որ կանգնած եր ծեր Յեվրոպայի գլխին: Նա կարծես գիսաստղ լիներ, վորն ամեն տեղից նկատելի յեր: Պաշտոնաթող սպաները, գուշակություններ անելով պատերազմ ու արյուն խոստացող այդ գիսաստղով, հավաքվում եյին Դագոմեյայում, ելզասցիներն իրենց ընտա-

նիքներով փախչում էին Ալժիր՝ Ֆոսֆորի հանքերում աշխատելու, բանկիրները փակում էին իրենց գրասենյակները:

«Ֆրանսիան այդ Կոմունան ձեռք բերեց մտացիր ուշագնաց վիճակում»— ասում էին բորսայում: Դեպքերը կառչում էին մեկ-մեկու, ինչպես փախստականները գնացք նստելիս, հանկարծ ամենաանսպասելի հեռանկարներում հայտաբերելով ընդհանուր նպատակներ և փոխադարձ շահեր:

Հեռու, Ամերիկայում կամ Սան-Դոմինգոյում խորապես տեղական էր թվում Կոմունայի դեկրետը, և Մոսկվայում կամ Սանկտ-Պետերբուրգում մարդիկ խորին ակնածությամբ կարդում էին Տյերի կոչը, վերագրելով այն իրենց անձնական բախտին:

Այժմ իրար էին նմանվում այնպիսի տարբեր բաներ, ինչպիսին էին՝ Դիզրայելի մտահղացումը՝ Ասիայում Մեծ Բրիտանիա ստեղծելու մասին և Ջարլզ Դինկլի ճանապարհորդությունը, ինչպիսին էր Գահիրեյի ֆրանսիական հյուպատոսի կողմից Ոբոկ ավանի գնումը սուլթան Սոմալիից հիսուն հազար ֆրանկով և Նուբիայում վոմն Մախդիի յերևան գալը, վորը խոստացել էր կոտորել քրիստոնյաներին, ինչպիսին էր մարկիզ դ'Պլեկի,— ֆրանսիական բանկի փոխ-դիրեկտորի այն ֆրազը, թե «Ֆրանսիայում դրամն սկսել է մի տեսակ վատ անվել»— և դեպի ճանապարհորդությունն ու շուկաներ հայտաբերելը յեղած ուշադրության աճումը: Ճանապարհորդներն ու աշխարհագիրները դարձան յեվրոպական բանկիրների բանաստեղծները: Ամեն ինչ աճուրդի յեր հանված: Հարավային Աֆրիկայի ջրվեժները, ավստրիալական ցեղերի կենցաղը, հնդկական մրգերի և չինական տնայնագործների եկզոտիկան: Ճանապարհորդություններն ու հայտնագործությունները դարձան այդ հրեշավոր աճուրդի գնացուցակը:

Այսպես մտազբաղ թափառելով, Կոլլինսը հասավ Սեն-Միշելի հրապարակը: Նա դեռ յերկար պիտի դեգերեր իր անորոշ տրամադրությամբ, յեթե նրան ձայն չտային.

— Քաղաքացի, ձեր կոպի՛ճը:

Սև կոֆտայով և չթե վարդագույն շրջազգեստով մի աղջիկ, ծիծաղելով, թափահարում էր նրա ուսը:

— Կոպի՛ճը, կոպի՛ճը, թե չէ չեմ թողնի, վոր անցնեք:

Նա ցույց տվեց բարիկադը, վորտեղ դրված էին դատարկ և քարերով լցված քթոցներ: Յուրաքանչյուր անցորդ պետք է քար բերեր: Կոտելոկներով, կեպիներով, շլյապաներով ու կարտուզներով տասնյակ մարդիկ քանդում էին սալահատակը: Նա կռացավ նրանց մոտ և հանեց յերեք մեծ տաշած քար: Քարերը քթոցի մեջ նետելով, նա վերադարձավ ելի յերկու քար վերցնելու, հետո, աղջկա հայացքից քաջալերված, վորոշեց լիքը լցնել մոտակա քթոցը:

— Բայց և այնպես յես շտապում եմ,— ասաց նա բարձրաձայն,— շտապում եմ Պեր-Լաշեզ:

Նրա մոտ գտնվող մի մարդ, վորը քարեր էր ընտրում, շշնջաց.

— Այդ Յեվենիա Ռոշն է: Ինչպիսի՛ կին էր, հիշո՞ւմ եք: Ահա թե վորտեղ է հասել:

— Յեթե դուք գերեզմանոց եք փնտրում և ձեզ համար միևնույն է, թե ինչպիսի գերեզմանոց կլինի, մնացեք այստեղ,— ասաց ֆեդերատների հրամանատարը:— Միտրալյոզնե՛րը: Ուշադրությո՛ւն,— գոչեց նա:

Այդ րոպեյին հրապարակը ցնցվեց: Նրա ջղաձգությունը տևեց բազմաթիվ վայրկյաններ: Ռումբը խփեց քարին և ցավագին խոցեց մարդկանց ականջները: Հողը դողդողում ու կծկվում էր նրանց վոտների տակ:

— Ահա ձեզ Պեր-Լաշեզ,— սարսափելի, ժպտալով, ճչաց սև կոֆտայով աղջիկը:— Ա՛խ, սատկա՛ծ իմ:

«Նա կմեռնի, վորպեսզի պահպանի իր այլախոսությունների հուրը»,— մտածեց Կոլլինսը: Յեվ հիշեց ինչ-վոր մի բեմ, ինչ-վոր յերգեր ազատության ու հեղափոխության մասին, այդ աղջկա կերպարանքը՝ ուսերին գցած դրոշակով: Ինչ-վոր մի աղմկոտ յերեկո ապրել ամսին: Փողոցներ: Ամբոխներ:

Այդ կնոջ մեջ այժմ ամեն ինչ շնչում էր շեշտված

գեղեցկությամբ: Նրա մարմնի յուրաքանչյուր շարժումն առավել գեղեցիկ եր, խոսքերը— ամենանշանավոր եյին այն խոսքերից, վորոնք նա գիտեր իր ամբողջ կյանքում: Այդ մի փոքր բեմական եր, բայց խելոք, բայց տառապած և անձնական կյանքով չապրող մարդիկ մենության մեջ այդպես են խաղում իրենք իրենց դերը, այսինքն՝ այդպես են ցանկանում լինել: Կարծես ամեն ինչ, վոր տեղի յեր ունենում, նրա համար եր, հենց միմիայն նրա համար:

Ջարդվեցին կոյուղու խողովակները, վորոնք կառուցված եյին վոչ խորը, հրապարակի գերանապատ ծածկերի տակ, և կեղտոտ, լպրծուն ճճակները վեր եյին թռչում, կեղտոտելով քթոցների հետևում գտնվող մարդկանց: Փողոցները թնդում եյին ճանճերից, վորոնք հավաքվում եյին կռվի տեղերում, կարծես աղբակույտերի վրա:

Բարիկադի մոտ գտնված տան լուսամուտից ընկավ մի յերեխա: Ապա բռնկվեց վարագույրը: Քթոցներում Կոլինը վեր-վեր եր թռչում, ինչպես սիսեռը մաղի մեջ, մարդիկ սեղմվում եյին թաց, գարշահոտ գետնին, պահելով շնչառությունները: «Կենդանի՛ յե, կենդանի՛ յե— կանչեցին յերեխայի մասին: «Ջո՛ւր, ապա թե վոչ շնչահատ կլինենք»: Յերկու կին, գավեշտորեն կորացած, վազեցին հրապարակի միջով: Նրանցից մեկն արագ անցավ կռացած և ընկավ մեջքի վրա: Այդ ծիծաղելի, բայց սարսափելի յեր:

«Յեթե յես սպանվեմ, այդ օգուտ կբերի,— մտածեց Կոլլինսը:— Յես կսպանվեմ իբրև անգլիական բուրժուական թղթակից՝ կոմունարների շարքերում: Այդպիսի դեպքերը հիշվում են: Վոչինչ այնպես պերճախոս չե, ինչպես մահը:

Այդ ժամանակ Պեր-Լաշեզի բլուրների վրա կապիտան Լեֆեվրը իր գումարտակի մնացորդները տեղավորում եր գերեզմանաքարերի տակ: Այդ աղքատ գերեզմանների սեկտորն եր, առանց մատուռների ու հուշարձանների:

— Բարձրացնել գերեզմանաքարերը, գլխիվա՛յր դնել,— կարգադրեց Լեֆեվրը,— և գերեզմանոցը դեպի վեր ցցվեց:

Լյա-Մարսելյեզը, միայնակ զայրանալով յերկու թնդանոթների մոտ, վառվող պատրույգը ձեռքին մեկից մյուսի մոտ եր վազում:

Սպիտակ մարմարիոնե թևատարած հրեշտակն իր հետևում թագցրել եր Լեվչենկոյին: Նա ուժ չուներ կռվելու, միայն դիտում եր: Նրա մոտ յեռում եր բռնցքամարտը: Վաղուցվա հանդիպումների աղոտ հետքերը վերականգնվում եյին բոլորի մտքերում, վորպես միակ հիշողություն: Նույնիսկ անսպասելի յեր թվում, վոր առաջ մարդիկ կարող եյին հանդիպած լինել: Բոլորը մտերիմ ծանոթներ եյին մեկ-մեկու:

Ահա մոտիկից յերևաց դզզված, գորշ միրուքով մի դեմք:

— Ռավե՛,— կանչեց Լեվչենկոն:

Բայց ոդն այնքան վորոտընդոստ եր, վոր նրա կանչը վոչ-վոք չլսեց: Ըստ յերևույթին, այդ Ռավեն եր: Ինչ-վոր մի առանձին շարժունություն ունեցող մի կերպարանք պտտվում եր Լյա-Մարսելյեզի թնդանոթների շուրջը: Նա թափահարում եր ձեռները, խփում եր ազդրերին, ձեռները խոսափող դարձնում բերանի վրա:

—Այդ ճիշտ ե, վոր նա վերադարձել ե,— ասաց Լեվչենկոն:

— Գիտե՞ս ինչ, կարծեմ Ռավեն այստեղ ե,— հայտնեց նա Բիգուին:

Ոդը գրնգաց, ինչպես քարի հարվածից փշրվող մի վիթխարի ապակի:

Ո՛ֆ: Լեյտենանտը յերկար մի ցատկում կատարեց և ընկավ, դիմադրելով իր ամբողջ մարմնով: Ընկնելով գետին, նա թպրտաց, կարծես մկանների մի առանձին շարժումով ուզեց բարձրացնել ջարդված վոսկորները: Նա մի քանի անգամ շուռ յեկավ, գալարվելով ու կծկվելով, և տաք ու աղմկալից շնչեց, կարծես կատա-

դեց: Ցելենան վազեց դեպի նա և գրկեց: Նա ուզում էր պահել նրա վերջին ուժերը: Վիրավորվածը սրտնեղությամբ հառաչեց և յենթարկվեց Ցելենայի ձեռներին:

Նա արդեն մեռած էր, թեպետ կյանքի աղոտ նշույլները, ինչպես արևի արտացոլված լույս, դեռ հազիվ նշմարվում եյին նրա մարմնի մեջ:

Դեռ նայում եյին աչքերը, դեռ վերջին անգամ շարժվում էր սիրտը, դեռ ձեռքը փորձում էր անել մի քանի շարժումներ,— մեխանիկորեն իմաստավորված և արտաքուստ գիտակցական: Ձեռքը վորոնում էր:

Այդ ժամանակ Ցելենան ընկավ այդ սարսափելիորեն ինչ-վոր վորոնող մատներին և սկսեց հեկեկալ: Նա իր թշի վրա զգաց մեռնողի մատների թույլ հպումը և աղաղակեց, յերևակայելով, թե նա սիրում է իրեն և թե շատ բան պետք է ծագեր մեռնողի գլխում, վորպեսզի իր բոլոր վերջին շարժումներից ընտրեր մեկը— քնքույշ հրաժեշտն իր հետ: Սակայն նա մեռած էր նույն րոպեյին, յերբ նրա ձեռքը բարձրացավ ու սահեց Ցելենայի վրա:

— Ի՞նչ անել, աստվա՛ծ իմ, դուք ինձ թունավորե՞ցիք, Գրոդզենսկի՛,— գոչում էր նա, տնտղելով դիակն և շուրջը նայելով,— Գրոդզենսկի, ո՞ւր է այն, սիրելի՛ս, ո՞ւր է այն, վոր դուք ասում եյիք:

— Այդ բոլորովին անկարելի բան է,— և Կոլլինսը քաշեց նրա ուսից դեպի իրեն,— դուք խելագարվե՞լ եք,— ասաց նա,— այդ մահ է, հասկացա՞ք, նա մեռել է: Ամեն ինչ վերջացել է:

Նա իր հետևից քաշ տվեց նրան մինչև տան անկյունը, իր զոհին մաշկող դահճի գազանային զգացմունքով նա քարշ էր տալիս նրան, կարծես գիտմամբ ցավ էր պատճառում և, վորովհետև Ցելենան գեղեցիկ ու թույլ կին էր, ուստի նա անհրաժեշտ համարեց մտածել, թե վորտե՞ղ տեղավորի նրան: Գլուխների վրա սվսվում եյին գնդակները, և նրանք ստիպված յեղան հրապարակից անցնել դեպի առափնյա փողոցը: Այստեղ դանդաղ վառվում եյին առանձնակի տները: Կրակն ա-

դահ լափում էր նրանց, արձակելով աշխույժ, դալարուն ծուխ և տարածելով շոգն իր բոցեղեն շնչի:

— Ե՛հ, այսպես հրաշալի կլինի,— ասում եյին առափնյա փողոցի յեզրապատին նստած մարդիկ:

Տները վառվում եյին միաժամանակ, և հրդեհներից յուրաքանչյուրը յուրատեսակ էր, նրանց համեմատում եյին:

— Այս շատ յերկար է տևում,— ասաց Ցելենա Բոշը,— ի՛նչ ավելորդ անտրակտ է:

Իսկ Բուխստոնին թվում էր, վոր Փարիզի հետ ընկնում է քաղաքակրթությունը, վոր յոթանասուն մեկ թվականի մի մասը կկորչի ժամանակի մեջ և միայն տարեգրության մի ճեղքվածք պիտի աղոտ հիշեցնե տեղի ունեցած կատաստրոֆը:

«Ինձ համար քիչ է այժմ մեռնել,— մտածում էր նա,— այդ անարժան է և քիչ»: Նա իր համար պատկերացնում էր ինչ-վոր ավելի շատ բան, քան մահը,— մնալ, չանհետանալ, մնալ ճեղքվածքի ծայրերին, և նա համբերությամբ կտաներ ամեն մի ցավ, ամեն մի փորձություն, յեթե միայն նրան խոստանային այդ յելքը: Նա կամաչեր սոսկ կենդանի մնալուց: Կյանքն անկարելի յեր թվում այն բոլորից հետո, ինչ վոր տեղի ունեցավ: «Ել ի՞նչ գեղարվեստ»,— մտածում էր նա,— Գրոդզենսկին ինքնին իրավացի յեր, ել ի՞նչ գեղարվեստ կարող է այս որերում պետք է գալ մարդկային հասարակությանը: Ժանրերի պրոբլեմնե՞րը: Անմիտ ապուշություն: Խելագարությո՛ւն: Ի՞նչ պրոբլեմներ: Այս ամենը խորտակվում է, ամեն ինչ անհետանում է պայքարի, բոլոր ուրախությունների և տխրությունների հետ: Յոթանասուն մեկ թվականի մարդկանց հնագետները պիտի փնտռեն: Հրդեհների բոցում կմոխրանա այն բոլորը, ինչ վոր յոթանասուն յերկու որ հուզել է Փարիզն ու աշխարհը: Հեղափոխությանը, բացի ձեռներից, վոչինչ հարկավոր չէ, քանի դեռ նա չի հաղթանակել»:

Քանի վոր նա ավելի մեծ բան էր վորոնում, քան

մահը, ուստի վոչ մի կերպ չեր կարողանում վորոշել,
թե վորտեղ պիտի գտնվի և ինչ պիտի անի։
«Յերբ քեզ հանձնում ես հեղափոխությանը, սաս
ինքդ քեզ, վոր դու արդեն մեռած ես,— մտածում եր
նա,— հետո վոչնչի վրա մի զարմանա, վոչնչից մի
հրաժարվի, ամեն ինչ զոհիր։ Դու քեզ համար արդեն
մեռել ես»։
Բիզոն մի քանի անգամ բռնեց նրա ձեռքը։
— Քաղաքացի՛ նկարիչ, քեզ լապտերապահ ե հար-
կավոր, բարեկամս,— մեղմաժպիտ ասում եր նա,—
ընկնո՞ւմ ես, այսոր վոչ վոք չի կարող քեզ օգնել,
տե՛ս։
Բուխսոնն առանց պատասխանելու վանեց նրա
ձեռքը։
«Դատարկ բան ե, դատարկ,— մտածում եր նա,—
յես վաղուց արդեն մեռած եմ, վաղուց»։
Վորպիսի՛ լուսաշող լազուր եր ծավալվել քաղաքի
վրա։ Քաղաքի ծխի ու դղրդոցի վրա վորքա՛ն խաղաղ
եր յերկինքը։
«Չի կարող նկարվել այն, ինչ վոր չի հաղթել կյան-
քում։ Այդպիսի նկարն անցողիկ ե։ Նրա հետ անցնում
ե և նրա նկարիչը»։
— Ո՞ւր ե այդ Կուրբեն,— մտածում եր նա,—
կուզեյի տեսնել, կուզեյի»։
Բուխսոնի արյունն այնքան լարվեց, կարծես ինքն
եր յեզրակացություն փնտռում։ Նա վախենում եր, վոր
արյունը հիմա կհոսի ամեն մի կտրված տեղից։ Արյու-
նը ցավով հոսում եր զարկերակներով։ Նա տնքում եր
կամաց, գրեթե անլսելի։ Արճճի մի լավ հարված պետք
ե վերադարձներ նրա կամքը։
Մոտեցավ Բիզոն և նրան նետեց շիրիմ։
— Ահա նա, այս նկարիչը,— ասաց նա նստածնե-
րին։
Լամարկը դիտեց Բուխսոնին։
— Ել չի դուրս գա,— ասաց նա։
— Փոքր ուժ ե, այդպիսին չի դուրս գա։
Ցել Բիզոն նրան մանրամասն պատմեց իր պլանը։

Նա ասաց, վոր Պեր-Լաշեզի հարավ-արևելյան պատի
հետևում մուտք կա դեպի Փարիզի ստորերկրյա անց-
քերը։ Կոյուղու յերկար անցքով կարելի յե հասնել մինչև
Սենա։
— Ե՛հ, տղաս, հիմա դու ամեն ինչ տեսար։— Լա-
մարկը ձեռներով սեղմեց վորդու գլուխը,— ուրեմն
այդպես։ Հիշիր այս։
Նա կարծես իր կյանքը հանձնում եր վորդուն։
Լեվչենկոն կանգնած եր հենց այնտեղ, ձեռները
դրած մեջքին։
— Հաղթում ե նա, ով համոզում ե թշնամուն, թե
վերջինս պարտվել ե,— նայելով գետնին, կարծես ար-
դարանալով ապագայի առաջ, ասաց նա։— Մենք ջարդ-
վեցինք վո՛չ այն պատճառով, վոր իրավացի չենք։ Մենք
քիչ ենք։ Քո սերունդը կանդրադառնա մեր փոր-
ձին։ Դուք ավելի շատ կլինեք։ Դուք կուսակցություն
կունենաք։ Վերցրեք ձեզ հետ այս տղային,— դիմեց
նա Բուխսոնին,— հոգացեք նրա մասին։ Լսո՞ւմ եք,
թե ինչ եմ ասում։
Սարսափելի դղրդը, անցնելով յերկրի միջով,
ցնցեց շիրիմը։ Սա ճքճքաց ու թափեց իր ծեփը...
Յերբ Լամարկի գլուխն իր վրա արև դգաց, աչքերն
իրենք իրենց բացվեցին, առանց մտքի հրամանի։
Վերամբարձ ծխի նման ծավալվում եր լռությունը։
Լյա-Մարսելյեզի տափարակ, գրեթե աննկատելի դիա-
կը կարծես կիսով չափ հողն եր մտել։ Նրա գետնատա-
րած ձեռքում ջահը վառում եր գերեզմանաքարերի ա-
ռանքի չոր, հրադրդիռ հողը, վորը բռնկվում եր դաղ-
տուկ, բայց ժիր ու անհանդիստ կրակով։

Гос. Публ. б-ка ... ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Նվիրում 7

Արթուն հսկողություն 9

Դոմբրովսկի 65

Մայիսի յերեքը 133

Տուրենոն փողոց, 15 166

Գնդակներին նայելով 181

Գինը 3 ռուբ

П. Павленко
БАРРИАДКЫ
Гиз ССР Армении, Эривань, 1934

ՀՀ Ազգային գրադարան
NL0325029

12784